Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ի. Ֆ. ՈՒԲԵԿՈՎ

# XIX ԵՎ XX ԴԱՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿ ։

ԲԻԲԼԻՈՏԵԿԱ
ИНСТИТУТА
Востоковедения
Академии Наук
СССР

9(ա)
Ռ-42

ԵՐԵՎԱՆ 1932

30 MAY 2011 С 32-И
А 508

ԱՆԴՐՇԵՒԱԿԱՆ ՖԻՆԻՆՍՏԻՏՈՒՏ

3(n)
П-42

Ի. Ֆ. ՊԻՔԱԿՈՎ

# XIX ԳԵՎ XX ԴԱՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ի ՓՐԱԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԵՐԵՎԱՆ

1932

24.07.2013

283

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ

59174-66

Գլավլիտ 7121 (ը) Պատվեր 200 Տիրաժ 500

# Ա Ր Ա Ջ Ա Բ Ա Ն

«Դասակարգային պայքարի պատմությունը XIX–XX դարերում» կուրսը կազմված է ՌՍՖՍՀ տեխնիկումների տիպային ծրագրերի համաձայն, սակայն արված են մի քանի փոփոխություններ և նկատի ունենալով հեռակա ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները և հեռակացիների ժամանակի լրջեն:

Այս կուրսի նպատակային դրույթն է տալ կապիտալիստական հասարակության մեջ տեղի ունեցող դասակարգային պայքարի պատմության դիտելիքները այն նվազագույն չափը, որն անհրաժեշտ է հեռակացիներին, որպես քաղաքացիներ, յուրացնելու հասարակական զիտական առարկաները և խորհրդային քաղաքական գրականության մեջ:

Կուրսի բովանդակությունը վերլուծվում է նրա նպատակային դրույթով. նա պիտի ոգնի հեռակացիներին պարզելու արդյունաբերական կապիտալիզմի չրջանի և մանավանդ իմպերիալիզմի չրջանի դասակարգային հասարակության և դասակարգային պայքարի հիմնական գծերը: Այս պատճառով էլ մենք կուրսն ստորաբաժանում ենք երկու մասի. առաջին մասն ընդգրկում է արդյունաբերական կապիտալիզմի չրջանը, իսկ երկրորդը—իմպերիալիզմի չրջանը:

«Վոչ մի հասարակական ձևավորում չի կործանվում մինչև վոր չզարգանան այն բոլոր արտադրողական ուժերը, վորոնց համար նա ներկայացնում է բավական տեղ, իսկ նոր, ավելի բարձր արտադրական հարաբերությունները չերբեք չեն գալիս մինչ վոր չհասունանան նրանց գոյության նյութական պայմանները հին հասարակության դրկում» (Մարքս):

Այս պատճառով, իմպերիալիզմի չքացնելու համար մեզ անհրաժեշտ է հետախուզել արդյունաբերական կապիտալիզմի զարգացման հիմնական եւ առաջնեին սկսած 18-րդ դարից:

Մյուս կողմից, քանի վոր արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանն ուղեկցում են՝ ֆեոդալական կարգերի դեմ բուրժուազիայի վարած պայքարի դիալեկտիկորեն բարդացող եւ առաջները, իսկ ֆինանսական կապիտալիզմի զարգացմանն ուղեկցում են կապիտալիստական հասարակարգի դեմ պրոլետարիատի մղած պայքարի եւ առաջները,— մեր կուրսի առաջին մասում պիտի քննարկենք 19-րդ դարի առաջին կիսում Եվրոպայում տեղի ունեցած բուրժուական հեղափոխությունների հիմնական եւ առաջները. յերկրորդ մասում մենք կքննարկենք պրոլետարիատի եւ բուրժուազիայի պայքարի ամենագլխավոր եւ առաջները, վորոնք տեղի են ունեցել Եվրոպայում, Ամերիկայում եւ Արեւելքում 19-րդ դարի յերկրորդ կեսում եւ 20-րդ դարի սկզբում: Հենց այս նկատառումներով I Ինտերնացիոնալի չքացնելը եւ Ռուսաստանի հեղափոխական նարոդնիկությունը տրվելու են կուրսի յերկրորդ մասում, քանի վոր թե մեկ եւ թե մյուս դեպքում մենք դործ ունենք Եվրոպայում ֆինանսական կապիտալիզմի ձեւակերպման սկզբնական մոմենտների եւ կապիտալիստական հասարակարգի դեմ պրոլետարիատի մղած պայքարի առաջին բռնկումների հետ:

Կուրսի առաջին մասն ստորաբաժանվում է հետեւյալ հինդ պարապմունքների.

1. Արդյունաբերական հեղաչրջումը եւ բանվորական չարժումն Անգլիայում 19-րդ դարի առաջին կիսում:

2. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը.

3. 40-ական թվականների բուրժուական չարժումները եւ բանվոր դասակարգը:

4. «Հին կարգի» քայքայումը եւ բուրժուական առաջին չարժումները Ռուսաստանում;



5. 1861 թվի ռեֆորմը—արդյունաբերական կապիտալի հաղթանակը Ռուսաստանում:

Յերկրորդ մասը ստորաբաժանվում է հետեւյալ 8 պարապմունքների.

6. Առաջին Ինտերնացիոնալը եւ Փարիզյան Կոմունան:

7. Հեղափոխական նարոդնիկությունը Ռուսաստանում:

8. Բանվորական չարժումն իմպերիալիզմի չրջանում, Արեւմտյան Յեվրոպայում եւ Ամերիկայում:

9. Բանվորական չարժումը Ռուսաստանում 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբին:

10. 1905 թվի հեղափոխությունը:

11. Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ քաղաքացիական պատերազմը:

12. Համաշխարհային հեղափոխական չարժումը եւ Կոմինտերնը:

13. Սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում:

Դասագիրքն այնպես է կազմված, վոր նրա նյութը սեղմ ձեւով ուսանողին տա ընդհանուր դրույթ եւ նպատակ մշակվող դասընթացի հիմնական հարցերը պարզաբանելու:

«Հավելվածը» պիտի համարել վոչ թե խրխռոմատիական նյութ, այլ ինքնուրույն կարդով մշակելու լրացուցիչ նյութ:

Դասընթացի այսպիսի կառուցվածքն նպատակը պարզ է.—Հետաքրքրությունը դասագիրքը չէ, այլ ուսանողին ուղեցույց ծառայող մի ձեռնարկ. նրան նպատակով յուրաքանչյուր պարապմունքին կցված են մեթոդական ցուցմունքներ եւ վերաստուգիչ հարցեր, վորոնք պիտի ոգնեն՝ լուսաբանել մշակված նյութի հիմնական խնդիրները եւ ամրապնդել նրա մշակումը: Ավելի խոր մշակումներ կատարելու համար յուրաքանչյուր պարապմունքի վերջում բերվում է գրականության համառոտ ցանկ, ինչպես եւ ուսումնասիրվող նյութի համառոտ

չրջանն ամենացայտուն կերպով արտացոլող գեղարվեստական յերկերի ցուցակ:

Ամբողջական գործի դրվածքը բարելավելու և հրատարակութեյան պատրաստվող դասընթացի 2-րդ մասի մեջ բարեփոխութեյուններ մտցնելու համար հեղինակը խնդրում է հետևյալիններին հաղորդել Закзфен-ի ուսումնական բաժնին իրենց նկատառումները՝ կուրսի մեջ յանկալի փոփոխութեյուններ մտցնելու մասին և ընդհանրապես այն բոլորի մասին, ինչ վոր առաջին մասի մշակման ընթացքում կթվա դժվարին, չպարզված և կամ թե անհարմար չարադրված, վորպեսզի հանդամանքը խոչընդոտ և ծառայում նյութը հետևութեյամբ յուրացնելու:



# ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

## (XVIII Դ. ՎԵՐՋԸ ՅԵՎ XIX Դ. ՍԿԻԶԲԸ)

### 1. Ի՞ՆՉ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

Կարդալով լրագրերն ամենայն որ համոզվում ենք, վոր ԽՍՀՄ-ում և Յևրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի բոլոր յերկրներում յեռում է մի անդադար պայքար ազդեցության ոլորտներ դասակարգերի միջև:

Ի՞նչ է դասակարգը:

Ահա թե ինչպես է բացատրում այս հասկացողությունը Վ. Ի. Լենինը.—

«Դասակարգեր կոչվում են մարդկանց խոշոր խմբավորումները, վորոնք տարբերվում են իրենց տեղով հասարակական արտադրության պատմական վորոշ սիստեմի մեջ, իրենց հարաբերությամբ (մեծ մասամբ սահմանված և ձևակերպված որենքներով) դեպի արտադրության միջոցները, իրենց դերով աշխատանքի հասարակական կազմակերպության մեջ, հետևաբար և՝ հասարակական հարստության նրանց պատկանող բաժնի ստանալու յեղանակներով և չափերով: Դասակարգերը մարդկանց ամբողջի խմբավորումներ են, վորոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը

չնորհիվ հասարակական տնտեսության վորոշ կառուցվածքի մեջ նրանց դրաված դիրքի տարբերության»: (Собр. соч. изд. 1, т. XVI, стр. 244 «Великий почин»):

Մի այլ տեղ Լենինն ասում է.—

«Ի՞նչ է ընդհանրապես դասակարգը: Դա այն է, վոր ընդհանրապես հնարավորություն է տալիս հասարակության մի մասին յուրացնել ուրիշի աշխատանքը» (Собр. соч. т. XVII стр. 322. „Задачи союзов молодежи“):

Յուրացնել ուրիշի աշխատանքը, կնշանակե չհադորդել այդ ուրիշին: Սրանից պարզ հետևում է, վոր չհադորդումը հնարավոր է միայն այնտեղ, վորտեղ մարդկանց տարբեր խոշոր խմբավորումների միջև տնտեսական հավասարություն չկա, վորտեղ մարդկանց այդ տարբեր խմբավորումները հասարակական արտադրության սիստեմի մեջ զրավում են տարբեր դիրքեր և դեպի արտադրության միջոցներն ունեն տարբեր հարաբերություններ:

Որինակի համար, կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերը կազմում են կապիտալիստները, հողի սեփականատերերը և պրոլետարիատը: Կապիտալիստների սեփականությունն են կազմում ֆաբրիկանները, գործարանները և արտադրության բովանդակ սիստեմի մեջ նրանք հրամանատարական դեր են կատարում և ոգուտի ձևով առնում են բանվորների աշխատանքով առաջացող հավելյալ արժեքի մի մասը: Հողատերերը տիրում են հողերի և հողային rենտայի ձևով առնում հավելյալ արժեքի իրենց բաժինը: Վերջապես պրոլետարները հասարակական արտադրության մասնակցում են իրենց



աշխատանքով, չունեն արտադրության միջոցների վորևե սեփականություն, կապիտալիստների դասակարգի համար ստեղծում են հավելյալ արժեք և հասարակական հարստություն: Ասանում են իրենց բաժինն իբրև աշխատավարձ, վորի չափը վորոշվում է բանվորի և նրա ընտանիքի գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ սպառողական միջոցների արժեքով:

Շահագործող դասակարգերը, պատմության բոլոր շրջաններում շահագործվողների հսկայական մասսաների հետ համեմատած կազմել են չնչին փոքրամասնություն: Իսկական ուժը միշտ էլ գտել է աշխատավոր մասսաների կողմը:

Այդ պատճառով էլ դասակարգերի գոյությունը չի կարելի բացատրել նրանով, վոր շահագործողները սովորական բռնության ճամբ են հարկադրել աշխատավորներին աշխատել շահագործողների ոգտին:

Հասարակությունը դասակարգերի բաժանվելու հիմքը կազմել և տնտեսական պատճառները:

Դասակարգերը գոյություն են ունեցել վոչ միշտ: Դասակարգային հասարակությունից առաջ, մարդկության գոյության յերկարաձիգ շրջանում, վորը տևել է տասնյակ հազարավոր տարիներ, յերբ մարդիկ Եվրոպայում ապրելիս են յեղել փոքրիկ խմբերով, չեն յեղել և չեյին էլ կարող լինել դասակարգեր: Մարդկանց նախնական խմբերը մի վայրից մի այլ վայր չվելով՝ իրենց համար ուտելիք եյին հայթայթում—ժողովելով ուտելու բույսեր, խեցգետներ, վորդեր, միջատներ և այլն: Այն ժամանակ մարդկի իրենց զենք ու գործիք եյին ծառայեցնում մահակները, սրածայր վայտերը և կոպիտ տաշած քարերը: Տեխնիկայի այսպիսի ցածր մակարդակի վրա մարդը վոչինչ չեր կարող արտադրել. նա յուրացնում եր իր

դոյութեան համար անհրաժեշտ սննդատու նյութերը այն դրութեամբ, ինչպիսի դրութեամբ գտնում եր նրանց բնութեան մեջ: Սա արտադրելու տնտեսութիւն չեր, այլ յուրացնելու տնտեսութիւն: Նման տնտեսութիւն կարելի է տեսնել միքանի հետամնաց ժողովրդների մոտ, որոնք ապրում են Ասիայում և Աֆրիկայի յեվրոպացիներից հեռու յերկրամասերում:

Արտադրողական ուժերի ցածր մակարդակը հնարաւորութիւն չեր տալիս ստանալ հավելյալ արտադրանք, այսինքն՝ արտադրել ավելի, քան անհրաժեշտ եր մարդկանց դոյութիւնը պահպանելու համար: Հնարաւոր չեր վորևե մեկին չհագեցնել և հետևապես դասակարգերը դոյութիւն ունենալ չեյին կարող:

Միայն այն ժամանակ, յերբ մարդիկ անցան արտադրական տնտեսութեանը և արտադրութիւնը մարդկային հասարակութեան մեջ այնքան զարգացավ, վոր բանվորական ուժն արտադրողական աշխատանքի զարգացման հետևանքով կարողացավ արտադրել հավելյալ պրոդուկտ, հնարաւորութիւն ստեղծվեց չհագեցնելու մեկը մյուսին, պայմաններ ստեղծվեցին դասակարգերի առաջանալու համար: Հարկավոր եր միայն գտնել այնպիսի բանվորական ուժ, վորը կարողանար հավելյալ պրոդուկտ տալ:

Այսպիսի բանվորական ուժ եյին ներկայացնում ստրուկները: Հասարակական դանազան խմբերը միմյանց հետ պատերազմելիս գերիներին առաջ սպանում եյին կամ ուտում: Հետագայում արդեն գերիներին կյանքից չեյին զրկում և նրանց գարձնում եյին ստրուկներ, վորպեսզի նրանց բանվորական ուժը չահագործեյին:

Այսպիսով, մարդկութեան արտադրողական ուժերի զարգացման հետևանքով ծագեցին ստրուկների և



ստրկատերերի դասակարգեր: Ստրուկների արտադրած հավելյալ պրոդուկտով պայմանավորվեց ստրկատերերի դասակարգի հարստանալը:

Մարդկութեան հետագա ամբողջ պատմութիւնը իրենից ներկայացնում է մերթ սքողված, մերթ բացահայտ և հաճախ զինված ընդհարումների հանդես դասակարգային անդադար պայքար: Պատմական տարբեր շրջաններում պայքարել են միմյանց հետ տարբեր դասակարգեր ստրուկները և ստրկատերերը, ֆեոդալները և ճորտերը, կապիտալիստները և պրոլետարները և այլն:

Դասակարգային այս պայքարը կվերջանա միայն այն ժամանակ, յերբ պրոլետարիատը կկործանի դասակարգային հասարակութիւնը, պրոլետարիատի դիկտատուրան նպատակն է խլել բուրժուազիայից պետական իշխանութիւնը և կառուցել սոցիալիզմ: Յերկրագնդի վրա ԽՍՀՄ առաջին պրոլետարական պետութիւնն է, վորն արդեն թևակոխել է սոցիալիզմի շրջանը:

Մեր յերկրում արդեն վերացել է կապիտալիստների դասակարգը, այլ ևս դոյութիւն չունեն խոշոր կապիտալիստների դասակարգը և այժմ, չքավոր ու միջակ գյուղական տնտեսութիւնների համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացվում է կուլակների դասակարգը: Մենք ավարտում ենք սոցիալիստական խոշոր արդյունաբերութեան և սոցիալիստական գյուղատնտեսութեան հիման վրա—սոցիալիստական հասարակութեան հիմքի կառուցումը և շուտով ԽՍՀՄ-ում արմատախիլ կանվեն այն բոլոր պայմանները, վորոնք բաժանում են հասարակութիւնը դասակարգերի:

Սոցիալիստական հասարակութեան մեջ, վորտեղ արտադրութեան բոլոր միջոցները կհամապատասխանան,

լինի վորևե դասակարգ, հետևապես չի լինի նաև վորևե չահագործում:

Դասակարգերի ծագումը հնարավոր դարձավ արտադրողական ուժերի զարգացման վորոշ մակարդակի վրա, յերբ բանվորական ուժն սկսեց առաջ բերել հավելյալ պրոդուկտ:

Սակայն, հենց դասակարգերի գոյությունը պայմանավորված եր մարդկության արտադրողական ուժերի վոչ բավականաչափ զարգացման աստիճանով: Աշխատավոր բնակչության կլանված լինելով անհրաժեշտ աշխատանքով, ժամանակ չուներ մասնակցելու հասարակության գործերին, կառավարելու արտադրությունը զբաղվելու դիտության և այլն: Միայն շորի, երևակորակության և ժամանակակից բարդ մեքենաները գործադրող խոշոր արդյունաբերության ծագումը պայմաններ ստեղծեց դասակարգերի վոչնչացման համար: «Միայն խոշոր արդյունաբերության չնորհիվ ձեռք բերված աննախընթաց ուժեղացումը հնարավորություն և տալիս վերջապես բաշխել այդ աշխատանքին առանց բացառության հասարակության բոլոր անդամների միջև և սրանով մինչ այն աստիճան կրճատել յուրաքանչյուրի բանվորական ժամանակը, վոր բոլորն ազատ ժամանակ կունենան տեսականապես և գործնականապես մասնակցելու հասարակական բոլոր գործերին:

Հետևապես, այժմ առաջին անգամ ամեն մի չահագործող և իշխող դասակարգ վոչ միայն ավելորդ և դարձել, այլ և խոչընդոտ է հանդիսանում հասարակական զարգացման ճանապարհին, և այժմ անխուսափելիորեն նա կվերացվի» (Ենգելս):



## 2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Արտադրության կապիտալիստական յեղանակը ծագել է ֆեոդալական հասարակության խորքերում:

«Այն հեղաշրջման նախապատմությունը (սկզբնավորությունը), վորը հիմք ստեղծեց արտադրության կապիտալիստական յեղանակի համար,—ասում է Մարքսը,—տեղի ունեցավ XV դարի վերջին յերբորդ մասում և XVI դարի առաջին տասնամյակներում պրոլետարների ազատ մասսան, իրրև թռչուններ, չնորհիվ դրուժինաների (ջոկատների) վոչնչացման դուրս նետվեցին բանվորական շուկան»:

Այդ նույն ժամանակում, իր զարգացմամբ Եվրոպայի ամենատառաջավոր յերկրում՝ Անգլիայում տեղի եր ունենում գյուղացիական զանգվածների բռնի քայքայում, վորոնց վատում եյին իրենց բնակավայրերից, վորպեսզի ազատվող հողամասերն ոգտագործեն վոչխարաբուծության համար: Զրկված գյուղացիները դարձան պրոլետարներ, վորոնք զրկված լինելով արտադրության ամեն մի միջոցից, հարկադրված եյին իրենց գոյությունը պահպանելու համար վաճառել իրենց բանվորական ուժը:

Մյուս կողմից արտադրության կապիտալիստական յեղանակի նախընթաց շրջանում բուրժուազիան կատարել եր դրամական այնպիսի կուտակումներ, վորոնք կարող եյին գործադրվել խոշոր ապրանքային արտադրության մեջ: Այս հարստություններն առաջ եյին գալիս չնորհիվ խոշոր առևտրի, վորը հաճախ կապված եր կողոպուտի, վաչխաուվական գործառնությունների և այն գաղութների թալանի հետ, վորոնք գրավել եր եվրոպական բուրժուազիան XVI–XVIII դարերում: Սա այն

լինի վորևե դասակարգ, հետևապես չի լինի նաև վորևե շահագործում:

Դասակարգերի ծագումը հնարավոր դարձավ արտադրողական ուժերի զարգացման վորոշ մակարդակի վրա, յերբ բանվորական ուժն սկսեց առաջ բերել հավելյալ պրոդուկտ:

Սակայն, հենց դասակարգերի գոյությունը պայմանավորված եր մարդկության արտադրողական ուժերի վոչ բավականաչափ զարգացման ստիճանով: Աշխատավոր բնակչության կլանված լինելով անհրաժեշտ աշխատանքով, ժամանակ չուներ մասնակցելու հասարակության գործերին, կառավարելու արտադրությունը զբաղվելու գիտությամբ և այլն: Միայն շոգի, էլեկտրականության և ժամանակակից բարդ մեքենաները գործադրող խոշոր արդյունաբերության ծագումը պայմաններ ստեղծեց դասակարգերի վոչնչացման համար: «Միայն խոշոր արդյունաբերության շնորհիվ ձեռք բերված աննախընթաց ուժեղացումը հնարավորություն և տալիս վերջապես բաշխել այդ աշխատանքին առանց բացառության հասարակության բոլոր անդամների մեջև և սրանով մինչ այն աստիճան կրճատել յուրաքանչյուրի բանվորական ժամանակը, վոր բոլորն ազատ ժամանակ - կունենան տեսականապես և գործնականապես մասնակցելու հասարակական բոլոր գործերին:

Հետևապես, այժմ առաջին անգամ ամեն մի չհագործող և իշխող դասակարգ վոչ միայն ավելորդ և դարձել, այլ և խոչընդոտ և հանդիսանում հասարակական զարգացման ճանապարհին, և այժմ անխուսափելիորեն նա կվերացվի» (Ենգելս):



## 2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Արտադրության կապիտալիստական յեղանակը ծագել է ֆեոդալական հասարակության խորքերում:

«Այն հեղաշրջման նախաբանը (սկզբնավորությունը), վորը հիմք ստեղծեց արտադրության կապիտալիստական յեղանակի համար,—ասում է Մարքսը,—տեղի ունեցավ XV դարի վերջին յերրորդ մասում և XVI դարի առաջին տասնամյակներում պրոլետարների զանգվածների (ջոկատների) վոչնչացման դուրս նետվեցին բանվորական շուկան»:

Այդ նույն ժամանակում, իր զարգացմամբ Յեվրոպայի ամենաառաջավոր յերկրում՝ Անգլիայում տեղի եր ունենում գյուղացիական զանգվածների բռնի քայքայում, վորոնց վտարում եյին իրենց բնակավայրերից, վորպեսզի ազատվող հողամասերն ոգտագործեն վոչխարաբուծության համար: Ֆայքայված գյուղացիները դարձան պրոլետարներ, վորոնք զրկված լինելով արտադրության ամեն մի միջոցից, հարկադրված եյին իրենց գոյությունը պահպանելու համար վաճառել իրենց բանվորական ուժը:

Մյուս կողմից արտադրության կապիտալիստական յեղանակի նախընթաց շրջանում բուրժուազիան կատարել եր զրամական այնպիսի կուտակումներ, վորոնք կարող եյին գործադրվել խոշոր ապրանքային արտադրության մեջ: Այս հարստություններն առաջ եյին յեկել շնորհիվ խոշոր առևտրի, վորը հաճախ կապված եր կողոպուտի, վաշխառական գործառությունների և այն գաղութների թալանի հետ, վորոնք գրավել եր յեվրոպական բուրժուազիան XVI–XVIII դարերում: Սա այն

չքջանն եր, յերբ գոնվեցին ծովագնացության ուղիներ դեպի Հնդկաստան, Ամերիկա և Ավստրալիա: Այդ ժամանակամիջոցում, յեվրոպական առևտրական կապիտալը մեկը մյուսի հետևից կազմակերպում եր եքսպեդիցիաներ, վորոնց գլուխն եյին անցել ընչաքաղց արկածախնդիրները՝ նոր յերկրամասեր գրավելու համար:

Բուրժուազիան միշտ ել աչքաթող եր ապացուցել բանվորներին, թե նրա հարստությունները առաջ են յեկել իր նախնիքների աշխատանքի և խնայողության հետևանքով, բայց վոչ յերբեք չահագործման և աշխատավորական զանգվածները կողոպտելու ճանապարհով: Այդ հեքյաթները կարլ Մարքսը կծու ծաղրանքի և յենթարկում:

«Անհիշելի ժամանակներում,— հեղնորեն չարաղրում է նա այդ հեքիաթները, — մի կողմից դոյություն ուներ աշխատասեր, խելացի և առաջին հերթին խնայող ընտրյալների մի խումբ և մյուս կողմից՝ ծուլերի և տկլորների մի ղանգված, վորը վատնում եր, ինչ ուներ-չուներ: Այնպես յեղավ, վոր առաջինները հարստություն կուտակեցին, իսկ վերջինների մոտ վերջ ի վերջո, բայցի նրանց սեփական կաշուց, վաճառելու այլևս վոչինչ չմնաց: Այդ ժամանակից դոյություն ունի ընչազուրկների մի մեծ մասսա, վորը չնայած իր ամբողջ աշխատանքին վաճառելու վոչինչ չունի, բայց հենց իրենից, և մի բուռը հարուստներ, վորոնց հարստությունն անդադար աճում է, թեև նրանք չատ վաղուց դադարել են աշխատելուց»:

Սակայն իրականության մեջ ամենևին այդպես չի յեղել, ինչպես պատմում է այդ մասին բուրժուազիան:

Յեվրոպական կապիտալիստների հսկայական հարստությունները առաջ են յեկել բառիս իսկական իմաստով միլիոնավոր աշխատավորների վոսկրներից և արյունից: «Կապիտալի կուտակումը—մարդկության տեղեկության մեջ սրով և հրով գրված մի պատմություն» (Մարքս): Այս հարկադրված են խոստովանվել նույնիսկ մի քանի բուրժուական գիտնականներ:

«Մենք հարստացել ենք,—ասում է բուրժուական տնտեսագետ Զոմբարտը,—վորովհետև ամբողջ ցեղեր և ժողովուրդներ վոչնչացել են մեզ համար և ամբողջ յերկրամասեր անմարդաբնակ են դարձել մեզ համար»:

Բուրժուական գիտնականի այս խոսքերը մեր ժամանակ հատուկ նշանակություն են ստանում, քանի վոր միլիոնային բուրժուազիան ձգտելով տապալել մեր սոցիալիստական շինարարությունը, սպառազինված հարձակում է պատրաստում ԽՍՀՄ-ի վրա, անմիջական աջակցություն ստանալով Ռամզիններից, Զայանովներից, Կոնդրատևներից, ինչպես և Գրոմանովների ու Սուխանովների գլխավորած հակահեղափոխական մենշևիկյան կազմակերպություններից:

Սակայն, զինված ինտերվենցիայի համար պահանջվում են խոշոր ժողովրդական մասսաներ: Այդ իսկ պատճառով ԽՍՀՄ-ի դեմ ուղղված իր վրդովմունքներով բուրժուազիան աշխատում է հիմարացնել բուրժուական յերկրների աշխատավորների հետամնաց շերտերը, դիմավորապես գյուղական ազգաբնակությունը, քանի վոր պրոլետարիատը, համարելով ԽՍՀՄ-ը իր միակ հայրենիքը, ել սովետի վճռական կողմն է կանգնում նրա պաշտպանության ուղիի վրա: Նախապատրաստելով ժողովրդական զանգվածներին ինտերվենցիայի համար, բոլոր յերկրների կապիտալիստները վողջ աշխատում տարածում են դիտավորյալ սուտ տեղեկություններ ԽՍՀՄ-ում իբր թե գոյություն ունեցող «պարտադիր

աշխատանքի» մասին, հույս տածելով, թե աշխատավորական մասսաների կիսագիտակից խավերը կհավատան այդ ստոր զրպարտություններին: Մինչդեռ ինքը բուրժուազիան վոչ միայն սովի մատնելով հակադրում է բանվորներին աշխատել իր գործարաններում, այլ և մինչ այժմ մեծագույն չափերով կիրառում է ստրկական աշխատանքն աֆրիկական, ամերիկական և ասիական գաղութներում: Ստրկական աշխատանքի անտանելի պայմաններում տանջանք ու հարյուր հազարներով նահատակվում են նեգրերը, անգամիտները բրազիլիայի, հնդիկները և ուրիշները:*)

«Ստրկությունը,—գրում է Մարքսը,—մեքենան է, վարկի նման կազմում է բուրժուական արդյունաբերության անկյունաքարը: առանց ստրկության չէր կարող լինել բամբակը, առանց բամբակի անհնարին է ժամանակակից արդյունաբերությունը: Ստրկությունը նշանակալից դարձրեց ժամանակակից գաղութները, գաղութները ստեղծեցին համաշխարհային առևտուրը, համաշխարհային առևտուրը խոշոր արդյունաբերության անհրաժեշտ պայմանն է ներկայացնում»:

«Կապիտալի» I հատորի 24-րդ գլխում Մարքսը շատ վառ է բերում, թե գաղութներն ինչպիսի դեր են կատարել կողոպուտի են ենթարկվում հզոր արտադրության կապիտալիստական յեղանակի ամրապնդման:**)

XVIII դարի վերջում Անգլիայում տեղի ունեցած խոշոր փոփոխությունները՝ թե գյուղատնտեսության, թե առևտրի և թե արդյունաբերության բնագավառներում արդյունաբերական կապիտալիզմի հաղթությունն

*) Տես հավելված № 1
**) Տես հավելված № 2



59174. 66

է. տեղի ունեցած փոփոխությունները արդյունաբերական հեղաշրջում էր կամ արդյունաբերական հեղափոխություն, որը հաստատեց արտադրության կապիտալիստական յեղանակի գերիշխանությունը:

## 3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄՆ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

Անգլիայում արդյունաբերական հեղաշրջման առաջին նախադրյալներից մեկն էր գյուղատնտեսության մեջ տեղի ունեցած խոշոր փոփոխությունները, որոնք ստացան «ագրարային հեղափոխություն» անունը:

Ագրարային հեղափոխությունը կայանում էր նրանում, որ մանր հողագործությունը բռնի կերպով փոխարինվում էր խոշոր, կապիտալիստական հողագործությամբ: Առևտրական կապիտալն ի դեմս խոշոր հողատերերի և վաճառականների բռնագրավում էր մանր սեփականատերերի հողերը, որպեսզի չհաղթական նպատակներով ոգտագործի այդ հողերն ավելի ռացիոնալ ձևով: Այդ նպատակով պարլամենտն ընդունում է համապետական հողատիրությունը վերացնող որենքներ և համապետական հողերը «ցանկապատվում են». ի հաշիվ մանր սեփականատերերի համայնական հողերից կորզվում, զատվում են կալվածատիրական հողամասերը: Այս ճանապարհով ձեռք բերված խոշոր հողամասերի վրա կալվածատերերը կազմակերպում են հացահատիկային և անասնապահական խոշոր ֆերմերական տնտեսություններ (առանձնապես անասնապահական տնտեսություններ, քանի որ հում բրդի աճող պահանջի հետևանքով վոչխարաբուծությունը մեծամեծ ոգուտներ էր տալիս). «ցանկապատված» տնտեսություն



ИНСТИТУТА

վոչ միայն գյուղացիական համայնական հողերի գրավումը, այլ և նրանց տնտեսությունների քայքայումը. քանդվում էին տներն ու շենքերը, վոչնչացվում ցանքերն ու ծառատունկերը, քայքայվում ամբողջ գյուղեր ու ավաններ: Տեղի էր ունենում իսկական մի հեղափոխություն, վորը ժամանակակիցների վրա թողնում էր տարերային արհավիրքի ազդեցություն:

Ագրարային հեղափոխության հետ միաժամանակ տեղի էր ունենում արդյունաբերական հեղափոխություն, վորը վերջացավ մանր արտադրության կրճատմամբ և կապիտալիստական արտադրության հաղթանակով:

XVII դարում և XVIII դարի սկզբում Անգլիան ծանոթ էր միայն մանր արդյունաբերությանը, այսինքն՝ արհեստաներին: Հաղարավոր մանր, միանդամայն ինքնուրույն արհեստավորներ արտադրում էին մահուդ, բրդի գործվածք և իրենց արտադրանքը վաճառում չուկայում՝ առանց միջնորդների ոգնության: Սակայն, չուկայի ընդլայնման և արհեստավորների արտադրանքի պահանջի աճման հետևանքով առաջ եկան առևտրական միջնորդներ, վորոնք արհեստավորներից ապրանքները գնում էին և վերսին վաճառում չուկայում. նույն միջնորդները կատարում էին հումքի՝ բրդի, ներկերի մեծաքանակ գնումներ և վաճառում արհեստավորներին, տալով վերջիններիս վարկ և հետզհետե ավելի ու ավելի նրանց կաշկանդում: Ժամանակի ընթացքում այդ միջնորդը դառնում է վաճառական և ձորտական կախման մեջ պահում բազմաթիվ արհեստավորների. XVIII դարի 60-ական թվերին Արևելյան Անգլիայում 50 «ձեռներեցներ» (այսինքն՝ խոշոր վա-



ճառականներ) այդպիսի ձորտական կախման մեջ էին պահում 1200 մահուդ պատրաստող արհեստավորների:

Այսպիսով, արհեստավորը կորցնելով իր ինքնուրույնությունը, դառնում է խոշոր վաճառականից կախման մեջ գտնվող տնայնագործ, վոչ հեռու ապագայում վաճառականը նույնիսկ ղրկում է տնայնագործին իր սեփական տնակում, իր «լուսավառ խցում» աշխատելու իրավունքից և ստիպում է իրեն համար աշխատող բոլոր մահուդագործներին և ջուլհակներին աշխատել մի չենքի մեջ: Այսպիսի կենտրոնացումը չահավետ էր վաճառականի համար, քանի վոր նա հնարավորություն էր ստանում ուշի-ուշով հետևել, վորպեսզի տնայնագործներն ավելի չուտ արտադրեն և ավելի քիչ ծախսեն հում նյութը: Արտադրության այսպիսի միությունը հիմնված տնայնագործների աշխատանքի կենտրոնացման վրա, դեռևս առանց մեքենաների կիրառման, հենց մանուֆակտուրան է,— արհեստից դեպի գործարան տանող արտադրության փոխանցիկ ձևը:

Մանուֆակտուրան գործարան չէ, բայց արհեստի համեմատությամբ նա արդեն զգալի առաջադիմություն է ներկայացնում. այստեղ արդեն հնարավոր է աշխատանքի վորոշ տեխնիկական բաժանում կատարել, ընդվորում արտադրության առանձին մոմենտները կարելի է բաշխել բանվորների խմբակների մեջ: Աշխատանքի տեխնիկական բաժանումը նախադրյալներ ստեղծեց մեքենաների հանդես գալու համար, վորոնք պարզեցրին և արագացրին արհեստավորների աշխատանքը:

Մեքենան ավարտեց մանր արտադրողի ճորտացման պրոցեսը, անջատելով նրան արտադրության միջոցներից և վերածելով նրա ուժն ապրանքի:

Անգլիայում մեքենաների յերևան գալը և նրանց

լան կիրառումն արտադրության բոլոր բնագավառներում պահպանվեց բամբակեղեն տեխնիկական դյուտերով, որոնք չատ ավելի բարձրացրին արտադրանքի քանակը և ժամանակին արտադրությունը։ Մեքենաների մուտքն Անգլիայում առաջ բերեց արդյունաբերական մի կատարյալ հեղաշրջում, որի հետևանքով ծնունդ առավ խոշոր կապիտալիստական արտադրությունը*)։

Կապիտալիստական արդյունաբերության հանդեպ գալը պահանջում էր հաղորդակցության միջոցների կատարելագործում, որի պատճառով էլ Անգլիայի արդյունաբերական հեղաշրջման շրջանը հաղորդակցության բնագավառում խոշոր տեխնիկական կատարելագործություններով ժամանակաշրջան է կազմում. հնվում են ջրանցքներ, որոնց շնորհիվ մանր-նավագնաց գետերը ջրային լավ կազմակերպված հաղորդակցության սիստեմի մեջ են մտնում։ XIX դարի երկրորդ տասնամյակում կառուցվում են երկաթուղիներ, սկզբում ձիաքարշ, իսկ ապա, Ստեֆենսոնի հնարած շոգեմեքենայից (1825 թ.) հետո, առաջ և դալիս խոշոր ապրանքատեղափոխման պահանջներին միանգամայն հարմարեցված երկաթուղային հաղորդակցություն. համարյա միաժամանակ չահվում է նաև շոգենավային հաղորդակցությունը (շոգենավի դյուտը տեղի ունեցավ 1814 թ.)։

Արդյունաբերության մեջ լիակատար հեղաշրջում առաջացավ շոգեչարժի դործադրությամբ. 1784 թվին Ջեմս Ուատտի գտած շոգեչարժիչը մեծ փոփոխություններ մտցրեց արդյունաբերության բոլոր բնագավառներում։ Ժամանակակիցներից մեկը գրում էր, թե

*) Տես հավելվածներ № 3 և 4։



շոգու գործադրությունն առաջացրեց արդյունաբերական ձեռնարկությունների տեղափոխություններ, նրանց մոտեցրեց չուխաներին և վոր «գործարանատերերի նոր ցեղը շոգու կիրառումից հետո գործարանները կառուցում էր ամենուրեք, վորտեղ հնարավոր էր լինում, առանց քաշվելու տեղի ընտրությունից»։

Բերենք մի քանի թվական տվյալներ, վորոնք ցույց են տալիս, թե խոշոր արտադրության ծագելուց հետո ինչպես և ամեն արդյունաբերություն Անգլիայում։ 1720 թվին Անգլիայում ընդամենն արտադրվում էր 18 հազար տոննն յերկաթ, իսկ 1812 թվին՝ 250 հազար տոնն. 1700 թվին քարածուխի հանույթը կազմել է 2148 հազար տոնն, իսկ 1795 թվին՝ 10080 հազար տոնն։

Արդյունաբերական հեղաշրջման շրջանն անգլիական խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչները համարում էին իրենց հարստանալու «վոսկեդարը». նրանց շահերն արտահայտող ականավոր մենիստր Վ. Պիտը 1792 թվին պարլամենտում իր արտասանած ճառի մեջ ընդունեց, վոր արդյունաբերության զարգացման մեջ իր ունեցած հաջողություններով Անգլիան պարտական է «արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի մեջ կատարած տեխնիկական կատարելագործություններին և աշխատանքի արտադրողականության այն աստիճանին, վորին հասել է մեքենայական արտադրության կիրառմամբ»։

## 4. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերական հեղաշրջումը մեծ փոփոխություններ մտցրեց նաև սոցիալական կարգերի մեջ. քաղաքների աղգաբնակությունն ավելացավ, կողոպտ-

ված ու քայքայված գյուղացիները գյուղերից ու տներից սկսեցին տեղափոխվել քաղաքները և այնտեղ դառնալ արդյունաբերական բանվորներ, հանդես գալով խիտ բնակված և դործարաններով ծածկված ամբողջ շրջաններ (գլխավորապես Մեծ Բրիտանիայի կղզու հյուսիս-արևմտյան անկյունում, վորտեղ Մանչեստրը հարևան ունենալով Լիվերպուլի պես խոշոր նավահանգիստը, դարձավ բամբակի արդյունաբերության կենտրոնը, Բերմինհամը — մետաղագործության կենտրոնը, Լիդսը — բրդի արդյունաբերության կենտրոնը):

Արդյունաբերական հեղաշրջումը սրեց կապիտալիստական հասարակության դասակարդերի — բուրժուազիայի և պրոլետարիատի պայքարը:

Անգլիայում XVIII դարի վերջում տեղի ունեցավ բանվորների առաջին յելույթը՝ ընդդեմ կապիտալի չահագործման, իսկ XIX դարի առաջին կեսում Անգլիան դարձավ բանվորական չարժման կլասիկ յերկիրը: Բանվորների չահերը և նրանց չահագործող կապիտալիստների չահերն ընդհարման մեջ մտան չատ վաղ, ընդ վորում սկզբում դա արտահայտվեց բանվորների տարերային յելույթներով մեքենաների և դործարանների դեմ, իսկ հետագայում բանվոր դասակարդի կազմակերպված յելույթներով պաչտպանելու իրենց տնտեսական չահերն ու քաղաքական իրավունքները:

Արդյունաբերական հեղաշրջումը վերակառուցելով յերկրի տնտեսական կյանքը և հասարակական հարաբերությունները, դրանով իսկ վերացրեց արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման մեջև դոյություն ունեցած հակասությունները: Անգլիան թևակոխեց կապիտալիստական զարգացման մի նոր ֆազա — արդյունաբերական կապիտալիզմի շրջանը: Անգլիայում հաստատվեց խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը, հանդես յեկան բուրժուազիան և պրոլետարիատը: Հեղաշրջման հետևանքով քաղաքական առպարիզում յերևան յեկավ բուրժուազիան; վորը պայքար բռնեց իր քաղաքական դերիշխանության համար: Անգլիական բուրժուազիան իր այդ դերքին հասավ այսպես ասած՝ խաղաղ ճանապարհով և իշխանությունն անցավ նրա ձեռքն առանց քաղաքական հեղաշրջման: Անգլիայից մի քանի տասնյակ տարի հետո արդյունաբերական հեղաշրջումը կատարվում է նաև այլ յերկրներում, բայց ինչպես կտեսնենք հետևյալ պարագրաֆների ժամանակ, այդ հեղաշրջումը տեղի է ունեցել վոչ միատեսակ և կապված է յեղել այս կամ այն յերկրի համար բնորոշ յերևույթների հետ:

## 5. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի առաջին տասնամյակներն Անգլիայի համար ևս յեղել են արդյունաբերական կապիտալիզմի հաղթանակի և բանվորական չարժման սկզբնավորության շրջան: Այդ տարիներում մեքենայական տեխնիկայի զարդացումը հասել էր ավելի բարձր աստիճանի և վերջնականապես կործանել էր մանր արհեստավորական արտադրությունը դարձնելով մանր արհեստավորներին պրոլետարներ: Ամեն մի նոր մեքենայի յերևան գալն ավելացնում էր գործազուրկների բանակը և ուժեղացնում էր նրանց չահագործումը կապիտալիստների կողմից, միաժամանակ աճում էր գործարաններում աչխատող կանանց և յերեխաների քանակը և անդադար նվազում էր աչխատավարձի չափը:

Դեռևս XVIII դարի 90-ական թվերին Անգլիայում տեղի էին ունենում բանվորների գործադուլներ և «ապստամբություններ»՝ կապված գործարանների հըրկիզության և մեքենաների մասսայական վոչնչացման հետ. 1789 թվին «լուդդիտների» (մեքենաներ վոչնչացողների) դեմ հրատարակվեց մի որենք, վորով մեքենաներ վոչնչացնողները յենթարկվում էին մահվան պատժի: Նոր դարի սկզբին ծագում և բանվորական մի նոր շարժում, վորը ձգտում էր պարլամենտում ձեռքերըել իր չահերի պաշտպանությունը. հիմնվում են բանվորների միություններ («արեղությունիոններ», այսինքն՝ (պրոֆմիություններ), վորոնք, չնայած կառավարության հետապնդումներին, բանվորների մեջ պրոպագանդ են մղում հոգուտ ընտրական իրավունքի լայնացման, կարծելով, թե բանվորների դրությունը կարող են բարելավել անցկացնելով պարլամենտ իրենց ներկայացուցիչներին:

Միաժամանակ պարլամենտական ռեֆորմին էր ձգտում նաև բուրժուազիան, վորը մեծապես նեղվում էր դեռևս վերջնականապես չվորտակված «հին կարգի» մնացորդների չրջանակներում: Այդ ժամանակամիջոցում Անգլիան դարձել էր արդյունաբերական կապիտալիզմի առաջավոր յերկիրը. Նապալեոնյան Ֆրանսիային հաղթահարելուց հետո, Անգլիան ամրապնդելով իր դերիչխանությունը՝ դարձել էր «ծովերի տիրուհին» և իր աղդեցությանը յենթարկել Եվրոպայից դուրս գտնվող բոլոր պետություններն ու ազգությունները: Բուրժուազիան դարձել էր հրամանատար դասակարգ և ձգտում էր՝ իրեն համար լայն հորիզոններ բացող քաղաքական ռեֆորմներով ապահովել իր հետագա դերիչխանությունը: Հին ընտրական սիստեմը, վորը գերազանցություն էր տալիս՝ անցյալներում խոշոր ֆեոդալական արիստոկրատիային պատկանող հին ավաններին (այսպես կոչված՝ «փտած ավաններին»), քան նոր արդյունաբերական քաղաքներին և բնակավայրերին,—հակասում էր իրերի փաստական դրությունը՝ բուրժուազիայի դերիչխությունը համայնքների պալատում (պարլամենտում), ընդ վորում բուրժուազիան ձգտում էր, վորպեսզի մինիստրները նշանակվեն պարլամենտի ամենասաղդեցիկ կուսակցությանը պատկանող անդամներից: Բուրժուազիային հաջողվեց անցկացնել՝ իր իշխանությունն ապահովող մի շարք որենքներ: Որինակի համար, 1815 թվին հրատարակվեցին, այսպես կոչված, «հացի որենքները», վորոնց համաձայն արտասահմանյան հացի ներմուծումը (գլխավորապես Ռուսաստանից) թույլատրվում էր միմիայն տեղական՝ անգլիական հացի գները բարձր լինելու դեպքում. «հացի որենքները» պաշտպանում էին հողատերերի չահերը և միանգամայն հակասում բուրժուազիայի չահերին: Այս որենքների դեմ պայքարելու ընթացքում բուրժուազիան ձգտում էր դրավել բանվորների համակրանքը, քանի վոր «հացի որենքներով» առաջացած թանգությունը խիստ ծանր է անդրադառնում մանավանդ բանվորների վրա: Հին ընտրական իրավունքի վերացման համար 1819-ից մինչև 1832 թվիը ծավալվում և մի շարժում, վորի մեջ բանվորական կազմակերպությունները մասնակցություն են ունենում բուրժուազիայի հետ միասին և վորը վերջանում է 1832 թվին ընդունված որենքով, վորի համաձայն ընտրական իրավունքները տարածվում են՝ տարեկան վոչ պակաս քան 10 ֆունտ ստերլինգ (այսինքն՝ նախապատերազմյան

100 ռ.) չեկամուտ ունեցող բոլոր քաղաքացիների վրա։ 1834 թվին բուրժուազիան անցկացրեց մի որենք աշխատանքի տների մասին, ըստ որի չեկամուտ չունեցող բանվորները պիտի տեղավորվեյին այդ աշխատանքի տներում, վորտեղ սահմանված կարդերը մոտենում եյին բանտային ռեժիմին. այդ որենքով բուրժուազիան հույս եր տածում աղատվել գործադուրկներին ոգնելու ծախքերից և բանվորական չարժման բունկումներից։

Սակայն, 30-ական թվերի վերջում և 40-կան թվերի սկզբում ծագած արդյունաբերական ապրանքների վաճառքի կրիզիսը (ճգնաժամը) և գործադրկության աճումը, նոր աչխուժացում և մտցնում բանվորական չարժման մեջ, վորն ընդունում և ավելի կազմակերպված բնույթ և պատմության մեջ հայտնի յև չարտիզմ անունով։

Այս չարժումն իր անունն ստանում է «չարտեր—խարտիա բառից, վորովհետև չարժման լոզունգը ներկայացնում է՝ պայքար խարտիայի համար, այսինքն՝ ընդհանուր ընտրական իրավունքի որինագծի համար։ Չարտիզմն իրենից ներկայացնում է մասսայական բանվորական չարժման այն ետապը, յերբ նա հետզհետե սկսում է աղատագրվել բուրժուական աղդեցությունից և սկսում է յուրացնել պրոլետարական չարժման տակտիկան. յերկրորդ չրջանում (1842–1847 թ. թ.) սաքրդլ չարժման տակը վորոշում է քաղաքական բանվորական կուսակցությունը, վոր ձգտում եր անցկացնել խարտիան։ Այս չրջանում չարժմանը հարում եյին մի քանի առանձնակի և հակադիր հոսանքներ, վորպիսի հանգամանքը պայմանավորված եր չարժմանը մասնակցող տարբեր դասի սոցիալական խմբավորումներով. այ թևն արտացոլում եր մինչև և մանր բուրժուազիայի չահերը, այսինքն՝ խոշոր մեքենայական արդյունաբերության չնորհիվ քայքայված մանր սեփականատերերի չահերը, վորոնց նպատակը վերջին հաշվով ընդհանուր ընտրական իրավունք ձեռք բերելն եր. չափավոր խմբակին առաջադրում եր մի չարք սոցիալ-տնտեսական պահանջներ — հարկերի նվազեցում, չքավորական որենքի վերացում, արհեստակցական միությունների ազատություն. ձախ թևը, վորի ցայտուն ներկայացուցիչն եր Հանդիսանում ժողովրդականության վայելող Ջուլհակների առաջնորդ Ոկոնորը, առաջադրում եր այնպիսի պահանջներ, ինչպես յեկեղեցու բաժանումը պետությունից, ընդհանուր ուսուցում մրցունելը, ութժամյա բանվորական որ սահմանելը, մչտական զորքի վերացումը. վերջապես մանր արհեստավորների և գյուղատնտեսական բանվորների քայքայված զանգվածները հակված եյին պահանջելու բուրժուազիայի իշխանության խորտակումը և յերկրի հետագարձ ընթացքը դեպի հին գյուղատնտեսական Անգլիայի կարգերը (այս որամադրությունների արտահայտիչն եր նախկին քահանա Սաֆֆիենը*)։

1848 թվին պարլամենտն ընդունեց մի որենք (բիլլ), վորով տեքստիլ ձեռնարկություններում աշխատող կանանց և փոքրահասակների համար սահմանվում եր 10-ժամյա բանվորական որ, բայց նույն տարում նոր ուժով վերսկսվեց չարտիստական չարժումը. 1848 թվի ապրիլին Լոնդոնում դումարվեց չարտիստական կոնվենտը և վորոշեց պահանջել պարլամենտից խարտիայի

*) Տես հավելված № 5։

հաստատումը· խարտիայի համար կազմած պետիցիայի տակ Ոկոնորը ժողովեց 5·700 հազար ստորագրություն և տարավ պարլամենտ, սակայն յերրորդ անգամ պարլամենտը մերժեց պետիցիան:

Այսպիսով չարտիստական շարժումը յենթարկվեց լիակատար անհանգստության: Այս շարժման անհաջողության պատճառը շարժմանը մասնակցող դանդվածների խայտաբղետ սոցիալական կազմն եր, վորն իր հերթին հետևանք եր կապիտալիստական հարաբերությունների անզարգացած դրության և պրոլետարիատի թվության: Բայց և այնպես չարտիստական շարժումը դասակարգային պայքարի պատմության մեջ անհետաք չանցան, քանի վոր նա իր մեջ կրում եր ապագա պրոլետարական շարժման ելեմենտները:

Չարտիզմն ահագին ազդեցություն ունեցավ միջազգային բանվորական շարժման և սոցիալիզմի հետագա զարգացման վրա: Վոչ միայն այս շարժման պրակտիկան շատ բան սովորեցրեց բոլոր յերկրների բանվորներին, այլև չարտիզմի տեսությունը պարունակում եր բավմաթիվ այնպիսի ելեմենտներ, վորոնք հետագայում մտան գիտական սոցիալիզմի մեջ իբրև նրա բաղկացուցիչ մասը:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Տվյալ պարապմունքը կարելի յե մշակել մի քանի նվազ· այս նկատառումով նյութը պետք բաժանել հետեվյալ ձեվով·

Բաժին I· 1) Կապիտալիստական հասարակությունը և նրա հիմնական դասակարգերը:

2) Արտադրության կապիտալիստական յեղանակի ծագումը Եվրոպայում XVIII դարի վերջում: Անգլիան—արդյունաբերական հեղաշրջման առաջավոր յերկիրը:

3) Արդյունաբերական հեղաշրջումն Անգլիայում:

Բաժին II· 4) Արդյունաբերական հեղաշրջման նշանակությունը:

5) Բանվորական շարժման սկզբնավորությունն Անգլիայում:

Նյութի մշակելն այնպես պետք կատարել, վոր հենց պարապմունքի նյութին դուգընթաց մշակվի նաև հավելվածի նյութը· 1—3 կետերն ուշադրությամբ կարդալուց հետո պետք կարդալ հավելվածի 1, 2, 3 և 4 հատվածները· 4—5 կետերը կարդալուց հետո հարկավոր և կարդալ 5 հատվածը: Դրանից հետո հիմնավոր կերպով պետք մտածել կարդացածի վրա և մշակել ամբողջ նյութը· այս մշակման ավարտումը կպատմում և վերաստուգիչ հարցերին պատասխանելու մեջ: I բաժնի մշակումն ի վերջո ուսանողին պետք տա ճշգրիտ հասկացողություն կապիտալիստական հասարակության ծագման և հիմունքների, ինչպես և նրա ներքո տեղի ունեցող դասակարգային պայքարի մասին· II բաժնի մշակումը պետք տա պարզ պատկերացում Անգլիայում կատարված արդյունաբերական հեղաշրջման, նրա պատմական նշանակության և չարտիստական շարժման բնույթի մասին: Պարապմունքն իր ամբողջականությամբ պետք լուսաբանի ուսանողների մեջ բուրժուական հասարակության պատմական ձևերից մեկի, ինչպես և բուրժուական հեղափոխության նախապայմանների—արդյունաբերական հեղաշրջման ծագումն ու բնույթը:

## ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1· Ի՞նչ է կապիտալիստական հասարակությունը:

2· Ի՞նչպես և բացատրում Կ· Մարքսն արտադրության կապիտալիստական յեղանակի ծագումը և ի՞նչ է (ըստ Մարքսի) սկզբնական կուտակումը:

3. «Կոմունիստական մանիֆեստն» ինչպե՞ս է քաղաքում դասակարգային պայքարի ծագումը:

4. Ցերկրի հասարակարգի մեջ ինչպիսի փոփոխություններ են պահանջում տեղի ունեցող կուսակումը և ինչպե՞ս պիտի հասկանալ Մարքսի խոսքերը՝ «կապիտալի կուսակումը—մարդկության տարեգրության մեջ արյով և հրով գրված մի պատմություն են»:

5. Ինչո՞ւմն եր կայանում ապրարարչին հեղափոխությունը և յերկրի եկոնոմիկայի մեջ նրա ունեցած անմիջական հետեվանքները:

6. Ինչպե՞սի ճանապարհով կորցրեց իր ինքնուրույնությունն անգլիական արհեստավորը:

7. Արտադրության կապիտալիստական յեղանակի մեջ ինչպիսի դեր է կատարել մեքենան:

8. Ինչպե՞ս եր նայում Մարքսը մեքենաների հեղափոխական նշանակության վրա:

9. Ինչպիսի նշանակություն են ունեցել տեխնիկական գյուտերն արդյունաբերական հեղաշրջման մեջ:

10. Ինչպիսի տնտեսական և քաղաքական հետեվանքներ ունեցավ արդյունաբերական հեղաշրջումը:

11. Ինչո՞ւմն է կայանում չարտիստական շարժման պատմական նշանակությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԱՋՆԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՑԵՎ ԿԱՐԴԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Фридлянд и Слуцкий. История революционого движения Западной Европы. 1 кн. 2 главы. (Нов. изд. Книга имеется в библиотеке).

2. Фридлянд. История Западной Европы. I часть, 1-ое полугодие.

3. Лукин. (Н. Антонов). Новейшая История Западной Европы. 1 курс, первое полугодие.





## 1. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԴԵՄՔԸ

*Արտահայտության գրողներն ու ժուռնալիստները կապիտալիստական յերկրներում և դաղութներում տիրող «աղատ» աշխատանքի մասին.—*

«Հասարակական տեսակետից բանվորներն դասակարգը կապիտալն պատկանող նույնպիսի մի իր է, ինչպես և անկենդան բանվորական գործիքը.... Հոգեկան ստրուկը կաշկանդված եր չղթաներով, վարձու բանվորն անտեսվույթի թելերով կապված է իր տեփականատիրոջը, միայն թե այդ տեսիլականատեսն առանձնակի կապիտալիստը չէ, այլ կապիտալիստների դասակարգը»... (Մարքս, «Կապիտալ հատ. I, էջ 55):

## ՎԱԽՈՎ ՏԱՆՋԵԼԸ

*Ամերիկական «Նոր Աստանաներ» ամսագրի փետրվարի գրքում Ռոբերտ Կրյուդենը զեկուցել է մի ակնարկ Ֆորդի գործարանում, այդ «աղատ» ու վաստակաբերգործված կապիտալիստական չահագործման մթնոլորտում տիրող աշխատանքի պայմանների մասին:*

«Արդեն մի քանի որ է, ինչ կատարվելիք կրճատումների լուրերը մղձավանջի նման ծանրանում են մեզ վրա: Առանց այդ էլ մենք քիչ էինք գրուցում, իսկ այժմ մենք բնավ դադարեցրինք խոսել: Կանգնած մեքենաների առաջ մենք աշխատում ենք անմռունչ ու տենդոտ և ոչի մեջ կատարի արագությամբ պրսպղում են պղպատ ու ձեռքեր: Մի րոպեում տասնյակերկ, մի ժամում յոթհարյուր վաթսուն, մի հերթա-

փոխում վեց հազար յերեսանասուն հինգ հատ մխոց (поршень)։ Ահա այսպես աշխատում ենք մենք որոշի վրա, լինքներս զրկելով մեզ մի կտոր հացից։ Մենք չտապում ենք որեցոր, դիշերից-դիշեր, վորպեսզի հենց մեզ անհաց թողնենք։

Այն դիշերը, յերբ տեղի ունեցան առաջին կրճատումները, սկսվից բավականին հանդիստ։

Յերեկվա հերթափոխի բանվորները չկարողացան մեզ հաղորդել մի վրուան նոր բան։ Ինչ կա վոր, սա լավ նշան է։ Ինչպես և միշտ, մենք աշխատում էինք կատարյալ արագությամբ մինչև «նախահաշվիչի» ընդմիջումը, այնինքն՝ առավոտվա ժամը յերեք և կես։ Տասնևհինգ րոպեի ընթացքում կենդանական աղաղուձյամբ հայտը ծանելով մաքներիս մեջ մենք մեզ չընորհավորում էինք, թե՝ «դեռ վոչինչ չի պատահել»։ Իսկ մեր յեռանը հարյուրավոր մամուլներ իրենց անդադրում «կլինդ-կլինդով» ձայնակցում էին մեր մտորումներին՝ «դեռևս վոչինչ, դեռևս վոչինչ»։

Մոտ ժամը չորս և կեսին, յերբ մենք նորից աշխատում էինք լրջորեն մի ինչ վոր մտախոհի մեջ, յեկան մեր դեմը վարչության յերեք ներկայացուցիչները։ Ցեխ իսկույն ինչ վոր ազմուկ լսվեց։ Բանվորներից մեկը, վորն սպասում էր պահեստից նյութեղեն ստանալու, անմիջապես կրճատվեց։ Յերբ նա սկսեց բողոքել ու բացատրել, վարչությունը կատարության հասավ։ Թեև յես դանվում էի հեռու աշխատից, վորտեղ կատարվում էր այդ պատմությունը, յես կարողացա լսել։

— Հաչիվն ստացեք, հաչիվն ստացեք։

Բանվորներին զործարան տանող ատամվածները այդ յերեկո հնչեցնում էին մեռելանոց։ յուրաքանչ-



յուրի հոգու մեջ հետզհետե մարում էր հույսը։ Վոչ վոք համարյա չեր խոսում։ Բայց մեզ բոլորիս կապում էր մեկնումն միտքը՝ կրճատվը։ Այդ միտքը մամուլների միալար, համաչափ հարվածների նման զարհուրանք էր մեր դլխին։ Մտամոլոր հայացքներս տարածությանը հառած՝ մենք նստել ու մտածում էինք, թե վորքան հերթն ավելի շուտ կդա...

Մեր դիմացից բանվորներ էին դալիս։ Կարիք չըկար տեսնել նրանց վոչ ու չլուսա ձեռքերում սեղմված սպիտակ թղթի կտորները, վորպեսզի հասկանանք, վոր այդ մարդիկ արդեն կորցրել են հույսի վերջին նըշույլը։ Կտավի նման դունատ՝ նրանք չարվում էին տարեկչեկի սեղանի առաջ Իսկ դեմքերի ներքո վազվըզում էին սիրոջ վարձականները և ուշի ուշով հետևում, թե վորին արձակեն առաջին հերթին։ Նրանք հետևում էին բանվորներին թողնելով մեքենաների յուղը, դաղտագողի աչք էին ածում արտադնոցները։ Ահա մի բանվոր կտացավ, վոր կոչվին թափված թըղթվուտը սրբի,— նրան իսկույնևեթ տրվեց համարիկ։ Ահա հղկիչը կանդ առավ սպասելով վիճանյութի. նա էլ դոհ դառավ վաթսին։ Ցեխ սպասես ամբողջ դիշերը մինչև լուսադաց չդադարող վարպետներն ու վարձականներն իրենց վազվզող աչքերով վորսում են մեզ իրեն դաղտնիների կրճատումը կատարելապես յեռման մեջ եր։

Իսկ առավոտը վերջացնելով մեր աշխատանքը մենք սեռնում ենք դրասենյակում՝ դրամարկղի մոտ մի յերկար շարան։ Հալածված դաղանների նման կանդնած են բանվորները և համբ տանջանքը պաղել և հուսահատությունից ապակի դարձած աչքերում։ Մի ապրուստ և անցնում ամբողջ մարմնովս։ Ճնշտով յես



900—2

եվ կվճռվեին այդ չափանում, այդ տնտեսում, հասարակ մարդկանց մեջ։

Բանիվաճառից ռոբերտ կրճուդեն»

## «ՏԱՍԸ ՀԱՐՎԱԾ ԲԱՄԲՈՒԿԻ ՄԱՀԱԿՈՎ»

Մի այլ ֆրանսիացի գրող՝ ժորժ Լավելը, որը ֆրանսիական ֆաշիզմի գլխավոր գործակալն է հանդիսանում, ֆրանսիայի դաղութային գերիշխանությունը քարոզող իր «Կաուչուկի եռոպլան» գրքի մեջ հարկ չի համարում ծածկել, որ գաղութներում կապիտալիստների «տնտեսավարությունը» հիմնվում է տարիության վրա։

Կաուչուկի պլանտացիաներում յուրաքանչյուր հեկտարի համար ոգտագործվում է մեկ մարդ։ Բոլոր պլանտացիաներն ընդունում են այս միջին թիվը։

Մանր կոնցեսիոներները իրենց հողերին տահմանափակ գյուղերից և չբնակեցված հեշտությամբ տանում են անհրաժեշտ քանակությամբ աշխատավորներ։ Նրանք հող չեն տանում իրենց վարձած աշխատավորներին բնակարան տալու, վճարելու մեզ մոտ սովում և դյուղատնտեսական գործողությունների համար։

Սակայն, խոշոր պլանտատորները չեն կարող նույն ձևով վարվել։ Հինգ կամ տասը հազար հեկտարը պահանջում է հինգ կամ տասը հազար բանվոր, մի քանակություն, որը հավասար է դիվիզիայի մի բրիգադային։ Տեղում անկարելի է գտնել տասը հազար մարդ, անհրաժեշտ է նրանց բերել մի այլ վայրից։

---

Պլանտատորը վճարում է յուրաքանչյուր կուլիի համար յերեսուն հինգ պիաստր, իբրև ճանապարհածախս։ Նա վճարում է աշխատավորներ ճարողին տա-



լիս և ավանդներ. կնքում է պայմանագրեր։ Նա իրավունք ունի պահանջելու պայմանագրերի խստիվ կատարումը։ Այս հանգամանքը նրան տալիս է տերոջ իշխանություն իր պերսոնալի հանդեպ, մի իշխանություն, որն ավելի մեծ է, քան այն իշխանությունը, որը սովորաբար կարգավորում և վարձողի և վարձվողի հարաբերությունները։

Այս ձևով վարձվելով տեղային պարտավորություն է ստանձնում իր տիրոջ հանդեպ, ընդ որում այդ պարտավորությունից նա կարող է ազատվել միմիայն իր աշխատանքով, քանի որ նա ուրիշ ոչինչ չունի։ Ամեն մի անգամ աշխատանքից հրաժարվելը համարվում է պայմանագրի խախտում, դա դեկերտիրություն է, դա հանցանք է, որի համար նախատեսված է պատիժ։

---

Ֆիզիկական պատիժների հետ միասին կային բարոյական պատիժներ։ Ինչպիսի հարաբերություններ պիտի լինեին պլանտացիաներում իսկրոպացիների և տեղացիների միջև։

Այս հարցին յուրաքանչյուր պլանտատոր դանագան տեսակի պատասխան կտա, մանավանդ, որ ամեն մի գաղութատեր իր տեսությունն ունի, նայած թե նա վաճառակա՞ն է արդյոք, որը գործ ունի գործակատարի հետ, արդյո՞ք արդյունաբերող է, որը գործ ունի իր բանվորների հետ և կամ թե պաշտոնյա՞ յե, որը գործ ունի իր սուբհանդակի հետ։ Հանցանքի կամ անթուլատրելի արարքների համար դոյություն ունեն պատժի քանի տեսակի դանագան սիստեմներ։ Ամանք կողմնակից են բանտարկության, ամանք տուգանքի, նկատողության և կամ թե աշխատավարձի մի մասը կտրելուն։ Կան նաև ֆիզիկական պատժի կողմնակիցներ, դրանք մահակի կողմնակիցներն են։

— Ճի բանվոր ինձանից գողացել և յերեք կիլոգրամ կաուչուկ, — ասաց ինձ Գայեն, — ըստ որինքի յես իրավունք ունեմ նրան վոստիկանության ձեռքը հանձնել: Բայց վոստիկանությունը տասն և յերեք կիլոմետր հեռավորության վրա յե գտնվում: Մեղապարտի համար ժամանակի կորուստը դրամի կորուստ է, քանի վոր նա մի ամբողջ շաբաթ պիտի սպասի մինչև վոր նրան մի շաբթով բանտարկեն: Բայց գողն աչխատում և իրեն արդարացնել.

— Ցես այլ կերպ բնավ չեմ կարող վարվել: Սա «մակուլ» է (սատանա):

— Լավ, ամենից առաջ այնպես կանեմ, վոր սատանային դուրս վանեմ: Դու կստանաս բամբուկի մահակի տասը հարված, իսկ հետո կհատուցանես ինձ այն, ինչ վոր ինձանից գողացել ես:

ԺՈՐԺ ԼԵՖԵՐ

Պատիվ ունեմ ձեզ ընդհատելով «ուրախ» ծննդի տոների առթիվ: Համբերությունս հատել է: Դրամ չունեմ և աչխատանք էլ չեմ կարողանում գտնել: Մի քանի որ հերթի կանգնեցի բարեգործական սննդակից հաց ստանալու համար: Բայց սա կնչանակի մեռնել դանդաղ մահով: Ցես դերազատում եմ չուտափույթ մահը:

(Բանվոր Դեվիս Դիլֆիցի մահվանից առաջ գրած տոմսը. նա թունավորվել էր իր լուսամոտության գազով 1930 թվի դեկտեմբերին Նյու-Յորկում):

— «Ամերիկայի կառավարությունը թույլ չպիտի տա, վոր ամերիկացիները սովամահ լինեն: Սա մարդասիրություն չե: Սա նուիրական վանդակավոր է»:

«Նյու-Յորկ Թայմս», 5 հունվարի, 1931 թ.



## ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

Անդրե Ժիդը Ֆրանսիական մի խոշոր բուրժուական գրող է, վորին բնավ չի կարելի կասկածել դեպի պրոլետարական հեղափոխությունը համակրանք տածելու մեջ: Այդ նուրբ գեղարվեստական նկարագրի բնությունն գեղեցկությունները վայելելու համար մեկնելով Ֆրանսիական Կոնգոն, տեսնում է բացահայտ, զարհուրելի սարսափություն և «կենդանիների նման հալածված մարդկանց»: Նրա՝ վոչ այնքան վաղուց լույս տեսած «Ճանապարհորդություն Կոնգոյում» գրքից մենք տալիս ենք միայն մի փոքրիկ հատված:—

### ՊԱՏԻԺ

Բոլոր պետը հոկտեմբերի քսան և մեկին ուղարկեց սերժանտ Ցեմբային՝ Բոլոբոյի և Նգոտաբի միջև գտնվող Բոլեմբեմբի գյուղը, այդ գյուղի բնակիչներին պատժելու համար: Նրանց հանցանքը նրանում եր, վոր չցանկանալով թողնել իրենց մշակած հողերը, հրաժարվել եյին կատարել պետի հրամանը՝ իրենց խրճիթները դեպի կարմրոյի ճանապարհը տեղափոխելու մասին:

Սերժանտ Ցեմբան մեկնեց Բոլոբոյից յերեք պահակների հետ միասին: Այս փոքրիկ խմբին ուղեկցում եր նաև սերժանտ Բաուեն իր հրամանատարության տակ գտնվող յերկու պիգմեյներով:

Ճանապարհին անցնելով գտնատան գյուղերով սերժանտ Ցեմբան յուրաքանչյուր գյուղից վերցնում եր յեղկու վամ յերեք հոգի և նախորդը կապկպելով նրանց՝ տանում իր հետ: Ինամքը մտնելով Բոլեմբեմբեն դեմից խոտոտուկն պատիժների, տասնեվկու հոգու

կապելին ծառերից և սպանեցին (այդ գյուղի առաջնորդը վախել էր)։ Այնուհետև սկսվեց կանանց դանակոծումը, բայց դրանով էլ Ցեմբան չբավարարվեց։ Նա բռնեց հինգ փոքրիկ մանուկների և փակելով նրանց խրճիթի մեջ՝ հրդեհեց խրճիթը։

## ՍՏՐՈՒԿՆԵՐԻ «ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ» (ԲԱԼԸ)

Ծորեատյեր ընկերության համար Գունդիում հավաքած բանվորների խմբից՝ կրասչոկ հավաքող տասը հոգի (ըստ լրացուցիչ տեղեկությունների՝ քսան) նախորդ ամռան կառչոկ չբերելու համար (թեև այս ամռան հավաքել և հանձնել էին կրկնակի չափով— քառասունից հետո կլորացրած) տերտերների ուխտն բամբիոյում յենթարկվեցին հետևյալ պատժի. չալակած ծանր վերանները նրանք ամբողջ օրն արևի կիզիչ ճառագայթների տակ պիտի քայլեին ընկերության գրասենյակի շուրջը։ Ցերեկ բանվորներից մեկն ու մեկն ընկնում էր, պահակները փշափետրերի հարվածներով ստիպում էին վառքի կանգնել։ Այսպիսի պատիժն այստեղ պարահանդեսս են անվանում։

Այս «պարահանդեսն» սկսվելով առավոտյան ժամը ութից՝ տևեց ամբողջ օրը՝ ընկերության գործակալներ — պարոնայք Պաշային և Մոդյուբեյի հակողության տակ։ Ժամը մոտ տասնմեկին Մարոնգե անունով մի բանվոր դեսին գլորվեց և այլևս չբարձրացավ։ Այդ մասին տեղեկացրին պարոն Պաշային, որն ասաց՝ «դեհ, սատանան նրա հետ»...

## ՄԱՐԴԻԿ ԻՐԵՎ, ՀԱԼԱԾՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ետապի հեռավորությունը 25 կիլոմետր եր, սակայն մեկնելով առավոտյան ժամը հինգևկեսին, այս



տարածությունը մենք անցանք միայն ցերեկվա ժամը մեկին՝ ճանապարհին յերկարատև ընդմիջում անելու պատճառով։ Մենք կանգ առանք հանդիպելով մի խումբ կալանավորների, որոնց տանում եր պետը հարևան գյուղից։ Նրանք թվով տասնևմեկ հոգի եյին, յուրաքանչյուրի պարանոցից կախված պարանով նրանք բոլորը կապկպված եյին միմյանց հետ։ Նրանց տեսքն այնքան զարհուրելի յեր, որ մարդու սիրտը ճմլվում եր խղճահարությունից։ Ճանապարհապետը նրանցից դվեին տանում եր մանիոկի պաչար, որը բավականաչափ ծանր եր, բայց վոչ չափազանց առողջ տղամարդի համար, սակայն այդ դժբախտները հազիվ հաղ հենց իրենց եյին քաշ տալիս։

Նրանցից մեկը վոչինչ չեր տանում. նա տոկալի նեհար, հիվանդությունից, քաղցից ու հոգնածությունից մաշված մի տատանվող տարեկան տղա յեր։ Մերթ ընդ մերթ նա դողում եր ամբողջ մարմնով և սարսուռը կծկում եր նրա փորի կաշին։ Նրա գազաթին ածխված եր, կաշվե վրա կային նշաններ, որոնք մնում են վերքերից կամ այրված քներից հետո։ Ցեվ այդ բոլոր դժբախտակից ընկերներն աչքաթող վաղորմելի եյին, որ նրանց աչքերում մարդկային արտահայտությունը հազիվ մարել եր։ Ըստ յերևույթին հինգ որ շարունակ նրանք վոչինչ չեյին կերել։ Ուղեկցող պահակի տանլով դրանք փախստականներ եյին, որոնք յերեք ամիս պատսպարվել են անտառում։ Նրանք նման եյին հալածված կենդանիների։

ԱՆԴՐԵ ԺԻԴ

## «ԱՄԵՆ ԻՆՉ ՍԱՀՄԱՆ ՈՒՆԻ»

Ահա արդեն մի ամիս է, որ տեքստիլ ընկերությանը պատկանող տներում ապրող բանվորները ծանոթացիր են առանում վտարելու մասին:

Ռեպորտյորները նախ և առաջ դնացին դեպի այն տունը, որտեղ ապրում էր Բելոուզի ընտանիքը: Այստեղ՝ տան առաջ՝ փողոցում թափված էր իրերի մի կույտ, որը քիչ առաջ բանվորական ընտանիքի անտեսություն էր կազմում: Տնից դեռ չարունակ իրեր էին դուրս հանում: Միստեր Բելոուզն այդտեղ չէր: Այդ տարեքամոր բանվորին, որը գործադուլային կոմիտեի անդամ էր, ծեծել և բանտն էին նետել:

Մի քիչ հեռու կանգնած էին յերկու յերեխա և զարմանքով նայում էին կանաչ խոտի վրա թափթփված իրերին: Գործարանային բժիշկը, մի ահարկու աղամարդ, տավարի հում մսի դույն ունեցող ուռած դեմքով, կանգնած էր հենց այդտեղ և աղմկալի մռընչում էր: Նա սարսափելի դեր էր, զժվարություն էր չնչում:

Բանվորի կինը վերմակում փաթաթած մանկանը ծնկներին դրած նստել էր դռան չեմքում: Յերեխայի յերեսն ամբողջովին ծածկված էր բծերով:

— Ինչ է պատահել այդ յերեխային, — հարցրեց ռեպորտյորներից մեկը բժշկին, վորը գտնվում էր այդտեղ նրա համար, վոր հիվանդներին չվտարեն անից. դա կլիներ որենքի դեմ:

— Ծաղիկ է, — պատասխանեց ճարպիտ բժիշկը:

— Ինչո՞ւ նա առանձնացրած չէ:

— Այս նահանգում որենքը չի պարտադրում ծաղկով հիվանդացածներին առանձնացնել: Այն էլ բավական է, վոր մենք պարտադիր կարգով պատվաստում ենք: Այդ էր պակաս, վոր հիվանդներին էլ առանձնացնենք:

Մինչդեռ մանկան աչքերը նրան տանջող դողերոցքից թվում էին կատարելապես պղտոր, նրա գլուխը թուլացած կախվել էր: Ռեպորտյորները մի քանց հետ խոսում էին և նրանք բոլորն այն կարծիքին էին, վոր յերեխան կատարելապես հիվանդ է:

— Ցանկ չկա սպասեմ մինչեվ նրա առողջանալը, դրանց յերկու շաբաթից առաջ անկարելի է վտարել, — շարունակում էր բժիշկը, — վարչությունն առանց այդ էլ այս մարդկանց չափազանց վողորմած վերաբերվեց: Ընկերությունը բավական յերկար համբերեց: Միստեր Շենկն ուժերը ներածին չափ ամեն բան անում է իր բանվորների համար: Բայց ամեն ինչ սահման ունի:

— Այսոր քանի՞ մարդ եք մտադիր վտարել:

— Կարծում եմ ութ կամ տասը ընտանիք, — պատասխանեց բժիշկը: Մենք կսկսենք առաջնորդներից: Ամբողջ բանվորական ավանում նրանք վաղուց արդեն հայտնի յեն մեզ: Իսկ մնացածի համար դա որինակ կծառայի. թո՛ղ տեսնեն, թե իրենց ինչ է սպասում. նրանց համար սա լավ դաս կլինի: Այո, սըր, ամեն մի համբերության սահման կա:

(Ամերիկական դրողուհի Մերի Վորս-ի «Գործադուլ» վեպից):

## ԱՀԱ «ԽԱՀՄ-ում ՊԱՐՏԱԴԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ» ՄԱՍԻՆ ՍՏՈՂ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԻՍԿԱԿԱՆ ԴԵՄՔԸ

Կապիտալիստական յերկրներում դադարություն ունեցող տարկական աշխատանքի մասին կարելի յե անթիվ

վկայություններ բերել, սակայն իր տերերի չահերը պաշտպանող կապիտալիստական ծախու մամուլն այդ մասին լուռթյուն է պահպանում: Նույն նկատառումներով կապիտալիստական մամուլը զգուշորեն վարվում է բոլշևիկյան հեղափոխության և բոլշևիկների մասին: Իրենց վճռականությունը մասին չերչիլն խոսք են բացում հենց իրենք կապիտալիստական մամուլի դավաչանները: Այսպես օրինակ, ժողովրդական-նուրթյուն վախլող ամերիկական հին ժուռնալիստ Ջոն Սուբինսոնն է պատվել իրեն տրված բանկետում միանդամայն անկեղծորեն հայտնել հետևյալը.—

«Ապշեցուցիչ բան է ամերիկական մեծ քաղաքների այդ ազատ մամուլը:

Մենք բոլորս շատ լավ գիտենք, որ մեզանից ոչ ոք չի կարող արտահայտել իր ճշմարիտ կարծիքն իրերի ու դեպքերի մասին, իսկ յուրաքանչյուրս նույնիսկ համարձակվի այդ անել, նա գիտե, որ դա չի տպագրվի:

Շաբաթական չես ստանում եմ 1500 դոլար միայն նրա համար, որ իմ լրագրի եջերում չես չարունակաբար ծածկում եմ ճշմարիտ մտքերը և դուք բոլորդ էլ հենց նույն բանի համար եք դրամ ստանում, բայց յուրաքանչյուրիդ մեկին ու մեկին այնքան անմիտ գլուխ չունի, որ անկեղծորեն գոչի այն, ինչ որ նա մտածում է, սակայնած պիտի լինի հենց մյուս օրը մի այլ զբաղմունք փնտրելու:

Նյու-Յորքի ժուռնալիստը գլխավորապես զբաղվում է նրանով, որ մի դատարկ հագի համար լափերչորեն ստում է, խեղաթյուրում է փաստերը, ստորագրում ու սողում է հարուստների վոտքերի տակ, վաճառում իր ժողովուրդն ու չերկիրը:

Այս մենք բոլորս հրաչալի գիտենք և գիտենք, թե ինչպիսի ծաղրանքով և հնչում «ազատ մամուլի» համար առաջարկած կենացը:

Կուլիների չեռքը նստած հարուստների համար մենք գենք ենք ու վատասներ: Մենք տիկնիկներ ենք,— նրանք թելը քաշում են, իսկ մենք պարում ենք: Մեր ուզածները, մեր ընդունակությունները, մեր կյանքն ուրիշներնի է պատկանում: Մենք՝ մեր բեռելլեկտի պոռնիկներն ենք»:

Այս խոսքերն ասված են մի քանի տարի առաջ և դրանք դուշ են տալիս, որ բուրժուական մամուլը չատ լավ գիտի իր արժեքը, ինչպես և ԽՍՀՄ-ի մասին իր տարածած ստերի արժեքը:

(«Պրավդա», № 60 (4865) 2/3 1931 թ.):

## 2· ՄԱՐԴԸ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ԿՈՂՈՊՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամերիկայում վոսկու և արծաթի հանքափայտեր գտնելը, տեղական ադմինիստրացիայի վոչնչացումը, հարստահարումը և հանքերում կենդանի թաղելը, Արևելյան Հնդկաստանը գրավելու և կողոպտելու առաջին քայլերը, Աֆրիկան սևամորթներ վորսալու հատուկ վայրի վերածելը — ահա եր ահա արտադրության կապիտալիստական չրջանի արշալույսը: Ահա էվելիական պրոցեսները կատարում են սկզբնական կուտակման գլխավոր մոմենտները: Դրանից հետո գալիս է չեվրոպական ազգերի առևտրական պատերազմը, վորի ասպարեզը ներկայացնում եր ամբողջ չերկրագունդը: Այս պատերազմն սկսվում է, չերբ Նիդերլանդիան անջատվում է Իսպանիայից· դա հսկայական չափեր է ընդունում հակայակոբինյան Անգլիայում և մինչև այժմս էլ չարունակվում է*) այնպիսի կողոպտիչ արշա-

*) Մարքսը գրել է 60-ական թվերի կեսերին:

վանքների ձեվով, ինչպես Զինաստանի դեմ ոպիումի համար մղվող պատերազմն է և այլն,

Սկզբնական կուտակման տարբեր մոմենտները, որքր ի չատե վորոշ պատմական հետեվողականությամբ, դասավորվում են հիմա դանադան յերկրներին, այն է՝ Իսպանիայի, Փորթուգալիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի և Անգլիայի մեջ: XVII դարի վերջին Անգլիայում նրանք սիստեմատիկորեն միավորվում են գաղութային սիստեմի, պետական վոխառությունների սիստեմի, ժամանակակից հարկային սիստեմի և պրոտեկցիոնիզմի սիստեմի մեջ: Այս մեթոդները զգալի չափով հիմնվում են կոպիտ բռնության վրա, ինչպիսին, որինակի համար, գաղութացման սիստեմն է: Բայց նրանք բոլորն ոգտվում են պետական իշխանությամբ, այսինքն՝ կենտրոնացած և կազմակերպված հասարակական բռնության ուժով, վորպեսզի արտադրության ֆեոդալական յեղանակը կապիտալիստական յեղանակին վոխանցվելու պրոցեսը հեշտացնեն և նրա անցողիկ շրջանները կրճատեն: Բռնությունն ամեն մի հին հասարակության մանկաբարձուհին է, յերբ հին հասարակությունը հղի յի նորով: Ինքը բռնությունը անտեսական պատճառ չէ:

Չկա ավելի բնորոշ բան, քան հոլանդացիների գործադրած այն սիստեմը, վոր նրանք Ցեյլոնում կղզում մարդիկ էլին գտնում, վորպեսզի դրանցով լրացնեն Ցեյլոն կղզու տարածության կտրվածքը: Այս նպատակով պատրաստում էլին հատուկ մարդադողեր: Գողը, թարգմանը և վաճառողն այս առևտրի գլխավոր գործակալներն էլին, տեղական իշխանները — գլխավոր վաճառողները: Գողացած յերիտասարդներին պահում էլին Ցեյլոնի գաղտնի բանտերում, մինչև վոր նրանք



չափահաս դառնան՝ ստրուկներով լցրած նավերով ճանապարհելու համար...

Ցավայի բանտարանչ գավառը 1750 թ. ուներ 80 հազար, իսկ 1811 թ. ընդամենը 8000: Սա մի doux commerce եր (հաճելի առևտուր):

Ինչպես հայտնի յի, Անգլո – ամերիկական ընկերությունը բացի քաղաքական իշխանությունից, Արևմեզյան Հնդկաստանում ստացավ նաև թեյի առևտրի և ընդհանրապես Զինաստանի հետ առևտուր վարելու բացառիկ մենաշնորհը. բացի այդ, նրա ձեռքում կենտրոնացավ Ցեվրոպայից և դեպի Ցեվրոպա ապրանքներ տեղափոխելու մենաշնորհը: Սակայն նավատնտեսությունը Հնդկաստանի ծովափերում և կղզիների մեջ, ինչպես և առևտուրը՝ Հնդկաստանի ներսում դարձել եր այդ ընկերության բարձրաստիճան պաշտոնյաների մենաշնորհը: Աղի, ոպիումի, պղպեղի և այլ ապրանքների մենաշնորհները դարձել էլին հարստության անսպառ աղբյուր: Պաշտոնյաներն իրենք էլին նշանակում գները և լսո քմահաճույքի կեղեքում դժբախտ հնդիկներին: Այս առևտրին մասնակցում եր գեներալ-նահանգապետը... Պարլամենտին ներկայացրած մի վեճատետրի համաձայն, ընկերությունը և նրա պաշտոնյաները 1757 և 1766 թ. թ. ընթացքում ստիպել էլին հնդիկներին նվիրաբերել 6 միլիոն ֆունտ ստերլինգ: 1769—1770 թ. թ. անգլիացիները գնելով ամբողջ բերքինը և վաճառելով նոսկալի բարձր գներով, արհեստականորեն սով էլին առաջ բերել:

Մանուֆակտուրի շրջանում կապիտալիստական արտադրության զարգացման հետ Ցեվրոպայի հասարակական կարծիքն ազատվեց ամբողջ և խղճմտանքի վերջին մնացորդներից: Աղտություններն լսիրջորեն

պարծենում էին ամեն մի ստոր արարքով, քանի որ դա կապիտալի կուտակման միջոց էր ներկայացնում... Անգլիան իրավունք էր ստացել մինչև 1743 թվիը տանելու Իսպանական Ամերիկան տարեկան 4800 նեգր: Դրանով մեծ-ամանակ պաշտոնապես վարագուրվում էր բրիտանական կոնտրաբանդը: Լիվերպուլն աճեց ստրուկների վաճառքի շնորհիվ: Վերջինս նրա սկզբնական կուտակման մեթոդն էր: 1730 թվին ստրուկների առևտրով զբաղվում էին Լիվերպուլի 15 նավեր, 1751 թ.—53 նավեր, 1760 թվին՝ 74, 1770 թ.՝ 96, 1792 թ. 132 նավեր:

(Տես Մարքս, «Կապիտալ», հատ. I, գլ. 24, բաժ. 6):

## 3. ՄԱՐՔՍԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Դրամը և ապրանքը ճիշտ այնպես, ինչպես և դրության միջոցները և արտադրության միջոցներն իրենք իրենցից կապիտալ չեն ներկայացնում: Նրանք պիտի վերածվեն կապիտալի: Սակայն այս վերածվելը հնարավոր է միմիայն որոշ հանգամանքներում, որոնք կայանում են հետևյալի մեջ. միանգամայն տարբեր տնտեսի ձեռքում ապրանքատեսքը միմյանց հետ չվման մեջ պիտի մտնեն. մի կողմից՝ դրամի, արտադրության ու դրության միջոցների սեփականատերը, որը պահանջ ունի բանվորական ուժ գնելու, որպեսզի իր յուրացրած արտադրության արժեքը հետագայում ավելացնի, մյուս կողմից՝ իր սեփական ուժը վաճառող ազատ բանվորը, հետևապես—աշխատանք վաճառողը: Նա ազատ բանվոր է երկու մտքով. նա ինքն անմիջապես չպիտի պատկանի արտադրության միջոցների թվին,



ինչպես ստրուկները են, հողատերը և այլն, բայց և արտադրության միջոցները նրան չպիտի պատկանեն, ինչպես այդ տեղի ունի ինքնուրույն տնտեսություն վարող գյուղացիների մոտ և այլն. նա ազատ պիտի լինի արտադրության միջոցներից, ազատված նրանցից, զրկված նրանցից: Սրա հետ միասին, ապրանքային շուկայի ճեղքվածության հետևանքով, ստեղծվում են կապիտալիստական արտադրության հիմնական պայմանները: Կապիտալիստական հարաբերությունները յենթադրում են, որ աշխատանքը վենատարծող միջոցների սեփականությունն անջատված է բանվորներից: Ցեվ հենց որ կապիտալիստական արտադրությունն իր սեփական վոտքերի վրա յի կանգնում, նա ոչ միայն պահպանում է այս բաժանումը, այլև վերարտադրում է այն անդադար աճող մասշտաբով: Այսպիսով, կապիտալիստական հարաբերություն ստեղծող պրոցեսը ոչ այլ ինչ է, յեթե ոչ բանվորին, իր աշխատանքի պայմանների համաճարն սեփականությունից անջատելու մի պրոցես, սա մի պրոցես է, որը մի կողմից արտադրության և դրության հասարակական միջոցները դարձնում է կապիտալ, մյուս կողմից՝ անմիջական արտադրողներին դարձնում է վարձու բանվորներ: Հետևապես, այսպես կոչված սկզբնական կուտակումն արտադրողին արտադրության միջոցներից անջատելու սոսկ պատմական մի պրոցես է: Նա համարվում է «սկզբնական», որովհետև կազմում է կապիտալի նախապատմությունը և նրան համապատասխանող արտադրության յեղանակը:

Կապիտալիստական հասարակության տնտեսական ստրուկտուրան (կառուցվածքը) ծագել է ֆեոդալական հասարակության տնտեսական ստրուկտուրայից: Վեր-

Չինիա քաղքայման ազատել և աստիճանի ելեկենտները։

Անմիջական արտադրողը՝ բանվորը միայն այն ժամանակ է հնարավորություն ստանում իր անձնավորության վրա ոտնձգություն անել, երբ նա դադարում է նրա հողին կցված լինելը։ Այնուհետև, որպեսզի նա դառնա իր բանվորական ուժի ազատ վաճառողը, որը տանում է իր ապրանքն այնտեղ, որտեղ դրա պահանջը գոյություն ունի, արդի ազատվեր համքարության տիրապետությունից, աշակերտների և քարտահների մասին եղած համքարական կանոնադրություններից և աշխատանքի վերաբերյալ դրույթյուն ունեցած այն ճնշող հրահանգներից։ Այսպիսով արտադրողին վարձու բանվոր դարձնող պատմական պրոցեսի մի կողմն այն է, որը արտադրողն ազատագրվում է Ֆեոդալական համքարության հարկադրանքից, մեր բուրժուական պատմաբանների համար հենց այս կողմը միայն գոյություն ունի։ Բայց կա մի այլ կողմ, որը կապանում է նրա մեջ, որ ազատագրվողները միայն այն դեպքում կարող են իրենց վաճառել, երբ նրանցից խլված են արտադրության նրանց պատկանող բոլոր միջոցները և գոյության բոլոր երաշխիքները, որոնք ապահովված էին Ֆեոդալական վարչության հաստատություններով։ Նրանց այդ եքսպրոպրիացիայի պատմությունը հիմնված է հատարակ ինքնագրությունների վրա։ Մարդկության պատերազմության մեջ նա գրված է արի և հիր բոցավառ լեզվով։

Արդյունաբերական կապիտալիստները, այս նոր իշխանավորները, իրենց հերթին դուրս պիտի վանեին ոչ միայն համքարական վարպետներին, այլ և հարստության աղբյուրներին տիրապետող Ֆեոդալներին։



Այս տեսակետից նրանց բարձրանալն այն հաղթական պայքարի հետևանքն է, որը նրանք վարել են ընդդեմ ավատական (Ֆեոդալական) իշխանության և այդ արդիմադրող արտոնություններին, ինչպես և ընդդեմ համաքարությունների և այն չղթաների, որը վերջինները դնում էին ազատ զարգացման վրա և մարդը մարդուն ազատորեն չհետագործելու վրա։ Սակայն, արդյունաբերության առյուծներին հաջողվեց դուրս վանել սրի առյուծներին, չնորհիվ այն հանգամանքի, որ նրանք ազատագործեցին այն դեկավածները, որը ներանք իրենք չէին ստեղծել։ Նրանք բարձրացան նույն կեղտոտ միջոցներով, որոնք մի ժամանակ հնարավորություն էին տալիս հռոմեական ազատ-արձակվածներին տեր ու տիրական դառնալ իրենց տերերի վրա։ (Կ. Մարքս, «Կապիտալ», հատ 1, գլ. 24)։

## 4. Կ. ՄԱՐՔՍԸ ՄԵԿԵՆԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Արտադրողին բացառապես արտադրության մեկ ճյուղին կենթարկելը, նրա գործունեի սկզբնական բազմատեսակությունը վոչնչացնելը զարգացման անհրաժեշտ մոմենտն է ներկայացնում, քանի դեռ ընդհանուր հատարակական արտադրության հիմքն արհեստն ու մանուֆակտուրան է կազմում։ Այս բազիսի վրա արտադրության յուրաքանչյուր առանձին ճյուղը փորձնական ճանապարհով դառնում է իրեն համապատասխան տեխնիկական վատուցիածք, դանդաղորեն կատարելագործում և արագորեն ամբողջանում և այդ, հենց վոր առաջ է գալիս հատանության վորոշ

ատեխնիկան: Ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում փոփոխություններ, որոնք առաջանում են ոչ միայն առևտրի տված աշխատանքի նոր մատերիալից, այլ և աշխատանքի գործիքների ատեխնիական փոփոխություններից: Բայց, երբ արդեն գործիքի համապատասխան ձևը փորձնականորեն գտնվում է, պահում է, ամփոփում և մնում նաև բանվորական գործիքը, ինչպես այդ երևում է այն հանգամանքից, որ երբեմն հազարամյակների ընթացքում նա փոխանցվում է մի սերնդի ձեռքից մյուսի ձեռքը: Վորոշ արտադրական պրոցեսի գոյություն ունեցող ձևը, ժամանակակից արդյունաբերությունը երբեք էլ համարում է գործադրում իրեն մի վերջնական ձև. այդ իսկ պատճառով նրա տեխնիկական բազիսը հեղափոխական է, մինչդեռ արտադրության նախկին բոլոր յեղանակների բազիսն ըստ էության պահպանողական եր: Մեքենաների, քիմիական պրոցեսների և այլ մեթոդների միջոցով. ժամանակակից արդյունաբերությունը հետզհետե հեղաշրջում է առաջացնում արտադրության տեխնիկական բազիսի մեջ, իսկ դրա հետ միասին և բանվորների ֆունկցիաների, և աշխատանքի պրոցեսի հատարակական ներքաշնակության մեջ: Այսպիսով միշտ ու անընդհատ նա նետում է արտադրության մի ճյուղից մի այլ ճյուղը կապիտալի և բանվորների մասսաները...

Մանուֆակտուրայի և արհեստի ժամանակ բանվորն իրեն եր ծառայեցնում գործիքը, իսկ գործարանում նա է ծառայում գործիքին: Աշխատանքի գործիքի շարժումն այնտեղ կախված եր բանվորից, իսկ այստեղ ինքը պիտի հետևի գործիքի շարժմանը: Մանուֆակտուրի մեջ բանվորները մի կենդանի օրգանիզմի անդամներ են հանդիսանում: Գործարանում անկենդան



մեխանիզմը գոյություն ունի անկախ բանվորներից և սրանք միացված են մեխանիզմին իբրև կենդանի կցորդները (придатки): Մշտապես մխլնուն պրոցեսը կատարող առանձին աշխատանքի ատադրական մխրճնակությունը նման է Սիզիֆի աշխատանքին. աշխատանքի ծանրությունը կրկին ու կրկին ժայռի նման գլորվում է ուժատար բանվորների վրա: Մեքենայի աշխատանքը ծայր աստիճան լարելով ջղային սիստեմը, ճնշում է մկանների բազմակողմանի խաղը և մարդուն զրկում ֆիզիկական և հոգեկան ազատ գործունեության ամեն մի հնարավորությունից: Նույնիսկ աշխատանքի հեշտացումը տանջանքի ազբյուր է դառնում, վորովհետև մեքենան վոչ թե բանվորին և ազատում աշխատանքից, այլ նրա աշխատանքը զրկում է ամեն մի բովանդակությունից: Կապիտալիստական ամեն մի արտադրության համար; քանի նա վոչ միայն աշխատանքի պրոցես է, այլ միաժամանակ նաև կապիտալի արժեքի հավելման մի պրոցես, ընդհանուր և այն հանգամանքը, վոր վոչ թե բանվորն է կիրառում աշխատանքի պայմանները, այլ ընդհակառակը՝ աշխատանքի պայմանները են կիրառում բանվորին, տակաս այս թյուր հարաբերությունը միմիայն մեքենայի զարգացման ժամանակից է դառնում տեխնիկապես չհաշտելի իրականություն: Աշխատանքի միջոցներն ավտոմատի վերածվելով, աշխատանքի պրոցեսի ժամանակ բանվորի հանդեպ կանգնում են իբրև կապիտալ, իբրև մեռած աշխատանք, վորը յենթարկում է իրեն բանվորական կենդանի ուժը և ծծում նրան: Արտադրության պրոցեսում մտավոր ուժերի անջատումը և ձեռքի աշխատանքից՝ աշխատանքը կապիտալի իշխանության տակ դնելով իր կատարելության և հասնում մեքենաների բազիսի վրա

կառուցվող խոշոր արդյունաբերության մեջ: Մեքենայի վրա աշխատող, ամբողջական յուրացված առանձին բանվորի մասնակի հմտությունը (հնարագիտությունը), երբեմն մի ընչին և վոչ մի նշանակություն չունեցող դիտող, վերանում է գիտության, բնության ահռելի ուժերի և հասարակական մասսայական աշխատանքի հանդեպ, վորը մասնատված և մեքենաների սխեմայի մեջ և վերջինիս հետ միասին ստեղծում է «տրըստ» իշխանությունը:

Այս պատճառով էլ այս տերը, վորի ուղեղի մեջ մեքենաներն անխզելիորեն ներառնվել են մեքենաների վրա նրա ունեցած մենաշնորհի հետ, «ձեռքերի» հետ ընդհատվելիս արհամարհական ձևով բացականչում է նրանց հասցեին.—«Թող գործարանային բանվորները չմոռանան, վոր իրականության մեջ նրանց աշխատանքը ներկայացնում է սովորեցրած աշխատանքի մի չատ ստորին տեսակը, վոր վոչ մի այլ աշխատանք ավելի հեշտ չի յուրացվում և, ինչպես ունենալով դրա վոխարեն, ավելի լավ չի վարձատրվում. վոր ամենափոքր կարճատեվ ուսուցման միջոցով, այսպիսի կարճ ժամանակում և այսպիսի առատությամբ անկարելի չի գտնել մի այլ աշխատանք: Տիրոջ մեքենաներն արտադրության մեջ վճռորեն ավելի մեծ դեր են խաղում, քան բանվորի աշխատանքն ու հմտությունը, վորը կարելի չի սովորել վեց ամսվա ընթացքում և վորը կարող է սովորել ամեն մի բառարակ:



## ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԱԳՐԱՖՈՒՆ
## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

### 1. ԻՆՉ Է «ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ»

«Կապիտալիզմի կլասիկ յերկիրը մինչև այժմ ներկայացնում է Անգլիան»,—գրում էր Կ. Մարքսը XIX դարի յերկրորդ վիճակում (1867 թ.):

Արդյունաբերական հեղաշրջումն ազատեց Անգլիային ֆեոդալական, նախակապիտալիստական հասարակարգի մնացորդներից և յերկրում արդյունաբերական կապիտալիզմն ուժեղացնելու ուղիները հարթեց: Անգլիական բուրժուազիան ամրապնդվեց իբրև դասակարգ և քաղաքական կյանքում «խաղաղ ճանապարհով» իր համար դիրք գրավեց: Այս խաղաղ ընթացքի պատճառները, ինչպես տեսանք, գլխավորապես կայանում եյին նրանում, վոր դեռ XVII դարում Անգլիան հասուցել էր իբրև առևտրական կապիտալի յերկիր, վոր XVII դարի կեսին ամբողջ կատարվեց առաջին բուրժուական հեղափոխությունը և վոր հարյուրամյակի վերջը համաչխարհային չուկայում նա մոնոպոլ դիրք էր գրավում:

Այլ ճանապարհով էր ընթանում Ֆրանսիայի կապիտալիստական զարգացումը: Պատմական պատճառների շնորհիվ, վորոնք մենք այժմ կքննենք, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև յեղած կոնֆլիկտը Ֆրանսիայում ընդունել էր բուրժուական հեղափոխության սուր և վոճորակալի պոռթ-

հումանիզմի ձևը—ծնվող բուրժուազիայի կողմից ֆեոդալական ռեժիմի և ֆեոդալական կարգերի դեմ ծավալվող պայքարի ձևը: Ֆրանսիական հեղափոխությունը, որը տեղի ունեցավ XVIII դարի վերջը, մի հեղաշրջում էր, որը ոչ միայն Ֆրանսիայում, այլև համարյա ամբողջ Եվրոպայում աչնախես լիովին և վճռականորեն վերջ դրեց նախակապիտալիստական հասարակարգի մնացորդներին, որ նա իր նշանակությամբ վաղուց և արդարև համաշխարհային է և ոչ միայն ֆրանսիական, այլև միջազգային հեղափոխություն և այդ պատճառով էլ «մեծ» հեղափոխություն կոչումն է առացել: Կ. Մարքսի «Լուի Բոնապարտի բրյումերի 18» գրվածքի առաջաբանում Ֆ. Ենգելսը գրում է.—«Ֆրանսիայում, ավելի քան որևէ մի այլ երկրում, դասակարգերի պատմական պայքարն ամեն անգամ տարվում էր մինչև վճռական վախճանը և դրա համար էլ փոփոխվող քաղաքական ձևերը, որոնց շրջանակներում պայքարում է այդ պայքարը և որոնց մեջ ամփոփվում են պայքարի հետևանքները, միշտ էլ ընդունել են ամենախիստ ուրվագծերը... Մեծ հեղափոխության ժամանակ Ֆրանսիան կործանեց ֆեոդալիզմը և հիմնեց գուտ բուրժուազիայի գերիշխանություն այնպիսի կլասիկ արտահայտությամբ, որպիսին չեվրոպական ոչ մի այլ երկիր չէր կարողացավ: Տիրող բուրժուազիայի դեմ ծառացող պրոլետարիատի պայքարն էլ այստեղ հերևան և գալիս ուրիշ երկրներին անծանոթ խիստ ձևով»:

## 2. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

### («Հին կարգը» Ֆրանսիայում)

Հեղափոխությունից առաջ Ֆրանսիայում գոյություն ունեցած սոցիալ-տնտեսական հասարակարգը



բուրժուական պատմաբանները անվանել են «հին կարգ»: Այս արտահայտությունը ճշտորեն արտահայտում է այդ հասարակարգի առանձնահատկությունները, որը երևնից ներկայացնում էր ամող կապիտալիստական հարաբերությունների և ֆեոդալական չքնաղ մնացորդների միջև տեղած հակասությունները:

Ֆրանսիայում արդյունաբերությունը թույլ կերպով էր զարգացած. քաղաքների արդյունաբերական ազգաբնակությունն ընդամենը կազմում էր մոտ 3%, իսկ գյուղական, հողագործական ազգաբնակությունը մոտավորապես 92%: Սակայն գյուղատնտեսությունը գտնվում էր զարգացման շատ ցածր աստիճանի վրա, ընդհանուր կալվածատիրական, ինչպես և գյուղացիական հողագործությունն ըստ տեխնիկայի նույնպես բարձր չէր կանգնած:

Արդյունաբերությունը գերազանցորեն կրում էր արհեստավորական բնույթ. հետզհետե ավելանում էր մեքանե տանդյակ բանվոր ունեցող տնտեսագործ արտադրությունների թիվը, որոնց հիման վրա առաջ եկին գալիս փոքրիկ մանուֆակտուրաներ. ձեռնարկությունները պարտավոր եկին հաջը վորոշված գնով չուկա հանել: Գեստական ռեգլամենտացիան խոչընդոտ էր հանդիսանում նաև արդյունաբերության զարգացման համար. յուրաքանչյուր արհեստավոր և գործարանատեր պարտավոր եկին ապրանքները պատրաստել միայն վորոշ հատկության, լայնության, գույնի, ձևի և կշռի, և այն բոլոր ապրանքները, որոնք չեկին համապատասխանում սահմանված նորմաներին, վոչնչացվում եկին և արգելվում չուկա հանել: Բացի այդ, արհեստավորների գործունեությունը սահմանափակվում էր համքարությունների կողմից, որոնք կարպատվորում

եկին վոչ միայն արտադրանքի վորակը, այլև առանձին արտադրական պրոցեսները, թուլլատրում եկին վաճառել արտադրանքը և հում նյութի գնումները կատարել միայն վորոշ կետերում և այլն:

Վերոհիշյալից պետեն կարելի է եզրակացնել, վոր տիրող կարգը խանգարում եր արտադրական ուժերի զարգացմանը և վոր պղտբնակութեյան առանձին խըմբավորումների իրավական դրութեյունը հակասութեյան մեջ եր գտնվում՝ արդյունաբերութեյան և առևտրի պետգացման հետանկարների հետ: XVIII դարի նախահեղափոխական Ֆրանսիայում դեռ նոր եկին նշմարվում դասակարգերը և բնակչութեյունը բաժանվում եր յերեք դասի՝ ազնվականութեյուն, հոգևորականութեյուն և այսպես կոչված «յերրորդ դաս»:

Առաջին յերկու դասերը «հին կարգի» նեցուկն եկին կազմում. իրենց չահերի համար նրանք ոգտագործում եկին ֆեոդալական ռեժիմի մնացորդները, վորպես չահագործեն գյուղացիներին և արհեստավորներին. ազնվականութեյան վերին չերտը՝ արքունական ազնվականութեյունը պահպանվում եր ի հաշիվ պետական գանձարանի, ընդ վորում նրանց պահելը կազմում եր պետական ծախքերի $^1/_5$ մասը. գերազանց հոգևորականութեյունն էլ մեծ նպաստներ եր ստանում պետական գանձարկղից և ոգտվում վանքապատկան բոլոր կալվածքների և յեկեղեցապատկան արդյունաբերական ձեռնարկութեյունների յեկամուտներից: «Յերրորդ դասը» ըստ իր կազմի միատեսակութեյուն չեր ներկայացնում, քանի վոր նա կազմված եր տարբեր դասակարգային չահեր ունեցող մարդկանց դասակարգերից: Նրա մեջ մտնում եկին՝ գյուղացիութեյունը, բուրժուազիան, արհեստավորները, ազատ ոգտագործողները, ճարտիկ և դեռ էլ փոքրաթիվ պրոլետարիատը: Այդ դասն իրավունքներով չեր ոգտվում և մեծապես տուժում եր ինչպես արտոնյալ խավերի քմահաճույքից, նույնպես և ֆեոդալական ռեժիմի մնացորդներից, վորն ամբողջ յերկիրը յենթարկում եր՝ արտադրական ուժերի զարգացումը ճնշող «հին կարգին»: Գյուղացիները դեռ էլ ազատ չեկին և պարտավոր եկին նատուրալ (բնական) ծառայութեյուններ մատուցել կարմանատերոջը. ինչպես դրամ եր ժամանակակիցներից մեկը, Ֆրանսիայում գյուղացին «չեր կարող ճանապարհ յելնել, փայտե խոփուտ կամուրջով գետակի մյուս կողմն անցնել, գյուղական չուկայում մի արշին մահուդ կամ մի գույդ վարսի կոշիկներ գնել, առանց հանդիպելու սանեն մի քայլափոխում գիշատիչ ֆեոդալներին»: Գյուղացիները վճարում եկին՝ ուղղակի հարկ (թալիա), «տասանորդ» հարկ յեկեղեցու ոգտին և անուղղակի հարկ աղի համար:

Բուրժուազիան աստրաբաժանվում և մի քանի չերտերի, վորոնք միմյանցից տարբերվում եկին յեկկում ձեռք բերած իրենց տնտեսական և իրավական դիրքով: Նրա վերին չերտը՝ ֆինանսիստները (բանկիրները), արդյունաբերողները և առևտրականները պետական վարձկանների և մենաշնորհի դեպքերում ոգտվում եկին մի շարք արտոնութեյուններով. մանր բուրժուազիան՝ արհեստավորներն ու ազատ դրաղմունքների մարդիկ տատանում եկին ազնվականների և խոշոր բուրժուաների կամայականութեյունից:

Բայց և այնպես գոյութեյուն ունեցող հասարակական կարգը մեծապես ճնշում եր թե խոշոր բուրժուազիային, թե մանր առևտրականին և թե փոքրիկ արհեստանոցի տեխնիկատոխրոջը: Այդ իսկ պատճառով Ֆրան-

սիական քուրժուազիան հեղափոխական ուժ էր ներկայացնում, վորը պատրաստ էր ամեն մի գնով հեն կարգի», արքայական իշխանության և արտոնյալ դասերի դեմ: Նա մշակել էր իր ոպոզիցիան էդեոլոգիան (դաղափարախոսությունը). այս դաղափարախոսության գլխավոր պահանջն էր «լուսավորության ազատություն» (այլ կերպ՝ լուսավորիչների գրականության) (այլ կերպ՝ լուսավորիչների գրականությունը). սա էր ժամանակի փայլուն տեսություն էր, քանի վոր նա ամեն և այնպիսի գրողներ, ինչպիսին են՝ Վոլտերը, Մոնտեսքյոն, Ռուսսոն, Մաբլին, Դիդրոն, Գելվեցիին, Հոլբախը: Նրանք բոլորը գրում էին «լուսավորված մարդու»—հասարակական նոր կառուցվածքի գաղափարների մասին, վորը պայքարում է ոդեհոսության, իրավազարմության դեմ և այս ճանապարհին նա էլ վարանում կրոնի հիմունքները և արքայական իշխանության հեղինակությունը սասանեցնելուց: «Լուսավորիչները» սիրեցին նաև դեղարվեստական գրականությանը. Մոլյերի և Բոմարշեյի նոր կատակերգությունները ծաղրում էին ազնվականության նախապաշարումներն ու ոդիոսությունը. որինակ, Բոմարշեն իր մեծ ժողովրդականության վայելող «Ֆիգարոյի հարսանիքը» կատակերգության մեջ ծաղրում է վոդջ ազնվականությունը:*)

## 3. ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԻ (ՄԻԱՀԵՆԱՆՈՒԹՅԱՆ) ԱՆԿՈՒՄԸ

«Հին կարգը» կազմալուծվում էր նեղքին հակասությունների հետևանքով զարգացող կապիտալիստա-

*) «Ո՞վ եք դուք»—հարցնում են ազնվականին,—դուք միայն նեղության եք կրել ծնվելու»:



կան հարաբերությունները նախ և առաջ պահանջում էին ֆեոդալական չատ որենքների վերացումը: Ֆեոդալական ֆինանսների կրիտիկական դրությունն ստիպում էր կառավարությանը համաձայնության գալ բուրժուազիայի հետ և վերացնել ազնվականության արտոնությունները:

1789 թվին խոշոր անցքեր տեղի ունեցան Փարիզի Սենո-Անտուան արվարձանի արդյունաբերական ձեռնարկություններում. բանվորներն ավերեցին դարձյանատան Ռևելյոնի մանուֆակտուրան ու տունը: Հուզումնքներ էլին տեղի ունենում նաև գավառներում: Կառավարությունն սկսել էր ընդունել, վոր միայն խիստ միջոցներով գործերը չեն շտկվիլ. վորոշվել էր հրավիրել վաղեմի դասակարգային ներկայացուցչությանը՝ «Գլխավոր Շտատները», վորը բաղկացած էր յերեք «դասից» (կամ յերեք շտատներից՝ ազնվականների, հոգևորականության և «յերրորդ» դասից) և հրավիրվում էր թագավորի կողմից, յերբ կարիք էր լինում նոր հարկեր սահմանելու համար «համաձայնության բանակցել». 1614-ից մինչև 1789 թ. թ. Շտատները չէին հրավիրվել, քանի վոր արքայական իշխանությունը հնարավոր էր գտել Շտատների ողնությանը չդիմել:

Շտատների պատգամավորների ընտրությունը յուրայ ավից, վոր համարյա բոլոր դասերն ոպոզիցիոն տրամադրություն ունեն և պատրաստվում են կառավարությանը ներկայացնել քաղաքական բնույթ կրող ընտրողները տալիս էլին «տետր» (այսինքն՝ նոտատ, հրահանգ), վորի մեջ շարադրում էլին իրենց դանդատներն ու ցանկությունները, յերբեմն վճռականորեն արտահայտված ռեֆորմի պահանջները:

Հրահանգները (նոտատները) պարզորեն արտացո-

լում եյին առանձին դասակարգերի պայքարը. բուրժուազիան պահանջներ եր առաջադրում միապետական կարգի կերպարանափոխության մասին. գյուղացիությունը, բացի նրա ամենաբարեկեցիկ խավից, սոցիալական վերափոխության պահանջ եր դնում՝ հողատարածման ֆեոդալական կարգերի վերացման մասին. ինչպես հետագա հետազոտողներն են նշում, մի քանի գյուղացիական նահանջներից «կիսանկումնիատական» պահանջներ եյին հնչում՝ հավասարեցման, հարբունության բոլոր կարիքավորների մեջ բաշխելու և ամբողջ աշխատավոր բնակչության հողամասեր տալու մասին։*)

1789 թվի մայիսի 5-ին Վերսալում (Փարիզի մոտ) դումարված Գեներալ Շտատները հենց առաջին որը սերժեցին հպատակվել հին ծեսին, ըստ որի բոլոր երեք դասերը նիստերը պիտի դումարեյին առանձին և ամբողջ դասի կողմից մի ձայն միայն տային, հրաժարվելով կատարել հենքը դատարկելու մասին քաղաքների տված հրամանը, նրանք չարունակեցին նիստերն առանց ընդհատելու և իրենց հայտարարեցին Ազգային Հիմնադիր ժողով։ Ժողովը մեծ ժողովրդականություն ձեռք բերեց Փարիզի ապստամբական մեջ և բուրժուազիան նրա անդամներին համարում եր այն մարդիկը, որոնք կոչված են փոխել տիրող հասարակարգը։ Մի խոնդներում, ժողովներում և առաջին անդամ լուրս տեսնող բուրժուական ընդդիմադիր մամուլի եջերում արտահայտվելով աբսոլյուտիզմի վերացման և կոնստիտուցիոն կարգի սահմանման մասին «երրորդ դասը» ամբողջովին զորակից եր հանդիսանում պատգամավորների համար։

*) Տես հավելված №№ 1 և 2։



## 4. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՆ ՈՒ ԵՏԱՊՆԵՐԸ

Պատմաբանները գտնում են, որ Գեներալ Շտատների դումարման որից սկսվեց Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը և նրա առաջին շրջանը, որը կոչվում եր աբսոլյուտիզմի անկման մեջ։

Մենք պիտի քննենք հեղափոխության անցքերն ըստ շրջանների և ետապների, որոնք բնութագրում են ծավալվող դասակարգային պայքարի հիմնական մոմենտները. առաջին շրջանը, որն սկսվում և Գեներալ Շտատների դումարմամբ և ավարտվում է Ազգային Կոնվենտի ընտրություններով (1792 թ.) բնութագրվում է խոշոր բուրժուազիայի յելույթով, որն իր վրա է վերցնում նախաձեռնությունը և հաջողեցնում թագավորի տապալումը, միապետության և ֆեոդալական ռեժիմի մնացորդների վերացումը։ «Բուրժուական հեղափոխությունը» կարող եր ավարտվել այս շրջանում, եթե միայն բուրժուազիան հնարավորություն ունենար ամրապնդել նվաճած դիրքերը. սակայն, համարյա միաժամանակ հեղափոխության մեջ է մտնում մանր բուրժուազիան՝ արհեստավորները, մանր պաշտոնյաները, մանր ձեռնարկատերերը, ինտելիգենտները և արվարձանների բանվոր բնակչությունը։

Յերկրորդ շրջանում մանր բուրժուազիային է պատկանում առաջատար դերը. նա ձգտում է վոչ միայն «հին կարգի» որոնքներն իսպառ վերացնելու, այլ և դիկտատուրա հայտարարելու, վորը պիտի պաշտպանի հեղափոխության նվաճումները և ուղղված լինի հին ռեժիմի կողմնակիցների դեմ։ Այս շրջանը սկսվելով Ազգային Կոնվենտի բացումից և յակոբինյանների դիկտատուրայի հայտարարումով, ավարտվում է տերմիդորի 9-ի

(1724 թ. հուլիսի 27) հեղաշրջումով, որը վերաձևեց իշխանությունը խոշոր բուրժուազիային. վերջինս շուտով հայտարարեց պինվորական դիկտատուրա իր առաջնորդ պետալ Նապոլեոն Բոնապարտի գլխավորությամբ: Այստեղից սկսում է հեղափոխության 3-րդ շրջանը, որը ավարտվեց բուրժուազիայի և արդյունաբերական հեղաշրջման վերջնական հաղթանակով Ֆրանսիայում (XIX դարի սկզբում):

## 5. ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՐ

Տեղի ունեցող պատահարներին չուտով արձագանքեցին Փարիզի արվարձանների բանվորները և Փարիզի աշխատավոր ապստամբակցությունը (արհեստավորները և մանր պաշտոնյաները). հուլիսի 12-ին Փարիզի արվարձանների բնակիչները զալով Փարիզ ավերեցին պինանոցը և քանդեցին մաքսային ուղեկալները, որոնք տուրք էին վերցնում ներմուծվող հացից. պինված ամբոխը հուլիսի 14-ին պաշարեց և կարճատև կռվից հետո գրոհով վերցրեց Փարիզի կենտրոնում գտնվող Բաստիլ ամրոցը, որը վաղանքի տեղ էր ծառայում նրանց համար, որոնք կատկածվում էին՝ արքայական իշխանության դեմ ծառացող հեղափոխական շարժմանը մասնակցելու մեջ. *) իսկ հուլիսի 15-ին տեղի ունեցավ բանվորների ավելի խորհրդավոր ցույցը—պինված գալով վերադարձ, նրանք սպանեցին Թաղավորին և Սահմանադիրը ժողովին աշխատավոր ժողովրդի հակադրության ներքո փոխադրվել Փարիզ (երկյուղ կրելով Փարիզից դուրս գտնվող՝ միապետության կողմնակիցների—«ոչխարների» հակահեղափոխական ցույցերից): Միաժամանակ շարժում սկսվեց գավառում. գյուղացիները դրավում էին կալվածատիրական հողերը, հրդեհում և ավերում էին կալվածատերերի տները, խաղողի այգիները, ագարակները. նույն բախտին էին ենթարկվում նաև յեկեղեցական կայքերը: Կատարվող դեպքերի ազդեցության տակ Սահմանադիրը ժողովն ոգոստոսի 4-ի գիշերվա նիստում կալվածատերերի ֆեոդալական իրավունքները հայտարարեց վոչնչացած և հռչակեց բոլոր քաղաքացիների հավասարությունն որենքի առաջ: Սակայն, այս վորոշումն ունեցավ միմիայն դեկլարատիվ բնույթ, քանի վոր հետևյալ 1790 թվի մարտին հրապարակված որենքի համաձայն գյուղացիները պարտավոր էին 29 տարվա ընթացքում հետ գնել (փրկագրել) ֆեոդալական տուրքերն ու ծառայությունները. մոտավոր հաշվով գյուղացիները պիտի վճարեին մոտ 2500 միլիոն լիվր:

Սահմանադիր ժողովում մեծամասնություն ներկայացնող բուրժուազիան այլ քայլերի ևս ձեռնարկեց, վորոնք ցույց են տալիս նրա անվճռականությունը և իր դիրքի չհավատարմությունը կորցնելու յերկյուղը. հայտարարվեց յեկեղեցական հողերի նացիոնալիզացիան, վորոնք վաճառքի հանվեցին այնպիսի արտոնյալ պայմաններով, վոր գյուղացիին հողերի փոխանցումը գյուղացիական բուրժուազիային (ունևոր գյուղացիներին) և առևտրականներին, վորոնք այդ հողերով սկսեցին մի կատաղի սպեկուլյացիա անել: Բանվորական հարցի վերաբերյալ ընդունած վորոշումներում ևս բուրժուազիան բացահայտ կերպով ընդգծեց իր դասակարգային չահերը, նա հարկադրեց հարուստներին կրճատել անձնային ծառայողների հատուկը և յեր-

*) Այդ ժամանակից հուլիսի 14-ը Ֆրանսիայում համարվում է ազգային տոն:

կյուղ կրճատով պործադրությունից, ընչին վարձատրությամբ կազմակերպեց հասարակական հողագործական աշխատանք. յերբ բանվորներն աշխատավարձը բարձրացնելու համար իրենց տերերին պահանջներ սկսեցին ներկայացնել, Սահմանադիր Ժողովը մի որոշում հրատարակեց, որով արգելվեցին ամեն տեսակի պրոֆեսիոնալ կազմակերպությունները, ինչպես և ժողովները, պործադուլները և նույնիսկ հանրային խնդրագրեր՝ պետերիանները ներկայացնելը (այսպես կոչված «Լե-Շապելյեի որենքը»):

Բուրժուազիան իր դեմքը հայտնաբերեց «մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի» մեջ: «Դեկլարացիան» բուրժուազիայի քաղաքական հաստատության ամենացայտուն ակտն է, իսկ 1791 թվի «կոնստիտուցիան» (սահմանադրությունը) բուրժուական կոնստիտուցիաներից ամենափայլունն է: *) Այս կոնստիտուցիայով Ֆրանսիան հայտարարվեց սահմանադրական միապետություն, վորտեղ Թագավորը և նրա կողմից նշանակվող մինիստրները դառնում էին գործադիր իշխանության որգանները, իսկ որենսդրական իշխանությունը հանձնվում էր որենսդիր ժողովին. կոնստիտուցիան վերջնական հայտարարեց բոլոր դասերը, արտոնությունները, տիտղոսները, հրեաների և բողոքականների համար վորոշված բոլոր սահմանափակումները, մարդից յերդվյալների դատարան և տեղերում գանվող հին իշխանությունների փոխարեն սահմանեց ինքնավարություններ:

*) Տես հավելված № 8



## 6. ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Դեռ 1790 թվին հայտնաբերվեց, վոր Լյուդովիկոս XVI թագավորը բանակցում է ավստրիական արքունիքի հետ՝ հեղափոխական շարժումը ջախջախելու համար որգնություն ստանալու մասին: «Ժողովրդի բարեկամ» թերթի հրատարակիչ Ժան-Պոլ Մարատը նախազգուշացնելով ֆրանսիացիներին սպառնացող հակահեղափոխությունից առաջարկում էր վերջ տալ արքայական իշխանությանը: 1791 թվի ամռանը Թագավորը փորձեց փախչել բելգիական սահմանագլխում գտնվող Վարենի վայրը, բայց ճանաչվելով ձերբակալվեց և յենթարկվեց տեսչին բանտարկության Փարիզում: Սահմանադիր Ժողովը մերժեց բավարարելու բանվորների և մանր բուրժուաների պահանջը՝ Թագավորին տապալելու մասին, և պատասխան վորի 1791 թվի հուլիսի 17-ին Մարսյան դաշտում կազմակերպվեց մի հսկայական ցույց, վորը ցրվեց պինված ուժով «ազգային գվարդիայի» որնությամբ. այդ գվարդիան կազմված էր բուրժուական յերիտասարդությունից և գտնվում էր ամերիկական ազատագրական պատերազմի մասնակից Մարկիզ Լաֆայետի հրամանատարության տակ: Դրանից հետո, Ֆրանսիային սահմանադրված պրուսական Կոբլենց քաղաքն ապավինած Ֆրանսիական ազնվականների միջոցով, Թագավորն ու պրինցները բացահայտ կերպով բանակցություններ մեջ մտան Պրուսիայի, Ավստրիայի և Իսպանիայի հետ՝ հեղափոխական կառավարությունը կործանելու համար:

Կոնստիտուցիայի համաձայն արձակված Սահմանադիր Ժողովի փոխարեն 1791 թվի հոկտեմբերի 1-ին

դամարված Որլեանյան Ժողովը, վորտեղ մանր բուրժուաների պատգամավորների թիվը զգալի չափով ավելի մեծ եր, քան Սահմանադիր Ժողովում, 1792 թվի սկզբին պատերազմ հայտարարեց Ավստրիային, ի պատասխան վերջինիս բացահայտ պատերազմական պատրաստությունների:

Պատերազմը խիստ տարաձայնություններ հարուցեց տարբեր դասակարգերի ներկայացուցիչների մեջ: Բուրժուազիան պատերազմ եր ցանկանում, քանի վոր դա մի միջոց եր համարում կատեցնելու աշխատավոր ժողովրդի ուշադրությունը ներքին հեղափոխական պայքարից և հույսեր եր տածում պատերազմական դործողությունների ողնությամբ պաշտպանել իր տնտեսական շահերը համաշխարհային շուկայում: Մանր բուրժուազիան պատերազմին դեմ եր, սակայն չեր կարողանում նրան հակադրել քաղաքացիական կռվի ծրագիր. մանր բուրժուազիայի առանձին ներկայացուցիչները հավանած եյին համաձայնվելու բուրժուազիայի պատերազմական լողունգների հետ, հայտարարելով, թե պատերազմը հեղափոխական և «աղատագրական» սլիտի լինի: Որլեանցի համար, Ռոբեսպիերը հայտարարեց.—«Ես ել եմ պահանջում պատերազմ, սակայն այն պայմանով, վորի վերաբերմամբ մենք բոլորս անկասկած համաձայն ենք, վորովհետև ես չեմ կարծում, վոր պատերազմի կողմնակիցները մտադիր են մեզ խաբելու. այսպիսով ես պահանջում եմ վոչ թե կյանքի, այլ մահվան կռիվ, հերոսական կռիվ, այնպիսի պատերազմ, վորպիսին պատմությունը հայտարարում և բռնակալության, այնպիսի պատերազմ, վորպիսին կարող և վարել հեղափոխական ժողովուրդն իր սեփական առաջնորդների գլխավորությամբ»:



Ֆրանսիայի համար պատերազմը հենց սկզբից չափազանց դժբախտ ընթացք ստացավ. գլխավոր հրամանատար Լաֆայետի դավաճանությունից հետո ավստրիացիք վոտք դրին Ֆրանսիայի հող, վերցրին Լոնգվի և Վերդեն բերդերը և միայն 1792 թվի սեպտեմբերի վերջին լուծարքի յենթարկվեց Թշնամու առաջխաղացումը և համառ կռիվներից հետո Ֆրանսիան մաքրվեց ավստրիացիներից:

Թագավորի և պալատականների ինտրիգների, ինչպես և Որլեանյան Ժողովի անվճռական գործելակերպի մասին ունեցած տեղեկությունների ազդեցության տակ Փարիզի աշխատավորները կազմակերպվելով Փարիզյան Կոմմունայի (այսինքն՝ Փարիզի Կենտրոնական Կոմիտեի) անկյալում, պահանջեցին Թագավորի գահընկեցությունը և 1792 թվի ոգոստոսի 10-ի գիշերը գինված ամբոխը գրավելով քաղաքային ինքնավարության տունը, հռչակվեց Կոմմունան. այնուհետև գրավեցին Տյուլերի պալատը, վորտեղ բնակվում եր Թագավորը, և պահանջեցին ձերբակալել վերջինիս: Կոմմունայի ճնշման տակ Որլեանյան Ժողովը վորոշեց ընդհանուր ընտրական իրավունքի հիմունքներով գումարել Ազգային Կոնվենտը:

Այդ որերը մինչդամային պարզորեն յերևան յեկավ դասակարգային խմբավորումների պայքարը Որլեանյան Ժողովում թե Փարիզի ազգաբնակչության մեջ. ոգոստոսի 10-ի հեղափոխությունը ցուցադրեց, վոր պայքարը տեղի յե ունենում յերկու տարբեր խմբերի՝ բուրժուական և դեմոկրատական խմբերի մեջ:

Դեռևս Որլեանյան Ժողովում նկատվում եյին մի քանի խմբեր *), վորոնցից միացնում եյին ազնը-

*) Դասն ստատիկայով և դրագրով քաղաքական հուսակցություններ դեռ ևս չկային:

վականության բարձր խավերից յելածներին, Ֆելյանները՝ խոշոր բուրժուաներից և հողատերերից կազմված չափավոր միապետականներ էին, ժիրոնդիստները՝ գավառական քաղաքների խոշոր առևտրաարդյունաբերական բուրժուազիայից ծագած սահմանադրականներ և չափավոր հանրապետականներ էին, յակոբինյանները՝ մանր բուրժուազիայից առաջ յեկած հանրապետականներ և դեմոկրատական ռեժիմի կողմնակիցներ էին: Վերջիններս իրենց յակոբինյան ակումբում և կոմմունայի սեկցիաներում առաջարկում էին ապստամբվել Թագավորի, Որենադրական ժողովի և նրա մեջ դերիչխող ժիրոնդիստների դեմ: Նրանց հաջողվեց կոմմունայի միջոցով վճռական միջոցներ ձեռնարկել հակահեղափոխության դեմ. արտակարգ լիազորություններով գավառներն ուղարկվեցին 30 կոմիսարներ «կասկածելիների վրա հսկողություն ունենալու», ինչպես և հեղափոխական տրիբունայի և պրոպագանդի համար: Արդարադատության նոր մինիստր յակոբինյան Դանտոնն իր մերձավոր աշխատակիցների հետ միասին սատուցում էր կենտրոնական հիմնարկությունների աշխատակիցներին և յեռանդուն կերպով «զոռում էր» բոլոր բոյալիստներին, Ֆելյաններին և ընդհանրապես անբարեհույս անձանց. հայտնաբերված ակտիվ հակահեղափոխականներից չատերը գտատապարտվում էին Գիլյոտինահատման:*) Փարիզից փախած հակահեղափոխականները, վորոնց չեր հաջողվել պատսպարվել արտասահմանում, խուլ գավառներում ագիտացիա էին մղում կոմմունայի դեմ. նրանց հաջողվեց ապստամբեցնել Վանդեյա և

*) Այսինքն՝ գլխատման. Գիլյոտինը հնարել էր սահմանադիր ժողովի անդամ բժիշկ Գիլյոտինը:



Բրետան գավառները, վորոնք բնակված էին ամենահետամնաց և ընկճված գյուղացիությամբ. հողեվորականության ազդեցության տակ գյուղացիները «քրիստոսի մարտիկների» ջոկատներ էին կազմակերպել հեղափոխության դեմ պայքարելու համար:

Պրուսիացիների դեմ վալմիի մոտ տարած հաղթանակը (1792 թվի սեպտեմբերի 20), վորի մասին պրուսական գլխավոր հրամանատար Հերցոգ Բրաունշվայգի հաքխմբում գտնվող գերմանական խոշորագույն բանաստեղծ Գյոտեն գրում եր իբրև մի պատահարի, «վորտեղից սկսվում է համաշխարհային պատմության նոր շրջանը» (քաղաքացիական «ցնցոտիավորներից» կազմված հանրապետական բանակը ջարդեց պրուսական բանակին), արձակեց հեղափոխական իշխանության ձեռքերն ընդդեմ բոյալիստների ու բոլոր հակահեղափոխականների:

## 7. ԿՈՆՎԵՆՏԸ ԵՎ ՅԱԿՈԲԻՆՅԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

1792 թվի ոգոստոսի 10-ին տեղի ունեցած հեղափոխությունը վորոշեց միապետության բախտը և վճռորեն դեմոկրատական հանրապետության սկիզբը դրեց: Իր աշխատանքներն ավարտած Ազգային ժողովը փոխարեն նույն տարվա հոկտեմբերի մեկին դումարված Ազգային Կոնվենտին վիճակվեց որենադրական գործունեությունը վարել ամող հակահեղափոխության և տնտեսության խստագույն քայքայման պայմաններում, միաժամանակ ղղակված լինելով հանրապետության դեմ պատերազմող թշնամիներով:

Կոնվենտում մեծամասնություն կազմող մանր բուրժուական (յակոբինյաններն այժմ «մոնտանյարներ» եին կոչվում) հեռացնում և իշխանությունից

խոշոր բուրժուազիային և աշխատում հենարան դառնել բանվորական զանգվածների և գյուղացիական միջին խավերի մեջ։ Կոնվենտի առաջին բարենորոգություններն ուղղված էին ֆեոդալիզմի և միապետականության դեմ։

Ջակոբինականների առաջին խոշոր հաղթանակը թագավորի դատավարությունն եր, վորին դատում էին Կոնվենտի հատուկ նիստում. ժիրոնդիատները վախենալով մասսաներին Անգլիայի միջամտությամբ, աշխատում էին մեղմացնել թագավորի հանցանքը, վորի հարաբերությունները Ֆրանսիայի դեմ պատերազմող կառավարությունների հետ փաստաթղթերով ապացուցվել եր. սակայն յակոբինականները համոզեցին Կոնվենտին վճռական միջոցներ ձեռնարկել և Լյուդովիկոսը 1793 թ հունվարին ենթարկվեց մահվան պատժի։

Դրանից հետո յակոբինականներն սկսում են պայքարել ժիրոնդիատների դեմ, յակոբինականները որակրպի մեջ են մացնում՝ ֆեոդալական տուրքերն անվարձահատույց կերպով իսպառ վերացնելու հարցը, ինչպես և սպեկուլյանտների և չարաչահ առևտրականների դեմ (վորոնք ոգտվում էին պարենավորման դժվարություններից և արտաքին ֆրոնտների լարված կացությունից) պայքարելու հարցերը։

Իբրև «սեփականության անձեռնմխելիության» պաշտպանող առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի շահերի արտահայտիչներ, ժիրոնդիատները վճռականորեն դիմադրում են հողերի, կալքերի և կապիտալիստական խոշոր սեփականությունների բռնագրավման համար Կոնվենտի ձեռնարկած բոլոր միջոցներին։ Սեփականության վերացման հարցի չուրջը, իհարկե, համերաշխություն չկար նաև յակոբինականների շարքերում, վորովհետև մանր բուրժուազիան պատե-



ռազմ հայտարարելով խոշոր սեփականությանը, չհագեցված եր մանր սեփականության պահպանման մեջ։ 1792–1793 թ. թ. ձմեռը Փարիզում մեծ դժվարություններ եր կրում։ Փարիզում տերի եկին ունենում սովյալների ամբոխումներ և պարենի պահեստների ավերածություններ։ Ջակոբինականները հերոսական միջոցներ եկին ձեռնարկում ճզգնաժամը մեղմացնելու և պարենի ապահովության համար, սկզբում նրանք վորձեցին հացի և այլ մթերքների համար կայուն գներ։ Հայտարարել, բայց սահմանափակվեցին միայն ազատ առևտրի մասին հրատարակած դեկրետով. սպեկուլյանտների դեմ բացառիկ որենքներ եկին հրատարակված. հատուկ կոմիտեներ եկին հիմնվել, վորոնք կազմակերպում եկին արդյունաբերական կենտրոններին անհրաժեշտ ապրանքները մատակարարելու գործը։ Բանվորներն անբավական լինելով Կոնվենտի վոչ վճռական միջոցներից, չքավոր արհեստավորների հետ միասին ակումբներում և ժողովներում քննում եկին մատակարարման և սպեկուլյանտների դեմ մաքառելու հարցերը։ Արմատական առաջադրություններով հանդես եկող չքավորների առաջնորդներին յակոբինականներն արհամարհանքով «կատաղածներ» եկին անվանում։ Այս առաջնորդներից մեկը՝ նախկին քահանա Ժակ Ռուն բազմաթիվ ատորադրություններ հավաքեց պետիցիայի համար, վորով «կատաղածները» պահանջում եկին կայուն գներ սահմանել. յակոբինականների առաջնորդ Ռոբեսպիերը պահանջում եր կորուկ միջոցներ գործադրել «կատաղածների» դեմ, վորոնց նա անվանում եր «ազատության թշնամիներ», և Կոնվենտը մի դեկրետ հրատարակեց, վորով մահվան պատիժ եր նախատեսվում նրանց բո-

լորի համար, «ով հողային, առևտրական կամ արդյունաբերական սեփականությունը խախտող վրդևե ազբարային կամ մի այլ որևնք առաջարկի»։*) Շուտով ավատրիացիների ձեռնարկած նոր արշավի և պարենավորման դժվարությունների հետևանքով ընդհանուր դրությունը սուր բնույթ ստացավ։ Յակոբինյանների պահանջմամբ կայուն գներ սահմանող մի դեկրետ հրապարակվեց. այդ դեկրետը խախտեց աշխուժացած «ազատ» առևտուրը, վորով չհագեցված եր խոշոր բուրժուազիան։ 1793 թվի սկզբին պարզապես աչքի եյին զարնում արտաքին ֆրոնտում ունեցած անհաջողությունները, վորոնք հետևանք եյին դլխավոր հրամանատար Դյումուրյեյի դավաճանության (վորը մերկացնելով ֆրոնտը փախել եր ավատրիացիների մոտ), ինչպես և այն հանդամանքի, վոր մինչ այդ չեզոք մնացած Անգլիան միացավ Ֆրանսիայի դեմ պատերազմող կոալիցիային, միաժամանակ այդ կոալիցիային միացան նաև Իսպանիան, Սարդինիան և Հոլլանդիան։

Ֆրանսիան թշնամական ողևման մեջ ընկավ և այդ որերը յերկրի ինքնապաշտպանության դործում կոնվենտը կազմակերպչական մեծ ընդունակություններ ցուցաբերեց. ընդհանուր զորահավաք հայտարարվեց (17 մինչև 40 տարեկան հասակի ֆրանսիացիները պարտավոր եյին բանակը մտնել), հին ծառայության սպաները փոխարինվեցին հեղափոխական զորամասերի կողմից առաջ քաշված հրամանատարներով. պատերազմական դործողությունների ծրագրերը մշակելու համար յակոբինյանները կազմեցին հատուկ կոմիտե։ Իրենց առջևն ավելի ուժեղ հակառակորդ ունենալով, խոկ յետևը՝ հակահեղափոխական խռովություններ և կոն-

*) Տես հավելվածները № № 4 և 5։



վենտի կոմիսարների դեմ ուղղված տերրորիստական դործողությունների հաճախակի դեպքեր, յակոբինյանները, ռովի և բանակի մատակարարման դժվարությունների պայմաններում, հայտնաբերեցին յերկաթե կամք և ուժեղ յեռանդ, վորը հետագայում հիացմունք եր պատճառում նույնիսկ նրանց հակառակորդ դրողներին։ Յերկրի ինքնապաշտպանության դլուխն եր անցել Հասարակական փրկության Կոմիտեն։

Յերբ արդեն ի հայտ բերվեց, վոր ժիրոնդիստները պրոպագանդ են մղում մնացած դեպարտամենտները (նահանգները) հեղափոխական Փարիզի դեմ հանելու համար և յերբ ժիրոնդիստ Շարլոտտա Կորդեյի ձեռքով Մարատ սպանվեց, Փարիզյան Կոմմունան և նրա սեկցիաները *) պահանջեցին վճռական միջոցներ ձեռնարկել ժիրոնդիստների և բոլոր հակահեղափոխականների դեմ։ Հեղափոխական Տրիբունալը դատապարտեց և մահվան պատիժ կենթարկեց Կոնվենտի ժիրոնդիստ պատդամավորներին. Կոնվենտն ամբողջ յերկրում պատերազմական դրություն հայտարարեց. Կոնվենտի կոմիսարները դեպարտամենտներում յեռանդուն պայքար եյին մղում հակահեղափոխության դեմ՝ բացելով նախկին արիստոկրատների, քահանաների և բարձրաստիճան պաշտոնյաների դավադրությունները. ունևորների վրա պատրաստի տուրքեր նշանակեցին և հեղափոխական հարկեր մտցրին։ Այսպիսով, տերրորը մի դենք եր վոչ միայն հակահեղափոխականներին քաղաքականապես անվտանգ դարձնելու և վերացնելու համար, այլ և նա միջոց եր ծառայում պարենավորման և

*) Փարիզի քաղաքային խորհուրդը, վորտեղ բանվորներն ու արհես-ավարտները մեծամասնություն եյին կազմում։ Ոոբեսպիերյան արենադրության հարցերի շուրջը կոմմունան լարված պայքար եր մղում կոնվենտի դեմ։

ֆինանսական դժվարությունները հաղթահարելու համար: Սեպտեմբերի 17-ին Կոնվենտը «կասկածելիների մասին» մի դեկրետ հրատարակեց, որն ուղղված էր սպեկուլյանտների, նախկին արիստոկրատների դեմ, որոնք անկարող էին ապացուցել դավադրությունների իրենց մասնակից չլինելը, ինչպես և քահանաների, նախկին ժիրոնդիստների և եմիգրանտների դեմ (արտասահման ճողոպրած ազնվականների և պաշտոնյաների դեմ): *) Այսպես կոչված «մաքսիմումի որենքը» սահմաններով պարենավորման մթերքների և առաջնակարգ անհրաժեշտություն ներկայացնող ապրանքների գները (ի թիվս որոնց նաև ձեռնարկությունների հարկավոր հում նյութերի գները), լուրջ հարված էր հասցնում սպեկուլյացիային:

1793 թվին Կոնվենտի կողմից ընդունված և դեռևս չկենսագործված կոնստիտուցիայի կիրառումն ընդհատվեց տերրորի հետևանքով, այս սահմանադրությունն առավելագույն չափով և հետևողականությամբ արտահայտում էր բուրժուական դեմոկրատիայի սկզբունքները (ընդհանուր ընտրական իրավունք, որը սակայն կանանց վրա չէր տարածվում, մասնավոր սեփականության պաշտպանություն): Ինքնըստինքյան այս սահմանադրությունը պատմական մի վերին աստիճանի ցայտուն դոկումենտ է, որն ընդունել էր բուրժուազիայի հեղափոխական որենսդրությունը, այն բուրժուազիայի, որը հարվածում էր ճախ կողմից՝

*) Շատ եմիգրանտներ ապաստան էին գտել Ռուսաստանում. նրանցից վոմանք ստացել էին հազարավոր ճորտ գյուղացիներ և մեծ կալվածներ, կարելոս էին արել միապետության ծառայության մեջ (որինակ, Նովոռոսսիայի գեներալ-նահանգապետ Հերցոգ Ռիշելյեն և ուրիշները):



ի դեմս յակոբինյանների ներկայացրած մանր բուրժուական դեմոկրատիայի կողմից:

Ցերրորի շրջանը հավերժացավ նաև հեղափոխական օրենսդրության այլ ակտերով, որոնք յակոբինյաններն անց էին կացնում առանց ժիրոնդիստների աչխատակցության: Վերջ դնելով ֆեոդալական ռեժիմի բոլոր մնացորդներին, Կոնվենտը հրապարակեց դեկրետների մի ամբողջ շարք՝ ֆեոդալական տուրքերի անվարձահատույց վերացման մասին, նացիոնալիզացիայի ենթարկված հողերն արտոնյալ կարգով գյուղացիներին վաճառելու մասին և կալվածատերերի կողմից յերբևիցե գրավված համայնական հողերի բաժանման մասին: Այս մի քանիներով Կոնվենտը դրավեց՝ մինչ այդ հեշտությամբ հակահեղափոխական պրոպագանդին յենթարկվող չքավոր գյուղացիության վրա զանգվածների համակրանքը: 1793 թվի ամառը լավացավ նաև արտաքին ֆրոնտների դրությունը, հեղափոխական բանակը հաջող արշավ կատարեց ավստրիացիների դեմ Ելզասում և անգլիացիների դեմ Տուլոնի մոտ, ընդ որում յերիտասարդ հեղափոխական գեներալ Բոնապարտը հարկադրեց անգլիական ռազմական նավատորմղին հեռանալ Ֆրանսիական ջրերից:

## 8. ՏԵՐՄԻԴՈՐԻ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԳԵՎ ՅԱԿՈԲԻՆՑԱՆՆԵՐԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Հեղափոխական ալիքի ամենաբարձր մակընթացությամբ այդ նույն շրջանում դրսևորվեցին յակոբինյան դիկտատուրայի ճգնաժամի նշանները: Յակոբինյանների շրջանում տարաձայնություններն ուժեղացան և առաջ բերին առանձին խմբերի պայքարի սրվածություն: Կենտրոնական տեղը դրավում էր այն դրուպ-

պան, վորի գլուխն եր անցել՝ 1792–1794 թ. թ. յերկրի փաստական դիկտատոր Մաքսիմիլյան Ռոբեսպյերը։ Նրա խումբը կազմված եր այն յակոբինյաններից, վորոնք ամենասևեռ կախման մեջ եյին գտնվում մանր բուրժուազիայից կամ ավելի ճիշտ՝ մանր բուրժուական ինտելիգենցիայից։ Ռոբեսպյերականները հաճախ հանդես եյին գալիս՝ ի պաշտպանություն մասնավոր սեփականության, ընդդեմ հակակրոնական չարժման (կոչ հայտարարելով քրիստոնեության դեմ, Ռոբեսպյերը հռչակեց նոր աստվածություն «Գերագույն եյակի» դավանանքը, վորը շատ հիշեցնում եր քրիստոնեության չքեղ ու քաղքենի կուլտը) ընդդեմ բանվորական ու գյուղացիական հարցի արմատական լուծման (ընդդեմ բանվորական որվա կրճատման, գործադուլների և միությունների իրավունքի, աղգային հողերի վերաբաշխման և անվարձահատույց կարգով հողերը գյուղացիներին հանձնելու դեմ)։ Ռոբեսպյերի թշնամիներն եյին հանդիսանում վոչ միայն բոյալիստներն ու ժիրոնդիստները, այլ և «կատաղածները» (Ժակ Ռուն դատի տրվեց և 1794 թվի սկզբին բանտում անճնասպանություն գործեց), յակոբինյանների ձախ գրուպան Գեբերտի և Շեմետտի գլխավորությամբ, և աջ գրուպան՝ Դանտոնի գլխավորությամբ։

Զբաղվոր արհեստավորների և բանվորների շահերը պաշտպանող «ձախերը» և «գերեբրատականները» մի չարք կորուկ միջոցներ եյին առաջարկում ընդդեմ ունևոր բնակչության և ի պաշտպանություն չքավորների տնտեսական և իրավական շահերի պրոգրեսիվ հարկամասային հարկ, չքավորների սոցիալական ապահովություն, պարենի մատակարարման պետական կազմակերպություն (միաժամանակ ունևոր գյուղացիներ



հաշի բռնագրավում, վորն առանձնապես ուժեղ ընդդիմադրություն եր հարուցում ռոբեսպիերականների չքավոր հետևորդների մեջ)։ Նրանք պայքարի վճռական միջոցների չդիմեցին։ Նրանք պահպանում եյին առաջարկում ամեն տեսակի ծխատատարության դեմ ժողովրդական կրթության լիակատար վերակազմության պահանջը ունեին։ «Ակերը» կամ «դանտոնիստները» հեղափոխության ժամանակ և մանավանդ մատակարարման դժվարությունների տարիներում հարբուսատացած ու ճնակերպված «նոր բուրժուազիայի» չահերն եյին նեղիայացնում։ Դրանք նախկին՝ պաշտոնյաներն եյին, առևտրական ձեռնարկությունների սեփականատերերն և ամեն տեսակի սպեկուլյացիաներով ուռճացած «ազատ ղբաղմունքների» մարդիկ։ Ունևոր աղքատ բնակության չահերի պաշտպանության գործում դանտոնիստները մեծ աղդեցություն ունեյին Ռոբեսպյերի և նրա խմբի վրա, ընդ վորում նրանք մաքառում եյին «մաքսիմումի որենքի» դեմ։ Դանտոնը կոնվենտում յեթե լուրթներ ունենալով՝ պահանջում եր մահվան պատիժ սահմանել «ամեն տեսակի սպեկուլյացիայի—հողային, անձնական, արդյունաբերական» խախտողների դեմ։ Ժիրոնդիստների դատապարտությունից հետո դանտոնիստներն ընդունեցին նրանց պլատֆորմը և սկսեցին վճռական դիմադրություն ցույց տալ կոնվենտի ձեռնարկած բոլոր հեղափոխական միջոցներին, նույնիսկ նրանք պահանջում եյին զավառներից հետ կանչել կոմիսարներին, հնարավոր եյին համարում Անգլիայի և Ավստրիայի առաջ իրենց պարտված ճանաչել և ներում շնորհել բոլորին, վորոնց վրա տարածվում եր «կասկածելիների մասին» դեկրետը։

Ակ յակոբինյանների քաղաքական բաղդը մանրբուրժուական դեմոկրատների այլասերման և «հակա-

հեղափոխության բանակը դլորվելու» մի վերին աստիճանի իրատեսական պատմական որինակ է:

Գեբերտիստներին 1794 թ. մարտի վերջը և դանթոնականներին (նույն տարվա ապրիլի սկզբին) դատապարտելուց և մահվան պատժի ենթարկելուց հետո իշխանությունն անցավ Ռոբեսպիերին և նրա դրուպպային: Ռոբեսպիերականների դիկտատուրան շատ կարճատև դեղավ, վորովհետև դրուպպայի ներսն սկսվեց խիստ աջայուսմ. մանր, բայց ունևոր բուրժուազիայի շահերի պաշտպանությունը յակոբինյաններին տարավ դեպի հակահեղափոխականների դիրքերը, վորոնք ավելի բարձ եյին դասում «խաղաղության, ամուր կարգի» շահերը, այսինքն՝ պահանջում եյին հեղափոխության դեմ պատերազմներ և կապիտալիստական կուտակման ազատության ապահովություններ: Ռոբեսպիերականներն ինքներն իսկ այդ չնկատելով, իրենց ոտնձգությունները եյին բուրժուազիայի և հարուստ գյուղացիության ճնշելու, այն գյուղացիության, վորն արդեն բավարարվել եր հողերն արտոնյալ պայմաններով գնելու որենքով և կալվածատերերի՝ համայնքներից հափշտակած հողերն իրենց մեջ բաժանելով:

«Գեբերտականներին» հրապարակից հեռացնելուց հետո յակոբինյանների մեջ դարկ ստացան հակահեղափոխական հոսանքները և դրա հետ միաժամանակ քաղաքի և գյուղի չքավոր ելեմենտները սկսեցին իրենց դարձնել յակոբինյաններից: Փարիզի սեկցիաների դործունեության աշխուժացումը ռոբեսպիերականների կողմից բռնության մի շարք նոր միջոցներ հարուցեց, թվում եր, թե Ռոբեսպիերն իրեն նպատակ եր դրել վոչնչացնել ամեն մի ձախ ոպոզիցիա. նրա իմբակը



կոնվենտում սկսեց բացարձակ բանակցություններ վարել բուրժուական «ճահճի» խմբավորումների հետ:

Կղ իսկ պատճառավ տերմիդորի*) 9-ի հեղաշրջումը, որի հետևանքով Ռոբեսպիերը, Սեն Ժյուստը և մյուսռեվոլյուցիոներականները մահվան պատժի ենթարկվեցին և կոնվենտի հրատարակած բոլոր հեղափոխական դիկրետները վերացվեցին, հայտարարվեց նոր սահմանադրություն և իշխանությունը հանձնվեց Դիրեկտորիային, վորը նշանակվել եր՝ իր ուժերը կենտրոնացած խոշոր բուրժուազիայի խմբավորումների կողմից—մի բնական հետևանք եր յակոբինյան դիկտատուրայի այն այլասերման ու հակահեղափոխության բանակը դլորվելու, վորն անսպասելի չեր հենց իրենց յակոբինյանների համար:

## 9. ՌԵԱԿՑԻԱՆ «ՏԵՐՄԻԴՈՐԻՑ» ՀԵՏՈ

Ամբող բուրժուազիան աշխատում եր տերմիդորի 9-ի հեղաշրջումն ոգտագործել՝ յակոբինյան դիկտատուրայից առաջ-գոյություն ունեցած կարգերը վերահաստատելու համար (ռեստավրացիա անելու): Ռոբեսպիերի դլխատումից հետո յակոբինյան ակումբը փակվեց, Փարիզյան Կոմմունան արձակվեց, «մաքսիմումի որենքը» վերացվեց և «կարգը պահպանելու» համար վերաին նահեծվեց Ազդային դվարդիան՝ կազմված հարուստ բուրժուաների դավակներից (այսպես կոչված «վոսկե յերիտասարդությունից»): Ժիրոնդիստներ պատդամավորները վերադարձան կոնվենտը, վորը

*) Այսինքն՝ 1794 թ. հուլիսի 27-ը: Սեպտեմբերի 22-ից կոնվենտը սկսել եր նոր որացույց. ամիսների հին անունները փոխարինվել եյին նորերով, վորոնք արտահայտում եյին բնության յերևույթները և տարվա յեղանակները:

գրաղվում էր նոր սահմանադրության մշակմամբ, այդ սահմանադրությամբ վերացվեց ընդհանուր ընտրական իրավունքը, իսկ օրենսդրական իշխանությունը հանձնվեց յերկու պալատների—Ավագների Խորհրդին և Հինգհարյուրյակի Խորհրդին. գործադիր իշխանությունը հանձնվեց 5 հոգուց բաղկացած Դիրեկտորիային:

Բոյալիստ եմիգրանտներից չատերը Ֆրանսիա վերադարձան և «ժամանակավոր կապալով» ստացան մի շարք կալվածքներ և ձեռնարկություններ. «մաքսիմումի» վերացման հետևանքով լայն սպառման մթերքների գներն սկսեցին բարձրանալ, իսկ աշխատավարձ մնում էր ամփոփուն. մայրաքաղաքում և խոշոր քաղաքներում գործազրկություն առաջ էր, սովն ուժեղանում:

## 10. ԳՐԱԿՆ ԲԱԲԵՖԸ

Փարիզի բանվորների այս ծանր օրերում հնում էր նոր կոչ, որը հորդորում էր բուրժուազիայի դեմ պայքարել և հեղափոխական նոր յերկրներ կատարել: Այս պրոպագանդը մղում էր Գրակխ Բաբեֆը, որը պաշտոնով հողատեր էր և քսան ամսով չէր փոխել պետության և Փարիզի արվարձանների բանվորների հասարակության հետ: Բաբեֆը չքավորությանն առաջարկում էր «վոչնչացնել անհավասարությունը և վերականգնել ընդհանուր յերջանկությունը», բուրժուազիայի դեմ ապստամբություն բարձրացնել և 1793 թվի սահմանադրության վրա հենվող հեղափոխական դիկտատուրա հաստատել: Բաբեֆականների ծրագիրը գտնում կերպով շրջադրված և «Հավասարների Մանիֆեստում»*): Բաբեֆը

*) Տես հավելված № 6:



դերադասելորեն տարբերվում է XVIII դարի ուտոպիստական կոմունիստներից և «կատաղածներից» նրանով, որ նրա կոմունիզմը ներդործապես ներդաշնակում էր հեղափոխական տակտիկայի հետ այն իմաստով, որ դեպի կոմունիզմ տանող ուղին նա տեսնում էր իշխանությունը գրավելու մեջ:

1796 թվի մայիսին հայտնաբերվեց Բաբեֆի գլխավորած «Գաղտնի Դիրեկտորիան» որա անդամներից մեկի զավաճանության հետևանքով և 1797 թվի մայիսի 27-ին Բաբեֆը և իր մերձավոր աշխատակից Դարտեն մահվան պատժի յենթարկվեցին:

## 11. ԿՈՆՍՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր սահմանադրությամբ (այսպես կոչված «III տարվա կոնստիտուցիայով») ամրապնդելով իր տիրապետությունը, բուրժուազիան ուժեղացրեց իր դրությունը՝ հեղափոխական Ֆրանսիայի հետ կռվող պետությունների դեմ արտաքին Ֆրոնտում ունեցած հաջողություններով: Ֆրանսիական զորքերը գրավեցին Բելգիան և Հոլլանդիան, Հռենոսի ուղղությամբ տարածվող Գերմանիայի արևմտյան յերկրամասերը, իսկ հարավում Սավոյան, Նիցցան, և վերջապես գրավեցին ամբողջ Իտալիան, վտարեցին զեներալ Բոնապարտի զորքերն սկսեցին արշավել դեպի Վիեննա և ստիպեցին Ավստրիային անձնատուր լինել:

Համարյա միաժամանակ Պրուսիան դադարեցրեց պատերազմական գործողությունները խաղաղություն կնքելով Ֆրանսիական Հանրապետության հետ (1795 թ.):

Այս պատերազմներն ամրացրին բուրժուազիայի

դերիչխանությունը, վորովհետև բոլոր դրամած յերկրների վրա մեծամեծ կոնտրիբուցիաներ դրվեցին. ժամանակակիցների ասելով Ֆրանսիան բռնված եր «վուլկու ջերմով». բուրժուազիան վոչ միայն վոսկի եր ստանում, այլ և հում նյութ ձեռք բերելու և ապրանքները վաճառելու ամենահարուստ չուկաներ: Առևտրական կապիտալը ծածկում և խոշոր և պրուսական յերկրամասերն եժան վարկի ցանցով, մատակարարում և արդյունաբերական ապրանքներ, վորոնց չրջանառությունը հսկայական ոգուտներ և քաղում այս կիսադաղութներից: XVIII դարի 90-կան թվերին առևտրական գործառնությունների ամռանը և արդյունաբերական չինարարությունը Ֆրանսիայում, ընդհանուր վհատությամբ, պարտական և Ֆրանսիական զորքի հաջողություններին:

Արտաքին ֆրոնտներում ունեցած հաջողությունները բնականաբար պիտի տանեին դեպի ռազմական դիկտատուրան, վորը և տեղի ունեցավ 1799 թվի նոյեմբերի 9-ին (Հանրապետական որացույցով՝ «VIII տարվա բրյումերի 18 հեղաչրջում»). դեներալ Բոնապարտը պինված ուժերի աջակցությամբ ցրեց Ամպռների Խորհուրդը և Հնդհարյուրյակի Խորհուրդը, վերացրեց Դիրեկտորիան և հռչակեց նոր կառավարություն՝ Կոնսուլությունը, կազմված 3 հոգուց: Դառնալով «առաջին կոնսուլը» և ստանալով այս տիտղոսը «ընտրական» ճանապարհով 10 տարի ժամանակով, Բոնապարտը փաստորեն դիկտատոր դարձավ, վորովհետև ըստ նոր սահմանադրության նրան եր պատկանում ամենինիստրաթեան նշանակելու իրավունքը, որենքներ հրատարակելը և անհատական իշխանությամբ արտաքին քաղաքականության հարցերի լուծումը: 1802 թվին առաջին կոն-



սուլի իշխանությունը հայտարարվեց ցմահ, իսկ 1804 թվին կատարվեց «ընդհանուր քվեարկություն», վորի հետևանքով Բոնապարտը հայտարարվեց Ֆրանսիական կայսր, անվանվելով Նապոլեոն I:

Լինելով կողմնակից արդյունաբերական բուրժուազիայի և ունևոր գյուղացիության (վորն ստացել եր ազգային ֆոնդի, այսինքն՝ յեկեղեցիների և խոշոր անձնյորների պատկանող նախկին հողերը), Նապոլեոնը «Նոր Ֆրանսիայում» ոգտվում եր բացառիկ մեծ ժողովրդականությամբ: Կարեկանալես նա արդյունաբերողների կողմն և անցնում և պաշտպանողական քաղաքականություն և վարում անգլիական բուրժուազիայի դեմ, վորը ձգտում եր Ֆրանսիան իր ազդեցության յենթարկել:

Իր բոլոր քաղաքական յելույթներում և որենքներում Նապոլեոնը զարգացնում եր այն համոզմունքը, վոր արդյունաբերությունն ըստ եյության «ազգային և, կապված յերկրի հետ», այն ինչ առևտուրը «կոսմոպոլիտիք և» (համաշխարհատարփական, անհայրենիք), և վոր «թևերնամիտ անընդողների մի վնասակար ցնդաբանություն և». Նապոլեոնի կառավարությունը կիրառում եր բոլոր միջոցները, վորպեսզի Ֆրանսիայի արդյունաբերությունն այն աստիճանի հասցնի, վոր յերկիրն ի վիճակի լինի բավարարելու իր կարիքներն ինքնուրույն կերպով: Ջանի վոր բամբակի մանվածքների արտադրության մեջ անգլիական տեխնիկան ամենամեծ հաջողությունների եր հասել, անգլիական մանվածքը և բամբակի գործվածքները մեծ քանակությամբ արտահանվում եյին Ցեվրոպա և ամենուրեք վաճառվում չատ ածան գներով: Այս պատճառով Նապոլեոնն անհրաժեշտ գտավ հրատարակել մի

արդելիչ որենք, վորով արդելվում եր բամբակի գործվածքների ներմուծումը Ֆրանսիա: Այս որենքը (1806 թ. փետրվարի 22) մեծ ազդեցություն ունեցավ բամբակագործական արդյունաբերությունը Ֆրանսիայում զարգացնելու վրա: Դրանից հետո հենց առաջին տարիներում առաջ են գալիս մի քանի տասնյակ նոր մանուֆակտուրաներ, ճոռում և մանվածքների մեքենայական արտադրությունը:

1806 թվի նոյեմբերի 21-ին հրատարակված դեկրետով Նապոլեոնն Անգլիայի դեմ մտցնում է այսպես կոչված «կոնտինենտալ բլոկադը» (ցամաքային շրջափակում կամ պաշարում). Նա արգելում է Անգլիայի հետ կամ նրա միջոցով ուրիշ յերկրների հետ վարել վորևե առևտրական գործառնություն, ընդ վորում այս արգելքը տարածվում եր այն բոլոր յերկրների վրա, վորոնք Ֆրանսիայի հետ պայմանագրեր չեին կնքել (ի թիվս դրանց նաև Ռուսաստանի վրա): Նապոլեոնի միտումներով «կոնտինենտալ բլոկադը» պիտի խախտեր Անգլիայի արդյունաբերական դերիշխանությունը Եվրոպայի ամբողջ կոնտինենտի վրա և հատուցեր Ֆրանսիայի արդյունաբերական դերազանցությունը: Այս դերազանցությունը, Ֆրանսիական արդյունաբերական բուրժուազիայի չահերի տեսակետից, պիտի կազմեր նապոլեոնյան Ֆրանսիայի վարած պատերազմների վերջաբանը: Այս պատերազմները համարյա ամբողջ կոնտինենտը հպատակեցրին Ֆրանսիային. 1804—1805 թ. թ. գրավեցին Ավստրիան և Պրուսիան, և բոլոր յերկրներում սահմանվեցին միատեսակ կարգեր և միատեսակ ռազմական ռեժիմ (հրատարակվեցին հաղթող բուրժուազիայի չահերը պաշտպանող առևտրական և քաղա-



քացիական նոր որենագրքեր, այսպես կոչված՝ «Նապոլեոնի կոդեքսը»):

Սակայն, յեվրոպական յերկրները դեռևս չեյին հասել կապիտալիստական պարզացման այն աստիճանին, վոր կարողանան սեփական արդյունաբերություն ստեղծել և Անգլիայի հետ զորեղ մրցակցության մեջ մտնել. բացի Ֆրանսիայից, դեռ վոչ մի տեղ Եվրոպայում արդյունաբերական հեղաշրջում չեր կատարվել և չնայած, վոր դրավված յերկրներում ամենամեծ ջճռռականությամբ Նապոլեոնն ի վերուստ վոչնչացրել եր ֆեոդալիզմի մնացորդները, ծնվող արդյունաբերությունն ամենուրեք դանվում եր հնացած արտադրական հարաբերությունների կապանքներում: Արդյունաբերական Անգլիայի դեմ պայքարելու համար Եվրոպան դեռ չեր հասունացել և կոնտինենտալ բլոկադը չուտով լուրջ ճեղքվածք տվեց. սկսեց գործնական կոնտրաբանդը, վորը նսեմացնում եր Ֆրանսիայի և Պրուսիայի վերածնվող արդյունաբերության (դլխավորապես տեքստիլ արդյունաբերության) հաջողությունների նշանակությունը: Կոնտրաբանդիստների չնորհիվ անգլիական ապրանքները նորս եյին խուժում Եվրոպա խախտելով Անգլիան մեկուսացնելու քաղաքականությունը: Արդեն 1810 թ. Ֆրանսիայում առաջացավ հում նյութերի ճգնաժամ, վորը չուտով վերածվեց ամբողջ արդյունաբերության յերկարատև մի ճգնաժամի և հետզհետե ընդգրկեց Եվրոպայի բոլոր յերկրները: Կոնտինենտալ բլոկադի չնորհիվ Ֆրանսիայում, Պրուսիայում, Բելգիայում և Հոլլանդիայում արդյունաբերական և առևտրական բուրժուազիան սկսեց մեծ նեղություններ կրել. հում նյութերի պակասությունից ամենից շատ տուժում եր «մատաղ արդյունաբերու-

թյունը», այսինքն՝ այն ճյուղերը, որոնք այդ ժամանակ ամենաուժեղ զարգացումն էին ունեցել—տեքստիլ, ճարպային և քիմիական ճյուղերը:

Ամբողջ Եվրոպայում արդյունաբերական բուրժուազիան ըմբռնեց, որ կոնտինենտալ բլոկադը խոչոդակելով եվրոպական չուկայի հավասարակշռությունը, խախտում է բուրժուազիայի դրությունը, Նապոլեոնի քաղաքականության հանդեպ բոլոր յերկրներում անթավականություն աճում է, որն ավելի ու ավելի ահարկու բնույթ է ստանում, յերբ Նապոլեոնի ստեղծած «մեծ բանակը» սկսում է անհաջողություններ կրել:

Նապոլեոնյան կայսրության բախտի համար վճռական նշանակություն ունեցավ Ռուսաստանի դեմ վարած պատերազմը, որը ձեռնարկել էր նա այդ յերկիրն ոգտագործելու նպատակով, իբրև հում նյութերի մի հարուստ չեմարան և վաճառքի լայն չուկա: Դեպի Մոսկվա արշավելու (1812 թ.) անհաջողությունը մեծ քայքայում մտցնելով Ֆրանսիական զորի մեջ պայմանավորեց նրա նոր պարտությունները Եվրոպայում. 1815 թվին Վաթերլոո-ում (Բելգիա) պարտություն կրելուց հետո վորոշվեց նաև Նապոլեոնի բախտը, նա պահընկեց յեղավ և աքսորվեց ս. Հեղինեյի կղզին (Ատլանտյան ովկիանոսում, Աֆրիկայի ափերին), իսկ Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների դինաստիան ի դեմս գլխատված Լյուդովիկոս XVI-ի յեղբոր՝ Լյուդովիկոս XVIII-ի:



## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ֆրանսիական մեծ հեղափոխության հիմնական հատվածների ուսումնասիրությանը մենք բացառիկ ուշադրություն պիտի դարձնենք, վորովհետև այս ուսումնասիրությունը հետագայում մեզ կոգնի պարզել XIX դարի առաջին կեսի դասակարգային պայքարի պատմության հիմնական հարցերը:

Նախ և առաջ հարկավոր է խնամքով մշակել Ֆրանսիական հեղափոխության դրդապատճառների հարցը, իբրև արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների կոնֆլիկտի լուծման պատմական մի ձև: Այս նպատակով պարզ պատկերացում պիտի կազմել, թե ի՞նչ եր «հին կարգը» Ֆրանսիայում: Դրա համար ուսումնասիրողը նյութը կգտնի 1 և 2 կետերում:

Դրանից հետո պիտի անցնել հեղափոխության դեպքերի ընթացքի ուսումնասիրությանը, ուշադրությամբ հիշատակելով ծավալվող դասակարգային պայքարի առանձին հատվածների խնդրոը: 3-րդ կետն ուսումնասիրողը ծանոթանում է այն դեպքերի հետ, յերբ սկսվում է բուրժուազիայի՝ հեղափոխությանն ակտիվորեն մասնակցելու շրջանը. №№1 և 2 հավելվածների հատվածները նյութ կտան պատկերացնելու, թե Գեներալ Շտատների պատգամավորներին հանձնված հրահանգներում (նակազներում) ինչպիսի պահանջներ եյին առաջադրում բուրժուազիան և չքավոր գյուղացիությունը: 5 և 6 կետերում մշակումը պիտի ամուր գաղափար տա հեղափոխության մեջ խոշոր բուրժուազիայի կատարած դերի մասին, նրա քաղաքական ծրագրի և հեղափոխական գործելակերպի մասին. ուշադրությամբ պիտի ուսումնասիրել «Մարդու և քաղաքացու իրա-

վունքների դեկլարացիան», իբրև բուրժուազիայի քաղաքական հասունության ամենացայտուն դոկումենտներից մեկի («դեկլարացիան» մեծ հաջողություն ուներ 1905 թվին ռուսական բուրժուազիայի շրջանում)։ 6-րդ կետով կարելի է վերջացնել I բաժնի ուսումնասիրությունը, մշակելով 1–6 վերաստուգիչ հարցերը։

7-րդ կետից կարելի է սկսել II բաժնի մշակումը, որը պարզ դաղափար պիտի տա թե ինչպես մանր բուրժուազիան հեղափոխական շարժման մեջ մտավ, նրա քաղաքական հասունության և հեղափոխական տակտիկայի մասին։ Ուսումնասիրողը ճշտությամբ պիտի լուսաբանի յակոբինյանների սոցիալ-տնտեսական հիմունքները և այն դեպքերը, որոնք կանխորոշեցին յակոբինյան դիկտատուրան, ինչպես և դրա անկումը (7 և 8 կ. կ.) ուշադրությամբ պիտի հետևել դեպքերի ընթացքին՝ սկսած Կոնվենտի դումարումից մինչև ժերմիդորի 9-ի հեղաշրջումը. դրանից հետո դժվար չե պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ պիտի տապալվեր Ռոբեսպիերի դիկտատուրան։ Հատուկ ուշադրություն պիտի դարձնել Կոնվենտի սոցիալական որենսդրության անալիզի վրա —մատակարարման հարցերի լուծման («մաքսիմումի» որենքը), հակահեղափոխության դեմ պայքարելու (որենք «կասկածելիների» մասին), հողատարածման մասին յեղած դեկրետների վրա. միաժամանակ պիտի պարզաբանել «կատաղածների» պլատֆորման, որոնք ընդդիմանում եյին Կոնվենտի որենսդրական ակտերին, ինչպես և պարզաբանել ժիրոնդիստների և ռոբեսպիերականների դեպի «կատաղածները» տածած թշնամության պատճառները։ Դրանից հետո հնարավոր անալիզի պիտի յենթարկել կոնսուլության և կայսրության սոցիալական հիմունքները։



## ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է «հին կարգը» Ֆրանսիայում։

2. Ի՞նչպիսի դասակարգեր կային նախահեղափոխական Ֆրանսիայում։

3. Ցույց ավեք, թե արդյոք բուրժուազիայի և դյուղացիության «նակազները» ինչով են արտահայտում բուրժուազիայի շահերը։

4. Ինչո՞ւ XVIII դարի վերջում տեղի ունեցած Ֆրանսիական հեղափոխությունը կոչվում է «Մեծ»։

5. Գյուղացիների և բանվորների վերաբերմամբ ի՞նչպիսի միջոցներ ձեռնարկեց բուրժուազիան Սահմանադիր ժողովում։

6. Ինչո՞ւ «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան» մենք համարում ենք բուրժուազիայի քաղաքական հասունության ամենացայտուն վավերաթղթերից մեկը և ի՞նչն է մեզ ե կայանում նրա նշանակությունը, իբրև մի հեղափոխական դոկումենտ։

7. Ի՞նչպիսի սոցիալական խմբերի վրա եյին հենվում բոյալիստները, ժիրոնդիստները, յակոբինյանները և «կատաղածները»։

8. Ինչո՞ւ Ռոբեսպիերը պահանջում եր վճռական միջոցներ գործադրել «կատաղածների» պրոպագանդի դեմ։

9. Ինչո՞ւ Կոնվենտը տերրորը համարում եր վերին աստիճանի կարևոր հեղափոխական միջոց։

10. Ի՞նչպիսի սոցիալական խմբավորումների վրա եյին հենվում դանտոնականները, դերբերտականները և ռոբեսպիերականները։

11. Ի՞նչպիսի անմիջական նախադրյալներ պայմանավորեցին տերմիդորի 9-ի հեղաշրջումը։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԻ ԽՈՐԱԶՆԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Фридлянд и Слуцкий. История революционного движения Западной Европы. 2, 3 և 4 *գրքերը*:

2. Кунов. Борьба классов и партия в Великой французской революции 1789—1794 г.г.

3. Фрязинов. Великая французская революция. Научно-популярный очерк.

4. Захар. Очерки по истории «бешеных» эпохи Великой франц. революции.

5. Степанов. И. И Жан-Поль-Марат и его борьба с контрреволюцией 1792—1793 г.г.

*Գեղարվեստական գրականության կոնվենտի հրճանի անցքերի արտահայտությունն ամենից լավ տրված է Անատոլ Ֆրանսի «Աստվածները ծարավ չեն»* («Боги жаждут») *վեպում*:

*Հանձնարարում ենք նաև հետևյալ գրվածքները՝*

Феликс Гра. Марсельцы. *Ֆելիքս Գրա, «Մարսելցիները»*:

Эркман-Шатриан. История одного крестьянина. *Երկման-Շատրիան, «Մի գյուղացու պատմությունը»*:

Диккенс, Повесть о двух городах. *Դիկկենս, «Պատմվածք երկու քաղաքների մասին»*:



## ՀԱՎԵԼՎԱԾ № 2

### 1. Ի՞ՆՉ ԵՐ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՀՐԱՀԱՆԴՆԵՐԻ («ՆԱԿԱԶՆԵՐԻ») ՄԵՋ

(Տրուա ֆաղաֆի բուրժուազիայի ճակագից)։

*Ի նկատի ունենալով, որ յուրաքանչյուր Ֆրանսիացու վերջապես թույլատրված է առ վոտս գահույքի և ազգի դեմարված ներկայացուցիչներին ներկայացնել ամենահպատակ խնդրագրերը, Տրուա քաղաքի վանահոգաբարձությունն իրեն թույլ է տալիս արտահայտել իր ցանկությունները ամենավայել հարգանքով ու հավատով, որը նրան ներշնչում է թագավորի բարությունը և նրա մինիստրի *) խելքը։ Խնդրագիրն ասում է.—*

*1. Ջնայած ընդհանրական պահանջներին, թեթև ուսարական պայմանագրի ընդհատումն Անգլիայի հետ կրկին չարունակվի, գրա վնասակար ազդեցությունից խուսափելու համար անհրաժեշտ է ավելացնել անգլիական ապրանքների մաքսը։ Այդ պայմանագիրը հարված հասցրեց Տրուայի արդյունաբերությանը և անխուսափելիորեն նրան կքայքայի, եթե Գեներալ Շտատները անմիջապես չեռնարկուն միջոցների չդիմեն։*

*2. Վորպեսզի ապագայում առանց Գեներալ Շտատների համաձայնության վոչ մի ուսարական պայմանագիր չկնքվի կամ սահմանվի։*

**) Խոսքը վերաբերում է Նեկկերին, վորը մեծ ժողովրդականություն եր վայելում բուրժուական շրջաններում։*

3· Վորպեսզի արդելվի արտասահմանյան ապրանքների ներմուծումը, բացի այն ապրանքներից՝ վորոնք հում նյութ են ներկայացնում և Ֆրանսիայում չեն արտադրվում:

7· Վորպեսզի առևտրի բացառիկ իրավունքի*) սահեն տեսակի արտոնություններ վերանան:

9· Վորպեսզի մանուֆակտուրների տեսուչների ինստիտուտը, իբրև անդուստ հաստատություն, վերացվի, իսկ դրա ֆունկցիաները կատարվեն վաճառականության կողմից ընտրված յերկու վաճառականի միջոցով, վորոնք անմիջական ծանոթություն ունեն արտադրության մասին:

12· Վորպեսզի չբլիկ առևտուրն արգելվի: Դրանով զբաղվում են միմիայն Թափառաշրջիկները: Վաճառականն ու սպառողը դրանց անխուսափելի զոհերն են:

13· Վորպեսզի գյուղական վոչ մի գործարանատիրոջ նեղություններ չպատճառեն իր ապրանքների վաճառքի համար, վորովհետև պատուրյունն արդյունաբերության բարգավաճման աղբյուրն է:

14· Վորպեսզի ամբողջ պետության մեջ սահմանվի կշռի և չափի մի ընդհանուր միավոր:

## 2· Ի՞ՆՉ ԵՐ ՊԱՏՃԱՌՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ «ՆԱԿԱԶՆԵՐԻ» ՄԵՋ

(Գոտս շրջանի գյուղացիների նակազից)

Մենք չերմորեն ցանկանում ենք, վոր վոչնչացման յենթակա հարկերից նախ և առաջ վերացվեն այն հար-

*) 1776 թվին Տյուրգոն վերացրեց համքարությունները, բայց նրա հրաժարականից հետո դրանք կրկին վերականդնվեցին:



կեր, վորոնք ընկնում են թե չքավորներին և թե ունևոր վորնևրին անհրաժեշտ սպառման առարկաների վրա, ինչպես որինակ աղի վրա դրված հարկն է: Դրանից ավելի վատ հարկ չկա· չկա նաև մի այլ հարկ, վորն ավելի անարդարացի և անհեթեթ բաշխված լինի, քան աղի հարկը: Նա, ով հնարել է այդ հարկը, յերևի ասել է լինքն իրեն—պիտի մի մինոց դանել, վորպեսզի պետական ծախքերին հավասարաչափ մասնակից լինեն թե հարուստները և թե աղքատները· բայց քանի վոր չքավոր մարդկանց չեն կարող ստիպել, վոր նրանք վճարեն ուղղակի հարկ և դրան մի լրացուցիչ հարկ, արհեստական հարկ, կոռ-սուրք, դլխահարկ հինդտոկոսային սուրք, վորովհետև մինևնույն է, նրանք ի վիճակի չեն վճարելու այդ հարկերը և նրանց մոտ մենք չենք դանել վորևե առարկածք, վորն ապահովեր այդ հարկերի վճարումը,—հետևապես բարձր հարկ պիտի նշանակել աղի վրա: Քանի վոր չքավորներն առանց աղի նույնպես չեն կարող ապրել, ինչպես և հարուստները, հետևապես աղի հարկից առացած դրամը վորոշ չափով փոխարինում է այն հարկերին, վորոնք չքավորներից անկարելի յե դանձել: Յերևի այսպես եյին դատում այդ առելի հարկը հնարողները, վորը միայն ֆիսկի (պետության) չահերին է ծառայում:

Այս մտերքի սպառման վերաբերյալ վերև առածների ճշմարտությունը մենք իրոք զդում ենք:

Մեր մեջ ամենաչքավոր տնտեսություններից մեկը, բաղկացած՝ ամուսնուց, կնոջից, 18 տարեկան աղջկանից և 10—12 տարեկան տղայից քառորդ առ քառորդ դնելով 3½ սուլով, տարեկան սպառում է 29 կիլոդրամ աղ:

Մի այլ տնտեսություն, նույնպես չատ աղքատ,

կազմված յերեք հոգուց, վորոնցից յերկուսը կալսողներ են, տարեկան առնվազն գործադրում են 24 կգ· աղ, այն ինչ միևնույն ժամանակամիջոցում այդպիսի մի բուրժուական ընտանիքում՝ կազմված նույնպես յերեք հոգուց, տարեկան ուտվում է, ինչպես մեզ հայտնի է, 10 կգ·-ից պակաս: Հետևապես մենք արդարացի չենք, յերբ գանգատվում ենք այս հարկի անարդարացի բաշխման դեմ:

Մենք իրավունք ենք վերագրել արքայական վորսորդությունը... վորովհետև դա մեծ վնաս է հասցնում պետությանը՝ վերին աստիճանի վնասակար ազդեցություն ունենալով հողի մշակման վրա:

... Մեզ հայտնի է, վոր հարուստների չոայլությունը և փարիզի չրջակայքում կատուցված բազմաթիվ մանուֆակտուրաները ձեռնարկությունները մեծ քանակությամբ փայտ են կլանում և նպաստում են անտառների մակարդակի զգալի կրճատմանը·բայց «արքայական վորսորդության» վայրերում ապրող կենդանիները ավելի մեծ քանակությամբ անտառներ են վոչնչացնում՝ խանգարելով ծառերի բանելուն· հենց վոր մատաղ ճղներ են յերևում, նրանք իսկույնևէթ ուտում են...

Վորքան ընտանիքներ պյուղերում ծայրահեղ աղքատության դուռն են հասել տուգանքների պատճառով, վորոնք դրվում են անմեղների ու մեղավորների վրա, այդ հիվանդության (գաղտնի վորսորդության) դժբախտ զոհերի վրա, հաճախ միանգամայն անմեղ մարդկանց վրա, վորոնք յերբեմն իրենց կյանքի գնով են պատասխանել չնչին հանցանքի համար, հանցանք, վորը կատարված է անզգուշությունից կամ «արքայական վորսորդության» օրենքները չիմանալուց:



Սանչիում յերբեք չեն մոռանալ, թե ինչպես մի խեղճ կին սպանվեց պատահմամբ ժողովելիս·նրան դնդակահարեց պահակը,անաղնիվ Դելիոնը·դժբախտ յերիտասարդ կուան, վորը ցախ էր հավաքում Շատոեյի անտառներում, յերկու տարի առաջ սպանվեց պահակ Դ'Որսեյի դնդակից: Մենք կարող ենք ցույց տալ մի քանի այդպիսի վոդբերգական դեպքեր:Բայց կարելի՞ է արդյոք հավատալ, վոր այդ դժվելի հանցանքների մեղավորներն այլ պատիժ չստացան, բացի մի ուրիշ՝ ավելի արդյունավետ տեղեր փոխադրվելուց:

Մենք պահանջում ենք, վոր յուրաքանչյուրին թույլատրվի ոգտվել իր բնական իրավունքով՝ վոչնչացնելու իր հողամասերում ցանքսերը վնասող վայրի կենդանիներին, և վոր սա չհամարվի սենյորների առանձահատուկ իրավունքների խախտում, թեև մենք լավ գիտենք, վոր սենյորների այս իրավունքը մի հատարակ ոգուտպաշտություն է (անիրավ հափշտակություն), վորը տեղի է ունեցել յերկու հարյուր տարի առաջ, յերբ գյուղացիներին զինաթափ արին:

Ինչ վիճան վրա մենք գյուղացիներս, բավականաչափ միջոցներ չունենալով ադամիաններ չինելու համար, պարտավոր ենք սենյորներին և խոշոր սեփականատերերին պատկանող ադամինների համար ուտելիք հատցնել: Ցավեի մեզ հետ մի այնպիսի դժբախտություն պատահի, վոր քամին մեր ամբողջ հացը սփռի մեր վոքրիկ դաշտում, մենք պիտի կամ մեծ ծախքեր կատարենք այդ հացն ադամինների պաշտպանելու համար և կամ թե հանգիստ նայենք, թե ինչպես այդ թըռչունը վերջնականապես մեզ քանդում է՝ ամբողջ յեբամներով իջնելով մեր դաշտերի վրա, ուտում և մեր ամբողջ հացահատիկը:

Նուէրն է սպառնում հնդկացորենին և մյուս դաշտերին, վորոնք մենք ստիպված ենք յերբեմն յիրենք չափաթ չարունակ պաշտպանել աղավնիների ավերածութիւնից։ այսպիսով դուրս է գալիս, վոր մենք պիտի կերկակրենք վոչ միայն սենյորի ճաշարաններին, նապաստակներին, փասյաններին, կաքավներին, յեղջերուներին, վարազներին, այլ և նրա աղավնիներին, իսկ յեթե նա ուզենա՝ նույնիսկ նրա ընտանի կենդանիներին։

Ցավ մի՛թե այս բոլորի հետ միասին հողատերերին անվերջ հարկեր չենք տալիս—մեզ քայքայում են հողատերերի չահերի համար։

Իսկ յեթե մենք դանդաղում ենք, հալածում են սենյորները, վորոնք առանց կատրելու պատսխանում են՝ «յերբ դու քայքայվես, յես քեզ վողորմություն կտամ»։ Արդարադատ ասված, մի՛թե Ֆրանսիացիներին վիճակված է միքանի հարստի վողորմությամբ ապրող մուրացիկ ժողովուրդ դառնալ։

Մենք կարծում ենք, վոր արդեն ժամանակն է ոտնձգահարելու հարուստ հողատերերի վարաստիրությունը, վորոնց մեծ մասը միայն այն մասին է մտածում, թե ինչպես չքավորների հողերի հաշվին ընդարձակի իր կալվածքները, ինչպես 1749 թվին վանքերին իրավամբ արգելվեց ավելացնել իրենց կալվածքների մակարդակը, հենց այդպես էլ չի խանգարում սահմանափակել մասնավոր սեփականատերերի հողերի մակարդակը՝ սահմանելով յուրաքանչյուր չքնաղ վորոշ մաս, որինակ, մի քառորդ կամ մի հինգերորդական մաս սենյորների համար, մի վեցերորդական կամ յոթերորդական մաս մնացած բոլոր մասնավոր սեփականատերերի համար։



## 3. ՄԱՐԴՈՒ ՑԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

Ֆրանսիական ժողովրդի ներկայացուցիչները, վորոնք կազմում են Ազգային ժողովը, ի նկատի առնելով, վոր հասարակական աղետների և կառավարությունների ապականության միակ պատճառները մարդու իրավունքների անգիտենալը, մոռանալը և արհամարհելն է, վորոշեցին հանդիսավոր հայտարարությամբ շարադրել մարդու բնական, անվիճարելի և սրբազան իրավունքները, վորպեսզի այս հայտարարությունը մշտապես հասարակական մարմնի բոլոր անդամների առաջը լինելով, անընդհատ հիշեցնի նրանց իրենց իրավունքների և պարտականությունների մասին, վորպեսզի օրենսդրական և գործադիր իշխանությունների գործողությունները ամեն մի րոպե բաղդատելով յուրաքանչյուր քաղաքական հաստատության նպատակի հետ, դրանով իսկ ավելի պատկառելի լինեն. վորպեսզի քաղաքացիների պահանջները, վորոնք այսուհետև պիտի հիմնվեն պարզ ու անվիճելի սկզբունքների վրա, զորավիզ դառնան սահմանադրության պաշտպանության և ընդհանուր յերջանկության համար։

Այս հիման վրա Ազգային Ժողովն ընդունում և հայտարարում է ի տես և ընդ հովանավորության դերագույն էության, մարդու և քաղաքացու հետևյալ իրավունքները.—

1. Մարդիկ ծնվում և ապրում են ազատ և հավասար իրենց իրավունքների մեջ։ Հասարակական տարբերությունները կարող են հիմնվել միմիայն ընդհանուր ոգուտի վրա։

2. Յուրաքանչյուր քաղաքական միության նպա-



300—4

տակը՝ մարդու **բնական և անվթարելի** իրավունքների պահպանելն է: Այդ իրավունքներն են՝ ազատությունը, անձեռնմխելիությունը, անվտանգությունը և կեղծմանն ընդդիմադրելը:

3· Գերագույն իշխանության սկզբունքն է պահպանել ազգի մեջ և գոնվում: Վոչ մի հիմնարկ, վոչ մի անհատ չի կարող կենսագործել իշխանությունը, վորը չի բղխում ազգից:

4· Ազատությունն իրավունք է տալիս անել այն ամենը, ինչ վոր ուրիշին չի վնասում: Այսպիսով, յուրաքանչյուր մարդ իր բնական իրավունքներով ոգտվելու համար սահմաններ չունի, բացի այն սահմաններից, վորոնք հասարակության մյուս անդամներին էս ապահովություն են տալիս ոգտվել նույն իրավունքներով: Այդ սահմանները միմիայն որենքով կարող են վորոշվել:

5· Որենքը կարող է արգելել միայն այն գործողությունները, վորոնք հասարակության համար վնասակար են: Այն բոլորը, ինչ վոր որենքով արգելված չէ, թույլատրված է և վոչ վոքի չի կարելի հարկադրել անել այն, **ինչ վոր որենքը չի առաջարկում:**

6· **Որենքն ընդհանուր կամքի արտահայտությունն է:** Բոլոր քաղաքացիները իրավունք ունեն անհատապես կամ **իրենց ներկայացուցիչների** միջոցով մասնակցել որենքների հրատարակմանը: Որենքը, լինի դա պաշտպանելու նպատակով թե պատժելու, բոլորի համար հավասար պիտի լինի: Քանի վոր որենքի առաջ բոլոր քաղաքացիները հավասար են, նրանք հավասարաչափ իրավունք ունեն ստանալու բոլոր տիտղոսները, տեղերը և հասարակական պաշտոնները համաձայն



իրենց ընդունակությունների, առանց վորևէ տարբերության, բացի նրանց առաքինության և տաղանդների մեջ դոյություն ունեցող տարբերություններից:

7· Վոչ վոքի չի կարելի մեղադրել, կալանավորել կամ բանտարկել, բացի որենքով վորոշված դեպքերից և առանց ստորագրված ձևերի: Նրանք, վորոնք հայցում են, տալիս են, կատարում են կամ ստիպում են կատարել կամայական հրամանները՝ յենթակա չեն պատժի· բայց յուրաքանչյուր քաղաքացի, վորն որենքի հիման վրա կանչվում կամ բռնվում է,—անմիջապես պիտի հնազանդվի, ընդդիմադրությունը ցույց տալով նա դառնում է մեղապարտ:

8· Որենքը պիտի սահմանի միմիայն խիստ և անհրաժեշտ պատիժներ և վոչ վոք չի կարող պատժել առանց որենքի, վորը սահմանվել և հրապարակվել է հանցագործությունից առաջ և վորը կիրառվել է որինավոր կերպով:

9· Քանի վոր յուրաքանչյուր մարդ յենթադրվում է անմեղ, մինչև վոր նրան (դատարանում) մեղավոր չեն հայտարարել, նրան ձերբակալելու անհրաժեշտության դեպքում ամեն մի խստություն, վորն ավելորդ է նրա անձնավորության ապահովելու համար (դատարանից չխուսափելու համար), խստորեն պիտի ճնշվի որենքով:

10· Վոչ վոք չպիտի նեղվի իր համոզմունքների համար, նույնիսկ կրոնական, միայն թե դրանց արտահայտությունը չխախտի որենքով սահմանված հասարակական կարգապահությունը:

11· Մտքերի և կարծիքների ազատ արտահայտությունը մարդու ամենաթանգագին իրավունքներից

մեկին և. հետևապես, յուրաքանչյուր քաղաքացի կարող է ազատորեն խոսել, գրել, տպագրել այն պայմանով, որ նա պատասխանատվություն կրի այդ ազատության համար այն դեպքերում, որոնք որոշված են օրենքով:

12. Մարդու և քաղաքացու իրավունքները ապահովելու համար հարկավոր է հասարակական ուժ, այսպիսով, այդ ուժը հաստատված է բոլորի ի՛րենց համար, և ոչ թե նրանց մասնավոր շահերի համար, որոնց անորինության համար ձանձնված այդ ուժը:

13. Հասարակական ուժի պահպանման համար, ինչպես և administration-ի ծախքերը հոգալու համար, անհրաժեշտ է ընդհանուր հարկատվություն. հարկերը հավասարաչափ պիտի բաշխվեն քաղաքացիների միջև համապատասխան նրանց միջոցներին:

14. Բոլոր քաղաքացիները անհատապես կամ իրենց ներկայացուցիչների միջոցով իրավասու են վորոշելու հասարակական հարկերի անհրաժեշտությունը, ազատորեն համաձայնություն տալու հարկերին, հետևելու նրանց դործադրությանը, վորոշելու նրանց չափը, բաշխման հիմունքները, հարկահանության եղանակը և ժամկետը:

15. Հասարակությունն իրավասու է հաշվետվություն պահանջել իր administration-ի յուրաքանչյուր հասարակական դործակալից:

16. Ամեն մի հասարակություն, վորտեղ իրավունքների դարանտիան չի ապահովված և իշխանությունների բաժանումը չի սահմանված, սահմանադրություն չունի:

17. Քանի վոր սեփականությունը մի անխախտելի և սրբազան իրավունք է, վոչ վոք նրանից չի կարող զրկվել, բացի այն դեպքերից, յերբ դա պահանջում է հասարակական կարիքը, որինապես վկայված կարդով, արդարացի և նախապես վարձատրելու պայմանով:

## 4. 1793 Թ. ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԿՈՆՎԵՆՏԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԴԵԿՐԵՏԸ

*Ազգային Կոնվենտը* մահվան պատիժ է սահմանում ամենի համար, ով կառաջարկի ապրարային կամ վորևե այլ որենք, վորը տապալում է հողային, առևտրական կամ արդյունաբերական սեփականությունը:

*Ազգային Կոնվենտը* վորոշում է.—

1. Նախկին բոլոր սենյորական տուրքերը, բահրանները ( оброки ), վորոնք կապված են ֆեոդալական իրավունքների հետ, թե մշտական և թե պատահական (նաև անցյալ տարվա ոգոստոսի 25-ից ուժի մեջ մնացածները) վոչնչանում են անվարձահատույց ձևով:

2. Նախընթաց հոդվածի ներդործությունից հանվում են ռենտաները և վճարումները, վորոնք բացառապես կապված են հողային և վոչ թե ֆեոդալական հարաբերությունների հետ:

## ԹԱԿ ՌՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Նրա «Ֆրանսիական հեղափոխության ադետների պատճառները» գրքույկից)

Արտաքին և ներքին թշնամիները, ահ-իոտահը, մեծաքանակ դնումները, թղթադրամի կուրսի անկումը, աղնվականությունն ու բուրժուազիան հափշտակել

ևն իշխանությունը, հոգևորականության ստացվածքը և ազգային հողերը. նրանք տիրել են առևտրին և նրանց պատճառով չքավորներին և բանվորներին հեղափոխությունը չտվեց այն ամենը, ինչ վոր նրանք իրավունք ունեին սպասել հեղափոխությունից:

Մահվան պատժի չենթարկեցնեք չահագիտական գնումները կատարողներին: Ձեր հրատարակած որոնքներն իրենց նպատակին չեն հասնում: Նույնիսկ պրուսացիք... այնքան վտանգավոր չեն, վորքան նրանք, վորոնք իրենց գնումներով ու ահ-իտատժով վարպետներին և բանվորներին զրկում են աննպիտ:

Ահ-իտատահ կազմակերպողներ! Մինչև Բաստիլի առումը դուք ցնցոտիների մեջ եյիք, իսկ այժմ ձեր չահագրգռությամբ դուք վերադարձրել եք ժողովրդի չքավոր խավերը. շատ քչերը ձեզանից այն ժամանակ բնակարան ունեին, իսկ այժմ դուք պալատներում եք ապրում: Առաջ դուք դուքեան չունեիք, իսկ այժմ խոշոր հողատերեր եք դարձել. այն ժամանակ դուք փողոցային մանր առևտուր եյիք անում, իսկ հիմա խոշոր խանութների տեր եք դարձել. առաջ դուք հասարակ գործակալներ եյիք, իսկ հիմա դեկավարում եք դիվանական նավերի սարքավորումը: Ցնա չեմ զարմանում, վոր մեզ մոտ հեղափոխության այդքան ջերմ կողմնակիցներ են յերևացել. դա նրանց համար հրաշալի առիթ եր, վորպեսզի հայրենասիրական յուղումի պատրվակով զանձերի կուտեր ժողովեն և. իրենց հափշտակությունները ծածկեն անթափանցիկ վարագույրով: Նույնիսկ հին կարգի ժամանակ նրանք պիտի կարմրեյին այդպիսի հանցագործությունների համար:

Բացատրեցեք, թե ինչո՞ւ, չնայած առատ բերքին,



ներմուծման մաքսերի վերացման և սպառողների թվի նվազման,—թե ինչո՞ւ բոլոր մթերքները, նույնիսկ ամենալավ հատկության մթերքները յերկու յերեք անգամ թանգացել են: Դուք վերագրում եք պատերազմին, սասիլնատներին (թղթադրամին): Վոչ, դրա պատճառը ձեր ազահությունն է...Ցնա մերկացնում եմ բոլոր կեղծավորներին, վորոնց համար հասարակական հավասարությունը մի խոլական ցնորք է, բոլոր գավառան—սպեղամոլորներին, բոլոր մինիստրներին, վրոնք յերկրի փրկությունը հանցավորներին են հանձնել. բոլոր պինվորական ու քաղաքացիական պաշտոնյաներին, վորոնք մեր օրենքներն ի կատար չեն ածում. բոլոր այդ օրիկա ճիզվիտներին, այդ արյունարբու աթեյիստներին, յեսաուլներին, բանկիրներին, չարաչահ գնորդներին, վորոնց համար հեղափոխությունը լեզվի վրա յե, իսկ հակահեղափոխությունը սրտի մեջ:

## 6. ԲԱԲԵՖԻ «ՀԱՎԱՍԱՐՆԵՐԻ» ՄԱՆԻՖԵՍՏԻՑ

Հավասարությունը բնության առաջին պահանջն է, մարդու առաջին կարիքը և ամեն մի օրինական ընկերության հիմնական ոզակը: Ցրանսիական ժողովուրդ, բախտը քեզ ավելին չտվեց, քան մյուս ազգերին, վորոնք ապրում են այս չարաբաստիկ յերկրագնդի վրա: Հանճնված ավելի կամ նվազ ճարպիկ մարդակերների իշխանությանը, խեղճ մարդկային ցեղը միշտ և ամենուրեք խաղալիք է ծառայել ամեն տեսակի վատասերության համար, կեբակուր ծառայել ամեն տեսակի բռնակալության համար: Միշտ և ամենուրեք մարդկանց քնացնում եյին գեղեցիկ խոսքերով. բայց յերբեք և վոչ մի տեղ խոսքի հետ միասին գործեր չեյին տանում:

Անհիշելի ժամանակներից կեղծավոր կերպով մեզ ասում են՝ «մարդիկ հավասար են», և անհիշելի ժամանակներից մարդկային ցեղի վրա ծանրանում է ամենաստորացուցիչ և աներևակայելի անհավասարությունը: Այն ժամանակից, քանի դոյություն ունի մարդկային հասարակությունը, հավասարությունը վոչ այլ ինչ է եղել, քան վոչ մի դեղեցիկ և անպատուղ իրավաբանական ֆիկցիա: Իսկ հիմա, երբ այդ պահանջում ենք ավելի վճռականորեն, մեզ պատասխանում են՝ «լռեցեք, վոդորմելիները, փաստական հավասարությունը՝ ցնորք է միայն, բավականացեք պայմանական հավասարությամբ-դուք բոլորդ հավասար եք որենքի առաջ. ել ի՞նչ է ձեզ հարկավոր»:

Ել ի՞նչ է մեզ հարկավոր: Որենդիրները, կառավարիչները, հարուստները, սեփականատերերը, հիմա դուք լսեցեք ձեր հերթին:

Մենք բոլորս հավասար՝ ենք, այդպես չէ՞: Այս սկզբունքը մնում է անվիճելի, վորովհետև թեթև հիմար չլինել, չի կարելի պնդել, թե դուրսը դիշեր է, երբ որը ցերեկ է:

Ահավասիկ, այսուհետև մենք մտադիր ենք ապրել ու մեռնել իբրև հավասարներ, ինչպես մենք ծնվել ենք. մենք ցանկանում ենք կամ իրական հավասարություն կամ մահ. ահա թե ինչ է մեզ հարկավոր: Ցեղ մենք կհասնենք դրան, այդ իրական հավասարությունը, ինչ գնով ել լինի: Վայ նրան, ով փակի մեր ճանապարհը դեպի հավասարությունը: Վայ նրան, ով ընդդիմանա այսպես ազդարարված ցանկությանը:

Ֆրանսիական հեղափոխությունը՝ միայն նախընթացն է մեկ ուրիշ, ավելի մեծ և ավելի փառահեղ հեղափոխության, վորը կլինի վերջին հեղափոխությունը:



Ժողովուրդը չախչախեց նրա դեմ միացած թագավորներին և քահանաներին. նույնը կլինի հների տեղը նստած նոր բռնակալների և քաղաքական նոր կեղծավորների հետ: Ել ի՞նչ է մեզ հարկավոր, բացի իրավաբանական անհավասարությունից:

Մեզ հարկավոր է այս հավասարությունը, վոչ միայն մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի մեջ գրված. մենք ուզում ենք, վոր հավասարությունը լինի մեր մեջ, մեր կացարանների տանիքի տակ:

Դրա համար մենք ամեն բանի համաձայն ենք: Մենք պատրաստ ենք ամեն բան հիմնահատակ անել, միայն թե մեզ մոտ հավասարություն լինի: Ցեթե հարկավոր է, թո՛ղ խորտակվի վողջ դեղարվեստը, միայն թե մեզ մոտ իրական հավասարություն լինի:

Աղբարային որենքը կամ հողերի վերաբաշխումը մի վայրկյանական ցանկություն եր միքանի անսկզբունք դինվորների, միքանի ժողովուրդների, վորոնք ավելի չուտ առաջնորդվել են բնազդով, քան բանականությամբ: Մենք ձգտում ենք ավելի վեհ և ավելի արդարացի նպատակի, այն է՝ կոլեկտիվ սեփականության: Կորչի՛ հողի մասնավոր սեփականությունը, հողը՝ վոչ վոքինը չե՛:

Մենք պահանջում և ցանկանում ենք, վոր յերկրային պտուղներով բոլորն ոգտվեն. այդ պտուղները բոլորին են պատկանում:

Հայտարարում ենք, մենք այլևս համբերել չենք կարող, վոր մարդկանց ճնշող մեծամասնությունն աշխատի իր ճակատի քրտինքով՝ մի աննչան փոքրամաս-

նության չահերի ու բավականության համար:

Բավական յերկար, ավելի քան յերկար ժամանակ մի միլիոնից եվ պակաս մարդիկ անօրինում են այն, ինչ վոր պատկանում է ավելի քան քսան միլիոն նրանց նման, նրանց հավասար մարդկանց:

Վերջապես Թող վերանա այս խայտառակությունը, վորի դոյությանը մեր Թոռները չեն ցանկանալ հավատալ: Թող վերջապես անհետանա մարդկանց զազրելի ստորաբաժանումը՝ հարուստների և չքավորների, յերեւելիների և հասարակների, տերերի և ծառաների, կառավարողների և կառավարվողների:

Թող մարդկանց միջև այլ տարբերություն չլինի, բացի հասակից ու սեռից: Քանի վոր բոլոր մարդիկ միատեսակ կարիքներ ունեն և միատեսակ ընդունակություններ, Թող նրանց կրթությունն ու անունդն եվ միատեսակ լինի: Նրանք բոլորը բավականանում են մեկ արևով և մեկ ոդով. ինչու նրանցից յուրաքանչյուրը չի բավարարվել նույն քանակությամբ և նույն հատկության անունդով:

Զարիքը հասել է իր դագաթնակետին. նա տարածվել է ամբողջ յերկրի յերեսին: Զափազանց յերկար դարեր յերկրի վրա իշխում է քաոսը՝ քաղաքականության անվան տակ: Թո՛ղ սմեն բան կարգ ու կանոնի պա. Թող հավասարության կոչը կաղմակերպի բոլոր տարրերը, վորոնք արդարության ու յերջանկության են ձգտում: Հասել է ժամանակը՝ հավասարների հանրապետությունը հիմնելու համար, այդ վեհ ոթևանը, վոր բաց է բոլոր մարդկանց համար: Հասել են ընդհանուր վերածնունդի որերը: Հառաչող ընտանիքներ, մատեցեք ընդհանուր սեղանին, վոր սիրել է բնությունը իր բոլոր զավակների համար:



## ՅԵՐՐՈՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

### 40-ական թվականների բուրժուական շարժումները յեվ պրոլետարիատը

### 1. ՌԵՍՏԱՎՐԱՑԻԱ. ՀՈՒԼԻՍՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՑՈՒՄ

Նապոլեոն I-ը, վորին Ֆրանսիական բուրժուազիան այլևս չեր աջակցում, 1815 թ. հունիսին զոհը պահպանելու անհաջող փորձից հետո, վերջնականապես տապալվեց Անգլիայի, Ռուսաստանի, Պրուսիայի, Ավստրիայի և այլ յեվրոպական պետությունների միացած զինվորական ուժերով: Յերկյուղ կրելով, վոր Նապոլեոնը կրկին կարող է վերադառնալ Ֆրանսիա, դաշնակիցները նրան աքսորեցին Ատլանտյան ովկիանոսի հեռավոր կղզին, վորտեղ նա մնաց մինչև իր կյանքի վերջը:

Ամբողջ Յեվրոպայում ռեակցիան հաղթանակեց: Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի կառավարությունները միանալով, այսպես կոչված «սրբազան դաշնով» ձգտում էին վերականգնել ամենուրեք կիսաֆեոդալական հարաբերությունները: Անգլիայի հաճախությամբ, վորն աշխատում էր Թուլացնել Ֆրանսիական բուրժուազիային, Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների զինաստիան ի դեմս Լյուդովիկոս XVIII-ի (նրանից հետո կարլ X). ամեն կողմից դեպի Ֆրանսիա ուղղվեցին հեղափոխության հետևանքով վտարված եմիգրանտների խմբերը: Գետական իշխանությունն անցավ խոշոր հողատեր-ազնվականների և ամենահարուստ ֆինանսիստների ու արդյունաբերողների մի փոքրիկ խմբակի ձեռքը:

Պարլամենտի ընտրությունները կարող էին մասնակցել միայն նրանք, որոնք անշարժ կալքերի համար տարեկան 300 ֆրանկ ուղղակի հարկեր էին վճարում: Պարլամենտի անդամ կարող էին ընտրվել տարեկան 1000 ֆրանկ ուղղակի հարկեր վճարողները: Սա այն հետևանքին հասցրեց, որ իշխանությունը փաստորեն կենտրոնացավ մի քանի հազար մարդկանց ձեռքում, այնինչ միլիոնավոր ֆրանսիացիները քաղաքական պես իրավազուրկ դարձան: Միաժամանակ մեծ չափով ընդլայնվեց տերությունների աղդեցությունը: Բոլոր դըպրոցները ու համալսարանները դրվեցին կաթոլիկ հոգևորականության հսկողության տակ. նա հսկում էր նաև մամուլի գործունեության վրա, հաղորդում էր վոտիկանությանը «հերետիկոսության» և աթեիզմի (անաստվածության) բոլոր արտահայտությունների մասին: Նրա խնամակալությունը տարածվում էր նաև ֆրանսիացիների մասնավոր կյանքի վրա: Ինտերվենցիաների աջակցությամբ ռեակցիոներները սպիտակ տերրորը ծայրահեղ աստիճանի հասցրին: Ամբողջ յերկրում ձերբակալում և զնդակահարում էին վոչ միայն հանրապետականներին, այլ և Նապոլեոնի կողմնակիցներին: Մատաքարտ ռեպրեսիաները պայթեցին նաև պրոլետարիատի գլխին, վորը դյուրին կյանք չէր վարում նաև Նապոլեոնի ժամանակ: Պրոլետարական կենտրոնները հակահեղափոխական արիստոկրատները գործում էին սոսկալի կատաղությամբ: Մեսաքսադործական արդյունաբերության կենտրոն Լիոնից բանվորների կեսից ավելին վտարան: Մի շարք քաղաքներում կաթոլիկ հոգևորականության աղդեցության չնորհիվ տեղի ունեցան բողոքականների կոտորածներ: Մի քանի վայրերում սպիտակ-գվարդիականները սպանում էին հեղափոխության աջակցելու մեջ կասկածվողներին և կառավարական դատարանն արդարացնում էր այդ մարդասպաններին:



Հեղափոխության ժամանակ ազնվականներից խլված հողերի համար եմիգրանտներին հաղորդվեց մեկ միլիարդ ֆրանկի հատուցում տանալ: Նացիոնալիզացիայի յենթարկված հողերի մի զգալի մասը, վոր դեռևս վաճառվել բուրժուազիային, վերադարձվեց նախկին սեփականատերերին: Հեղափոխությունից «վնասված» հետապիմականները թոշակի, սուբսիդիայի և այլ ձևերով դրամական նպաստներ էին ստանում ժողովրդական միջոցներից: Այդ նպաստակով տարեկան ծախսում էր ավելի քան 20 միլիոն ֆրանկ:

Ջնայած տերրորին, հետապիմականների բոլոր վորձերը՝ վերադառնալ նախահեղափոխական, կիսա-ավատական (կիսաֆեոդալական) կարգերին, միևնույն հաջողության չէին մատնվում: Հեղափոխությունը հարթեց՝ Ֆրանսիայում կապիտալիստական արտադրության յեղանակի զարգացման ուղիները և բուրժուական հասարակարգի ամուր հիմքը դրեց:

XIX դարի սկզբին Ֆրանսիայում տեղի յեր ունենում արդյունաբերական հեղաշրջում: Շոգեշարժ մեքենաներն սկսեցին նվաճել արդյունաբերությունը: Նապոլեոն I-ի ժամանակ Ֆրանսիայում ընդամենը կար 15 շոգեշարժ մեքենա, իսկ ռեստավրացիայի չրջանի վերջում՝ 1830 թվին նրանց թիվը հասավ 625 (մոտավորապես 65.000 ձիու ուժ): 1801 թվին Ֆրանսիայի բանվոր՝ ջուլհակ Ժակկարի վորդին ներկայացրեց յուրահանդեսին իր հնարած գործվածքային սրամիտ

դաղդյահները։ Մի ուրիշ դյուտարար՝ Ժիրար անունով 1810 թ. չինեց վուշ մանելու մեքենա, որը մեծ ընդունելություն գտավ։ Ռեստավրացիայի վերջը Ֆրանսիայում յերևան յեկան ոանդելու դաղդյահներ, կլոր սղոցներ, չուգեչարժ մեքենաներ և այլն։ 1816 թվին Լամանշի ջրանցքով անցավ Ֆրանսիական առաջին շոգենավը, իսկ 1829 թ. Անգլիայից բերված շոգեմեքենաների ոգնությամբ Ֆրանսիայում սկսեց աշխատել առաջին յերկաթուղագիծը և այլն։

Բուրժուազիան հետզհետե ավելի ու ավելի ուրախանալով ձգտում եր իր ձեռքը պցել իշխանությունը։ Մյուս կողմից Բուրբոնների կառավարությունն ել վիճակի չեր կանդնեցնելու արտադրության կապիտալիստական յեղանակի զարգացումը և հարկադրված եր մի շարք ձեռնարկումների մեջ կիջնումներ անել բուրժուազիային։

Արտադրության նոր հարաբերությունների ամման հետեվանքով արագությամբ կազմվեցին արդյունաբերական պրոլետարիատի կադրեր, որոնք պայքար սկսեցին կապիտալիզմի դեմ։

Հետագեմ աղնվականության փորձերի և արտադրական նոր հարաբերությունների միջև գարգացող հակասությունները անխուսափելի պիտի մղեյին Ֆրանսիան դեպի հեղափոխական մի նոր բռնկում, ինչպիսին և հանդիսացավ և 1830 թվի Հուլիսյան հեղափոխությունը, որը տապալեց Բուրբոնների դինաստիան և գահը հանձնեց՝ Որլեանի հերցոգների կիսաբուրժուական ընտանիքից ծագող Լյուդովիկոս Ֆիլիպին։

Հեղափոխությունը կատարվեց մանր-բուրժուական յերիտասարդության և բանվորների յեղույթի շնորհիվ, իսկ հեղաշրջման արդյունքներից ոգտվեց Ֆինանսական



բուրժուազիան։ Նրա առաջնորդը, Փարիզյան Կոմմունայի ապագա դահիճ սրոֆիեսոր Տյերը նոր սահմանադրության հեղինակներից մեկն եր։ Համաձայն այդ սահմանադրության քաղաքական իշխանությունն ի դեմ պատգամավորների պալատի հանձնվում եր խոշոր բուրժուազիային (Ֆրանսիայի 30 միլիոն բնակչությունից միայն մոտ 200 հազար հոգի, այսինքն 0,65 տոկոսը, ընտրական իրավունք ստացան)։

Ֆրանսիայի արդյունաբերական զարգացման հաջողությունները և արդյունաբերական բուրժուազիայի դերիշխանությունը բանվոր դասակարգի համար նույնպիսի ծանր պայմաններ եյին ստեղծում, ինչպիսին ընտեղվեցին Անգլիայում արդյունաբերական հեղաշրջման հետևանքով։ Մեքենաների կիրառումը քայքայելով մանր արհեստավորներին, ստիպում եր նրանց գործարաններն ուղարկել իրենց կանանց ու յերեխաներին, բանվորների աշխատանքն արժեքազուրկ եր դարձնում և նպաստում աղքատության ծավալմանը բանվորական շրջաններում, և ստեղծում ծանր բնաբարականային պայմաններ, որոն պիտի ավելացնել նաև ցածր աշխատավարձը և բանվորական որվա յերկարացումը մինչև 18 ժամ, վորպեսզի հասկանալի դառնան բանվորների հակամարտի հուզումների պատճառները։

Մանավանդ նշանավոր եյին Լիոնի ջուլհակների ապստամբությունները 1831 և 1834 թվերին։ Լիոնը մետաքսագործական արդյունաբերության կենտրոնն եր, վոր գտնվում եր սակավաթիվ վաճառականական կապիտալիստների ձեռքում, վորոնք արտաստահմանից հում —մետաքս եյին ստանում և վերամշակման համար հանձնում փոքրիկ արհեստանոցատերերին։ 1826 թվին մետաքսի արդյունաբերությունը վաճառքի սուր

ճղնաժամ եր ապրում, վորի հետևանքով Լիոնում և նրա արվարձաններում հինդ հազար դազդյահներ դադարեցին դործելուց. բանվորները պահանջում եյին նորմայի յենթարկված աշխատավարձ սահմանել և կապիտալիստները համաձայնեցին հատուկ հանձնաժողով կազմել բանվորների և դործարանատերերի ներկայացուցիչներից: Սակայն հանձնաժողովին չհաջողվեց դործարանատերերից դիջումներ ստանալ, վորի հետևանքով 1831 թվին Լիոնում 30 հազար ջուլհակներ սև դրոշակով փողոց յելնելով կռվի մեջ մտան ազդային դվարդիայի դեմ և վերջինիս ստիպեցին հեռանալ քաղաքից. 10 որ չարունակ Լիոնն ապատամբների ձեռքին եր մինչև նոր դորքերի ժամանելը, վորոնց բանվորները չդիմադրեցին հայտարարելով, վոր նրանք պայքարում են վոչ թե կառավարության, այլ իրենց տերերի դեմ: 1834 թվի ապատամբությունը նախապատրաստվել եր բանվորների փոխադարձ ոդնության խմբակների կողմից, այսպես կոչված «մյուտյուելիստների» կողմից: Ցերը այս խմբակների վերացման մասին որենք հրատարակվեց, Լիոնում բռնկից ապստամբություն, փողոցային արյունահեղ ընդհարումներով, սակայն կառավարական դորքերը հեշտությամբ և անդթաբար ճնշեցին այս ապստամբությունը:

Լիոնի ապստամբությունները բանվորական մասսայական չարժման առաջին պոռթկումներն եյին, վորոնք ծագեցին Ֆրանսիայում «տերերի դեմ» պայքարելու լողունգի տակ, ընդ վորում այդ բռնկումները Ֆրանսիայում սկսվեցին ավելի վաղ, քան Անգլիայում: Լիոնի ապստամբությունները վկայում եյին, վոր Ֆրանսիայի բանվոր դասակարգը դառնում է պրոլետարիատ:



## 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՎԵՐԶՆԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՑԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

40–50-ական թվականները յեվրոպական խոշորադույն յերկրներում արդյունաբերական կապիտալիզմի հաղթանակի ավարտման շրջանն է, բուրժուական հասարակության ամրապնդման և պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության հասունության շրջանը:

1848 թվին Ֆրանսիայում, Պրուսիայում, Ավստրիայում և Իտալիայում տեղի յեն ունենում բուրժուական հեղափոխություններ: Այդ հեղափոխությունների ժամանակ բանվոր դասակարգն արդեն հանդես է գալիս իբրև մի ուժ, վորը մեծ ազդեցություն է ունենում դեպքերի ընթացքի վրա: Այս տեսակետից բացառություն չի կազմում նաև Անգլիան, վորտեղ այս տարիներում թեև հեղափոխություն չի կատարվում, բայց ինչպես մենք տեսանք, ծավալվում է բանվոր դասակարգի խոշոր և լավ կազմակերպված պայքարն իր տնտեսական ու քաղաքական շահերի համար, վորի նվաճումներից մեկը 1832 թվի ընտրական ռեֆորմն եր:

40-ական թվականներին ամբողջ Յեվրոպայում տեղի յե ունենում հասարակական հարաբերությունների վերակառուցումը՝ համապատասխան խոշոր կապիտալիստական արտադրության զարդացմանը:

Ֆրանսիայում հուլիսյան հեղափոխության ժամանակից մեքենայական արդյունաբերության աճումը կատարվում է առանձնապես մեծ թափով: 1839 թվին յերկրում կար 2500 չոգեշարժ մեքենա, 1847 թվին՝ 4853, իսկ 1851 թվին՝ 5672 մեքենա. 1830 թվին գործ-

վածքների մեքենայական արտադրությունն ուներ 500 դաղդյահ, 1841 թվին՝ 31.000 դաղդյահ: 1830 թվին քարածխի արտադրությունը կազմում էր 1863 հազար տոննա, իսկ 1847 թվին՝ 5153 հազար տոննա: Ֆրանսիայի առևտուրն էլ մեծ առաջադիմություններ էր անում, որոնց չնորհիվ համաշխարհային առևտրի սիստեմի մեջ Ֆրանսիան դրավեց առաջին տեղը Անգլիայից հետո: Մուշտր մեքենայական արտադրությունը և խոշոր առևտուրն ամրացրին բուրժուազիայի դիրքերն երկրի քաղաքական կառուցվածքի մեջ դերիչխող դասակարգի, և միաժամանակ ստեղծացավ բանվոր դասակարգի չքավորությունն ու նրա հրեշավոր շահագործումը:

1848 թվի հեղափոխությունից առաջ Ֆրանսիայի համեմատությամբ Գերմանիան մի հետամնաց երկիր էր: Գերմանիայի արդյունաբերությունը ծնունդ և առնում «Նապոլեոնյան ավերումից» հետո, այսինքն՝ 19-րդ դարի երկրորդ տասնամյակից: Գերմանական երկրներում դեռ երկար ժամանակ իշխում էր մանր արհեստը, որը սրահպանվում էր՝ ֆեոդալական չքավորությունից մնացած համքարական կարգով և որենքներով:

Գերմանիայում էլ քաղաքականապես չէին վերացվել ավատական չքավոր մնացորդները. Գերմանիան բաժանվում էր 38 առանձին պետությունների (նրանցից երկուսն էին միայն խոշոր՝ Պրուսիան և Ավստրիա), որոնք յուրաքանչյուր պետության մեջ գոյություն ունեցող առանձնահատուկ մաքսային կարգերի հետևանքով, անջատված էին մի մյանցից ոչ միայն քաղաքականապես, այլ և տնտեսապես: Սոցիալական հարաբերությունները ըստ իրենց բնույթի համապատասխանում էին չհատունացած կիսակապիտա-



լիստական տնտեսության առանձնահատկություններին. Իշխող դասակարգը «յունկերությունն էր»—հողի խոշոր հողատերերը. բուրժուազիան դեռևս թույլ էր, իսկ դյուղացիությունը ճորտացած: Ընդամենը սրան 40-ական թվերին վորոշ չրջաններում արդյունաբերությունը դեպի զարգացման էր հասել. Բրանդենբուրգիան չրջանում և Հռենոսյան Պրուսիայում աճում էին երկաթամշակման գործարանները և զարգանում քարածխի արտադրությունը, Շլեզիայում զարգանում էր գործվածքների արդյունաբերությունը, ընդ վորում տնայնագործության ուժեղ զարգացմանը համընթաց կային նաև մանուֆակտուրաներ, վորոնք արագորեն կապիտալիստական գործարանների էին վերածվում: Կիսաֆեոդալական և կիսակապիտալիստական հարաբերությունների սերտ հյուսվածքի պայմաններում Գերմանիայում ծնվում և կապիտալիստական արտադրությունը և դրան ուղեկցող բուրժուական հասարակությունը. դրան զուգընթաց, բուրժուազիայի առաջին քաղաքական յելույթները, ավելի վաղ, քան յեվրոպական մյուս յերկրներում, բաղխվում են զարգացող բանվորական շարժման հետ: Սրա մեջն է այն սոցիալ-տնտեսական միջավայրի բարդությունը, վորտեղ կատարվեց Գերմանիայի արդյունաբերական հեղաչրջումը*):

## 3. 30-40 Թ. Թ. ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Յեվրոպայում զարգացող և խորացող սոցիալիստական հակասությունների բարդ միջավայրում, բուրժուական մտավորականության լավագույն ներկայացուցիչների մեջ 19-րդ դարի առաջին տասնամյակնե-

*) Տես հավելված № 1

բում ծագում են ուսմունքները, որոնք քննադատում են տիրող հասարակակարգը և փորձում են պատկերացնել հասարակական իդեալական կառուցվածքը:

Դեռ «Կոմունիստական Մանիֆեստը» այդ ուսմունքներն անվանեց «քննադատական-ուտոպիական սոցիալիզմ», ընդ որում «ուտոպիական»*) բառով նա ընդգծեց, որ այդ ուսմունքները «դեռևս միանգամայն ուտոպիական բնույթ ունեն» **):

«Կոմունիստական Մանիֆեստը» թվում է առաջին ուտոպիստներին՝ Անրի դը Սեն-Սիմոն (Ֆրանսիացի, վախճանվեց 1825 թ.), Շարլ Ֆուրյե (Ֆրանսիացի, վախճանվեց 1837 թ.) և Ռոբերտ Օուեն (անգլիացի, վախճանվեց 1858 թվին):

Իր գրվածքների մեջ Սեն-Սիմոնը խիստ քննադատության ենթարկեց կապիտալիստական կարգը և փորձեց պատկերացնել իդեալական հասարակակարգը այնպես, ինչպես նա այդ հասկանում էր յենելով իր ժամանակվա չհասունացած կապիտալիստական հասարակակարգի քննադատությունից. այստեղից և բղխում նրա՝ սկզբունքորեն ճիշտ հայացքների կիսատ-պռատ և անավարտ լինելը: Որինակ, հասարակական զարգացման մեջ նա ընդունում էր որինաչափությունը և նույն իսկ դասակարգային պայքարի դերը, իբրև այդ զարգացման շարժիչ ուժի, սակայն նա չէր ըմբռնում ճնշված արհեստավորների և բանվորների դասակարգային չահերի տարբերությունը և զարգացնում էր այն միտքը, թե

*) Հունական «ուտոպոս» խոսքը բառացի նշանակում է «զոյություն չունեցող տեղ». XVI դարում անգլիացի գրող Թոմաս Մորը «Ուտոպիա» անվանեց իր գրվածքը, որ ներկայացնում էր իդեալական հասարակակարգը «ուտոպիա» կղզու վրա:

**) Տես հավելված № 2:



ապագա հասարակակարգը կիրականանա զարգացնելով բերական դասակարգի ջանքերով, որը հասարակությունը կառավարելու համար բոլոր գոհացուցիչ ընդունակություններն ունի»: «Արդյունաբերական դասակարգի» տակ նա հասկանում էր «գործարանատերերին, վաճառականներին և բանվորներին»: Նա ասում է.—«Ամբողջ հասարկությունը հիմնվում է արդյունաբերության վրա. վերջինս նրա գոյության միակ գրանտիան է, բոլոր հարստությունների և ամեն մի անձնականության միակ աղբյուրը... Արդյունաբերական դասակարգն առաջին տեղը պիտի գրավի, որովհետև նա ամենակարևոր դասակարգն է. նա կարող է ապրել առանց մյուս բոլոր դասակարգերի, բայց վոչ մեկ ուրիշն առանց նրան չի կարող ապրել»: «Հասարակության մեջ արդյունաբերողները կղառնան առաջին դասակարգը» և նրանք դրան կհասնեն միմիայն «խաղաղ միջոցների» ողնությամբ.—«Արդյունաբերողները բացառապես խաղաղ միջոցներ կգործադրեն, այսինքն՝ քննարկելու, ապացուցելու և համոզելու միջոցներ, միայն դրանց վրա հենվելով արդյունաբերողները կվերցնեն ազնվականներից, զինվորականներից, լեգիստներից (միջնադարյան իրավաբաններից), ռահատներից և պետական պաշտոնյաներից պետական բացված քերադարձ դեկավարությունը, վորպեսզի այդ դեկավարությունը հանձնեն իրենցից ամենանշանավորներին»: Սեն-Սիմոնի մատուցած ծառայությունը նրանում է, վոր նա տվել է կապիտալիստական կարգի ցայտուն անալիզը, զարգացրել է մի ուսմունք կապիտալիստական կարգի շարժիչ ուժերի դրական զեղրի մասին. նրա դրույթներից չատերը հետագայում վերբամշակվել են Մարքսի կողմից:

Ֆուրյեն նույնպես տվել է կապիտալիստական հասարակության ցայտուն քննադատությունը և առաջինը նա է նշել անպլանայնությունը, իբրև կապիտալիստական արտադրության մի բնորոշ գիծը, իշխող դասակարգերի պարազիտիզմը (ձրիակերությունը) և «անգործությունը»։ Նրա կարծիքով կապիտալիստական հասարակության մեջ մարդկային աշխատանքն ոդտագործվում է վոչ պրոդուկտիվ (վոչ արդյունավետ) ձևով։

Ֆուրյեյի կարծիքով, ապագա հասարակության մեջ արտադրական հարաբերությունները կղարդանան ասոցիացիայի սկզբունքով։ այդ նպատակին հասնելու համար նա առաջարկում էր՝ կապիտալիստական հասարակության շրջանակներում կազմակերպել «ֆալանգներ» —կոմունիստական համայնքներ, վորտեղ դյուղատնտեսական աշխատանքը կանոնավոր կերպով կներդաշնակվի արդյունաբերականի հետ*)։ ոակայն, կոմունիստական համայնքի մեջ կապիտալը չի վերանում։ այդ համայնքի մեջ յեկամուտները կբաշխվեն կապիտալի, աշխատանքի և տաղանդի միջև հետևյալ ձևով՝ 5/12 մասն աշխատավորներին, 4/12 մասը կապիտալին և 3/12 մասը տաղանդին։

Ընդունելով դասակարգային պայքարի գոյությունը և իր ժամանակվա հասարակության մեջ հաշվելով 16 «դասակարգ» (ի միջի այլոց, «դասակարգ»-ը նա հասկանում էր միայն իրրև աշխատանքային կատեգորիա), Ֆուրյեն համոզված էր, վոր իր «ֆալանգի» մեջ

*) Ֆալանգի իդեալական կառուցվածքի մեջ, ինչպես իրեն ներկայացնում է Ֆուրյեն, պատկերանում է մեր սոցիալիստական քաղաքների և կոլխոզների նախատիպը։



«համատեղ կյանքի յերկրորդ ամսում դասակարգերի միացում» կկատարվի։ յեթե նույնիսկ մրցակցություն պոյություն ունենա, դա «մխիթարական ասոցիացիայի չափերին կծառայի և կնպաստի արտադրության թվական և վորակական աճմանը»։ մրցակցությունը գրավչություն կունենա, ինչպես և ինքը աշխատանքը*)։

Չարուստ դործարանատեր Ոուենն անկեղծ ցանկություն ուներ բարվոքել բանվորների դրությունը և միաժամանակ բարձրացնել ձեռնարկության շահավետությունը։ նա իր փորձերի վրա ծախսեց իր ամբողջ կարողությունը։ Նա չէր հավատում բանվոր դասակարդի հեղափոխական նշանակությանը, չէր նկատում դասակարդային պայքարը և կարծում էր, թե դործատերերին համոզելով հնարավոր կլինի կանոնավորել աշխատանքի և կապիտալի հարաբերությունը։ «արտոնյալ դասակարդերի առաքինությունը ալիսի հարկադրի նրանց՝ անկեղծ և բարյացակամ ոդնություն ցույց տալ նրանց, վորոնք ամենևին չեն ուզում նվաստացնել այդ դասակարդերի ունեցած առավելությունները, նրանց, վորոնք այլ բան չեն ուզում, քան այդ դասակարդերը և դրանց հետ միասին ամբողջ հասարակությունը յերջանիկ դարձնել։ արտոնյալ դասակարդերը բավական և վոր մի փոքր մտածեն և նրանք այնպես կվարվեն, վոր առանց հեղափոխության, առանց պատերազմի, առանց արյունհեղության և նույնիսկ տիրող կարգն առանց վաղաժամ փոփոխության յենթարկելու՝ աշխարհը պատրաստ կլինի յուրացնելու այն սկզբունքները, միմիայն վորոնք կարող են տանել դեպի յերջանկություն»։

Ոուենը բանվորական սպառողական կոոպերատիվ-

*) Տես հավելված № 8։

նների պիոներներից մեկն եր. նա ակտիվ մասնակցություն եր ցույց տալիս նաև պրոֆեսիոնալ չարժման, ձգտելով Բուլոնյեի բանվորների պայքարը ձեռնարկատերերի դեմ, և նույն իսկ նա ընտրվեց տրեդ-յունիոնների (պրոֆեսիոնալ միությունների) միության նախագահ:

Ինչպես Մարքսն ու Ենգելսն են ասում «Կոմունիստական Մանիֆեստի» մեջ, պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի առաջին «անզսպողացած» չրջանի համար սոցիալիստ-ուտոպիստներն իրենցից ներկայացնում են մի խիստ բնորոշ յերևույթ*):

## 4. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Հուլիսյան հեղափոխությունից հետո Ֆրանսիայի բուրժուական հասարակության մեջ զարգացող հակասությունները սկսի առաջ բերելին դասակարգային պայքարի մի նոր պայման:

40-ական թվերի սկզբին բանվորների չահագործումը, գործազրկությունը և աղքատացումը հսկայական չափերի յեր հասել: Մեքենաների տարածման չնորհիվ բուրժուազիան հսկայական հարստություններ եր դիզում՝ շահագործելով իր քաղաքական իշխանությունը բանվորներին հրեշավոր կերպով չահագործելու համար: 30-ական և 40-ական թվերին Ֆրանսիայում, ինչպես և Անգլիայում մեքենան արժեքազուրկ և գործազուրկ աշխատանքը՝ ընդունելով գործարանները կանանց և յերեխաներին, որոնց աշխատանքն առանձնապես ցածր եր գնահատվում և բանվորական ուրը տևում եր

*) Տես հավելված № 3.



15—18 ժամ: Ցածր աշխատավարձի, ինչպես և կենսամիջոցների և լայն սպառման ապրանքների թանգության հետևանքով (վորն առաջանում եր քաղաքները ներմուծվող և արտածվող միջոցների վրա դրված բարձր տուրքերից) բանվորներն աղքատության և մահվան եյին դատապարտված: Ժամանակակից բուրժուական դրողները մոտյալ գույներով, բայց ճշմարտորեն նկարագրում են մութ, կեղտոտ և գարշահոտ խրճիթները, փչրանքներն ու թափթփուկները՝ աննդի փոխարեն, ցնցոտիները՝ հագուստի փոխարեն, հիվանդությունները, խիստ մահացությունը, մանավանդ յերեխաների մեջ (յերեխաների 75 տոկոսից ավելին մինչև 5 տարեկան հասակը չեր ապրում) և պոռնկությունը:

«Կապիտալ»-ի 1-ին հատորի 24-րդ գլխում Մարքսը մեզ ցույց է տալիս կապիտալիստական արտադրության զարգացման չրջանում բանվորների չահագործման և աղքատացման պատկերները, իբրև Ցեվրոպայի բոլոր պետությունների մեջ տարածված մի յերևույթ, իսկ Ենգելսն իր «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում 1844 թվին» աշխատության մեջ տալիս է չքավորության մի լրացուցիչ շատ գունեղ պատկեր: «Կապիտալիստական արտադրության զարգացման հետ Ցեվրոպայի հասարակական կարծիքը,—ասում է Մարքսը,—ազատվեց ամոթի և խղճի վերջին մնացորդներից»:

«Անգլիայի արդյունաբերական քաղաքներում,—պատմում է Մարքսը մի բուրժուական դրողի խոսքերից,— յերեխաների փոքր դյուրաչարժ մատների մեծ պահանջ կար... Այս փոքրիկ, անոգնական արարածներից 7-ից մինչև 13 կամ 14 տարեկան հասակը հաղարների ուղարկվեցին հյուսիս... վերակացուներ եյին վարձել, վորպեսզի հսկեն յերեխաների աշխատանքների

րում ծաղրում են ուսմունքները, վորոնք քննադատում են տիրող հասարակակարգը և փորձում են պատկերացնել հասարակական իդեալական կառուցվածքը:

Դեռ «Կոմունիստական Մանիֆեստը» այդ ուսմունքներն անվանեց «քննադատական-ուտոպիական սոցիալիզմ», ընդ վորում «ուտոպիական»*) բառով նա ընդգծեց, վոր այդ ուսմունքները «դեռևս միանգամայն ուտոպիական բնույթ ունեն» **):

«Կոմունիստական Մանիֆեստը» թվում է առաջին ուտոպիստներին՝ Անրի դը Սեն-Սիմոն (ֆրանսիացի, վախճանվեց 1825 թ.), Շարլ Ֆուրյե (ֆրանսիացի, վախճանվեց 1837 թ.) և Ռոբերտ Ոուեն (անգլիացի, վախճանվեց 1858 թվին):

Իր դրվածքների մեջ Սեն-Սիմոնը խիստ քննադատության յենթարկեց կապիտալիստական կարգը և փորձեց պատկերացնել իդեալական հասարակակարգը այնպես, ինչպես նա այդ հասկանում էր յերևելով իր ժամանակվա չհասունացած կապիտալիստական հասարակակարգի քննադատությունից. այստեղից և բղխում նրա՝ սկզբունքորեն ճիշտ հայացքների կիսատ-պռատ և անավարտ լինելը: Որինակ, հասարակական զարգացման մեջ նա ընդունում էր որինաչափությունը և նույն իսկ դասակարգային պայքարի դերը, իբրև այդ զարգացման չարժիչ ուժի, սակայն նա չէր ըմբռնում ճնշվածների և բանվորների դասակարգային շահերի տարբերությունը և զարգացնում էր այն միտքը, թե

*) Հունական «ուտոպոս» խոսքը բառացի նշանակում է «դրություն չունեցող տեղ». XVI դարում անգլիացի գրող Թոմաս Մորը «Ուտոպիա» անվանեց իր դրվածքը, վոր ներկայացնում էր իդեալական հասարակակարգը «ուտոպիա» կղզու վրա:

**) Տես հավելված № 2:



ապագա հասարակակարգը կիրականանա «արդյունաբերական դասակարգի ջանքերով, վորը հասարակության կառավարելու համար բոլոր դոհացուցիչ ընդունակություններն ունի»: «Արդյունաբերական դասակարգի». տակ նա հասկանում էր «գործարանատերերին, վաճառականներին և բանվորներին»: Նա ասում է.—«Ամբողջ հասարկությունը հինվում է արդյունաբերության վրա. վերջինս նրա գոյության միակ գրանտիան է, բոլոր հարստությունների և ամեն մի քաղաքակրթության միակ աղբյուրը... Արդյունաբերական դասակարգն առաջին տեղը պիտի գրավի, վորովհետև նա ամենակարեվոր դասակարգն է. նա կարող է ապրել առանց մյուս բոլոր դասակարգերի, բայց վոչ մեկ ուրիշն առանց նրան չի կարող ապրել»: «Հասարակության մեջ արդյունաբերողները կդառնան առաջին դասակարգը» և նրանք դրան կհասնեն միմիայն «խաղաղ միջոցների» ոգնությամբ.—«Արդյունաբերողները բացառապես խաղաղ միջոցներ կգործադրեն, այսինքն՝ քննարկելու, ապացուցելու և համոզելու միջոցներ, միմիայն դրանց վրա հենվելով արդյունաբերողները կվերցնեն ազնվականներից, պետական պաշտոնյաներից, լեգիստներից (միջնադարյան իրավաբաններից), ռամտացված քի գերագույն ղեկավարությունը, վորպեսզի այդ ղեկավարությունը հանձնեն իրենցից ամենանշանավորներին»: Սեն-Սիմոնի մատուցած ծառայությունը նրանում է, վոր նա տվել է կապիտալիստական կարգի ցայտուն անալիզը, զարգացրել է մի ուսմունք կապիտալիստական կարգի չարժիչ ուժերի դրական դերի մասին. նրա դրույթներից շատերը հետագայում վերամշակվել են Մարքսի կողմից:

Ֆուրյեն նույնպես տվել է կապիտալիստական հասարակության ցայտուն քննադատությունը և առաջինը նա է նշել անպլանայնությունը, իբրև կապիտալիստական արտադրության մի բնորոշ գիծը, իշխող դասակարգերի պարազիտիզմը (ձրիակերությունը) և «անգործությունը»։ Նրա կարծիքով կապիտալիստական հասարակության մեջ մարդկային աշխատանքն ոչտապծվում է վոչ պրոդուկտիվ (վոչ արդյունավետ) ձեվով։

Ֆուրյեյի կարծիքով, ապագա հասարակության մեջ արտադրական հարաբերությունները կզարդանան ասոցիացիայի սկզբունքով։ Այդ նպատակին հասնելու համար նա առաջարկում էր՝ կապիտալիստական հասարակության շրջանակներում կազմակերպել «ֆալանգներ» —կոմունիստական համայնքներ, վորտեղ գյուղատնտեսական աշխատանքը կանոնավոր կերպով կներդաշնակվի արդյունաբերականի հետ*)։ Սակայն, կոմունիստական համայնքի մեջ կապիտալը չի վերանալ։ Այդ համայնքի մեջ յեկամուտները կբաշխվեն կապիտալի, աշխատանքի և տաղանդի միջև հետևյալ ձևով՝ 5/12 մասն աշխատավորներին, 4/12 մասը կապիտալին և 3/12 մասը տաղանդին։

Ընդունելով դասակարգային պայքարի գոյությունը և իր ժամանակվա հասարակության մեջ հաշվելով 16 «դասակարգ» (ի միջի այլոց, «դասակարգ»-ը նա հասկանում էր միայն իբրև աշխատանքային կատեգորիա), Ֆուրյեն համոզված էր, վոր իր «ֆալանգի» մեջ

*) Ֆալանգի իդեալական կառուցվածքի մեջ, ինչպես իրեն ներկայացնում է Ֆուրյեն, պատկերացում է մեր սոցիալիստական քաղաքների և կոլխոզների նախատիպը։



«համատեղ կյանքի յերկրորդ ամսում դասակարգերի միացում» կկատարվի։ Յեթե նույնիսկ մրցակցությունը դուրս ունենա, դա «միմիայն ասոցիացիայի շահերին կծառայի և կնպաստի արտադրության թվական և վորակական աճմանը»։ Մրցակցությունը գրավչություն կունենա, ինչպես և ինքը աշխատանքը*)։

Հարուստ գործարանատեր Ռոբենն անկեղծ ցանկություն ուներ բարվոքել բանվորների դրությունը և միաժամանակ բարձրացնել ձեռնարկության շահավետությունը։ Նա իր միջոցների վրա ծախսեց իր ամբողջ կարողությունը։ Նա չէր հավատում բանվոր դասակարգի հեղափոխական նշանակությանը, չէր նկատում դասակարգային պայքարը և կարծում էր, թե գործարանատերերին համոզելով հնարավոր կլինի կանոնավորել աշխատանքի և կապիտալի հարաբերությունը։ «Արտոնյալ դասակարգերի առաքինությունը սիրուհարկադրի նրանց՝ անկեղծ և բարյացակամ ոգնություն ցույց տալ նրանց, վորոնք ամենևին չեն ուզում նվաճել այդ դասակարգերի ունեցած առավելությունները, նրանց, վորոնք այլ բան չեն ուզում, քան այդ դասակարգերը և դրանց հետ միասին ամբողջ հասարակությունը յերջանիկ դարձնել։ Արտոնյալ դասակարգերը բավական և վոր մի փոքր մտածեն և նրանք այնպես կվարվեն, վոր առանց հեղափոխության, առանց պատերազմի, առանց արյունհեղության և նույնիսկ տիրող կարգն առանց վաղաժամ փոփոխության յենթարկելու՝ աշխարհը պատրաստ կլինի յուրացնելու այն սկզբունքները, միմիայն վորոնք կարող են տանել դեպի յերջանկություն»։

Ռոբենը բանվորական սպառողական կոոպերատիվ-

*) Տես հավելված № 3։

ների պիոներներից մեկն եր. նա ակտիվ մասնակցություն եր ցույց տալիս նաև պրոֆեսիոնալ չարժմանը, ձգտելով թուլացնել բանվորների պայքարը ձեռնարկատերերի դեմ, և նույն իսկ նա ընտրվեց տրեդ-յունիոնների (պրոֆեսիոնալ միությունների) միության նախագահ:

Ինչպես Մարքսն ու Ենգելսն են ասում «Կոմունիստական Մանիֆեստի» մեջ, պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի առաջին «անզարգացած» չրջանի համար սոցիալիստ-ուտոպիաններն իրենցից ներկայացնում են մի խիստ բնորոշ երևույթ*):

## 4. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Հուլիսյան հեղափոխությունից հետո Ֆրանսիայի բուրժուական հասարակության մեջ զարգացող հակասությունները սկսեն առաջ բերելին դասակարգային պայքարի մի նոր պայման:

40-ական թվերի սկզբին բանվորների չահագործումը, գործազրկությունը և աղքատացումը հսկայական չափերի չեր հասել: Մեքենաների տարածման չնորհիվ բուրժուազիան հսկայական հարստություններ եր ղեկում՝ ղղտագործելով իր քաղաքական իշխանությունը բանվորներին հրեչավոր կերպով չահագործելու համար: 30-ական և 40-ական թվերին Ֆրանսիայում, ինչպես և Անգլիայում մեքենան արժեքազուրկ և գործազուրկ աշխատանքը՝ ընդունելով գործարանները կանանց և երեխաներին, վորոնց աշխատանքն առանձնապես ցածր եր գնահատվում և բանվորական ուրը տևում եր

*) Տես հավելված № 3.



15—18 ժամ: Ցածր աշխատավարձի, ինչպես և կենսամթերքների և լայն սպառման ապրանքների թանգության հետևանքով (վորն առաջանում եր քաղաքները ներմուծվող և արտածվող մթերքների վրա դրված բարձր տուրքերից) բանվորներն աղքատության և մահվան եյին դատապարտված: Ժամանակակից բուրժուական ղրողները մոտյալ դույներով, բայց ճշմարտորեն նկարագրում են մութ, կեղտոտ և զարչահոտ խրճիթները, փչրանքներն ու թափթփուկները՝ աննպի փոխարեն, ցնցոտիները՝ հագուստի փոխարեն, հիվանդությունները, խիստ մահացությունը, մանավանդ երեխաների մեջ (երեխաների 75 տոկոսից ավելին մինչև 5 տարեկան հասակը չեր ապրում) և պոռնկություն:

«Կապիտալ»-ի 1-ին հատորի 24-րդ գլխում Մարքսը մեզ ցույց է տալիս կապիտալիստական արտադրության զարգացման չրջանում բանվորների չահագործման և աղքատացման պատկերները, իրև Ցեվրոպայի բոլոր պետություններում տարածված մի երևույթ, իսկ Ենգելսն իր «Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում 1844 թվին» աշխատության մեջ տալիս է չքավորության մի լրացուցիչ չատ գունեղ պատկեր: «Կապիտալիստական արտադրության զարգացման հետ Ցեվրոպայի հասարակական կարծիքը,—ասում է Մարքսը,—ազատվեց ամբի և խղճի վերջին մնացորդներից»:

«Անգլիայի արդյունաբերական քաղաքներում,—պատմում է Մարքսը մի բուրժուական դրողի խոսքերից,— երեխաների փոքր դյուրաչարժ մատների մեծ պահանջ կար... Այս փոքրիկ, անդնդական արարածներից 7-ից մինչև 13 կամ 14 տարեկան հասակը հաղարներով ուղարկվեցին հյուսիս... վերակացուներ եյին վարձել, վորպեսզի հսկեն երեխաների աշխատանքների

վրա։ Սարուխների այդ վերակացուները իրենց չահերի տեսակետից ստիպում էին յուրաքանչյուր յերեխայից քամված աշխատանքի քանակությունից։ Անգթությունը բնական հետևանք էր... Ջախջախից աշխատանքով նրանց մինչ մահվան աստիճան տանջում էին... լինում էին դեպքեր, յերբ նրանց չղթայում էին և յենթարկում ամենանուրբ և անգութ տանջանքների. քաղցից ծայր աստիճան հյուծված, կմախք դարձած, հաճախ մարդկի ուժով ստիպված էին աշխատել... Ճերբեմն նրանց ինքնասպանության էին հասցնում »։

40-ական թվականներին Փարիզում կային ամբողջ կվարտալներ, վորտեղ սոսկալի աղքատության ճիրաններում պատսպարվում էին կապիտալիստների կողմից չահագործված բանվորները։

Ծանր էր նաև արհեստավորների կացությունը, վորոնց խոշոր արդյունաբերության մրցությունը քայքայում և մուրացության դուռն էր հասցնում։

1839 թվին Փարիզում հեղափոխական Ոգյուստ Բլանկիի արհեստավորներից և բանվորներից կազմակերպված խմբակը փորձեց զրավել իշխանությունը. այդ փորձն անհաջողության մատնվեց, վորովհետև տաղանդավոր ազիտատոր Բլանկիի գործունեությունը ընդհանրապես մասսայական բնույթ չեր կրում*) և ապստամբները բանվորների լայն զանգվածների կողմից աջակցություն չստացան։

1845–46 թ. թ. ամբողջ Եվրոպան տուժել էր անբերրիությունից և ամենուրեք, թանգության ու դորձազրկության հետևանքով, արյունահեղ ընդհարումներ էին տեղի ունենում պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։

1847 թվի համաեվրոպական արդյունաբերական ճգնաժամը ծանր հարված հասցրեց ֆրանսիական արդյունաբերական բուրժուազիայի չահերին, վորն սկսեց հանդես գալ ռեֆորմների պահանջով. ամբողջ յերկրում բանկետներ էին տեղի ունենում, վորտեղ քննարկվում էին քաղաքական պահանջներ, փաղոցներում բուրժուազիան ցույցեր եր կազմակերպում ընտրական իրավունքների լոզունգներով։

1848 թ. փետրվարի 22-ին Փարիզում տեղի ունեցավ մի հսկայական ցույց, վորը վերջացավ բանվորների զինված ապստամբությամբ. բանվորներով բնակված քաղաքի արևելյան արվարձանները ծածկվեցին բարրիկադներով։ Արքայական պալատը գրոհով վերցվեց, իսկ թագավորը Փարիզից փախավ, վորից հետո կազմվեց բուրժուական ժամանակավոր կառավարություն, վորի մեջ մտցրին կոմպրոմիսի ճևով յերկու բանվորական ներկայացուցիչներ՝ ուտոպիստ-գրող Լուի Բլանին և մեխանիկ Ալբերին։

Սակայն, ոգտագործելով պրոլետարիատի հաղթանակի իր նպատակների համար, բուրժուազիան ստիպված եր հաշվի առնել բանվորների պահանջները. բան-

*) Իր հայացքներով Բլանկին կոմունիստ եր և կապիտալիստական հասարակության հակասությունների լուծումը համարում եր սոցիալական հեղափոխությունը. նրա սխալը կայանում եր նրանում, վոր նա չեր ըմբռնում պրոլետարիատի վճռական դերը, իրև հեղափոխության շարժիչ ուժի. նա համոզված եր, վոր քաղաքական հեղաշրջումը պիտի կատարի հեղափոխական փոքրամասնությունը դավադրությամբ գրավելով իշխանությունը։

վորների Հանքերով Փարիզում պաշտոնապես հռչակվեց հանրապետություն և ընդհանուր ընտրական իրավունք։ Բանվորներին նույնպես հաջողվեց հիմնել ոտ «բանվորներից կազմված կառավարական հանձնաժողով», վորը պաշտոնապես վոխարինեց աշխատանքի մինիստրությանը, ինչպես և բացել ոտ ազգային արհեստանոցներ՝ գործազուրկներին աշխատանքով ապահովելու համար։ Այս հանձնաժողովը կոչվում էր՝ «Լյուքսեմբուրգյան հանձնաժողով» այն պալատի անունով, վորտեղ նրա նիստերը տեղի էին ունենում. բուրժուազիան այս հանձնաժողովը համարում էր մի ժամանակավոր դեկլարատիվ ղիջում, վոր նա արել էր պրոլետարիատին։ Հանձնաժողովն անցկացրեց մի քանի զործնական ձեռնարկումներ, վորոնք անհանգստություն պատճառեցին բուրժուազիային և նրան կատաղի հարձակումների յենթարկեցին թե մամուլում և թե ժողովներում. Լուի Բլանի ծրագրով կազմակերպվեցին զերձակների և բամբակագործների ընկերություններ, աշխատանք դտնելու բյուրո, ինչպես և մշակվեց բանվորական տներ կառուցելու նախագիծ, վորը յերբեք ի կատար չածվեց։

Ժամանակավոր կառավարությունը պրոլետարիատին մի քանի զիջումներ անելով շատ լավ զիտակցում էր, վոր իշխանության չուրջը տեղի յե ունենում յերկու զասակարգերի պայքար և այդ պատճառով նոր ընդհարումների սիստեմատիկ նախապատրաստություններ էր տեսնում։ Ազգային արհեստանոցների պահպանման համար նա լրացուցիչ հարկ դրեց, վորի սոսկալի ծանրությունը գյուղացիության վրա ընկավ. բուրժուական մամուլը սկսեց զրգռիչ լուրեր տարածել, թե՝ «պորտաբույծնե-



րը, վորոնք գյուղացիության հաշվին են ապրում» պատրաստվում են գյուղացիների հողերը խլել։ Ազգային արհեստանոցներում զինվորական պահակներ դրին, վորոնք կազմված էին բուրժուական յերիտասարդությունից և անունն «Լյումպեն-պրոլետարներից»*)։

Կ. Մարքսը ասել է փետրվարյան հեղափոխությունից հետո յեղած դասակարգային ուժերի փոխհարաբերությունների խոր անալիզը և ցույց տվել, վոր փետրվարյան հեղափոխության առաջին որերն այլ կերպ չեյին կարող լինել, քան բուրժուազիայի և պրոլետարիատի միջև կատարվող կոմպրոմիսի մի շրջան. նա ցույց և տվել նաև, վոր պրոլետարիատը դեռևս պատրաստ չեր իշխանությունը լիովին զրավելու և դիկտատուրա հաստատելու համար և վոր բուրժուազիան գլխավորապես միջոցներ էր ձեռնարկում՝ դասակարգային պայքարի նոր անխուսափելի պայթումի դեպքում ամրապնդել իր դիրքերը (նա սպառազինվում էր, շտապում էր Սահմանադիր ժողովի ընտրությունները կատարել իրեն նպաստավոր պայմաններում)։ Նմանապես նա ցույց և տվել, վոր մանր բուրժուազիան «պաշտպանելով անհատականությունը» հակահեղափոխության կողմն էր։

Հունիսի 23-ի ապստամբությունը, վորն ակսվեց Փարիզի բանվորական արվարձաններում, պրոլետարիատի իսկական դասակարգային ապստամբություն

*) «Լյումպեն-պրոլետարները» ապաղասակարգայնացած մարդիկ են, գլխավորապես մանր-բուրժուազիայից, վորոնք աշխատելու սովորությունը թողել են. նրանց կողմից բուրժուազիան մեծ աջակցություն էր գտնում ապստամբած պրոլետարիատի դեմ պայքարելու համար։

միգրանտ Հերցենը թողել և «Հունիսյան արյունալի ո-
րերի» հուզիչ նկարագրությունը:

## 5. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ, ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ ՑԵՎ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Հասարակական նոր հարաբերությունների զար-
գացման համար Գերմանիայում առեղծվել էին վերին
աստիճանի բարդ պայմաններ և ամուր կապիտալիստա-
կան հասարակության յերկու հիմնական դասակարգե-
րի ընդհարումները դարձել էին անխուսափելի: Բան-
վորները և նախկին արհեստավորները, որոնք անջատ-
ված էին արտադրության միջոցներից և կեղեքված
կապիտալի կողմից, տուժում էին վոչ միայն կապի-
տալի չհատարծումից, այլև յունկերների (ազնվական-
հողատերերի) կիսաֆեոդալական կառավարության
չհատարծումից. արհեստավորները հողային տուրք
պիտի վճարեին պետությանը և բահրա (оброк)— կալ-
վածատերերին: Մեքենաների կիրառումը և մանուֆակ-
տուրները կապիտալիստական դարձարանների վերածե-
լը առաջ բերին, վոչ պակաս չափով, քան Անգլիայում
(«լուդդիտները») բանվորների կատաղի յերկյութներ
մեքենաների և գործարանատերերի դեմ: «Զուլհանենե-
րի ցերկիր» Շլեզիայում 1844 թվին բռնկեց բանվորների
ապստամբություն, վորը ճնշվեց կանոնավոր զորքի
ոգնությամբ:

1846 թվի սովը և 1847 թվի ճգնաժամն ամբողջ
յերկրում արեցին դասակարգային հակասությունները
և Պրուսիայի մայրաքաղաք Բեռլինում, Ֆրանսիայում
կատարված փետրվարյան հեղաշրջման մասին առաջին
լուրերն առանձնապես սիս խմորումներ սկսվեցին բուր-



ներ. մյուս կողմից կապիտալիստական հասարակության
բոլոր ուժերը համախմբվեցին բուրժուազիայի շուրջը:

«Հունիսյան օրերին,—գրում է Կ. Մարքսը,— բո-
լոր դասակարգերը, բոլոր կուսակցությունները ձուլվե-
ցին մեկ կուսակցության՝ կարգ ու կանոնի կուսակցու-
թյան մեջ, վորպեսզի պրոլետարական դասակարգի՝
անարխիայի կուսակցության *), սոցիալիզմի կոմմու-
նիզմի դեմ յելնեն: Նրանք «փրկում էին» հասարակու-
թյունը՝ այդ հասարակության թշնամիների զործողու-
թյուններից: Նրանց միացյալ մարտախմբի դեվիզը,
հին հասարակության դեվիզը՝ «սեփականություն ես,
ընտանիքը, կրոնը, կարգ ու կանոնը»: «Այս դրոշի ներ-
քո մենք կհաղթենք» —գրում էին հակահեղափոխա-
կանները»: (Կ. Մարքս,—«Բրյումերի 18»): Գավառից
զորքեր կանչվեցին. բոլոր ճանապարհներով դեպի Փա-
րիզ ուղղվեցին արիստոկրատների, հոդատերերի, բուր-
ժուաների և հարուստ գյուղացիների կամավոր խմբե-
րը: Հունիսի 23–ին յերեկոյան ընկան վերջին բարրի-
կադները և բուրժուազիան սկսեց իր վայրենի վրիժա-
ռությունը բանվորներից՝ մոտ 12,000 հոգի կոտորվե-
ցին բարրիկադների մոտ, մոտ 15,000 հոգի ձերբակալ-
վեցին, մի քանի հազար դնդակահարվեցին, 5000 հոգի
աքսորվեցին Կայեննա (Հարավային Ամերիկա) տաժա-
նակիր աշխատանքներ կատարելու: Այս զաժան ճնշու-
մը, վորը դեկավարում էր բանվորների զահիճ գեներալ
Կավենյակը, վերջնականը առաջացրեց նույնիսկ բուր-
ժուական զրողների և հրապարակախոսների չքվանում
Ֆրանսիայից դուրս: Այդ դեպքերի ականատես ռուս ե-

*) Բուրժուական քաղաքագետներն այսպես էին անվանում
բանվոր դասակարգի առաջնորդներին:

ժուռղիայի մեջ, վորին զուգընթաց աճեց նաև բանվորական զանգվածների հեղափոխական տրամադրությունը: Մարտի 14-ին Բեռլինում ապստամբություն սկսվեց, բարրիկադներ յերևացին, և թագավորը հարկադրված եր հայտարարել՝ զորքերը մայրաքաղաքից հեռացնելու, ոպոզիցիոն ազնվականությունից և պըրխալորապես առևտրական ու արդյունաբերական բուրժուազիայից կազմված նոր մինիստրության և վերջապես Սղպային ժողովի ընտրությունները նշանակելու մասին: Պրուսիայում բուրժուազիան չհամաստար հաղթանակ չտարավ. պրոլետարիատին դիմադրելու համար նա փորձում եր դաշնակցել ռեակցիայի հետ, բայց վերջ ի վերջո յերկյուղ կրելով պրոլետարական հեղափոխությունից, նա անձնատուր յեղավ ռեակցիային. այդ իսկ պատճառով բուրժուական հեղափոխությունը Պրուսիայում մնաց կիսատ-պռատ:

Համարյա միաժամանակ հեղափոխություն տեղի ունեցավ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում, վորտեղ նույնպես վերջացավ սահմանադրության հայտարարությամբ և Սահմանադիր ժողովի ընտրություններով: Վիեննայում հեղափոխությունը կատարվեց բուրժուական-ազգային լոզունգներով. բուրժուազիան և կուրսկ դյուղացիությունը վիեննային հայտարարեցին անկախ հանրապետություն և կազմակերպեցին ժողովրդական զորք, վորը չուտով ջարդվեց ռուսական Նիկոլայ 1-ի կողմից «իր յեղբայրակիցներին ոգնության» ուղարկած զորքերի կողմից:

Հեղափոխությունն Ավստրիայում, Վիեննայում և Ավստրիայի սլավոնական շրջաններում չուտով ճնշվեց և կատարվածությունները հրաժարվեցին բուրժուական «ռեֆորմներից»: Այս բոլոր յերկրներում բանվորների



յելույթները յերկյուղ ներշնչեցին բուրժուազիային և հարկադրեցին նրան համաձայնության ուղիներ վորոնել հաղթանակող ռեակցիայի հետ:

Այս պատճառով դերմանական յերկրներում կատարված հեղափոխությունը Մարքսն անվանում է «չափավորված բուրժուական հեղափոխություն», սակայն նա նշում է նաև 1848 թվի հեղափոխության դրական նշանակությունը, վորի հետևանքով Պրուսիայի և Ավստրիայի կիսաֆեոդալական կարգերը մասնակի կերպով լուծարքի յենթարկվեցին*):

Պետք արձանագրել 1848 թվի հեղափոխության մի հետևանքն ևս դերմանական յերկրների համար, այն է՝ դերմանական անջատված պետությունների համախմբումը մի ամբողջության մեջ, վոր կատարեց բուրժուազիայի հետ դաշնակցած հաղթանակող ռեակցիան «վերևից»:

## 6. «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ»

30-40-ական թվականներին Գերմանիայում, ինչպես և Ֆրանսիայում, աճում է բուրժուազիային թշնամի և նրա դեմ պայքարի մեջ մտնող մի ուժ —բան-

*) Գերմանական յերկրներում բուրժուազիան հեղափոխական ուժ չեր ներկայացնում նույն այնպես, ինչպես 1905 թ. Ռուսաստանում ազատամիտ բուրժուազիան ևս այդպիսի ուժ չեր ներկայացնում: Մեր մենշևիկների սխալը 1905 թվի հեղափոխության գնահատականի վերաբերմամբ, ինչպես կտեսնենք հետագայում, գլխավորապես կայանում եր նրանում, վոր նրանք բուրժուազիային համարում եյին հեղափոխական ուժ, վորին պրոլետարիատը պիտի «աջակցեր և մղեր դեպի ձախ»:

վոր դասակարգը: Ընդհակառակը, վոր գերմանական բանվորներն այդ շրջանում դեռ գլխավորապես արհեստավոր քարտահներ էին, 30-ական թվերին նկատում ենք հեղափոխական շարժման մասնակցելու նրանց առաջին փորձերը: Միանգամայն հասկանալի է, վոր դասակարգային դիտակցության տկասությունը նրանց մղում էր դեպի իրենց չահերի պաշտպանության այնպիսի ձևերը, վորոնք չատ հեռու էին հեղափոխական պայքարից: Թե Գերմանիայում և թե Անգլիայում մեծ ժողովրդականություն էր վայելում այն չարժումը, վորը կողմնակից էր համաքարական կազմակերպությանը պահպանելուն, մեքենաները վոչնչացնելուն, ինչպես և քարտահների չրջադայելու սովորությունը պահպանելուն: Այս վաղեմի սովորության համաձայն արհեստավոր-քարտահները թափառում էին մի վայրից մի այլ վայր իրենց արհեստի վորակը բարձրացնելու համար:

Այս թափառականներն արհեստավորների համար փոխեցին քաղաքական մի լավ դպրոց: Նրանց մեջ ծագել էին «հայրենակցական» միությունները, վորոնք ժամանակի ընթացքում դարձել էին տերերի չահադրծման դեմ ուղղված միություններ: Վոստիկանական հալածանքները նրանց մղում էին դեպի եմիգրացիան և յերկար ժամանակով տեղափոխվելով Փարիզ, Լոնդոն և Բրյուսել, նրանք դառնում էին կիսաեմիգրանտները, կազմում էին խմբակները և միությունները, վորոնք փորձում էին արտասահմանից պրոպագանդ մղել հայրենիքում գտնվող բանվորների մեջ:

Այսպես ծագեց Փարիզում «Արդարացիների միությունը», վորը կազմվել էր գերմանացի եմիգրանտ բանվորներից՝ քարտահ դերձակ Վեյտլինգի գեկավարությամբ, վորը Ֆուրյեի գաղափարների կողմնակիցն էր: Վեյտլինգը, վորին Մարքսը իբրև պրոպագանդիստի վերին աստիճանի գնահատում էր, 1838 թվին գրեց մի աշխատանք «Մարդկությունն ինչպես նա կա և ինչպիսին նա պիտի լինի» վերնագրով, վորտեղ արտահայտվելով մասնավոր սեփականության դեմ նա ցուցաբերեց իրեն վորպես կոմմունիստ, սակայն միաժամանակ նա փորձեց կոմմունիստական իդեալը կապել սկզբնական քրիստոնեության հետ:

Գալաքական եմիգրանտներ Կ. Մարքսը (ծն. 1818 թվին) և Ֆ. Ենգելսը (ծն. 1820 թ.) 1847 թվին Լոնդոնում հրավիրեցին հեղափոխական խմբակների համագումար: Այս համագումարը հիմք դրեց մի նոր կազմակերպության —«Կոմմունիստների Միության», վորի պեկավարությունը ստանձնեցին Մարքսը և Ենգելսը. այս Միությունն իրեն նպատակ էր դրել պայքարել՝ հին բուրժուական հասարակությունը վոչնչացնելու և նոր կոմունիստական հասարակություն հիմնել, վորտեղ դասակարգերը և մասնավոր սեփականությունը գոյություն չպիտի ունենան: Համագումարի հանձնարարությամբ Մարքսը մշակեց «Կոմունիստների Միության» ծրագիրը. այդ ծրագիրը «Կոմունիստական Մանիֆեստն է (1848 թ.):

Մանիֆեստը գարձավ բոլոնդակ մինչպրոլետարական բանվորական չարժման ծրագիրը. նրա մեջ դրված և ժամանակակից կապիտալիստական հասարակության և այդ հողի վրա գարգացող դասակարգային պայքարի մասին պարզ պատկերը: Մանիֆեստի առաջին գլուխն սկսվում է հետևյալ խոսքերով —«Ամբողջ նախընթաց հասարակության պատմությունը դասակարգերի պայքարի պատմությունն է»: Այնուհետև ասված

է.—«Սակայն մեր ժամանակաշրջանը, բուրժուազիայի ժամանակաշրջանը տարբերվում է նրանով, որ նա պարզեցրել է դասակարգային հակադրությունները: Հասարակությունն ավելի ու ավելի բաժանվում է երկու խոշոր թշնամի բանակների, երկու խոշոր՝ միմյանց դեմ ծառացած դասակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի*)»:

«Պրոլետարները և կոմունիստները» վերնագիրը կրող Մանիֆեստի երկրորդ գլխում այն միտքն է արծարծվում, որ կոմունիզմը բղխում է հենց արդյունաբերական զարգացումից և նրա ելեմենտները ժամանակակից հասարակության մեջ արդեն դոյություն ունեն. այնուհետև տրվում է կոմունիզմի բնորոշ առանձնահատկությունների չատ ցայտուն նկարագրությունը: «Կոմունիստների տեսական դրույթները բնավ չեն հիմնվում այս կամ այն աշխարհ-բարեփոխչի հնարած կամ սահմանած գաղափարների ու սկզբունքների վրա: Նրանք ներկայացնում են՝ այժմ դոյություն ունեցող դասակարգային պայքարի իրական պայմանների և մեր աչքի առջև կատարվող պատմական չարժման լոկ արտահայտությունը... Կոմունիզմի բնորոշ հատկանիշը վրչ թե ընդհանրապես սեփականության վոչնչացումն է, այլ բուրժուական սեփականության վոչնչացումը: Սակայն ժամանակակից բուրժուական մասնավոր սեփականությունը վերջին և լիակատար արտահայտությունն է պրոդուկտների արտադրության և յուրացման այն յեղանակի, որը հիմնված է դասակարգերի ներհակության (անտագոնիզմի), մեկը մյուսին չահագործելու վրա: Այս մտքով կոմունիստներն իրենց տեսությունը կարող են արտահայտել մեկ դրույթով՝

*) Տես հավելված № 7:



«մասնավոր սեփականության վոչնչացում»: Գլխի վերջը այն միտքն է արտահայտված, որ միմիական պրոլետարիատը, որը պաշտպանում է բուրժուազիայի չահերին միանգամայն հակադիր չահեր, կարող է վերակազմել ամբողջ հասարակությունը՝ հասարակական հեղաչրջման ճանապարհով և որ այդ նա կանի իր սեփական ուժերով: «Յեթե պրոլետարիատը բուրժուազիայի դեմ մղած պայքարում անհրաժեշտորեն համախմբվում է իբրև դասակարգ, հեղափոխության միջոցով դառնում է իշխող դասակարգ և, իբրև իշխող դասակարգ, բռնի կերպով խորտակում է արտադրության հին պայմանները, ապա վերջիններիս հետ միասին նա խորտակում է նաև դասակարգերի անտագոնիզմի դոյության պայմանները, ընդհանրապես դասակարգերը, իսկ հենց դրանով էլ իր սեփական դասակարգային դերիշխանությունը»:

«Սոցիալիստական և կոմունիստական գրականություն» վերնագիրը կրող 3-րդ գլխում տրվում և բոլոր այն ուսմունքների քննադատությունը, որոնք աշխատել են ազդեցություն ձեռք բերել սոցիալիստների և կոմունիստների մեջ. այդ ուսմունքները խիստ քննադատության յենթարկելով, Մանիֆեստը հակադրում է խաղաղ, ուտոպիական սոցիալիզմի նոր, պրոլետարական, քննադատական կոմունիզմի հեղափոխական ծրագրերը:

4-րդ փոքրիկ գլխում՝ «Կոմունիստների վերաբերմունքը դեպի զանազան հեղափոխական կուսակցությունները» Մանիֆեստն իբրև յեզրափակում տալիս է այն տակտիկայի բնութագիրը, որով— կոմունիստները պիտի առաջնորդվեն կապիտալիստական հասարակության և մասնավոր սեփականության դեմ մղվող

պայքարի ընթացքում: «Իշխող դասակարգերը թող դողան կոմունիստական հեղափոխությունից: Պրոլետարները դրա մեջ միայն իրենց շղթաները կկորցնեն: Իսկ ձեռք կբերեն ամբողջ աշխարհը. պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք»:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նախընթաց պարապմունքներում մենք ուսումնասիրեցինք Անգլիայում և Ֆրանսիայում արդյունաբերական կապիտալիզմի սկզբնավորության դինամիկան: Մենք ուսումնասիրեցինք այն գեպքերը, որոնցով կատարվեց արդյունաբերական կապիտալիզմի հաղթանակը ինչպես և այս հաղթանակի անմիջական հետևանքները —բուրժուազիայի քաղաքական գերիշխանության հաստատվելը, բանվորական չարժման ծագումը, արդյունաբերական պրոլետարիատի կազմերի ձևավորումը:

Մենք գիտենք, որ բուրժուազիային հաջողվեց իր գերիշխանությանը հասնել՝ ֆեոդալական ռեժիմի մնացորդների դեմ իր վարած երկարատև ու համառ պայքարով: Ֆրանսիայում 1830 թվի Հուլիսյան հեղափոխությունը կատարվեց իբրև մի անմիջական հետևանք վերականգնված հասարակական հարաբերությունների հաստատած անհաշտ կոնֆլիկտի, որոնք ըղխում էին՝ հին նախակապիտալիստական մանուֆակտուրան վերջնականապես դուրս վանող կապիտալիստական արտադրության յեղանակի զարգացող ձևերից:

Սակայն, Եվրոպայի բոլոր յերկրներում տեղի ունեցող կապիտալիստական արտադրության յեղանակի հաղթանակը պիտի հարուցեր հեղափոխական չարժում-



ներ նոր բանկում և այս չարժումների մեջ մեծ դեր պիտի կատարեր բուրժուական հասարակության գերիշխանող նոր դասակարգը՝ պրոլետարիատը: Մեր խնդիրը պիտի լինի՝ ուշադրություն դարձնել կապիտալիստական արտադրության աճումը, դրա հետևանքով դասակարգային ուժերի փոխհարաբերության մեջ առաջացած փոփոխությունները և առանձին դասակարգերի տեսակարար կշիռը և դերը 40-ական թվականների հեղափոխություններում:

Հատուկ ուշադրություն պիտի դարձնել «Կոմունիստական Մանիֆեստի» անալիզին: Նույնպիսի ուշադրությամբ պիտի պարզաբանել գերիշխանական հեղափոխության առանձնահատկությունների հարցը, իբրև «չավարտված» բուրժուական հեղափոխության հարց, հեղափոխական եր արդյո՞ք գերիշխանական բուրժուազիան, որը քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար առաջին անգամ պայքարի մեջ մտավ դաշնակցած հետադեմ (ռեակցիոն) ուժերի հետ: Սկզբունքորեն կարևոր այս հարցին մենք կդիմենք դիմենք 1905 թվի ռուսական հեղափոխության դասակարգային ուժերի անալիզի ժամանակ:

## ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս անտեսական նախադրյալներ ունեցին 40-ական թվականների բուրժուական չարժումները:

2. Ինչպե՞ս եր բանվոր դասակարգի դրությունը (աշխատանքի և կենցաղի պայմանները) Եվրոպայում կապիտալիստական արտադրության զարգացման ընթացում:

3. Ինչպե՞ս և ինչում «Կոմունիստական Մանիֆեստը» ուտոպիական սոցիալիզմի պատմական նշանակությունը:

4. Ինչպե՞ս պիտի հասկանալ Մարքսի խոսքերը՝

1) «Փետրվարյան հանրապետությունն իրոք մի այլ բան չեր կարող լինել, քան բուրժուական հանրապետություն», 2) բուրժուական հանրապետության ծննդի իսկական մոմենտը վոչ թե փետրվարյան հաղթանակն եր, այլ հունիսյան պարտությունը»:

5. Ինչպե՞ս դեր եր կատարում մանր բուրժուազիան հունիսյան օրերին:

6. Ինչպե՞ս և վորոշում Լենինը «օբյեկտիվ պատմական հողը, վորը ծնունդ և տվել կամենյակին»:

7. Քննե՞ք 1848 թ. դեմոկրատական հեղափոխությունը Մարքսն անվանում և «չավարտված բուրժուական հեղափոխություն»:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Фридлянд и Слуцкий. История революционного движения Западной Европы. 6 և 7 գլուխները:

2. Б. И. Горев. История социализма, հատ. I (Ուտոպիական սոցիալիզմի մասին):

3. Մարքս և Ենգելս.—«Կոմունիստական Մանիֆեստը»:

4. Маркс. Борьба классов во Франции в 1848—1850 г.г.

5. Маркс. 18 брюмера.

6. Маркс. Революция и контрреволюция в Германии.

7. Революция 1848 г. Сборник статей и писем К. Маркса, Ф. Энгельса, Ф. Меринга, М. Бакунина и стихов Гейне. Гервега, Фрейлинграта и др Москва, ГИЗ, 1924 г.

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Швейцер. Эмма (*Շվեյցեր—Էմմա*):

Войкович. Овод (*Վոյկովիչ—Բոռ*):

**(Առաջին գրվածքն արտացոլում և բանվորական շարժումը յեվ հեղափոխությունը 1848 թ. Գերմանիայում. յերկրորդը—40-ական թ. թ. բուրժուական հեղափոխական շարժումներր Իտալիայում): Բայց պետք և չմոռանալ, վոր այդ գրվածքների հեղինակ իրր բուրժուական գրողներ նա յեվ միանգամայն հետ պատմության մարքսիստական բնբռնումից:**



## ՀԱՎԵԼՎԱԾ № 3

### 1. ԳԵՐՄԱՆԻԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

*Քաղաքական կազմակերպության հիմք կազմող՝ ժողովրդի զանազան դասակարգերի կապակցությունը Գերմանիայում ավելի բարդ և յեղել, քան վորևե մի այլ յերկրում: Անգլիայում և Ֆրանսիայում դորեղ և հարուստ բուրժուազիան, վորը կենտրոնացած եր մեծ քաղաքներում և մանավանդ գլխավոր քաղաքում, կատարելապես ջախջախել Ֆեոդալիզմը կամ, ինչպես այդ տեղի ունեցավ Անգլիայում, առնվազն այնպիսի ձևերի տակ դրել, վորոնք առանձին նշանակություն չունեին, Գերմանիայում, ընդհակառակը, ֆեոդալական ազնվականությունը պահպանել իր հին արտոնությունների մեծ մասը: Ֆեոդալական հողատիրության սիստեմը համարյա ամենուրեք մնում եր գերիշխող:*

*Մի քանի յերկրամասերում ֆեոդալիզմն ավելի զորեղ եր, քան մյուսներում, բայց վոչ մի տեղ, բացի Հանոյի ձախ ափից, լիովին նա չեր վոչնչացել: Այս ֆեոդալական ազնվականությունը, վորն այն ժամանակ շատ բազմաթիվ եր և յերբեմն էլ շատ հարուստ, պաշտոնապես համարվում եր յերկրի առաջին «դասը» (сословие): Նա տալիս եր պետական բարձր աստիճան պաշտոնյաներ, համարյա բացառապես նրան էին պատկանում բարձր սպայական պաշտոնները զորքի մեջ:*

*Գերմանիայի բուրժուազիան այնպես հարուստ և կենտրոնացած չեր, ինչպես Ֆրանսիայում կամ Անգլիա-*

յում: Գերմանական արդյունաբերության հին ճյուղերը կործանվեցին՝ չդնու ուժի յերևան գալու և անգլիական արդյունաբերության արագորեն աճող գերազանցության հետևանքով: Նապոլեոնի կոնտինենտալ սիստեմով կյանք առած արդյունաբերական նոր ճյուղերը արմատներ ձգեցին յերկրի մյուս մասերում, չեյին կարող հատուցել հին ճյուղերի կորուստը և չափազանց թույլ եյին, վորպեսզի կարողանան պահովել արդյունաբերության բավականաչափ նշանակություն և հարկադրել կառավարությանը հաշվի առնել արդյունաբերության կարիքները, մանավանդ վոր կառավարությունը կասկածանքով եր վերաբերվում ամեն մի վոչ ազնվական հարստության և վոչ ազնվական ուժի հավելմանը: Հիսունամյա հեղափոխությունների և պատերազմների միջով Ֆրանսիան լիակատար հաջողությամբ անցկացրեց իր մեծագործական արդյունաբերությունը. Գերմանիայում, ընդհակառակը, նույն ժամանակամիջոցում համարյա ամբողջովին կործանվեց կառավարության հին արդյունաբերությունը: Բացի այդ, արդյունաբերական ընչանների թիվը քիչ եր և նրանք մեկը մյուսից հեռու եյին ընկած: Նրանք զանվում եյին յերկրի խորքերում և արտածման ու ներմուծման համար գլխավորապես ոգտվում եյին ոտաբյերկրյա՝ հոլանդական կամ բելգիական նավահանգիստներով, այնպես վոր բացարձակապես վոչ մի ընդհանուր չահ նրանց չեր կապում Հյուսիսային և Բալտիկ ծովերի խոշոր նավահանգստային քաղաքների հետ. բայց ամենանշականն այն եր, վոր նրանք ընդունակ չեյին ստեղծել այնպիսի խոշոր արդյունաբերական ու առևտրական կենտրոններ, ինչպես Փարիզն ու Լիոնը, Լոնդոնն ու Մանչեստրը:



Գերմանական արդյունաբերության հետամնացության պատճառները շատ բարդ եյին, բայց բավական է հիշատակել յերկուսը, վորպեսզի կարելի լինի այդ բացատրել. յերկրի աշխարհագրական աննպաստ դիրքը, նրա հեռավորությունը Ատլանտյան ովկիանոսից, վորը դարձել եր համաշխարհային առևտրի բանակիների մեծ ուղին, և հարատև պատերազմները, վորոնց խառնվել եր Գերմանիան և վորոնք սկսած XVI դարից մինչև հիմա կատարվում եյին նրա հողի վրա: Մասսաների բացակայությունը և մանավանդ դեթ վորոշ չափով կենտրոնացած մասսաների բացակայությունը խոչդորում եր գերմանական բուրժուազիային հասնել այնպիսի քաղաքական գերիշխանության, ինչպիսին ուներ անգլիական բուրժուազիան 1688 թ. և ինչպիսին գրավեց ֆրանսիական բուրժուան 1789 թվին:

Բայց և այնպես, սկսած 1815 թվից Գերմանիայում էս անընդհատ աճում է հարստությունը, իսկ հարըստության հետ էլ բուրժուազիայի քաղաքական նշանակությունը: Թեև իր կամքին հակառակ, բայց և այնպես կառավարությունը հարկադրված եր հաշվի առնել բուրժուազիայի տարբական նյութական չահերը: Կարելի և նույնիսկ արդարությամբ պնդել, վոր քաղաքական ազդեցության բոլոր սաղմերը, վորոնց ձեռք եր բերել բուրժուազիան մանր պետությունների սահմանադրություններով և ապա, 1815–1830 և 1832–1840 թթ. քաղաքական ռեակցիայի ընթացքում, կրկին կորցրեց, վոր այդ բոլորը հատուցվում եյին դործնական ղիջումներով: Ամեն անդամ բուրժուազիայի քաղաքական պարտությանը հետևում եր նրա հաղթանակն առևտրական որենսդրության բնագավառում:

Հարստության աճումը և առևտրի ընդլայնումը

բուրժուազիային հասցրին մի բարձրության, որտեղից նա նկատեց, թե ինչպես տուժում և նրա կենսական շահերի զարգացումը՝ յերկրի քաղաքական կարգից: յերկիրն անմտորեն 36 թագավորների մեջի բաժան-բաժան լինելուց, սրանց վոխադարձ հակասական ձգտումներից և քմահաճույքներից, ֆեոդալական կապանքներից, վորոնք կաշկանդում էին գյուղատնտեսությունը և նրա հետ շաղկապված առևտուրը, բանպարսիկ հարկողություններից, վորին յենթարկում էր ապա ու սնապարծ բյուրոկրատիան բուրժուազիայի բոլոր ձեռնարկությունները: Միաժամանակ մաքսային դաշնակցության ընդլայնումը և ամրապնդումը, շուտ զարծարբուրության հաղորդակցության մեջ, ներքին շուկայում մրցակցության աճումը—այս բոլորը դանազան պետությունների և զավառների առևտրական դասակարգերին մոտեցնում էր միմյանց, նրանց շահերի մեջ խոշոր միասեռակություն մացնում, նրանց ուժերը կենտրոնացնում: Սրա բնական հետևանքն այն էր, վոր այս բոլոր ելեմենտներն անցան ազատամիտ ոպոզիցիայի բանակը և վոր քաղաքական իշխանության համար դերմանական բուրժուազիայի վարած առաջին լուրջ պայքարը հաղթական վախճան ունեցավ:

Վոչ սղնվականության և վոչ էլ բուրժուազիային պատկանող դերմանական ազգի մեծ զանգվածը քաղաքներում կազմված էր մանր բուրժուաների և բանվորների դասակարգերից, իսկ գյուղում՝ գյուղացիներից:

Խոշոր կապիտալիստների և արդյունաբերողների դասակարգի թույլ զարգացման հետևանքով Գերմանիայում մանր բուրժուազիան չափազանց բազմաթիվ էր: Խոշոր քաղաքներում նա համարյա կազմում էր ազգաբնակչության մեծամասնությունը, մանր քաղաքներում նա ուներ բոլորովին ուրիշ դերակշռություն, վորտեղ այստեղ բացակայում են ավելի զորեղ և հարուստ մրցակիցներ ու ազդեցություններ: Այս դասակարգը, վորն ահագին դեր է կատարում ժամանակակից հեղափոխություններում, առանձնապես կարևոր է Գերմանիայում, վորտեղ քիչ առաջ տեղի ունեցած պայքարում նա վճռական դեր խաղաց: Նրա բնույթը վորոշվում է իր միջանկյալ դրությամբ յերկու դասակարգերի միջև—ավելի խոշոր կապիտալիստների՝ առևտրականների ու արդյունաբերողների դասակարգի և պրոլետարների դասակարգի միջև: Նա ձգտում է դեպի առաջինի դիրքերը, սակայն վոքրիկ անհաջողությունը առանձին անհատներին գլորում է այս դասակարգից դեպի պրոլետարիատի շարքերը:

Այս դասակարգն անկայուն է: Հեղ և առուրքարչ ուժեղ ֆեոդալների ու միապետական կառավարության առաջ, նա հարում է լիբերալիզմին, յերբ բուրժուազիան սկսում է բարձրանալ. նա բռնվում է դեմոկրատիզմի ուժգին տենդով, յերբ բուրժուազիան ձեռք է բերում դերիշխանություն. նա ընկնում է ամենավոքմբելի յերկչոտության մեջ, յերբ նրանից ցածր կանգնած դասակարգը՝ պրոլետարիատը խիզախում և ինքնուրույն չարժում կատարել:

Գերմանիայի բանվոր դասակարգն իր սոցիալական ու քաղաքական զարգացման մեջ նույն չափով յետ մնաց Անգլիայի և Ֆրանսիայի բանվոր դասակարգից, վորչափով դերմանական բուրժուազիան յետ մնաց այդ յերկրների բուրժուազիայից: Ինչպիսին տերն է, նույնպիսին էլ ծառան: Մեծաքանակ, զորեղ, կենտրոնացած և լինտելիգենտ պրոլետարիատի գոյության պայմանների զարգացումն ընթանում է ձեռք-ձեռքի տված գոյու-

թյան այն պայմանների զարգացման հետ, որը պահանջում է բազմաթիվ, հարուստ, կենտրոնացած և ուժեղ բուրժուազիայի համար: Բանվոր դասակարգի շարժումը դեռևս չի ընդունում ինքնուրույն և բացառապես պրոլետարական բնույթ, մինչև որ բուրժուազիայի գոնադան մասերը և մանավանդ նրա ամենառաջադեմ մասը՝ արդյունաբերողները չեն դրավում քաղաքական իշխանությունը և չեն վերակազմում պետությունն իրենց կարիքներին համեմատ: Բայց հենց որ զարգացումը հասնում է այս կետին, ձեռնարկատերերի և բանվորների անխուսափելի կոնֆլիկտն ապատնալիորեն մոտենում է և այլ ևս նա չի կարող հետաձգվել, այն ժամանակ անհնարին է դառնում բանվորներին առաջվա նման կերակրել խափուսիկ հուսերով և խոստումներով; որոնք դեռևս ի կատար չեն ածվում; այն ժամանակ իր ամբողջ լիակատարությամբ և ամբողջ պարզությամբ, վերջապես, հրապարակ է դեղնում տասնիններորդ դարի մեծ պրոբլեմը—պրոլետարիատի վոչնչացումը:

Գերմանիայում վարձու բանվորների ճնշող մեծամասնությունն աշխատանքն ուսացել է վոչ թե ժամանակակից տիպի արդյունաբերական իշխաններից, որոնց ամենաընտիր որինակները դանվում են Մեծ-Բրիտանիայում, այլ մանր արհեստավորներից, որոնց ամբողջ արտադրական սիստեմը միջնադարյան մի մոնացօրդ է ներկայացնում:

Սակայն, միքանի արդյունաբերական չրջանների ազդեցության տակ, որտեղ դեռևկսում եր արտադրության ժամանակակից դեղանակը, ինչպես և Թախտումների ազդեցության տակ, որոնք շատ բանվորների համար սովորություն եր դարձել, բանվորների մեջ դորեղանում եին փոխհարաբերությունները, նրանց մտավոր զարգացումը բարձրանում է և վերջի վերջո հանդես է գալիս այն ուժերի ուժեղ միջուկը, որոնց մոտ իրենց դասակարգի ազատագրման դաղափարն աչքի չեր ընկնում անհամեմատ ավելի մեծ պարզությամբ և ավելի համապատասխանում իրական փաստերին և պատմական պահանջներին: Սակայն այս բանվորները փոքրամասնություն եին կազմում: Ցեթե բուրժուազիայի յեռանդուն շարժումն սկսվում է 1840 թվից, բանվոր դասակարգի շարժումն իր սկզբնավորությունն առնում է 1844 թվին Շլեզիայի և Բոհեմիայի դործարանային բանվորների ապստամբություններից:

Վերջապես մանր դյուղական սեփականատերերի՝ դյուղացիների հակայական դասակարգը, որն իր կցորդի ( придатое )՝ դյուղատնտեսական բանվորների հետ միասին ամբողջ ժողովրդի մեծամասնությունն է կազմում: Այս դասակարգն ինքնըստինքյան առորդարժանվում և տարբեր մասերի: Նախ և առաջ այստեղ մենք տեսնում ենք հարուստ դյուղացիներ, այսպես կոչված խոշոր և միջակ դյուղացիներ, որոնք ուղիղ չափ լայնածավալ հողամասեր և յուրացանեն փոքր ի չատե լայնածավալ հողամասեր և յուրացանեն չյուրն աշխատեցնում և միքանի վարձու բանվորներ: Գանվելով խոշոր, հարկերից ազատ ֆեոդալական հողատերերի և մանր դյուղացիության ու դյուղատնտեսական բանվորների միջև, այս դասակարգի համար, ամենաբնական հակամարտի պատճառներով, ամենաբնական քաղաքականությունը՝ քաղաքի հակաֆեոդալական բուրժուազիայի հետ դաշնակցելն եր: Այստեղ մենք տեսնում ենք մանր ազատ դյուղացիներ, որոնք դերազանցում եին Հռենոսյան դավառում, որտեղ ֆեոդալիզմը ֆրանսիական հեղափոխության ծանր հարվածներից

րին յենթարկվեց: Այսպիսի անկախ մանր գյուղացիները են պատահում նաև այլ գավառների մէջ ևս, որտեղ, վորտեղ նրանց հաջողվել եր իրենց հողամասերի վրա ընկնող ֆեոդալական տուրքերը վերկպրել: Բայց այս գյուղացիների հողերն անուններով միայն ազատ եյին, վորովհետև նրանց վրա սովորաբար ծանրանում եյին այնքան հիպոտեկները (անշարժ կայքերի գրավականի պարտքեր) և այնպիսի ծանր պայմաններով, վոր հողի իսկական տերը վոչ թե գյուղացին եր, այլ վոխատուիչն ավող վաշխառուն: Ցերրորդ, մենք պատահում ենք ֆեոդալական կարման մէջ դանվող գյուղացիների, վորոնց հեշտ չեր վտարել իրենց հողամասերից, բայց վորոնք պարտավոր եյին վճարել իրենց հողատերերին հավիտենական ռենտա կամ մշտապես նրանց համար վորոշ քանակութեյան աշխատանքներ կատարել: Վերջապես գյուղատնտեսական բանվորները, վորոնց դրութեյունը բազմաթիվ խոշոր կալվածքներում բոլորովին այնպես եր, ինչպես այս դասակարգի դրութեյունն Անգլիայում և, վորոնք համենայն դեպս, ապրում և մեռնում եյին վորպես իրենց տերերի ազգատ, վատ սնվող սարուկները: Գյուղական բնակչութեյան վերջին 3 դասակարգը—ազատ մանր գյուղացիները, ֆեոդալական կախվածները և գյուղատնտեսական բանվորները մինչև հեղափոխութեյունն իրենց դլուխները քաղաքականութեյամբ յերբեք չեյին ցավեցնում, սակայն պարզ է, վոր հեղափոխութեյունը նրանց համար բացել վայլուն հեռանկարներով հարուստ մի նոր ճանապարհ: Նրանցից յուրաքանչյուրին հեղափոխութեյունն իր ուղուններն եր տալիս և այդ պատճառով կարելի յեր կարծել, վոր նրանք մեկը մյուսի հետևից կմիանան հեղափոխութեյանը, հենց վոր չարժումը լիովին իր հունի



մեջ մտնի: Բայց մյուս կողմից նույնպես պարզ է, ինչպես այս մասին վկայում է ժամանակակից յերկրների պատմութեյունը, վոր գյուղատնտեսական ազգաբնակչութեյունը յերբեք չի կարող հաջողութեյամբ ինքնուրույն չարժում սկսել. նա չափազանց խիստ ցրված լինելով լայնածավալ տարածութեյունների վրա, դժվար է համախմբել նրա զգալի մասը միատեղ գործողութեյուններ կատարելու համար: Գյուղացիութեյանը հարկավոր է նախաձեռնութեյուն և խթան՝ քաղաքի ավելի խտացած, լուսավորված և դյուրաչարժ բնակչութեյան կողմից:

Այստեղ տրված համառոտ ակնարկը դերմանական ժողովրդի պլեբեյոր դասակարգերի մասին, վորոնցից կազմված եր դերմանական ժողովուրդը քիչ առաջ բնութագրած չարժման ժամանակ, բավական է բացատրելու ինչպես կապակցութեյան ու համաձայնութեյան անբավարար լինելը, այնպես և այս չարժման ժամանակ հայտնաբերվող յերևութեյական հակասութեյունները: Յեթե տեղի ունեցած այնքան այլազան, հակասական չահերի ուժերին բախումները, վորոնք զարմանալի կերպով խաչադղղումն դանազան գավառներում փոխադարձաբար պայքարող չահերը խառնվում են միմյանց տարբեր պրոցեսներով. յեթե յերկրում չկա, սա մանավանդ կարևոր հանգամանք է, վոչ մի խոշոր կենտրոն, վոչ մի Լոնդոն կամ Փարիզ, վորի վճիռները, իր կշռի հետևանքով, ազատ եյին ժողովուրդը՝ միևնույն վճռը յերկրի յուրաքանչյուր մասում նոր պայքարով լուծելու անհրաժեշտութեյունից,—եվ ի՞նչ կարելի եր ասասել այսպիսի հանգամանքներում, յեթե վոչ այն, վոր մեծ պայքարը կը վերածվի բազմաթիվ փոխադարձաբար չշաղկապված մանրավոր ընդհարումների, վորոնց ընթացքում հակա-

յական քանակությամբ արյուն, ուժ և կապիտալ կը վատնվի և վնասներ, չնայած այս բոլորին, վճռական հետևանքի չեն հասցնել:

Գերմանիայի քաղաքական բաժանումը յերեք դյուժին ավելի կամ նվազ նշանակություն ունեցող պետությունների իր հերթին բացատրվում է հենց այդ խառնիճաղանճությամբ և այն տարրերի բարդությամբ, վրոնցից կազմված է ազգը և վրոնք յերկրի ամեն մի առանձին մասում միացած են առանձին պրոպորցիայով: Վորտեղ չկա շահերի ընդհանրություն, այնտեղ չկա նպատակների միասնականություն, իսկ գործողությունների միասնականության մասին խոսելն արդեն ավելորդ է:

(Ֆր. Ենգելս.—Հեղափոխությունը և նախահեղափոխությունը Գերմանիայում: Մարքս և Ենգելս. Պատմական աշխատություններ, ռուս. հրատ. 238—244 եջ.):

## 2. ՄԱՐՔՍԸ ՅԵՎ ԵՆԳԵԼՍՆ ՈՒՏՈՊԻՍՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Իր դասակարգային շահերի անմիջական հաղթանակը հաջողեցնելու համար պրոլետարիատի կատարած առաջին վորձերը, վորոնք տեղի ունեցան մարքսիզմի ընդհանուր հուզման ժամանակ, ֆեոդալական հասարակակարգի տապալման չրջանում, անխուսափելիորեն պիտի ջախջախվեին՝ իրեն պրոլետարիատի անհրաժեշտ դրության և նրա ազատագրման համար նյութական պայմանների անպատրաստության հետևանքով, վորոնք հենց բուրժուական ժամանակաշրջանի պրոդուկտն են ներկայացնում: Պրոլետարիատի այդ առաջին չարժմանն ուղեկցող հեղափոխական դրակա-



նությունը իր բովանդակությամբ անհրաժեշտորեն հետադեմ դրականություն է հանդիսանում: Նա քարոզում է ընդհանուր ասկետիզմ և կոպիտ հավասարեցում:

Սեն-Սիմոնի, Ֆուրյեի և Ովենի կոմունիստական և սոցիալիստական սիստեմները ծագում են պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի առաջին, անզարգացած չրջանում, վորի մասին վերևը մենք խոսել ենք:

Այս սիստեմների հորինողների աչքին տեսնում են դասակարգերի հակասությունները, ինչպես և տիրող հասարակության ծոցում քայքայիչ ելեմենտների ազդեցությունը: Բայց պրոլետարիատի մեջ նրանք չեն տեսնում պատմական վորևե ինքնագործունեություն, նրան յուրահատուկ վորևե քաղաքական չարժում:

Քանի վոր դասակարգային հակասությունների զարգացումն ընթանում է արդյունաբերության զարգացման հետ ձեռք-ձեռքի տված, ուստի նրանք իրականության մեջ չգտնելով պրոլետարիատի ազատագրման նյութական պայմանները, նրանք աչխատում են գտնել մի սոցիալական գիտություն, սոցիալական օրենքներ, վորպեսզի ստեղծեն այդ պայմանները:

Հասարակական ինքնագործունեության տեղը պիտի գրավի նրանց անձնական ստեղծագործությունը, ազատագրման պատմական պայմանների տեղը պիտի գրավեն ֆանտաստիկ պայմանները, պրոլետարիատի, իրրև դասակարգի, հեզհեզաե առաջ-ընթացող կազմակերպության տեղը պիտի գրավի հենց իրենց հորինած հատարակական կազմակերպությունը: Նրանց տեսակետից ամբողջ աչխարհի հետագա պատմությունը պետք է կայանա նրանց սոցիալական պլանների պրոպագանդի և կենսագործման մեջ:

Սրա հետ միասին նրանք, իհարկե, գիտակցում

են, վոր իրենց ծրագրերով նրանք հանդիսանում են գլխավորապես բանվոր դասակարգի, իրրև մյուսներից ավելի առաջադեմ դասակարգի, չահերի արտահայտիչները:

Պրոլետարիատի մեջ նրանք տեսնում են միայն մի հատվածություն, այն, վոր նա ամենից ավելի առաջադեմ է:

Դասակարգերի զարգացած ձևը, ինչպես և նրանց սեփական հասարակական դիրքն, այն հանգամանքներն է հասցնում, վոր նրանք իրենց համարում են դասակարգերի այս անտագոնիզմից բարձր կանգնած: Նրանք ցանկանում են բարելավել հասարակության բոլոր անդամների դրությունը, անգամ նրանց, վորոնք ավելի բարվոք դրության մեջ են: Այդ պատճառով էլ առանց տարբերության նրանք չարունակ դիմում են վողջ հասարակությանը և նույնիսկ գերադասորեն իշխող դասակարգին: Չե՞ վոր բավական է ըմբռնել նրանց սիստեմը, վորպեսզի այդ սիստեմը համարել հասարակական լավագույն կառուցվածքի լավագույն ծրագիրը:

Դրա համար էլ նրանք ժխտում են ամեն մի քաղաքական և մանավանդ ամեն մի հեղափոխական գործունեություն, նրանք ձգտում են իրենց նպատակին հասնել խաղաղ ճանապարհով և միայն, բնականաբար անհաջողության դատապարտված, եքսպերիմենտների միջոցով, որինակի ուժով նրանք ուզում են ճանապարհ հարթել դեպի նոր հասարակական ավետարանը:

Ապագա հասարակության Ֆանտաստիկ նկարագրությունը յերևան է գալիս այն ժամանակ, յերբ պրոլետարիատը տակավին գտնվում է անդարգացած դրության մեջ և իր կացությունն իրեն ներկայացնում է դեռ



միանգամայն Ֆանտաստիկորեն. դա ծագում է նրա առաջին նախազգացումներով լեցուն տենչից, հասարակությունն ընդհանուր վերակազմության յենթարկելու բուռն ձգտումից:

Բայց այս սոցիալիստական և կոմունիստական աշխատություններն մեջ քննադատական տարրեր էլ կան: Նրանք չոչնչացնում են դոյություն ունեցող հասարակության բոլոր հիմունքները: Ուստի նրանք թանգարժեք նյութ են տալիս բանվորներին լուսավորելու համար:

Ապագա հասարակության մասին ունեցած նրանց ուտոպիական դրական կողմը, ինչպես որինակ՝ քաղաքի և գյուղի հակադրության վոչնչացումը, ընտանիքի, մասնավոր սեփականության, վարձու աշխատանքի վերացումը, հասարակական ներդաշնակության հռչակումը, պետության՝ արտադրության սոսկ վարչության վերածելը,—այս բոլոր առաջադրությունները միմիայն արտահայտում են դասակարգերի անտագոնիզմը վերացնելու անհրաժեշտությունը, մի անտագոնիզմ, վորն այն ժամանակ հենց նոր էր սկսել զարգանալ և նրանց հայտնի չէր միայն իր սկզբնական անձև անվորոշությամբ: Ուստի այդ առաջադրություններն էլ տակավին ուտոպիական բնույթ են կրում:

Քննադատական – ուտոպիական սոցիալիզմի և կոմունիզմի նշանակությունը հակառակ հարաբերության մեջ է պատմական զարգացման հետ: Ինչ չափով զարգանում և ավելի վորոշ բնույթ է ստանում դասակարգերի պայքարը, այն ստոփման զրկվում է ամեն մի գործնական իմաստից և ամեն մի տեսական արդարացումից՝ դասակարգային պայքարից վեր լինելու այդ Ֆանտաստիկ ձգտումը, դասակարգային պայքարի այդ Ֆանտաստիկ ժխտումը: Դրա համար էլ, թեև այդ սիս-

տեմների հիմնադիրները չատ տեսակետներից հետադիմական անձեր են եղել, նրանց աշակերտները միշտ կազմել են ռեակցիոն ազդակներ։ Իրենց ուսուցիչների մտածելակերպին նրանք մնում են հավատարիմ, անդիտանալով պրոլետարիատի զարգացման ամբողջ հետագա ընթացքը։ Սրա հետևանքով չարունակ նրանք աշխատում են բթացնել դասակարգերի պայքարը և մեղմացնել հակասությունները։

Ահա թե ինչու այնպիսի կատաղությամբ նրանք դիմադրում են բանվորների ամեն տեսակի քաղաքական չարժմանը, վորը, նրանց կարծիքով, բղխում է դեպի նոր ավետարանը տածած կույր անհավատությունից։

(Կ. Մարեքս և Ֆ. Ենգելս,—Կոմունիստական Մանիֆեստը)։

## 3. ՖՈՒՐՑԵՆ ԱՊԱԳԱ ՆԵՐԴԱՇՆԱԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխատանքի յերկու սիստեմ մեկայն գոյություն ունեն՝ բաժան-բաժան յեղած կամ ընտանեկան բջիջներում կղզիացած աշխատանքի սիստեմը, ինչպես այժմ դա գոյություն ունի, և ասոցիացիայի սիստեմը։

Մարդկային աշխատանքները կատարելու համար ստված կարող է ընտրություն անել միմիայն խմբակների և անհատների մեջև, հասարակական կապակցված աշխատանքի և առանձնացած, տարաճաղ աշխատանքի մեջև։ Այս սկզբունքը յերբեք չպետք է մոռանալ։

Իբրև խելացի դասավորող, ստված ինչպես չեր կարող ունենալ մեկուսացած խմբակների աշխատանքը, վորոնք գործում են, ինչպես դա նկատվում է քաղաքակիրթ յերկրներում, առանց վորևե կապի և միասնականության, վորովհետև անհատական աշխատանքն իր մեջ կրում է կազմալուծման յոթ սաղմերը, վորոնցից յուրաքանչյուրն առանձին բավական է հակադրական իառնաչփոթություն ձգելու համար։

Յուրաքանչյուր բաղմանդամ ասոցիացիայի մասնակիցներին պիտի բաժանել՝ ըստ իրենց հաշակների և հակումների միատեսակ խմբակների և այդ խմբակները վեր յելնող ուվայր իջնող կարգով կցել սերիաներին, այնպիսի նկատառումով, վոր յուրաքանչյուր անդամի ընդունակությունները առավել չափով լիովին զարգանան և հնարավորություն տրվի յերևան բերել մրցության, վորն անխուսափելի յե հակադրությունների մեթոդական միացման դեպքում։

Մրցությունը, աշխատանքի կատարելագործությունը և սրանից բղխող ոգուտները աճում են այն չափով, ինչ չափով ավելանում են այդ զրուպպաները, (խմբակները) ըստ սերիաների դասավորելու գործի կանոնավորությունը և ասոցիանականությունը։

Կանոնավոր կամ հարմոնիկ (ներդաշնակ) խմբակները պիտի համապատասխանեն հետևյալ յերեք պայմաններին.—

1. Ասոցիացիաների ազատությունը, առանց վորևե պարտավորության, բացի վոխադարձ բարյացակամությունից։

2. Դեպի աշխատանքի մի վորևե տեսակը, վորն ընդհանուր և ասոցիացիայի բոլոր անդամների համար, ունեցած խանդավառությունը և կույր հրապուրանքը։

3. Խմբակի չահերին անձնազոհ կերպով նվիրված լինելուն, ընդհանուրի ձգտումներին գոհաբերելու պատրաստականությանը...

... 1500–1600 մարդկանցից կազմված ասոցիացիայի համար պահանջվում է մեկ քառակուսի մղոն տարածություն, այսինքն՝ վեց միլիոն քառակուսի ոտժեն...

Անհրաժեշտ է նաև, որ այդ վայրն ապահովված լինի լավ ջրով, որ նա բլուրներ ունենա, հողը պիտանի լինի զանազան մշակություններին համար, որ նա անտառ ունենա, որ նա մեծ քաղաքից չատ հեռու չլինի:

Բանի որ փորձնական ֆալանգը զրկված կլինի ժամանակակից ֆալանգների աջակցությունից, պիտի հոգ տանել, որ այսպիսի մեկուսացումն ահնարին չդարձնի բոլոր ձգտումների, բոլոր բնական հակումների դիկտատուրան, այնպես որ յուրաքանչյուր ֆալանգ պիտի հիմնավորվի այնպիսի մի վայրում, ուրտեղ կարելի լինի զբաղվել ամենա-այլազան փոխնակներով... Այս պատճառով անհրաժեշտ է ուրոնել մի վայր զանազան տեսակի հողային և այլ պայմաններով, Լոզանի շրջակայքի նման. համենայն դեպս, չերեն կարիք լինի հովիտի վրա կանգ առնել, այս վերջինը պիտի ունենա դետ և անտառ:

Հարկավոր է ժողովել 1500–1600 հոգի տարբեր հասակների, զանազան բնավորություններին տեր, տեսական և գործնական պիտելիքների տիրապետող. այս զանազանակերպությունը պիտի հատցնել հնարավոր մաքսիմումին, որովհետև ուրքան չատ ճյուղերի և ընդունակությունների տարբերություններ լինեն, նուինքան հեշտ և արագ կարելի կ՚ նրանց հարմոնիայի (ներդաշնակության) մեջ դնել:

Այսպիսի կանոնն իր ներսում պիտի մացնի գործություն ունեցող մշակություններն և աշխատանքի տեսակները, նախապայմանները և չհարմոնիկները (պարնիկ). անճրևային և ձմեռային որերի համար պետք է կազմակերպել արդյունաբերական արտադրության առավոտն յերեք ճյուղեր, և բացի այդ, զանազան գործնական դիտական գրադմունքներ և դեղարվեստական արհեստներ:

Նախ և առաջ պետք է վորոշել վայրատեղերի կատարած մուծումների (հողի, անտառների, նյութերի, մեքենաների և այլ ձևերի) գնահատման սիստեմը: Այս հարցի առթիվ չես կասկածանոտակվեմ մեզ այն ցուցմունքով, վոր այս բոլոր արժեքները պիտի վերածվի սկզբնաների (փայերի), վորոնք կարող են փոխանցվել և թաժանվել կուպոնների...

... Մենք մոտեցանք հարմոնիայի մեջ ամենակարևոր նշանակություն ունեցող հարցին, այն է՝ ֆալանգի յեկամուտները պրպտացի, և կապիտալին, աշխատանքին ու տաղանդին համապատասխան, բաշխում կատարելու սիստեմի հարցին: Հասարակակցության կապերը հենց առաջին տարին կխախտվեին, չերե ամեն մի մասնակից, լինի դա տղամարդ, կին, թե յերեխա, համոզված չլիներ, վոր իր տված ոգուտի համապատասխան նա ստացել է չահույթի արդարացի բաժինը:

## 4. ՄԱՐԴԸ ՀՈՒԼԻՍՅԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓՆՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լուի-Ֆիլիպի ժամանակ իշխում եր վոչ թե բուրժուազիան, այլ նրա մի Ֆրակցիան, այսպես կոչված Ֆինանսական արիստոկրատիան—բանկիրները, բորսային և յերկաթուղային արքաներն ու նրանց հետ միա-

ցած հողատերերի մի մասը՝ ածխահանքերի, յերկաթահանքերի և անտառների սեփականատերերը: Այդ արիստոկրատիան էր բաղմած գահի վրա, նա էր որոշում Թելադրում պալատներում, նա էր բաժանում պետական պաշտոնները, սկսած մինիստրությունների տեղերից և վերջացրած ծխախոտի բյուրոների տեղերով:

Իսկապես արդյունաբերական բուրժուազիան կազմում էր պաշտոնական ոպոզիցիայի մի մասը, այսինքն՝ պալատներում կազմում էր մխիթարին փոքրամասնություն: Նրա ընդդիմադրությունը (ոպոզիցիան) արտահայտվում էր նույնքան ավելի վճռականորեն, որքան ավելի բացասական դարձացում էր ստանում Ֆինանսական արիստոկրատիայի միահեծանությունը և որքան նրան ապահովություն էր ներկայացնում նրա սեփական դերիչխանությունը բանվոր դասակարգի վրա՝ ապրան մեջ խեղդած 1832, 1834 և 1839 թ. թ. ապստամբություններից հետո:

Մանր-բուրժուազիան իր բոլոր ասպիճաններով, ինչպես և գյուղացիական դասակարգը մխանգամայն հետ եկին մղված քաղաքական իշխանությունից:

Ֆինանսական կարիքի հետևանքով հուլիսյան միապետությունը հենց սկզբից բարձր բուրժուազիայից կախման մեջ ընկավ, իսկ այս կախումը բարձր բուրժուազիայից՝ իր հերթին ամող Ֆինանսական կարիքի մի անսպառ աղբյուր դարձավ:

Բուրժուազիայի Ֆրակցան, վոր կառավարում էր և պալատներում որոշումը դեր կատարում, ուղղակի շահագրգռված էր պետության պարտքի հավելման մեջ, հենց պետական դեֆիցիտը նրա սպեկուլյացիա-



յի իսկական աւարկան և նրա հարստանալու գլխավոր աղբյուրն էր ծառայում: Յուրաքանչյուր տարվա վերջը նոր դեֆիցիտ էր լինում, յուրաքանչյուր 4–5 տարվա վերջը մի նոր փոխառություն: Իսկ ամեն մի նոր փոխառությունը Ֆինանսական արիստոկրատիային նոր առիթ էր տալիս կողոպտելու պետությանը, վորն արհեստականորեն աջակցություն ստանում էր պետանկության չեմքին. նա ստիպված էր լինում բանկիրների հետ գործարքներ կնքել ամենաանպատ պայմաններում: Ամեն մի նոր փոխառություն առիթ էր հանդիսանում կողոպտելու նաև հասարակությանը, վորն իր կապիտալները պետական թղթերի մեջ էր մացնում. իսկ կողոպտի միջոց ծառայում էին բորսային գործառնությունները, վորոնց գաղտնիքը հայտնի էր կառավարությանը և պարլամենտական մեծամասնությանը: Պետական վարկի անկայունությունը և ընդհանրապես պետական գաղտնիքներին ծանոթ լինելը հնարավորություն էր տալիս բանկիրներին, ինչպես և պալատներում և գահի վրա գտնվող նրանց համախոհներին, առաջ բերել պետական թղթերի կուրսի արտասովոր և հանկարծակի տատանումներ. դրանց միջոցով հետևաբար անխուսափելիորեն էր լինում, վոր մանր կապիտալիստների գանգատն էր լինում, վոր մանր կապիտալիստների գանգվածները քայքայվում էին, իսկ բորսային խոշոր խաղողները չտեսնված արագությամբ հարստանում:

Իշխող դասակարգը, ճիշտ այնպես, ինչպես չահագործում էր պետական ծախքերն ու պետական փոխառությունները, նա չահագործում էր նաև յերկաթուղիների կառուցումները: Պալատները գլխավոր ծախքերը պետության վրա էին ձգում, իսկ սպեկուլյացիա անող Ֆինանսական արիստոկրատիայի համար վոսկու պատուղներ ապահովում:

Հուլիսյան հեղափոխությունը վոչ այլ ինչ էր, եթե վոչ մի փայատիրական (ակցիոներական) ընկերություն ֆրանսիական ազգային հարստությունը շահագործելու համար: Այս ընկերության դիվիդենտները բաժանվում էին միմիայն՝ պալատների, 240 հազար ընտրողների և նրանց համախոհների միջև: Լուի-Ֆիլիպն այս ընկերության դիրեկտորն էր, մի ինչ-որ Մակլայր՝ գլխի վրա: Այսպիսի սիստեմի ժամանակ մշտապես վատնվել էր ընթերակվում և վնասվում առևտուրը, արդյունաբերությունը, գերկրպագությունը, նավագնացությունը, արդյունաբերական բուրժուազիայի շահերը: Աժան կառավարություն, gouvernemuf à bonmarche, Հուլիսյան օրերին գրել էր նա իր դրոշի վրա:

Գեռևս 1830 թվի հեղափոխությունը և 1845 և 1846 թ. թ. անբերրիությունն ուժեղացրին, ընդհանուր խմորումները ժողովրդի մեջ: 1847 թվի թանգությունն արյունահեղ ընդհարումներ առաջ բերեց, ինչպես Ֆրանսիայում, այնպես և մնացած կոնտինենտի վրա: Ֆինանսական արիստոկրատիայի անամոթ խրախճանքի կողքին տեղի էր ունենում ժողովրդի պայքարը գոյության ամենաանհրաժեշտ միջոցների համար: Բնականոնում մահվան պատժի չեն ենթարկում սովյալների ապստամբության մասնակիցներին. Փարիզում արքայական ընտանիքի միջնորդությունը դատից ազատում էր հազեցած սրիկաներին:

Ժամանակավոր կառավարությունը, վորը բարձացել էր փետրվարյան բարրիկադների վրայով, իր կազմով անհրաժեշտորեն արտացոլում էր զանազան կուսակցություններ, վորոնց միջև բաժանվել էր հաղթանակը: Նա չէր կարող լինել մի այլ բան, քան մի



կոմպրոմիս տարբեր դասակարգերի միջև, վորոնք միատեղ տապալեցին Հուլիսյան գահը, բայց վորոնց չահերը թշնամական հակադրության մեջ էին գտնվում: Այս կառավարության խոշոր մեծամասնությունը կազմված էր բուրժուազիայի ներկայացուցիչներից:

Ընդհանուր ընտրական իրավունքի հիմունքներով հանրապետություն հռչակելուց հետո անհետացավ ամեմանափակ նպատակների և մոտիվների հետզոտությունն անպատ, վորոնք բուրժուազիային մղել էին դեպի փետրվարյան հեղափոխությունը: Բուրժուազիայի առանձնակի սակավաթիվ ֆրակցիաների վոխարեն հանկարծ դեպի քաղաքական իշխանություն մուտք գործան ֆրանսիական հասարակության բոլոր դասակարգերը, վորոնք ձգելով լուծանները, պարարեցին ու պալլերեյան հարկադրված յեղան հեղափոխական բեմի վրա իրենց անձնական անձով մասնակցելու խաղին: Սահմանադրական միապետության հետ միասին պատական իշխանության ավելականն անպատ անհետացավ, վորն իրեն կամայականորեն հակադրում էր բուրժուական հասարակությանը, իսկ դրա հետ միասին անհետացավ մանը, յերկպորտական կոնֆլիկտների մի ամբողջ չարան, վորոնք հարուցում է այսպիսի ատերևուլթ-ինքնուրույն իշխանությունը:

Ինչպես Հուլիսյան օրերին բանվորները դրավեցին բուրժուական միապետությունը, այնպես էլ փետրվարյան օրերին նրանք դրավեցին բուրժուական հանրապետությունը: Ինչպես Հուլիսյան միապետությունն ստիպված էր հանդես գալ իբրև միապետություն՝ շրջապատված հանրապետական հաստատություններով, ճիշտ այնպես էլ փետրվարյան հանրա-

պետությունն անհրաժեշտորեն հանդես չեկավ իբրև հանրապետություն՝ ընդհատված սոցիալական հատ-
տաուածություններով։ Փարիզի պրոլետարիատն ստիպեց
նրան այդ ընդհատումներն էլ անելու։

Բուրժուազիայի հետ միասին բանվորները կատարեցին Փեւրվարյան հեղափոխությունը, բուրժուազիայի կողքին նրանք փորձում էին պաշտպանել իրենց շահերը. այդպես էլ ժամանակավոր կառավարության մեջ բուրժուական մեծամասնության կողքին նրանք մի քանիսը տեղավորեցին։ Աշխատանքի կազմակերպության։ Բայց վարձու աշխատանքը—չե՞ որ աթեն պատրաստի դոյություն ունեցող՝ աշխատանքի բուրժուական կազմակերպությունն է։ Առանց դրան չկա կապիտալ, չկա՝ բուրժուազիա, չկա՝ բուրժուական հասարակություն։ Աշխատանքի հատուկ մինիստրություն։ Բայց մի՞թե ֆինանսների, առևտրի, հասարակական աշխատանքների մինիստրությունները, մի՞թե դրանք աշխատանքի բուրժուական մինիստրություններ չեն։

Ցեվ դրանց չարքում աշխատանքի պրոլետարական մինիստրությունն անխուսափելիորեն պիտի դառնար՝ անցորության մինիստրություն, բարի ցանկություններն մինիստրություն, Լյուքսեմբուրգի հանձնաժողով։ Ընդարձակ համարելով ազատագրվել, երբ բուրժուազիան դեռ դոյություն ունի. բանվորները նույնպես հնարավոր էին համարում պրոլետարական հեղափոխություն կատարել Ֆրանսիայի ազգային պատերի չրջանակներում, երբ դեռ դոյություն ունեն ուրիշ բուրժուական ազգություններ։ Սակայն Ֆրանսիայի արտադրական հարաբերությունները պայմա-



նավորված են նրա ամբողջ առևտրով, նրա դիրքով, համաշխարհային շուկայով և վերջինիս օրենքներով։ Կարող էր արդյո՞ք Ֆրանսիան այդ խախտել առանց ընդհանրական հեղափոխական պատերազմի, որն ի վիճակի լիներ ցնցելու Անգլիային, համաշխարհային շուկայի այս բռնակալին։

Յերբ իր մեջ հասարակության հեղափոխական շահերը կենտրոնացնող դասակարգն սկսում է ամբողջությունը, նա իր հեղափոխական դործունեության իավանդակությունն ու նյութը դտնում է անմիջապես իր սեփական դրության մեջ. նա հետ պիտի մղի թշնամիներին, պայքարի պահանջներից թելադրվող միջոցները ձեռնարկի. իր սեփական դործողությունների հետևանքները նրան մղում են ավելի հեռու, իր սեփական խնդիրների վերաբերմամբ նա տեսական վարժանումների մեջ չի մտնում։ Սակայն Ֆրանսիական բանվոր դասակարգը դեռ այդ դրության մեջ չի յեղել. նա դեռ ընդունակ չէր իր սեփական հեղափոխությունը կատարելու։

Արդյունաբերական պրոլետարիատի զարդացումն ընդհանրապես պայմանավորվում է արդյունաբերական բուրժուազիայի զարդացմամբ։ Վերջինիս իշխանության տակ նա առաջին անգամն է ձեռք բերում ազդային դոյություն, վորը և միայն կարող է զարմնել նրա հեղափոխությունն ազգային հեղափոխություն. առաջին անգամ նա ստեղծում է արտադրության ժամանակակից միջոցները, վորոնք միաժամանակ նաև միջոցներ են ծառայում նրա հեղափոխական ազատագրման համար։ Բուրժուազիայի գերիշխանությունը քանդում է ավատական հասարակության արմատ-

նները և հարթում է այն հողը, վորի վրա միմիայն հնարավոր է պրոլետարական հեղափոխությունը։ Ցրանսիայում արդյունաբերությունը հասավ ավելի բարձր մակարդակի և ֆրանսիական բուրժուազիան զարգացում եր ավելի հեղափոխականորեն, քան մյուսները մնացած ամբողջ կոնտինենտի վրա։ Բայց մեթե փետրվարյան հեղափոխությունն ամբողջովին ուղղված չեր անմիջականորեն միմիայն ֆինանսական արիստոկրատիայի դեմ։ Այս փաստը ցույց է տալիս, վոր արդյունաբերական բուրժուազիան դեռ իրեն չեր հենթարկել Ցրանսիան։ Արդյունաբերական բուրժուազիան կարող է գերիշխել միայն այնտեղ, վորտեղ ժամանակակից արդյունաբերությունն իրեն հետ համապատասխան ձևավորում է բոլոր ստացվածքային հարաբերությունները, և արդյունաբերությունը կարող է գրավել այս իշխանությունը միայն այնտեղ, վորտեղ նա գրավել է համաշխարհային չուկան, վորովհետև ազգային չրջաններն անբավարար են դրա զարգացման համար։ Ինչ վերաբերում է ֆրանսիական արդյունաբերությանը, պիտի ասել, վոր նույնիսկ ներքին չուկայում դեռևս չափով նա դիմանում եր միմիայն չնորհիվ վոչբիչ ձևափոխված արդելիչ մաքսերի սիստեմին։ Սրա համար էլ, թեև Փարիզում հեղափոխության մոմենտին ֆրանսիական պրոլետարիատն ուներ վճռական ուժ և ազդեցություն, վորոնք նրան մղում էլին ավելի հեռու, քան այդ համապատասխանում եր նրա միջոցներին, մնացած Ցրանսիայում նա կենտրոնացած եր առանձին, չերկրում ցրված արդյունաբերական կենտրոններում և համարյա կատարելապես մթագնում եր դյուղացիների և



մանր-բուրժուազիայի թվական գերակչռություն։ Կապիտալի դեմ մղվող պայքարն իր զարգացման ժամանակակից ձևի մեջ, իր կումինացիոն կետի (դադաթնակետի) մեջ, արդյունաբերական վարձու բանվորի պայքարն արդյունաբերական բուրժուազի դեմ Ցրանսիայում միայն մասնակի վիճակ եր ներկայացնում։ Բայց և այնպես վերջերվարյան օրերից հետո, հեղափոխությանը նա կարող եր տալ ազդային բովանդակություն, վորը մի պայքար և կապիտալի չահագործման ստորագաս չեղանակների դեմ՝ դյուղացիների պայքարը հողային վարչատուության դեմ, մանր-բուրժուազիայի պայքարը խոշոր առևտրականի, բանկիրի և գործարանատիրոջ դեմ՝ մի խոսքով, պայքարը անանկության հետ ընդունել եր մի ընդհանուր ազատամարտության ձեվ՝ ընդհանրացրած ֆինանսական արիստոկրատիայի դեմ։ Այդ պատճառով միանգամայն հասկանալի չե, վոր Փարիզի պրոլետարիատը փոխանակ իր պահանջները, իրրև հենց հասարակության հեղափոխական պահանջներ, առաջադրելու, նա ձգտում եր անցկացնել իր պահանջները բուրժուազիայի պահանջների հետ միասին և վոր նա չեստադուն*) դրոշակի առաջ թուլ ավեց կարմիր դրոշակի անկումը։ Ցրանսիական բանվորները չէլին կարող մի քայլ առաջ գնալ, չէլին կարող բուրժուական հասարակարգի մի մասն անդամ կատարել, մինչև վոր հեղափոխական ընթացքն այդ հասարակարգի դեմ, կապիտալի գերիշխանության դեմ չըմբոստացրեց

*) Կապույա, կարմիր և սպիտակ դույները «ազգային դրոշակի» դույներն են, վոր մարդից բուրժուական կառավարությունը Մեծ հեղափոխության տարիներին։

գյուղացիներին և մանր բուրժուաներին, այսինքն՝ ազգի այն զանգվածին, որը կանգնած էր պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, մինչև որ նա չստիպեց այդ զանգվածին միանալ պրոլետարիատի հետ, կամ էլ մի առաջընթաց պայքարողի հետ: Միմիայն հանգամանքների հրեշային պարտադրությամբ բանվորները կարող եղան զենել այդ հաղթանակը:

(Կ. Մարքս.—Դասակարգերի պայքարը Ֆրանսիայում 1848–1850 թթ. Մարքս և Ենգելս. Պատմական աշխատություններ, էջ 27–37):

## 5. ԼՆԻՆԸ ԿԱՎԵՆՅԱԿԻ ԴԱՍԱԿԱՐՀԱՅԻՆ ԴԻՐՔԻ ՄԱՍԻՆ

Հիշենք Կավենյակի դասակարգային դերը: 1848 թվին Ֆրանսիայում տապալվեց միապետությունը: Բուրժուական հանրապետություններն էլխանություն գլուխն են անցել: Նրանք նույնպես, ինչպես մեր կադետները, «կարգ ու կանոն» են ցանկանում, այդպես անվանելով մասսաները ճնշելու միապետական միջոցների վերականգնումն ու ամրապնդումը՝ վոտիկանության, մշտական բանակ, արտոնյալ պաշտոնեություն: Նրանք նույնպես, ինչպես մեր կադետները, առել հեղափոխական պրոլետարիատին, նրա՝ այն ժամանակ դեռևս վոչ հստակ «սոցիալականն», այսինքն՝ սոցիալիստական ձգտումների համար,—ցանկանում են վերջ դնել հեղափոխությանը: Նրանք նույնպես, ինչպես մեր կադետները անողոք թշնամությամբ էլին վերաբերվում՝ Ֆրանսիական հեղափոխությունը՝ համրող Եվրոպայում տարածելու քաղաքականությունը, այդ հեղափոխությունը համաշխարհային պրոլետարական հեղափոխություն դարձնելու քաղաքակա-



նությանը: Նրանք նույնպես, ինչպես մեր կադետները, ճարպիկորեն ոգտագործեցին Լուի-Բլանի մանր-բուրժուական սոցիալիզմն՝ ընդունելով նրան մինիմում, դարձնելով նրան սոցիալիստական բանվորների առաջնորդից, ինչպիսին նա ուղում էր լինել, բուրժուազիայի մի կցորդ (որդոտոկ), մի պոչիկ:

Այսպես էլին տիրող դասակարգի՝ դասակարգային չհաները, դիրքերն ու քաղաքականությունը:

Մյուս հիմնական հասարակական ուժը ներկայացնում էր՝ ստանավող կարմիր ուրվականից վախեցած, «անարխիստների» դեմ հնչող աղաղակներին յենթարկված մանր-բուրժուազիան: Իր ճգտումներով հետադիմ ու ճոռոմաբան—«սոցիալիստական», համաձայնությամբ լրևն՝ «սոցիալիստական դեմոկրատիա» անվանող (եսերները մինչևիվերի հետ միասին հիմա ընդունում են նույն այդ տերմինը) մանր-բուրժուազիան վախենում էր դեկավարությունը հեղափոխական պրոլետարիատին վստահել, առանց ըմբռնելու, որ այս վերջինը նրան դատապարտում էր՝ հավատ ստանալու բուրժուազիային, վորովհետև բուրժուազիայի և պրոլետարիատի միջև տեղի ունեցող դասակարգային կատաղի պայքարի ժամանակ, մանավանդ, երբ հեղափոխությունն անխուսափելիորեն սրում և այս պայքարը, «միջին» դիծ չի կարող լինել: Իսկ մանր-բուրժուազիայի դասակարգային դիրքի և ճգտումների ամբողջ էությունը կայանում է նրանում, որ նա անհնարինն է ուզում, դեպի անհնարինն է ճգտում, այսինքն՝ դեպի հենց այդպիսի «միջին դիծը»:

Ճերմակ վճռական դասակարգային ուժը ներկայացնում էր պրոլետարիատը, որը ճգտում էր վոչ թե

բուրժուազիայի հետ «հաշտվելու», այլ նրան հաղթահարելու, հեղափոխությունն անվերապահորեն ծառայելու, այն էլ միջազգային մասշտաբով:

Ամենամեծ օբյեկտիվ պատմական հողը, որը ծնունդ տվեց Կավենյակին: Մանր-բուրժուազիայի տատանումները «հեռացրին» իրեն ակտիվ գործչի դերից: Ֆրանսիական կազմակերպող կավենյակը դիմաց Փարիզի բանվորների դիմադրությանը, նրանց մասսայական դնդակահարությանը:

Հեղափոխությունը վերջացավ այս պատմական դնդակահարությամբ. թվով դերակշռող մանր-բուրժուազիան՝ ինչպես և մնաց բուրժուազիայի քաղաքական անդորր ոչնչը, և յերեք տարի անց Ֆրանսիայում կրկին վերականգնվեց կեսարական միապետությունն ամենատարբ ձևով:

(Լենին. Գրվածքների ժողովածու, հատ XIV, 265-266 եջ. ռուս հրատ.):

## 6. ՄԱՐՔՍԸ ՀՈՒՆԻՍՑԱՆ ՈՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Փետրվարյան հեղափոխության պաշտոնական վերջին մնացորդը՝ գործադիր հանձնաժողովը միլիտ նման հավլեց դեպքերի ընթացքի առջև: Լամարտինի վայրան կայծերը կավենյակի ռումբերը դարձան: Հակադիր դասակարգերի յեղբայրություն, fraternit, որոնցից մեկը չահագործում և մյուսին, վերսալցիին հնչակված այս freternite-ին վորը խոշոր տառերով գրված և Փարիզի ճակատին, յուրաքանչյուր բանտի վրա, յուրաքանչյուր զորանոցի վրա, նրա խակական, չկեղծված, նրա պրոզաիկ արտահայտությամբ ոչ այլ ինչ է, յեթե ոչ քաղաքացիական պատերազմ, քաղաքացիական պատերազմ իր ամենասարսափելի ձևով, աշխատանքի և կապիտալի պատերազմ: Հունիսի 25-ի յերեկոյան այս յեղբայրությունը բռնավարվում եր Փարիզի բոլոր լուսամուտների առաջ, յերբ բուրժուազիայի Փարիզը հրավառվում եր, մինչդեռ պրոլետարիատի Փարիզն այրվում եր, արյունաքամ լինում, հառաչանքներում խեղդվում: Յեղբայրությունը տևեց մինչ այնքան, վորքան բուրժուազիայի չահերը յեղբայրանում եին պրոլետարիատի չահերի հետ:

Հունիսյան որերին ոչ ոք այնպիսի մոլեռանդությամբ չեր կռվում սեփականության փրկության ու վարչի վերականգնման համար, ինչպես Փարիզի մանր բուրժուաները—արմատականներ ու ճաչարաններ պահողները, marchauel de vin (մանր դինեվաճառները), չրջիկ առևտրականները, խանութպանները, արհեստավորները և այլն. մանր առևտուրը վոտքի յելավ և զնաց բարրիկադների դեմ, վորպեսզի վերականգնի փողոցից դեպի խանութը տանող չարժումը: Սակայն բարրիկադների մյուս կողմը կանգնած եին զնորդներն ու պարտապանները, իսկ հակառակ կողմը—խանութպանների վարկատուները: Ցեվ, յերբ բարրիկադները խորտակվեցին, բանվորները ջախջախվեցին և հաղթությունից արբեցած խանութպանները հետ զարձան դեպի իրենց խանութները, նրանք տեսան, վոր խանութների մուտքը բռնված է սեփականության փրկչի՝ վարչի պաշտոնական գործակալի կողմից, վորը ներկայացնում եր խանութպաններին սոսկալի ծանուցագիրը՝ ժամկետանց մուրհակ: Ժամկետանց բնական-բանավարձ: Ժամկետանց պարտատիրը խանութի բռնագրավում՝ խանութպանի սնանկություն:

Սեփականության փրկություն: Բայց տունը, վորտեղ նրանք ապրում եյին, իրենցը չեր, մանր-բուրժուաներինը չեր. խանութը, վորին նրանք պահապան եյին կանգնած, նրանց սեփականությունը չեր. ապրանքները, վոր նրանք վաճառում եյին, նրանց չեր պատկանում: Վոչ նրանց՝ առևտուրը, վոչ նույնիսկ ափսեն, վորից նրանք ուտում եյին, կամ մահճակալը, վորի վրա քնում եյին, նրանց չեր պատկանում: Հարցը վերաբերում եր այդ սեփականությունը փրկելուն՝ տնօրերոջ համար, վորը տունը վարձով եր տվել, բանկիրի համար, վորը մուրհակին եր զեղչել, կապիտալիստի համար, վորը դրամ եր փոխ տվել, ֆաբրիկանտի համար, վորը այդ մանր առևտրականներին վաստահացել եր իր ապրանքները վաճառքի համար, մեծաքանակ առևտրականի համար, վորն այդ արհեստավորներին ապառիկ հում նյութ եր տվել,—և այս սեփականությունը փրկվում եր հենց ընդդեմ փրկողների: Վարկի վերականգնումը, բայց վերստին ամրացած վարկը դուրս յեկավ մի կենդանի և անողոք ատելություն, վորն անկարող պարտապանին կնոջ ու զավակների հետ դուրս և վանում նրա չորս պատերի մեջից, նրա մտախոհ կարողությունը հանձնում և կապիտալին, իսկ նրան կալանքի յև յենթարկում պարտքի բանտում, վորը կրկին խրոխտալից բարձրացավ հունիսյան ըմբոստների դիակների վրա:

Մանր բուրժուաները զարհուրանքով լսացան, վոր՝ ձնչելով բանվորներին, նրանք անվերադարձ կերպով լրենք հանձնվեցին պարտատերերի ձեռքը: Փետրվարից հետո հաշվի չառնվող անանկությունը, այժմ հունիսից հետո պաշտոնական հռչակում ստացավ:

(Կ. Մարքս.—Դասակարգերի պայքարը Ֆրանսիայում. ռուս. հրատ. 49–50 և 55–56 եջեր):



## 7. «ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ» ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆեոդալիզմի փլատակների վրա բուն ժուռական հասարակությունը չվերացրեց դասակարգերի տարբերությունը: Նա լոկ նոր դասակարգեր դրեց հների տեղը, ճնշումի նոր միջոցներ և պայքարի նոր յեղանակներ մշակեց:

Մեր ժամանակաշրջանը—բուրժուազիայի ժամանակաշրջանը—նրանով է տարբերվում, վոր դասակարգային ներհակությունները նա պարզեցրել է: Հասարակությունը հետզհետե ավելի ու ավելի բաժանվում է յերկու մեծ թշնամի բանակների, յերկու մեծ, ուղղակի դեմ առ դեմ ծառացած դասակարգերի —բուրժուազիայի և պրոլետարիատի:

Բուրժուազիան պատմության մեջ վերին աստիճանի հեղափոխական դեր է կատարել: Ամենուրեք, վորտեղ բուրժուազիան տիրապետության է հասել, նա խորտակել է ֆեոդալական նահապետական, հովվերգական հարաբերությունները. նա անողոքաբար կտրատեց ֆեոդալական խայտաբղետ թելերը, վորոնք կապում եյին մարդուն իր ժառանգական տերերի հետ և մարդկանց միջև, բացի մերկ շահից, բացի անսիրտ կանխիկից, վոչ մի կապ չթողեց:

Բուրժուազիան չի կարող գոյություն ունենալ առանց արտադրության գործիքների մեջ, հետևապես և հասարակական բոլոր հարաբերությունների մեջ անընդհատ հեղաշրջումներ կատարելու:

Բուրժուազիան իր հազիվ հարյուրամյա դերի իշխանության ընթացքում ավելի հզոր և ավելի վիթխարի արտադրական ուժեր ստեղծեց, քան բոլոր նա-

խընթաց սերունդները միասին վերցրած։ Բնական ուժերի նվաճումը, մեքենաները, քիմիայի կիրառումը լերկրագործության և արդյունաբերության մեջ, շոգենավերը, երկաթուղիները, էլեկտրական հեռագրերը, ամբողջ աշխարհամասերի հերկումը, գետերի հարմարեցումը նավագնացության համար, կարծես թե գետնից բուսած ամբողջ ժողովուրդները...

Այն ժամանակ, վորով բուրժուազիան մահացու հարված հասցրեց Ֆեոդալիզմին, այժմ հենց բուրժուազիայի դեմ է ուղղվում։

Սակայն բուրժուազիան վոչ միայն այն զենքն է կռել, վոր նրան մահացու հարված պիտի հասցնի, նա ծնել է նաև այն մարդկանց, վորոնք ուղղում են այդ զենքը—ժամանակակից բանվորներին, պրոլետարներին։

Այն չափով, վոր չափով բուրժուազիան, այսինքն՝ կապիտալը, զարգանում է, զարգանում է նաև պրոլետարիատը, ժամանակակից բանվորների դասակարգը, վորոնք ապրում են, քանի աշխատանք են գտնում, իսկ աշխատանք են գտնում, քանի նրանց աշխատանքը ավելացնում է կապիտալը։ Այս բանվորները, վորոնք ստիպված են իրենց հատուածաոով ծախել, նույնպիսի ապրանք են, ինչպես և առևտրի ամեն մի ուրիշ առարկա, ուստի կախված են մրցակցության բոլոր պատահականություններից, շուկայի բոլոր տատանումներից։

Բուրժուազիայի դեմ կանգնած բոլոր դասակարգերից միմիայն պրոլետարիատն է իրոք հեղափոխական դասակարգ։ Մյուս բոլոր դասակարգերը քայքայվում և կործանվում են խոշոր արդյունաբերական



դարզացումից. իսկ պրոլետարիատն ստեղծվում է հենց նրա միջոցով։

Մինչև չերեսերը, մանր արդյունաբերողները, մանր առևտրականները, արհեստավորները, գյուղացիները,—բոլորը մաքառում են բուրժուազիայի դեմ, վորպեսզի պահպանեն իրենց գոյությունը, իրրև միջին չերեսեր։ Հետևապես նրանք հեղափոխականները չեն, այլ պահպանողականներ։ Ավելին՝ նրանք հետադիմական են. նրանք ձգտում են պատմության անիվը յետ դարձնել։ Ցնծեն նրանք հեղափոխական են, ապա այն չափով, վոր չափով նրանք յենթակա յեն պրոլետարացման, վոր չափով նրանք վոչ թե ներկա, այլ իրենց ապագա շահերն են պաշտպանում, վոր չափով նրանք ձգողնում են իրենց սեփական հայացակետը և կանգնում պրոլետարիատի հայացակետի վրա։

Հին հասարակության կյանքի պայմանները արդեն ջանջախվել են պրոլետարիատի կյանքի պայմաններում։ Պրոլետարը սեփականություն չունի. նրա հարաբերությունները դեպի կինն ու զավակները այլևս վոչնչով նման չեն բուրժուական ընտանեկան հարաբերություններին։ Ժամանակակից արդյունաբերական աշխատանքը, կապիտալի ժամանակակից լուծը, ինչպես Անգլիայում, նույնպես Ֆրանսիայում, ինչպես Ամերիկայում, այնպես էլ Գերմանիայում, հավասարապես ջնջել է նրանից բոլոր ազգային գծերը։ Օրենքները, բարոյականությունը, կրոնը նրա համար վոչ այլ ինչ են, եթե վոչ բուրժուական նախապաշարմունքներ, վորոնց յետևն այս կամ այն բուրժուական շահերն են թաղնված։

Պրոլետարիատից առաջ յեղած բոլոր դասակար-

դերը հասնելով գերիշխանության, աշխատում էին իրենց ղրաված հասարակական դերքն ամրացնել, դնելով հասարակության ամենալիսի պայմանների մեջ, որոնք նպաստում են նրանց հարստանալուն: Պրոլետարները կարող են հասարակական արտադրական ուժերը նվաճել միայն այն ժամանակ, երբ կվոչնչացնեն՝ ստացվածք ձեռք բերելու իրենց սեփական կեղանակը և միաժամանակ ժամանակակից բոլոր կեղանակները: Պրոլետարներն ամրապնդելու վոչինչ չո՛ւնեն, ընդհակառակը, նրանք պիտի փչրեն ամեն-վոր հարստության ու ամենավոր ապահովության բոլոր ամրապնդած կեղանակները:

Բուրժուական դասակարգի գոյության և գերիշխանության ամենաէական պայմանն է՝ հարստության կուտակումը մասնավոր մարդկանց ձեռքերում, կապիտալի գոյացումն ու բազմապատկումը: Կապիտալի գոյության պայմանը վարձու աշխատանքն է: Վարձու աշխատանքը բացառապես հիմնված է բանվորների փոխադարձ մրցման վրա: Արդյունաբերության առաջադիմությունը, որի կամավուրկ և հրուկրողը բուրժուազիան է, բանվորներին իրարից անջատելու տեղը դնում է նրանց համախմբումը՝ ասոցիացիաների միջոցով: Խոշոր արդյունաբերության զարգացման հետ միասին, բուրժուազիայի վոտքերի տակից գուրս է գալիս, հետևապես և այն հողը, որի վրա նա արտադրում և յուրացնում է պրոդուկտները: Նա արտադրում է նախ և առաջ իր սեփական գերեզմանափորներին: Նրա պարտությունը և պրոլետարիատի հաղթանակը հավասարապես անխուսափելի են:

(Կ. Մարքս և Ենգելս.—«Կոմունիստական Մանիֆեստ»):



## ԶՈՐՐՈՐԴ ԳԱՐԱՎՄՈՒՆՔ

# «ՁՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ» ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄԸ ՑԵՎ ԱՒԱՋԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

### 1. ՁՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻԱՆ ԶԳԱԶԱԺԱՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ձորատերական հասարակական կարգերը Ռուսաստանում զարգացել են XVII և XVIII դարերում: XVIII դարի կեսին նրանք հասան իրենց ամենաբարձր զարգացմանը: Այն ժամանակ կային խոշոր հողատերպարգացմանը: Այն ժամանակ կային խոշոր հողատերպարգացմանը: Այն ժամանակ կային խոշոր հողատերպ

կան կապիտալի յերկիրը: Այս շրջանում Ռուսաստանը առանձապես վոչ միայն հետամնաց յերկիր չեր, այլ և յեվրոպական ժամանակակից գրողների ընդհանուր վկայության համաձայն, առևտրի զարգացման տեսակետից (գլխավորապես արտաքին առևտրի) յեվրոպական շատ յերկրներից բարձր եր կանգնած: XVIII դարի 70-ական թվերին նա արդեն ուներ նպաստավոր առևտրական բալանս, իսկ նրա արդյունաբերությունն սկսել եր հաջողությամբ սպասարկել վոչ միայն ներքին, այլ և արտաքին չուկային: Ոտարյերկրացիները հաղորդում եյին, վոր 70-90-ական թվերին Ռուսաստանը մանուֆակտուրների թվով հետ չեր մնում Ֆրանսիայից և վոր այս «գործարանները» արագորեն աճելով ե հասնում կիսա-ապատ բանվորական ուժի հարաճուն մակընթացության, դառնում եյին կապիտալիստական տիպի գործարաններ: XIX դարի սկզբում վերջնականապես պարզվեց կալվածատիրական գործարանների հաղթանակը, վորոնք սպասարկվում եյին վարձու բանվորներով, հանդեպ մանուֆակտուրների ավելի հետամնաց տեսակների—արքունական և «պոսեսիոն» ձեռնարկությունների, (նույնպես արքունական, բայց ոգտագործման համար վաճառականներին և կալվածատերերին իրենց ամբողջ ունեցվածքով հանձնված ձեռնարկություններ, և այդ գործարաններին համար դյուղացիներ դնելու իրավունքով), վորտեղ ոգտագործվում եր փախած դինվորների, թափառաշրջության և ծանր աշխատանքներից փախչելու համար դատապարտվածների, պրոնիկների և մանուֆակտուրներին կցված դյուղացիների աշխատանքը:



Համավոր-վարձկալական աշխատանքի հաղթանակը, վկայում եր «մորատորիական կարգի» ճգնաժամի մասին, ինչպես և այն մասին, վոր առևտրական կապիտալը շրջանառության սֆերայից սկսել է փոխանցվել արտադրության սֆերան, այսինքն, վոր առևտրական կապիտալի շրջանակներում ծնունդ և առևտրական կապիտալը: Կապիտալիստական արտադրության ծագմանը մեծապես նպաստել է առևտրի զարգացումը, մանավանդ նրանից հետո, յերբ Ռուսաստանը նոր յերկրամասեր գրավեց: 70-90-ական թվերին միացվեց ամբողջ Հարավային Ուկրաինան և Տաճկաստանից գրավվեց Սև ծովի ամբողջ հյուսիսային ափերը: XIX դարի սկզբին կցվեցին Բեսարաբիան, Ֆինլանդիան և Վրաստանը, այսպես կոչված «տաճկական պատերազմներից» հետո Ռուսաստանը ձեռք բերեց Դանուբի ձախ ափը նրա գետաբերանի կղզիների հետ միասին և Սև ծովի ամբողջ կովկասյան ծովեզերը, նմանապես իրավունք ստացավ ազատ առևտուր վարելու Տաճկաստանի հետ և առևտրական նավերի ազատ անցուդարձ ունենալու նեղուցներով, մի հանգամանք, վորն առանձնապես մեծ ոգուտներ բերեց նրան: Այս ընդլայնումների շնորհիվ Ռուսաստանի կազմի մեջ մտան՝ հում-նյութերով հարուստ յերկրամասեր և նպաստավոր հեռանկարներ բացվեցին Սրեմյան Ցեվրոպայի և Արևելքի յերկրների հետ առևտրական գործառնությունները զարգացնելու համար: XIX դարի առաջին 50 տարիներում յերկրի արտաքին առևտրի շրջանառությունն ամեն համարյա 3 անգամ. կոնտինենտալ բլոկադը, վո-

բը հարկադրեց Ռուսաստանին հրաժարվել Անգլիայի հետ առևտրական հարաբերություններ պահպանելուց, ունեցավ նաև իր արդյունավետ կողմերը, վերջիվերջո նա առիթ ստեղծեց ավելի լուրջ ուշադրություն դարձնել Սիբիրյի վրա, որը ռուսական գործարանների արտադրանքի մասնավոր մասնակարարման կարիքն ուներ: XIX դարի առաջին 20 տարիների բամբակեղեն գործվածքների արտածումը դեպի Սիբիր (Տոճկաստան, Պարսկաստան, Չինաստան) աճեց համարյա 10 անգամ, բրդեղեն գործվածքներինը—6 անգամ, մետաղյա ապրանքներինը—2 անգամ:

Նաև աճեց հում նյութի և կիսաֆաբրիկատների արտահանումը դեպի Արևմուտք, մանավանդ Նովորոսիյսկի միացումից հետո (Ուկրաինայի հարավային ծովյա եզերքի մասը), որտեղ կառուցվեցին և առաջնակարգ նավահանգիստների նշանակություն ստացան մի շարք նոր քաղաքներ—Ոդեսան, Խերսոնը, Տագանրոգը, Մարիուպոլը: Ռուսական արտահանման գլխավոր առարկան ներկայացնում էր գյուղատնտեսական հում նյութը՝ հաց, անասուն, ճարպ, կաշիներ, խոզի մազ, անտառանյութ:

Արտահանվող կատարվող ներմուծումը պարզորեն բնորոշում է յերկրի դրամական տնտեսության զարգացումը. գլխավորապես ներմուծվում են մեքենաներ: բամբակ, բրդեղեն գործվածքներ. 1820 թվին մեքենաների ներմուծումն ընդհամենը կազմում էր 10 հազար ռուբլի, իսկ 1850 թվին—ավելի քան 2 միլիոն ռուբլի:

Արտաքին առևտրի հետ միաժամանակ աճում է



և ներքին: Գրամական տնտեսության զարգացումը ուժեղացնում է գործարանային ապրանքների պահանջը, վոչ միայն պղնձականների և քաղաքային բնակչության կենցաղում, այլև գյուղացիական կենցաղում աճում է չիթի և միխալի պահանջը, վորոնք դուրս են վանում ձեռնարկության կտավը:

Ներքին առևտրի կրեդիտացումն առաջ բերեց կապիտալների տեղափոխություն և ապրանքների կանոնավոր փոխանակություն Ռուսաստանի առանձին չբրջանների միջև, գլխավորապես սևահող և վոչ-սևահող չրջանների միջև: Հարավային գյուղատնտեսական արտադրության համար վոչ-սևահող կենտրոնը դարձավ մեծ տարողություն ունեցող մի չուկա: Սևահող հարավը կարող էր պետերբուրգի և կենտրոնական չրջանների արդյունաբերական ապրանքներին: Իրենց հերթին այս չրջաններն ստանում էին հարավից հացահատիկ, անասուններն ու հացը, բուրդն ու կաշին:

Շրջանների միջև տեղի ունեցող բնական փոխանակության աճումը դրդում էր հոգ տանել հատուկ դահլիճների բարեկարգման մասին, քանի որ հին ցամաքային «տրակտներ» գարնան ու աշնանն անանցանելի լինելով, իսկ տարվա մյուս եղանակներին վերին աստիճանի անապահով, խափանում էին առևտրական հարաբերությունների զարգացումը: Այդ պատճառով էլ XIX դարի սկզբին թե կառավարությունը, թե վաճառականները և թե նույնիսկ առանձին անհատները մի շարք միջոցներ էին ձեռնարկում ռազմական ճանապարհներն ոգտագործելու,

ինչպես և խոշոր և հողաշերտ ճանապարհների (грунтовые дороги) կառուցելու. հինվում են մի շարք ջրանցքներ—Ոգինսկի, որը միացնում է Արևմտյան Դվինան Դնեպրի հետ, Դնեպրովսկո-Բուգսկի, Տիխվինսկի՝ Մոլոգայի և Լադոժյան լճի միջև, հերցոգ Վիրտեմբերգսկու ջրանցքը, որը միացնում է Վոլգան Հյուսիսային Դվինայի հետ: Ոգնության հիմնվում է ջրողունակային ընկերություն, որը 1821 թվին արշին ուներ յերեք չոգենավ և մի քանի սանդրակ չոգնավներ (թեքակայմ նավեր), բարժաներ (անթիակ բեռնակիր նավեր, որոնց թափքերով են քաշում) և կլիպերներ (արընթաց առագաստանավեր): Սչխուժ նավարկություն է սկսվում Դնեպրի, Վոլգայի և Կամայի վրա. ապրանքները ջրային ճանապարհով Պետերբուրգից գնում են Հաջտարխան և Կասպից: Վերջապես սկսվում է յերկաթուղագծերի շինարարությունը. 1837 թվին բացվում և առաջին յերկաթուղին Պետերբուրգի և Ցարսկոյե-Սելոյի միջև, 1848 թվին Վարշավա-Վիեննա և 1853 թվին Նիկոլայև-Վոկալա (այժմ Հոկտեմբերյան, Լենինգրադի և Մոսկվայի միջև) յերկաթուղիները:

Ներքին առևտուրը գնալով առնավաճառ առևտրի (ярмарочная торговля) դեմ: Այդ պատճառով էլ Ռուսաստանում մեծ զարգացում էր ստացել պրատոլությունը և ոֆենությունը (պրատոլները՝ գյուղերում մեծաքանակ գնումներ կատարողներն էին, որոնք այդ նպատակով էլ շրջում էին գյուղերը, իսկ ոֆենները՝ դյուրավաճառ ապրանքներով գյուղերը շրջող չարչիներն էին), ինչպես և մինչև մանր առևտուրը առնավաճառներում և բազարներում



(այսինքն՝ պարբերաբար գումարվող չուկաներում):

Խոշորագույն առնավաճառներ (յարմարկաներ) համարվում էին—Նիժնի-Նովգորոդինը, որը XIX դարի առաջին կեսում արդեն բարմամիլիոն շրջանառություն էր կատարում (1824 թվին վաճառվել է 40½ մլն. ռուբլու ապրանք, 1838 թվին—129 մլն. ռուբ.), և Իրբիտինը, որը մագեղենի գործարքներով համաշխարհային նշանակություն էր ստացել:

Ամեն տեսակետից կապիտալիզման է յենթարկվում նաև գյուղատնտեսությունը թե դրամական շրջանառության աճման ու լայն չուկայի ապատարկման տեսակետից և թե գյուղատնտեսական տեխնիկայի ու հողատիրական ձևերի տեսակետից: Կալվածատիրական տնտեսության արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը դրդում էր՝ ուժեղացնել այս տնտեսության արտադրողականությունն ու ռացիոնալիզացիան, բահրան (оброк) փոխարինել կռվորությամբ (барщина), դրսեվորելով ինտենսիֆիկացիայի պարզորոշ տենդենցներ—հողերին հանգիստ տալու տնտեսությունից անցնում են անզարգացած յեռադաշտյան սիստեմին (Պոմորժիայում), անզարգացած յեռադաշտից անցնում են վերջնականապես ավարտված յեռադաշտ սիստեմին (կենտրոնական շրջաններում) և նույնիսկ բազմադաշտին և պտղափոխության սիստեմին (սևահողյան շրջանում, Հարավ-արևմտյան յերկրում և Մերձբալտիկայում):

Կապիտալիզմի ներմուծքը գյուղատնտեսության մեջ առավելապես հաջողություններ և ունեցել Ուկրաինայում, որտեղ զարգանում և կալվածատերերի

ողեպործությունը, բորակապործությունը (солитоворение), դյուղատնտեսական հում նյութի վերամշակությունը՝—մոմի, պարաննների, ասպոնի, կաշիների (поташ) ճարպահալ գործարանները, կալվածատերերը Ուկրաինայում ավելի վաղ, քան կենտրոնական Ռուսաստանում, չեկան այն յեղրակացության, վոր պետք թողնել հին բնակավայրերը և անցնել առևտրին և գործարանների ու ֆաբրիկների կառուցմանը:

XIX դարում արդյունաբերությունը Ռուսաստանում զարգանում է մի այնպիսի արագ թափով, վոր ժամանակակիցներին դա թվում է առեղծվածային: «Ռուս Ցերկրադործ» ամսագրում 1838 թվին գրվում էր այն մասին, վոր Ռուսաստանում յերկրագործությունը յերկրորդական պլանն է անցնում և վոր արդյունաբերությունը «ապշեցուցիչ զարգացման է հասել»: Արդյունաբերական կապիտալիզմի աճման ցայտուն դուզանիշը կարող է համարել այն փաստը, վոր առանձին արագությամբ աճում է բամբակագործական արդյունաբերությունը, վոր հետևած չէր պահանջից: 50 տարվա ընթացքում Ռուսաստանում մեքենամանվող բամբակեղենի ծավալն ավելի քան 50 անգամ աճել է: Ենթադրվել այն հանգամանքին, վոր բամբակը մանելու և գործելու համար սկսեցին մեքենաներ կիրառել, բամբակեղենի գործվածքները դարձան հագուստի ամենաժամն և ամենատարածված կտորեղենը. բայց բամբակեղենի արտադրության արագ աճման համար կար նաև մի այլ զրդապատճառ. 1825, 1836, 1839—40 թվերին անգլիական արդյունաբերական ճգնաժամից անմիջապես հետո անգլիական մանվածքի արժեքը ռուսական գործարանները մինչև 40-ական թվականները գործադրում էին անգլիական մանվածք (пряжа) արտադրին ընդհատ: Այդ պատճառով XIX դարի առաջին կեսում բամբակագործական արդյունաբերության զարգացումը բացատրվում է կապիտալիստական դինամիկայի համաչափորհային պայմաններով. Ռուսաստանը մոտով Անգլիայի կապիտալիստական զարգացման որբիտայի մեջ և ոգտվեց Անգլիայի տեխնիկական առաջադիմություններից:

Արդյունաբերական ձեռնարկներն աճում էին թե քանակապես և թե վորակապես. խոշորանում էին, հետզհետե ավելի ու ավելի ուժեղացնելով բանվոր ձեռքերի պահանջը, ճորտական պարտադիր աշխատանքը փոխարինում էին վարձու աշխատանքով, ավելի ու ավելի հարստանում արտաոհմանյան տեխնիկայով:

Ժամանակակից դրողները նշում են, վոր 20-ական թվականներին արդեն արդյունաբերության զարգացումը մեծ փոփոխություններ առաջ բերեց յերկրում. բազմաթիվ գյուղեր քաղաքի տեսք ընդունեցին, շատ ավաններ աճելով մեծ քաղաքներ դարձան (որինակ Իվանովո-Վոզնեսենսկը):

Ֆեոդալական – ճորտատիրական հասարակարգի քայքայումը դեռ XVIII դարի վերջին պարզ նկատելի էր ազնվականության և ծնվող բուրժուազիայի ներկայացուցիչներից շատերի համար: «Վոլնայա» տարին II-ի հովանավորությամբ Ն. Ի. Նովիկովի լույս ընծայած առաջին յերկիթաբանական ժուռնալներում, ինչպես և Ն. Ա. Ռադիշչևի՝ «Ճանապարհոր-

դուբյոմ Պետերբուրգից Մոսկվա» գրվածքում տեսնում ենք ազնվականության առաջին հասարակական յեղուլթները ճորտատիրական իրավունքի դեմ։ Սակայն կառավարությունը չուտով փակեց «խոժոռարար» թերթերը. Ռադիշչևի գիրքն այրեցին, Նովիկովին բանտարկեցին Շլիսելբուրգի ամրոցում, իսկ Ռադիշչևին Պետրոպավլովսկի ամրոցում, ապա նրան աքսորեցին Սիբիր, վորտեղ նա ինքնասպանություն գործեց*)։

## 2. ՊՈՒԳԱՉԵՎՇՉԻՆԱ

«Հին կարգի» համար խրոխտ նախազգուշացում էր ներկայացնում Պուգաչևի ապստամբությունը (1773–1775 թ.), վորն ընդգրկել էր համարյա ամբողջ Ուրալը։

Պուգաչևշչինան մի իսկական գյուղացիական պատերազմ էր, վորն ուղղված էր կալվածատերերի ճորտատիրական անտեսության ընդլայնման դեմ։ Այս պատերազմի պատճառը ճորտերի չհատգործման ուժեղացումն էր, վորը հետևանք էր կալվածատիրական անտեսության ապրանքայնության զարգացման, յեվրոպական շուկաներում ռուսական հացի պահանջը գոռհզանալու։

Շարժումն սկսվեց Ուրալում և ընդգրկեց Ուրալի կազակներին, Ուրալի գյուղացիներին, վորոնք կցված էին գործարաններին (այսպես կոչված «պոսեսիոն» կամ կցված), այլազգիներին՝ Թաթարներին, բաշկիրներին, կալմիկներին, մարիյցներին, մորդվիներին։ Ուրալի կազակները վոխոխական ճորտեր էին, վորոնք Ուրալում ապատ ավանդներ էին հիմնել և կառավարությունից վորոշ արտոնություններ ստացել այն պայմանով, վոր սահմանամերձ տափաստաններում զինվորական պահակային ծառայություն կրեն, նրանք դվխավորապես զբաղվում էին ձկնորսությամբ և ապրած ձկները վաճառում առևտրականներին։ Կազակների մեջ գայրույթն ուժեղանում էր լինչպես կառավարության դեմ, վորը նրանց մեծ հարկատվության էր յենթարկել, այնպես և վաճառականների ու իրենց ավազների դեմ, վորոնք մեծ ոգուտներ էին քաղում աղի և ձկան առևտրական գործարքներից։ «Պոսեսիոն» գյուղացիներ էին կոչվում այն գյուղացիները, վորոնք կցված էին գործարաններին. հաղարավոր ուրալցի գյուղացիներ, կարված իրենց ընտանիքներից, աշխատանքի և կյանքի տաժանակիր պայմաններում աշխատում էին մետաղագործական գործարաններում և ամրոցների կառուցման վրա, անտարապատ յերկրաշարժը զարձնելով բարեկարգ արդյունաբերական ձեռնարկներ։ Թուլի արտադրության զարգացման հետևանքով 30-ական և 40-ական թվականներին ազնվականներն ու վաճառականները վերցնելով արքունական գործարանները «պոսեսիա»-ով (յերկարատև կապալով), ավելացնում են արտադրությունը կցելով այդ գործարաններին հարյուրավոր և հազարավոր նոր գյուղացիներ, վորոնց այս նպատակով վտարում էին կենտրոնական չերնոզեմյան գավառներից, գործարաններում թալանարարությունը, վորոնք սահմանելով մի տաժանակիր ռեժիմ գյուղացիների հետ վարվում էին, իբրև ստրուկների բանվորները վորոշված հանգստի

*) Տես հավելված № 1։

ժամեր չունեին, ստրկանքներ եին վճարում լրիվ չկատարած աշխատանքների համար, հիվանդների ու մեռնողների համար, յենթարկվում եին սոսկալի տանջանքների։ Այլազգիներին մեծ նեղություններ եին պատճառում թե պաշտոնյաները և թե ռուս վաճառականները. նրանցից մեծամեծ հարկեր եին վերցնում, բանի կիրպով նրանց քրիստոնյա դարձնում, հին հոգեհատներից զաղթեցնում եին անմարդկային տանջանքները. Լշխանիկների և ունևորների ոգնությամբ ռուս վաճառականները ճորտային դրության մեջ եին պահում բաշկիրներին, կալմիկներին, կիրգիզներին, վորոնցից չնչին արժեքով անասուններ ու մորթեղեններ եին գնում և վաշխառական տոկոսներով դրամ, հաց ու ապրանքներ պարտք տալի։

XVIII դարի վերջին Ուրալը բառի բուն նշանակությամբ դարձել եր ռուսական առևտրական կապիտալի զաղութը. ռուսական թուլչի և յերկաթի աճող պահանջը ուժեղացնում եր գյուղացիների և այլազգիների ճորտական պրոցեսը, բռնագրավելով դրանց մանր անտեսությունները և իրենց ստրկական դրության հասցնելով։ Ակադեմիկոս Մ. Ն. Պակրովսկու կարծիքով ճորտացումն Ուրալում «կատարվել է մի սերնդի աչքի առաջ, այսինքն՝ զարհուրելի արագությամբ»։ «Պուգաչևի չարժման նպատակն է յեղել,—գրում է նա,— թոթափել ինչպես գյուղատնտեսական կոմունության կալվածատիրական կալվածքներում, այնպես և արդյունաբերական կոմունության գործարաններում։ Այն ազատությունը, վորի մասին գրում եր Պուգաչևն իր մանիֆեստներում, ունեցել է վորոշ կոնկրետ բովանդակություն. դա ճորտատիրական



իրավունքից ազատվելն եր։ Ինքը՝ «հավիտենական ազատություն» տերմինը «հավիտենական բերդի» անմիջական անտիթեզն է։ Գյուղացիները վոչ միայն ծնվում եին իրրև ճորտեր (крепостные), այլ և ճորտացվում եին ցարական հրամաններով։ Գյուղացիներին հարկավոր եր տալ ազատություն, վոր այսուհետև այդպիսի հրամաններ այլևս չեն լինել։

Դրա համար էլ միանգամայն հասկանալի են ամբողջ XVIII դարի ընթացքում բաշկիրյան և կիրգիզյան չրջաններում տեղի ունեցող «բունտերի» և ապստամբությունների պատճառները։ 1773 թվին վոզջ Ուրալում լուր տարածվեց, վոր կայսր Պյոտր III-ը «հրաչքով ազատվելով մահվանից» (փաստորեն նա սպանվել եր 1762 թվին) յերևացել է կազակների մոտ և հորդորում է կազակներին, գյուղացիներին, բաշկիրներին և ուրիշ այլազգիներին հավաքվել իր դրոշի տակ ազատություն և հող ձեռք բերելու համար։ Այս անվան տակ հանդես յեկող Դոնի կազակ Եմելյան Պուգաչևն իր «մանիֆեստներով» չնորհում եր կազակներին՝ «գետ և հող, խոտ և ծով, դրամական ռոճիկ և ուտելիք, կապար և վառոդ և հավիտենական ազատություն», իսկ բաշկիրներին խոստանում եր իրավունք տալ ազատորեն ոգտվելու հողերով, անտառներով, ջրերով ու ձկնորսությամբ, դրամական ռոճիկով և պարենով, և ազատվում եր նրանց կրոնական համոզմունքների ազատությունը*)։

Կազակների, գյուղացիների և հանքագործարանային բանվորների ակտիվ աջակցությամբ Պուգաչևին հաջողվեց կարճ ժամանակամիջոցում կազմակերպել

*) Տես հավելված №2։

ալել մեծաքանակ զորք, վորն սկզբում նա չարժեց դեպի հյուսիս, իսկ այնուհետև ցարական զորքերի դեմ մի քանի հաղթանակներ տանելուց հետո, նա ուղղվեց դեպի Վոլգա՝ կենտրոնական Ռուսաստան մտնելու մտադրությամբ: Ցարական կառավարությունը չափազանց մեծ ուշադրություն էր դարձնում այդ ապստամբությանը և ուղարկեց մեծ ռազմական ուժեր, վորոնք կանչվել էին հարավային ճակատից (հենց նոր էր վերջացել պատերազմը Ծանկաստանի դեմ). նա ըմբռնում էր, վոր Պուգաչևի հետագա չարժումը կարող էր դյուղացիական մասսայական ապստամբություններ առաջացնել և ազնվական-կալվածատիրական պետության համար լուրջ սպառնալիք ծառայել: Գլխավոր հրամանատար Բիբիկովն էր մի զեկուցման մեջ գրում էր՝ «վոչ թե թշնամին և վտանգավոր, ինչպիսի բազմություն էլ նա ներկայացնի, այլ ժողովրդական տատանումը, ապստամբության ու խռովության վոգին»:

Սակայն Ցարիցինի մոտ (այժմ կոչվում է Ստալինգրադ) Պուգաչևը չախչախվեց և փախավ կազակների մոտ, բայց չուտով կազակները նրան հանձնեցին կառավարությանը, վորը յերկաթե վանդակում նրան բերեց Մոսկվա և մահվան պատժի յենթարկեց (1775 թվին):

Ապստամբությունը ճնշվեց անողոք խստությամբ. հազարավոր մարդիկ վոչնչացան տոսկալի տանջանքներից, մահվան պատիժներից և բանտերում. ամբողջ գյուղեր գետնի հետ հավասարեցրին: Գյուղացիները չարունակեցին առաջվա նման ծանր զրկություն ապրել:

Բայց կալվածատերերը մինչև մեռապետության վախճանը հիշում էին այս ապստամբությունը: Ազնվական պատմաբանները զրպարտիչ պատմություններ էին տարածում այս «անխնամատ խռովության», «անգթություններին» մասին: Պուգաչևի ապստամբության իրական բնույթն սկսեց պարզվել ամենավերջին ժամանակներս՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:

Պուգաչևի չարժման անհաջողությունների պատճառը կայանում էր վոչ թե նրա տարատեսիլ սխալների մեջ (նրա չտապ չարժումը դեպի արևմուտք, առանց բավականաչափ ամրապնդելու չհաած հաղթանակները, և նույնքան չտապ հետադարձը, դեպի հարավ), ինչպես այդ մասին գրում էին բուրժուական պատմաբանները. անհաջողությունների պատճառը ըղխում է հենց իրեն չարժման բնույթից, վորը համախմբել էր տարբեր սոցիալական խմբակներ, վորոնք պայքարում էին իրենց տեղական չահերի համար, թշնամաբար էին վերաբերվում միմյանց և նույնիսկ հենց չարժման ընթացքում միմյանց դեմ կռվի բռնվում:

Որինակ, բաշկիրները ավերում էին գործարանները, համարելով դրանց իրենց քայքայող թշնամիներ, և դրանով իսկ զրկում էին Պուգաչևի բանակը տեխնիկական ոգնության բազայից (գործարանային բանվորները պատրաստում էին բանակի համար թնդանոթներ և ռումբեր). բաշկիրական ահագին զորաբանակը կազանի մոտ հեռացավ Պուգաչևից հրաժարվելով չարունակել կռիվն իր յերկրի սահմաններից դուրս: Գյուղացիական զանգվածն աջակցում էր Պուգաչևին կալվածատերերի իշխանությունից ազատագրվելու լոզունգներով, բայց նա թշնամաբար էր տրա-

մաղրված դեպի պրոլետարացած «պոսիևսխոնները» և դեպի գործարանները: Իրար թշնամաբար վերաբերվող բաշկիրների, կիրգիզների, թաթարների, կալմիկների միջև տեղի էին ունենում լուրջ ընդհարումներ, որոնց իշխաններն ու կուլակները աշխատում էին ոգտագործել չարժումն իրենց ոգտին մրցակիցների դեմ պայքարելու նկատառումներով. բաշկիրներն ու կիրգիզները թշնամական տրամադրություններ էին ցուցաբերում նաև գործարանների բանվորների հանդեպ:

Պուգաչևի գլխավարած ապստամբությունը, ինչպես և Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունները ցույց են տալիս, որ գյուղացիական զանգվածները առանց պրոլետարիատի գլխավորության չեն կարող ազատագրվել իրենց կեղեքիչներից: Մարդկության պատմության ընթացքում բազմաթիվ գյուղացիական ապստամբություններ են յղել, բայց նրանք բոլորը վերջացել են կամ լիակատար պարտությամբ և կամ շահագործողների մի այլ դասակարգի չնչին ընկնելով (ինչպես որինակ բուրժուազիայի). «Քանի որ մանրգյուղացիների միջև միայն տեղական կապը գոյություն ունի, քանի որ նրանց շահերի միատեսակությունը չի առաջացնում ազգային կապ, որևիե հաղորդություն, որևիե քաղաքական կազմակերպություն նրանց միջև, նրանք դասակարգ չեն կազմում: Նրանք նույնիսկ ընդունակ չեն պաշտպանելու իրենց դասակարգային շահերը բառի իրական իմաստով պարլամենտում կամ ժողովում: Նրանք իրենք չեն կարող իրենց ներկայացնել, նրանց պետք է իրենց ներկայացնել, նրանց ուրիշները պիտի ներկայացնեն»



(Մարքս): Բայց յերբ գյուղացիական ապստամբությունները կատարվում են պրոլետարիատի և նրա ավանդարդ կոմունիստական կուսակցության գլխավորությամբ, այն ժամանակ նրանք միանգամայն ապահովվում են կալվածատերերի և կալիտալիստների շահագործումից:

1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը, յերբ գյուղացիները ընթանում էին պրոլետարիատի հետ դաշնակցած և նրա ավանդարդ կոմկուսակցության գլխավորությամբ, առաջին անգամ պատմության մեջ վերջ դրվեց այն բազմադարյան կեղեքմանը, որին յենթարկվում էին գյուղացիները կալվածատերերի կողմից:

ԽՍՀՄ մանր գյուղացիությունը կոմկուսակցության գլխավորությամբ այժմ՝ համաձայն կոլեկտիվացման հինգ վրա լուծարքի յե յենթարկում կապիտալիստական վերջին տարրերը՝ գյուղի կուլակներին: Կոլտնտեսություններում համախմբելով իր անջատված մանր տնտեսությունները, գյուղի չքավոր ու միջակ բնակչությունը կանգնում է սոցիալիզմի հիմնարկության ուղիի վրա, վորն ընդմիշտ կվերացնի հարստության բաժանումը դասակարգերի, աղքատության ու ապիտությունը, վորոնք ճնշում էին գյուղացիությանը նրա գոյության ամբողջ պատմության ընթացքում:

## 3. ԱԶԱՏԱՄԻՏ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՑԵԼՈՒԹՆԵՐԸ: ԳԱՂՏՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԸ

Արդյունաբերական զարգացման հաջողությունները նպաստեցին ռուսական բուրժուազիայի ծագմա-

նը, վորը հանդես չեկավ բուրժուական ռեֆորմների պահանջներով: Ռուսական բուրժուազիան կազմվեց չերկար տասնամյակների ընթացքում ընդունելով իր կազմի մեջ վոչ միայն վաճառականներ և հարստացած «ազատ արճակվածներ» (այսինքն՝ դյուղացիներ), այլ և քայքայված ազնվականներ և խոշոր պաշտոնյաներ:

Այն կալվածատերերին, վորոնք արտահանման (եքսպորտի) համար հացի խոշոր մթերումներ չէին կատարում, գործարաններ և ֆաբրիկներ կառուցում, հարիւրավոր չէին ազատ բանվորական ձեռքեր և այնպիսի կարգեր, վորոնք հեշտացնում են բանվորական ուժի ներգրավումը և ապահովում արդյունաբերության հետագա զարգացումը:

Ռուսական բուրժուազիայի առաջին քաղաքական չեղուլթները, վորոնք տեղի ունեցան առաջին տասնամյակներում, գլխավորապես ուղղված էին ճորտատիրական իրավունքի դեմ:

XIX դարի սկզբում ֆարսական մինիստր Հռյանէ Սպերանսկին, ծնվող բուրժուազիայի ցանկությունների տիպիկ արտահայտիչը, որինակ, գրում էր՝ —«Սեփականատիրություն, ընչպիսի հակասություն, ցանկանալ գիտություն, վաճառականություն, ու արդյունաբերություն և արգելել դրանց ամենաբնական հետևանքները. ցանկանալ, վոր բանականությունը ազատ լինի, իսկ կամքը չղեկավված»:

Այսպես կոչված «Հայրենիքի պատերազմին» (1813—1825) հետևող տարիները ամենաստոկայի ռեակցիայի տարիները էին: 1812 թվի պատերազմը ռուսական կառավարությանը մոտրեց Ֆրանսիայի դեմ կռվող չեվրոպական պետությունները կոալիցիայի մեջ (դրանից առաջ էլ ռուսական կառավարությունն աջակցում էր Պրուսիային և Ավստրիային Ֆրանսիական հանրապետության դեմ նրանց վարած պայքարում): Ռուսական զորքերը մասնակցեցին Լայպցիգի մոտ տեղի ունեցած պատմական «ազգերի կռվին» (1813 թվին), վորտեղ Նապոլեոնի զորքերը ջարդվեցին և վորից հետո կոալիցիոն զորքերը մտան Փարիզ: Այս կոալիցիայի առաջնորդները 1815 թվի աշնանը կնքեցին «Սրբազան դաշն», վորի նպատակը հեղափոխական չարժման դեմ պայքարելն էր. Ալեքսանդր I կայսրը «Սրբազան դաշնի» ակտիվ դեկավարներից մեկն էր. «Հայրենի պատերազմը», վորը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով, : ուժեղացրեց ռեակցիոն ղինված կառավարական չրջաններում՝ ազնվականության և պինվորականության մեջ, վորոնք ոգտագործում էին ռազմական արշավանքները իրրև յեկամտի աղբյուր և իրրև ավելի ևս ճորտացնելու դյուղացիական բնակչության: 1812 թվի պատերազմից հետո կառավարական չրջանները կտրականապես բռնում էին ռեակցիայի ճանապարհը, վորովհետև պատերազմը դրսևորեց դյուղացիների, քաղաքային արհեստավորների և մեչչանների (քաղքենիների) անհանգիստ տրամադրությունը, ինչպես և ազատամիտ զարգացումն ազնվականության և բուրժուազիայի մեջ: Հակառակ հին բուրժուական պատմագրության տրադիցիայի, 1812 թվի պատերազմը բնակչության մեջ վոչ մի ժողովրդականություն չեր վայելում: Ժանանախկինները (գլխավորապես ազնվական – կալվածատերերը) միահամուռ վկայում են, վոր պատերազմը ժողովրդական մասսաների վերաբերմամբ «ա-

մենասարսափելի դրդռիչ» դերը կատարեց և ժող գյուղացի «պարտիզաններըը» սպանում և ավինախողող եյին անում միայն Ֆրանսիայի մարդոյրներին (նողուստով դրաղվող ղինվորներին), իսկ Ֆրանսիական դորքերի հետ կռվելիս հայրենասիրական վոգևորություն չեյին հայտարերում, բայց դրա փոխարեն համարյա ամենուրեք մեծ վոգևորությամբ («համաճայնությամբ») դուրս եյին գալիս իրենց կալվածատերերի և գյուղական վարչությունների դեմ:

Հաղվադյուտ չեյին այն դեպքերը, յերբ գյուղացիներն այնպիսի լուրջ դիմադրություն եյին ցույց տալիս իշխանությանը, որ կառավարությունը դիմում եր ղինված ուժի ողնությանը. որինակ, 1812 թ. դեկտեմբերին հատուկ ուղարկված բատալյոնները ճնշեցին վալվածատիրական գյուղացիների «խռովությունները», այն գյուղացիների, վորոնց Ինսարում, Սաբանակում և Զիմբարում մտցրել եյին Պենզայի հետապահ բանակը: Մասսայական ապստամբությունների յերկյուղը դրդեց կառավարության չհապղ կարդով արճակել ուկրաինական «ժողովրդական հետապահ դորքը» (կամ միլիցիան):

Պատերազմից հետո, լիբերալ դաղափարները Ռուսաստանում սկսեցին խիստ հալածանքների յենթարկվել: Հիմնվեց դրաքննություն, վորը մտքատում եր մամուլի «ազատության» ամեն մի արտահայտության դեմ. «ազատությունը» արմատախիլ արվեց նաև բարձրադույն դպրոցում, վորտեղից վտարում եյին ազատամտության մեջ կասկածվող պրոֆեսորներին, վորտեղ դաստիարակման ծրագրից հանեցին փիլիսոփայությունը և քնական գիտությունները, փոխարինելով դրանք աստվածաբանությամբ, վորտեղ ուսանողներին հարկադրում եյին խմբովին աղոթքներ յերդել և պինվորական քայլումներ կատարել այն ժամանակվա «քայլվածքի» ըստ կանոններով (դա մի միջոց եր պինվորականների ուշադրությունն արտաքին վարժանքով քաղաքականությունից կասեցնելու համար, վորի արտացոլումը մենք դանում ենք դեղարվեստական դրականության մեջ, ինչպես որինակ, Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» հայտնի կատակերգության մեջ ցուցահանած Սկալոզուբի տիպի մեջ):

Հետագիմության ամենաապրեսիվ արտահայտիչներից մեկի՝ ռազմական մինիստր Արակչեևի դեկավարությամբ հիմնվում են «պինվորական ավաններ», վորպեսզի այդ ճանապարհով քաղաքացիական իշխանությունների անորինությունից հետացնեն գյուղացիական դանգվածները. մինչ այդ ճորտությունից ազատ պետական գյուղացիներին դարձնում եյին պինվորական ավանների բնակիչներ, վորոնք պարտավոր եյին թե իրենց «գյուղական գործն անել», թե դորքում ծառայել, նվիրելով իրենց համարյա ամբողջ ժամանակը պինվորական չարքային վարժությունների, ռազմական վարչության աշխատանքներին ու ծառայություններին, մի հանդամանք, վորը բացատարար պիտի անդրադառնար նրանց գյուղատնտեսական աշխատանքների վրա: Վորքան էլ խիստ լինեյին պինվորական ավաններում տիրող կարգերը, նույնքան էլ արագությամբ յերևան պիտի գային «խռովությունները», վորոնք Բուգի (Խերսոնի նահանգ), Զուգույեվի (Խարկովի մոտ) և Նովգորոդի ավաններում 1818 և 1819 թվականներին ընդունեցին ապստամբությունների

քնությ. այս ապստամբությունները ճնշվեցին ռազմական ուժով և մասնակիցները պատժվեցին ամենադաժան միջոցներով, վորոնք հորինել էր ինքն Արակչեևը—դատապարտվածը սիրտ անցներ յերկու կողմից կանգնած զորաշարքի միջով, վորը ժամանակ առ և ձախ կանգնած զինվորները մուրճերով նրան սիրտ ծեծելին (պատժի այս ձևը զինվորները «փողոց» էլին անվանում). այս ձևով չատերին «վաղեցրել էլին» 1000—2000 զինվորներից բաղկացած չարքի միջով և տանջալից մահվան յենթարկել:

Սակայն, ծայր առած հետադիմական չարժումն, ինչպես վերևը տեսանք, նպաստում էր ազնվականների և մանավանդ զինվորականների չրջանում ընդդիմադիր տրամադրությունների զարգանալուն:

Զինվորականների առաջին յելույթը, մխալեստության դեմ ուղղես «Սեմյոնովյան պատմությունն» էր: 1820 թվի սեպտեմբերին Պետերբուրգում դտնվող Սեմյոնովյան գվարդիական գնդի զինվորները բողոքելին դահակոծելու սիստեմի դեմ, վոր մտցրել էր նոր հրամանատար գնդապետ Շվարցը կարգապահության նկատառումներով: Ցելույթն անկազմակերպ բնույթ էր կրում և դաժանաբար ճնշվեց. զինվորներին նետեցին զինվորական բանտերը կամ տեղափոխեցին այլ զինվորական մասերը. սպաներին (նրանց մեջ կային ապագա դեկաբրիստներ, ի թիվս վորոնց Սերգեյ Մուրավյով—Ապոստոլ) տեղափոխեցին բանակային գնդերը՝ զրկելով արձակուրդներից և բարձր աստիճաններ ստանալու իրավունքից: «Սեմյոնովյան պատմությունը» ինքն ըստ ինքյան մի աննշան բռնկում էր, վորը կապված էր զինվորական դիսցիպլինայի և «չպիտսիկայի» (քայլվածքների) սուտակի կողքերի հետ. սակայն, նա հայտարերեց այն ընդհանուր անբավականությունը, վոր զոյություն ուներ սիրող ռեժիմի դեմ. քննությունը պարզեց, վոր Պետերբուրգի զարնիզոնի գնդերում ծագած «ընդհանուր» անբավականությանը մասնակցում են «հասարակության» մեջ չատ անվանի անձնավորություններ (դրանց թվում նաև Ալեկովի կալվածատեր Կարապիևը, վորն առաջ էլ հայտնաբերել էր իր ոպորտունիզմը): Քննությունը ղեկավարող մինիստր Կոչուբեյը դրում էր ցարին, վոր զինվորների մեջ պրոպագանդը մղվել է դեևտա Ֆրանսիայում յեղած ժամանակ, վորտեղ նրանք հետևել են թերթերին և քաղաքական կյանքին:

Քննությունն ի միջի այլոց պարզեց, վոր «խոսակցությունները» և «դեկավարները» պատկանում են զորքի մեջ զոյություն ունեցող դաղտնի ընկերություններին: Այդ ընկերություններից ամենից վաղ հիմնվել էին «Փրկության Միությունը» 1816 թ. և «Բարեգործության Միությունը» 1818 և 1820 թվերին. վերջինս արդեն բաժանմունքներ ուներ Մոսկվայում, Նիժնի-Նովգորոդում և Տուլչինում (Ուկրաինա): Ներքին տարաձայնությունների հետևանքով «Բարեգործության Միությունը» 1821 թվին քայքայվեց և նրա մնացորդներից կազմակերպվեցին յերկու նոր ընկերություններ—«Հարավային» և «Հյուսիսային»: Ուկրաինայում գործող հարավային ընկերության դեկավարությունը պատկանում էր դիրեկտորիային, վորի գլուխն էր կանգնած Պեստելը: Այս ընկերությունը, վորն իր չարքերն էր գրավել բուրժուազիայի ազնվական ընտանիք-

նների ծագած ոպաներ, աչքի էր ընկնում իր ավելի մեծ արմատականությամբ: Ինքը Պետեըը և նրա մեծ ճավոր ընկերները վճռական հանրապետականներ էին: Պետեըի ծրագիրը (որը չափազանց «Ռուսական Պրավդայում» զետեղված նրա հոդվածում), ինչպես Մ. Ն. Պակրովսկին և ուրիշներ,—«սարսափելի մանրբուրժուական ծրագիր է», իսկ ինքը Պետեըը դեպի հավասարությունն ունեցած իր ձգտումներով (հողի սոցիալիզացիան և նրա բաժանումը միանդամայն հավասար հողամասերի, դեպի «հարաբերություններին արիստոկրատիան» տածած ատելությունը) բնորոշ յակոբինյան եր: Պետեըի և հարավայիններին տակտիկան հեղափոխական տակտիկա էր, նրանք ուզում էին ըմբոստացնել ցարի դեմ ողջ մի ամբողջ կուսակցություն, այնուհետև Պետերբուրգի զինուժի և նավատորմիղի մեջ ապստամբություն առաջացնել ու հեղաշրջում կատարել անպայմանորեն կատարելով Ռոմանովների ամբողջ դինաստիան: Ազգային հարցում Պետեըը դրսևորում էր մեծապետական չովինիզմ (սա մի բնորոշ գիծ է նրա դասակարգի մարդկանց համար), մանր ազգությունների կարիքների արհամարհանք և ամենավատթար հրեայատյացություն:

Գվարդիական ոպաներից կազմված Հյուսիսային ընկերության գլուխն էր կանգնած Նիկիտա Մուրավյովը (գլխավոր շտաբի կապիտան) և բանաստեղծ Կոնդրատեյ Ռևելեյվը, որը պաշտոնավարել էր ռուս-ամերիկական առևտրական ընկերության մեջ և այդ պատճառով էլ քաջ ծանոթ էր բուրժուազիայի մտադրություններին: Հյուսիսայինների քաղաքական ծրագիրը պատրաստում էր ազնվականության առաջադեմ չինովնիկների իշխանությունը, վերանք բուրժուազիայի հետ դաշինք կռնելու ուղիներ էին վորոնում:

Եթե նաև գաղտնի կազմակերպությունների անդամների մի չերորդ խմբակ, որն Ուկրաինայում հիմնեց այսպես կոչված «Միացյալ Սլավոնների Ընկերությունը»: Նրա մեջ մտնում էին բանակային սպաները, վորոնք ծագում էին ազնվականների վոչ անվանի տոհմերից, մանր կալվածքներ ունեցող կամ ամենևին հաճախ կալվածատուրկ ազնվականներից, մանր պաշտոնյանների կամ ղինվորներից մեչչաններ գարձածների վորդիներից: 20-ական թվականների դավաղրների ուժերի դասավորման մեջ «սլավոնները» կազմում էին ծայրահեղ ձախ թևը: Նրանք լայն ու արմատական պրոպագանդա և ագիտացիա էին մղում ղինվորների և գյուղացիների մեջ (մի բան, վոր չէին անում վոչ հարավայինները և վոչ էլ հյուսիսայինները. սրանք ավելորդ էին համարում «ղինվորներին նախապատրաստելը»), և պատրաստվում էին ղինված ապստամբության միջոցով գրավել իշխանությունը: Ինչպես ընկ. Պակրովսկին և նշում, իրենց դեմոկրատիզմի և յակոբինիզմի մեջ սրանք ավելի արմատական էին, քան հարավայինները. նրանք հետևողական անաստվածներ էին և մաքառում էին կրոնական նախապաշարմունքների դեմ:

1825 թ. դեկտեմբերի 14-ին (հին տոմարով) Պետերբուրգում Սենատի հրապարակում «հյուսիսայինները» հարկադրված յելույթ կազմակերպեցին. նրանք ստիպված էին այդ յելույթն անելու, քանի վոր նրանց դավադրությունը ցարական գործակալների կողմից արդեն հայտաբերվել էր: Դեկտեմբերի 14-ին և դրան հաջորդող օրերին «հյուսիսայինները» վերջնականապես

ջարդվեցին: Ուկրաինայում «հարվածիները» հանդես եկան ավելի կազմակերպված. Վասիլկովում (Կիևի նահանգ) դեկտեմբերի 26-ին Ջերնիգովյան հետեւոտն գնդի մի մասը Սերգեյ Մուրավյով-Ապոստոլի հրամանատարությամբ «արշավանքի» դիմեց: Ապրոտամբները չունեին վոչ պործողության վորոշ ծրագիրը, վոչ էլ մարշրուտ, վոր համաձայնեցրած լիներ յելույթի պատրաստված մյուս դինվորական մասերի հետ, դրանք յենթադրական մի ուղղություն բռնեցին և ճանապարհին յերկու անգամ փոխեցին այդ ուղղությունը: Նրանց դեմ ուղարկված կառավարական զորամասն առանց վորևե դժվարության ջարդեց ապստամբներին, վորոնց շարքերը ասանկին և ցրվեցին հենց առաջին թնդանոթաձգություններից: Հարավում նույնպես լուծարքի յենթարկվեցին բոլոր քաղաքական խմբակները, ընդ վորում Բելայա Ցերկվում (Կիևի նահ.) հատուկ հանձնաժողովը պատվիրելով դինվորներին (սպաներից առանձին) հարյուրավոր մարդկանց տաժանակիր աշխատանքների կամ դինվորական շարքերով պանակոծության «վռնդեցնելու»*) դատապարտեց:

Պետերբուրգում գերագույն քննական դատարանը խստագույն պատիժների յենթարկեց դեկաբրիստներին. դրանցից հինգ հոգու—Պեստելին, Մուրավյով—Ապոստոլին, Ռիլեյեվին, Կախովսկուն և Բեստուժեվ—Ռյումինին կախաղան բարձրացրին (1826 թ.), մյուսներին զանազան ժամկետներով տաժանակիր աշխատանքների դատապարտեցին, բայց նրանց մեծ մասը Սիբիրից վերադարձավ միայն 30 տարի անց, յերբ արդեն գահ էր բարձրացել Նիկոլայ I-ի վորդին:

*) Տես հավելված № 3:



ժամանակակիցները և հետագայում ազատամիտ բուրժուազիայի գրողները դեկաբրիստների չուրջը հեղափոխական լեգենդա յերն ստեղծել, իբրև «մարդկության համար» ազնվորեն նահատակվածների պրոտակով. դեկաբրիստներին այս ձևով համերժացնելու մեջ ամենից շատ մեղավոր է Հերցենը, վորը «Պոլյարնայա Զվեզդա»-յում և «Կոլոկոլ»-ում զանյլեցուցիչ գովաբանություններ եր շռայլել դեկաբրիստների հասցեին: Իսկ մարքսիստական պատմագրությունը վաղուց արդեն ավել է դեկաբրիստների պատմական դերի միակ ճիշտ գնահատականը և վորոշել է նրանց տեղը Ռուսաստանում կատարված դասակարգային պայքարի պատմության մեջ: Դեկաբրիստները վոչ այլ ինչ են, յեթե վոչ՝ միահեծանության դեմ բուրժուազիայի վարած պայքարի դրամատիկ եպիզոդներից մեկը: Նրանց սերտ կապը և գաղտնիարարքսիստական մոտիվությունը խոշոր ու մանր բուրժուազիայի հետ հաստատված և վերջերս հրատարակված վավերագրերով հաստատված է, վոր գաղտնի ընկերությունների բուրժուական ելեմենտները, վորոնք քանակությամբ թույլ եյին, բայց վորակով զորեղ,—մեծ ազդեցություն են ունեցել այս ընկերությունների քաղաքական ծրագրի վրա. դրա համար էլ, ինչպես ընկ. Պոկրովսկին և ասում.—«Այս ծրագրի մեջ սոցիալիստական կամ նույնիսկ ուտոպիստական վոչ մի բան մենք չենք գտնում»:

Արդարացի եր Լենինը, յերբ Դեկաբրիստների մասին ասում եր, թե նրանք ապստամբ ազնվականներ եյին, վորոնք միահեծանության դեմ իրենց վարած պայքարում մենակ եյին մնացել.—«Նեղ և այդ հեղա-

փոխականների չրջապիծը, նրանք շատ հեռու են ժողովըրդից»*):

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ուսումնասիրելով «հին կարգի» քայքայումը Արևմտյան Եվրոպայի յերկրներում, ինչպես և այն դեպքերի ընթացքը, վորը վերջացավ արդյունաբերական կապիտալիզմի հաղթանակով, մենք այժմ պիտի ծանոթանանք նույն պրոցեսների զարգացմանը Ռուսաստանում: «Հին կարգի» կործանումը, ինչպես նաև արդյունաբերական կապիտալի ձևավորումը Ռուսաստանում կատարվել և ավելի դանդաղ, քան Արևմուտքի յերկրներում. Ռուսաստանում չի յեղել վոչ արդյունաբերական հեղափոխություն, վոչ էլ բուրժուական հեղափոխություն, ինչպես այդ տեղի ունեցավ 40-ական թվականներին Արևմուտքում. դանդաղ ձևավորվող բուրժուազիային հարկավոր եր ուժերի մեծ լարում կատարել, վորպեսզի XIX դ. 60-ական թվականներին կարողանար վերջնականապես լուծարքի յենթարկել «հին կարգը»— ֆեոդալական-ճորտատիրական հասարակարգը: Ռուսական բուրժուազիայի առաջին քաղաքական յելույթները և XVIII—XIX դարերում տեղի ունենած գյուղացիական առաջին ապստամբությունները չհանգեցին նույնիսկ «կիսավարտ» բուրժուական հեղափոխության. Դեկաբրիստների ապստամբությունը ճորտատիրական կարգերից բղխող բուրժուական դժգոհության լոկ մի բնկում եր և հենց պատմության կողմից դատապարտված եր անհաջողության:

*) Տես հավելված № 4:



Ներկայ խնդիրը բաժանվում է յերկու բաժնի: I բաժնում պիտի ուսումնասիրենք «հին կարգի» կործանման դինամիկան, իսկ II բաժնում—Ռուսաստանի ազատամիտ բուրժուազիայի առաջին յելույթների բնույթն ու իդեալոգիան:

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպիսի դործոններ (ֆակտորներ) արագացրին հին կարգի կործանումը Ռուսաստանում 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին:

2. Ի՞նչպիսի սոցիալ-անտեսական նախադրյալներ ուներ պուգաչևչինան և ինչումն են կայանում նրա պատճառները:

3. Ի՞նչպիսի պահանջներ առաջադրեց ազատամիտ «լուսավորված» ազնվականությունը 18-րդ դարի վերջը:

4. Ծնվող կապիտալիստական հասարակության վո՞ր դասակարգերի չահերն եյին ներկայացնում 20-ական թվականների դաղտնի ընկերությունների կազմի մեջ մտնող դանազան խմբավորումները:

5. Ինչո՞ւ դեկաբրիստների չարժումը դատապարտված եր ձախողության:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՑՈՒՆ

М. И. Покровский. Очерки по истории революционного движения в России XIX и XX веков.
А. Е. Пресняков. 14 декабря 1825 г.
Н. Горбагевский. Записки декабриста.

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՑՈՒՆԻՑ

Ю. Тынянов. Кухля. Повесть о декабристе.
Его-же. Смерть Вазир Мухтара.
Н. А. Некрасов. Русские женщины.

## ՀԱՎԵԼՎԱԾ № 4

# 1. XVIII ԴԱՐԻ ԳՐՈՂՆԵՐԸ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

## 1. ՊԱՐՈՆ ԲԵԶՐԱԶՍՈՒՊԻ ՀԱՄԱՐ

Բեզրազսուզը*) ատատպում է մի հիվանդ համոզմունքով, թե դյուղացիները մարդ չեն, այլ գյուղային են. իսկ թե ինչ են դյուղացիները, այդ մասին միայն նա գիտե, վորովհետև այդ ճորտերը նրա սարուկներն են: Նրանց հետ նա ճիշտ այդպես էլ վարվում է, ժողովելով նրանցից ծանր տուրք, վորը բահրա է կոչվում: Ճերբեմն նրանց հետ վոչ միայն չի խոսում, այլ նույնիսկ իր ղլխի չարժմանն էլ չի արժանացնում, յերբ նրանք ալևևլյան սովորության համաձայն նրա առաջ գետին են վռնում: Այդ ժամանակ նա մտածում է.—«Ճես սեր եմ, իսկ նրանք իմ սարուկները. նրա համար էլ նրանք ստեղծված են, վոր նրանք ամեն մի տատասանք կրելով, գիշեր-ցերեկ աշխատեն և իմ կամքը կատարեն, հնազանդ՝ վճարելով բահրան. գիտենալով իմ և իրենց կարողությունը, իմ հայացքից անդամ նրանք պիտի դողան»: Ի լրումն սրա նա ավելացնում է այն, ինչ վոր ասված է դյուղացիների մասին — ճակատիդ քրտինքով կաշխատես քո հացը: Նեղճ դյուղացիները չեն կարող նրան սիրել իբրև իրենց հորը, այլ սարսափում են նրանից համարելով նրան իրենց բռնակալը: Նրանք գիշեր-ցերեկ աշխատում են, բայց չնայած դրան հազիվ հազ որվա պարենն են հանում, հազիվ հազ տիրոջ տուրքը վճարում: Նրանք մտածել անգամ չեն համարձակվում, թե սեփական մի վորևե բան ունեն և ասում են—սա իմը չե, այլ ատածունն է ու տիրոջը: Ամենաաբարձրյալն որհնում է նրանց ու վարձատրում, իսկ Բեզրազսուզը բոլորը տանում: Բեզրազսուզնոյ (անխելք), միթե՞ դու մոռացել ես, վոր քեղ ստված է ստեղծել, միթե՞ ի դեմս գյուղացիների՝ քո սարուկների, դու դարչում ես ինքդ քեզանից, միթե՞ դու չգիտես, վոր քո սարուկների և մարդկանց միջև ավելի մեծ նմանություն կա, քան քո և մարդու միջև: Պատկերացրու քո սարուկների դրությունը, դա ատանց ծանրաբեռնելու էլ ծանր է, քանի վոր դու գարչում ես նրանցից, վորոնք քո կրքերին հագուրդ տալու համար աշխատում են համարյա առանց հանգիստ ունենալու. նրանք մտածել անդամ չեն համարձակվում, վոր իրենք մարդիկ են. նրանք իրենց գատապարտյալներ են համարում՝ իրենց հայրերի մեղքերի համար, քանի վոր տեսնում են, վոր իրենց մյուս յեղբայրները կալվածատեր-հայրերի մոտ վայելում են յերանելի հանգստություն և վոչ վոքի յերջանկությանն աչքարհիս վրա չեն նախանձում, դա նրանից է, վոր նրանք բախտավորություն են ստացել իրենց տիտղոսից. դու մտածիր, թե քեզանից ինչպես պիտի գարչեն ճշմարիտ մարդիկ, ատածու մարդիկ, իրենց գավակների հայրերը և վոչ թե իրենց սարուկների բռնակալները, ինչպիսին դու յես:

*) Բեզրազսուզ անունը, վորը բառացի կնշանակի անմիտ կամ նախելք, հեղինակը գործ է ածել այլաբանորեն.
Թարգմ.

Նրանք զարչում են քեզանից, երբև մարդկային վիժվածքից, վորը սահմանված ստորադասությունը մի անտանելի ստրկական լուծ և զարճնում։ Իսկ ճեզրաղսուրը չարունակում է պնդել.—«Ճես տեր եմ, նրանք իմ ստրուկները. յես մարդ եմ, նրանք՝ գյուղացիներ»։ Այս վնասակար հիվանդության դեմ կա մի դեղատոմս—ճեզրաղսուրն ամենայն որ յերկու անգամ պիտի պննի տիրոջ և գյուղացու վոսկորները, և դա չարունակ պիտի անի, մինչև վոր դանի տիրոջ ու գյուղացու տարբերությունը։ (Նովիկովի «Տրուտնի» ժուռնալից)։

## 2. ՎԻՇՆԻՑ ՎՈԼՈՉՅՈԿ

Ինձ համար չատ հաճելի յեր տեսնել Վիշնեվոլոչկի ջրանցքը լեցուն բարկանավերով, վորոնք հացով և այլ ապրանքներով բեռնավորված պատրաստվում եյին շյուղն անցնել ու լողալ դեպի Պետերբուրգ։ Այստեղ յերևում եր յերկրի իսկական առատությունը և յերկրագործի ավելցուկները. այստեղ իր ամբողջ փայլով յերևում եր մարդկային արարքների հզոր դերդիչը՝ ընչաքաղցությունը։ Բայց յեթե առաջին հայացքից իմ բանականությունը զմայլվեց բարեկեցության տեսքից, այնուհետև մտքերս վերլուծելիս թառամեց իմ այդ ուրախությունը, վորովհետև հիշեցի, վոր բազմաթիվ հազարավորներ Ռուսաստանում երենց համար չեն աշխատում. այսպիսով, Ռուսաստանի չատ մասերում յերկրի առատությունն ապացուցում է նրա բնակիչների ծանր վիճակը։ Իմ ուրախությունը վերածվեց մի այնպիսի զայրույթի, վորպիսին յես զգում եյի ամառվա պահին անցնելով մաքսային նավահանգստի մոտով և դիտում եյի, թե ինչպես նավերը բերում են մեզ մոտ Ամերիկայի ավելցուկները՝ շաքարը, սուրճը, ներկերն ու այլ մթերքները, վորոնց վրա դեռ չեր չորացել քրտինքը, արցունքն ու արյունը, վորով նրանք վաղվել եյին մշակելու ժամանակ։

Ցերեվակայիր, մի անգամ ասում եր ինձ ընկերս, բամբակից մեջ լցրած սուրճն ու շաքարը քեզ պես մարդու հանգստությունն են խռովել, նրան պատճառել են իր ուժերից վեր մի աշխատանք, արցունքներ, հառաչանք, անարդանք ու մահ. հավակնիր դու անդուր գաղջրացնել կակորդա։—Այդ խոսքերն արտասանելիս նա սպառնալից դեմք ընդունեց, վորն ամբողջ կյանքս ցնցեց։ Ջեռքս դողաց և սուրճը թափվեց։

Իսկ դուք, ո՛վ Պետերբուրգի բնակիչներ, վոր անվում եք ձեր հայրենիքի առատ յերկրամասերի ավելցուկ բարիքներով, լինի դա մեծաշուք խրախճանքների ժամանակ, թե ընկերական խնջույքներին կամ թե մենակության մեջ, ամեն անգամ, յերբ ձեր հագեցման համար ձեռներդ մեկնեք հացի առաջին կտորին, մի պահ կանգ առեք և խորհեցեք։ Մի թե յես ձեզ նույնը չպիտի ասեմ, ինչ վոր ինձ ասաց բարեկամս Ամերիկայի արտադրությունների մասին։ Մի թե՞ քրտինքով, արցունքներով ու հեծությամբ չեն պարարտացել այն արտերը, վորտեղ այդ հացը բուսել է։ Ցերջանիկ եք, յեթե ձեր ճաշակած հացն այն հասկերից են առնված, վորոնք քաղել են արջունական կոչված արտերում կամ թե ծայրահեղ դեպքում՝ կալվածատիրոջը բահրա վճարողի արտում։ Բայց վայ ձեզ, յեթե այդ հացահատիկն ազնվականի չեմարանիցն է յեկել։ Նրա վրա մաբել է վչչան ու հուսահեկությունը, նրա վրա հավերժացել է

ամենաարժեքյալն անեծքը, որն իր գայրույթի ժամանակ ասել է՝ նզովվի յերկիրն իր արարքների համար: Ձաշակիեցեք, բայց չճռնչավորվեք ձեր վախճած աննղից: Դրա վրա ծանրացած է ապքատի դառն արցունքը: Մի մոռեցրեք այդ արցունքը ձեր չրթունքներին. ծոմ պահեք, թերևս սա լինի ճշմարիտ և ոգեշահ: (Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից դեպի Մոսկվա» գրվածքից):

## 3. 1774 Թ. ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՆ ՊՈՒԳԱՉՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԾ ՄԱՆԻՖԵՍՏՆ ԱԶՆՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՎՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ասածու վողորմությամբ մենք, Պյոտր Ֆերրորդ, կայսր և ինքնակալ համայն Ռուսաստանի և այլն, և այլն, և այլն:

Այս անվանական հրովարտակով և մեր արքայական ու հայրական վողորմածությամբ չնորհում ենք բոլորին, որոնք առաջ կալվածատերերի հպատակության տակ են յեղել, դառնալ սեփական մեր թագի հավատարիմ սորուկները և պարզևատրում ենք հինավուրց խաչով ու աղոթքով, գլխով ու մերուքով, ազատությամբ և արտոնությամբ հավիտենապես կալակներ լինելու, չպահանջելով ձեզանից դինվորական ծառայություն, գլխահարկ և այլ դրամական տուրքեր. պարգևատրում ենք հողերով, անտառներով, խոտհարքներով, ձկնորսարաններով և աղի լճերով առանց դնման և առանց տուրքի. ազատում ենք բոլորին այն հարկերից ու ծանրությունններից, որոնք առաջ չարաչար դրած— ազնվականներն ու քաղաքի կաշառակերները



տավորները պատճառում էին գյուղացիներին և ամբողջ ժողովրդին. ցանկանում ենք ձեղ հոգու փրկություն և յերկրիս վրա հանգիստ կյանք, որի համար վճռաբեր ազնվականներից մենք ճաշակել ու տեսել ենք աստանդականություն և բազմաթիվ արհավիրքներ: Իսկ քանի որ հիմա մեր անունն ամենաարժեքյալ աշխ գորությամբ ծաղկում է Ռուսաստանում, դրա չնորհիվ էլ մեր այս անվանական հրովարտակով հրամայում ենք—նախկին ազնվականներին, որոնք մեր իշխանության հակառակորդներն էն, կայսրության խռովարարները և գյուղացիներին քայքայողները, բռնել, գլխատել, կախել և վարվել նրանց հետ ճիշտ այնպես, ինչպես նրանք վարվում էին իրենց գյուղացիների հետ, մտանելով քրիստոնեական վոգին. գյուղացիների թշնամիներն և վճռաբեր ազնվականներին կոտորելուց հետո ամեն մի որ կդիա անդորրություն և հանգիստ կյանք, որը կտևի հավիտյան: Տրված է 1774 թվի հուլիսի 31-ին:

ՊՅՈՏՐ

## 4. ԼԵՆԻՆԸ ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մեծարելով Հերցենին, պարտորեն մենք տեսնում ենք յերեք սերունդ, յերեք դասակարգ, որոնք մասնակցել են ռուսական հեղափոխության մեջ: Նախ և առաջ ազնվականները և ազնվական-դեկաբրիստներն ու Հերցենը: Նել և այս հեղափոխականների չրջագիծը: Նրանք շատ հեռու են ժողովրդից: Բայց նրանց գործը չի կորել: Դեկաբրիստներն արթնացրին Հերցենին: Հերցենը հեղափոխական ագիտացիա ծավալեց: Այդ գործն ստանձնեցին, լայնացրին, ամրացրին, կռեցին ու

կոչեցին այլասաները— հեղափոխականները, սկսած Չերնիշևսկուց և վերջացրած «նարոդնայա վոլյայի» հերոսներով։ Մարտիկների շրջագիծն ավելի լայնացավ, նրանց կապը ժողովրդի հետ ավելի սերտ դարձավ։ Հերցենը նրանց անվանում էր՝ «ապագա փոթորկի յերիտասարդ նավավարներ»։ Փոթորիկը զանգվածների չարժումն է։ Մինչև վերջը միակ հեղափոխական դասակարգը կարող պրոլետարիատն անցավ նրանց գլուխը և առաջին անգամ բացահայտ հեղափոխական պայքարի հանեց միլիոնավոր գյուղացիներին։ Փոթորկի առաջին գրոհը 1905 թվին եր։ Հետևյալն ածում է մեր աչքի առաջ։ Մեծարելով Հերցենին, նրա որինակի վրա պրոլետարիատը սովորում է հեղափոխական տեսության բարձր նշանակությունը. նա սովորում է ըմբռնել, վոր անձնազոհությամբ հեղափոխությանը նվիրվելը և ժողովրդին հեղափոխական քարոզներով դիմելը չի կորչում նույնիսկ այն դեպքում, յերբ սերմանումն ամբողջ տասնամյակներով անջատվում է հնձից»։

(Լենինի հոդվածից՝ «Հերցենի հիշատակին», «Սոցիալ-Դեմոկրատ» № 26, 1912 թ. հուլիսի 8)։



# ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՐԱԳՐԱՖՈՒԹՅՈՒՆ

## 1861 ԹՎԻ ՌԵՖՈՐՄԸ

### 1. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 30–50–ԱԿԱՆ Թ. Թ.

Հերցենը, վորը դեկաբրիստներին խղճալացնում եր և նրանց քաղաքական նշանակությունը չափազանցնում, գրում եր.— «Անոնատի հրապարակում թնդանոթների վորոտան արթնացրեց մի ամբողջ սերունդ»։ Նա արդարացի եր, յերեթ ի նկատի ուներ ազնվականության համեմատաբար մի չնչին մասը, վորը ճգտում եր ազատագրության բուրժուական յեղանակին և պահպանում իր ազատամիտ գաղափարները «Նիկոլայի թագավորության ժամանակ Ռուսաստանի վրա կախված 30-ամյա մութ դիշերվա» տարիներին, այն ժամանակ, յերբ ազնվականության ճնշող մեծամասնությունը մի–ահեղ միապետությունը համարում եր իր բնական ներկայացուցիչն ու պահպանը և աջակցում եր Նիկոլայ I–ի հետադեմ քաղաքականությանը։

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը մի նպաստող հանգամանք եր՝ 30–40–ական թվականներին ազնվականների և այլազան ինտելիգենցիայի մեջ ազատամիտ և դեմոկրատիկ գաղափարներ հարուցելու համար։ Այս գաղափարների տարածման դեմ մեծ խոչընդոտ եին ներկայացնում քաղաքական տերրորը և գրաքննության խիստ արգելքները։ Այդ գաղափարները դեր-

ուղղված էին փիլիսոփայական վերացումների և պրակտիկան քննադատության ձևով:

Սկզբում խմբակների մեջ, իսկ այնուհետև մամուլի եջերում արծարծվող հասանքներից ամենից հետաքրքրականները սլավոնաֆիլությունն և արևմտամոլությունն էին: Սլավոնաֆիլությունը, որի կողմնակիցներ պատկանում էին խոշոր բուրժուական-լիբերալ գործչական աշխարհականության մի ամբողջ (Խոմյակով, Կիրեյեվսկիյ, Կոնստանտին Ակսակով) և մի կրտսեր (Սամարին, Ի. Ակսակով, Զերկասսկիյ) սերնդներին, որոնք տիրկյուղ էին կրում պյուղացիական չարժման ծավալումից,—այն տեսակետն էր պաշտպանում, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր յուրահատուկ կյանքը և որ ռուս ժողովուրդն էլ ունի իր «յուրահատուկ կյանքը», իր «ինքնագործությունը» ( самобытность ), ըստ որում արտահայտվում է ուղղափառ կրոնով, պյուղական կյանքի համայնական կառուցվածքով, զանազան պատմական պայքարի բացակայությամբ: Սլավոնոֆիլների պաշտպանած «ինքնագործության» գաղափարի տակ մի նպատակ էր թաղնված, որը ձգտում էր՝ բուրժուական գաղափարների «ապականիչ» ազդեցությունից ղեր պահել ճորտատիրությունը. «ռացիոնալիզմով, ֆորմալիզմով» և տարբեր «չահերի պայքարով» թափանցված արևմտյան կուլտուրան և պետականությունը սլավոնաֆիլները բացասական վերաբերմունք էին համարում: Արևմտամոլները պատկանում էին ազատամիտ բուրժուազիայի՝ իր ժամանակի ամենալավ առաջադեմ շրջաններին (Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Գրանովսկին, Ստանկևիչը, Կեաչելը) և այն տեսակետն էին պաշտպանում, որ համամարդկային քաղաքակրթությունը միասնական է և որ Ռուսաստանը պիտի ընթա-



նա կուլտուրական զարգացման այն ճանապարհով, որով ընթացել են Եվրոպայի բոլոր ազգերը: Արևմտականների վրտսեր սերնդի մեջ վճռական ծանոթ էին սոցիալիստ-ուտոպիստների դաղափարներին, որավորում էին Սեն—Սիմոնի ուսմունքով, ինչպես որինակ՝ Հերցենը և Ոգարյովը, կային նաև այսպես կոչված «սետրաշևականներ», որոնք հետապնդում էին Ֆուրյեի գաղափարներով:

Պետերբուրգի լիցեյական պաշտոնյա Բուտաշևիչ—Պետրաշևսկուն նույնիսկ հաջողվեց՝ ուսանողներից և համալսարանական կրթություն ունեցող լիցեյական պաշտոնյաներից կազմել մի խմբակ, որը պատրաստվում էր վոչ միայն Ֆուրյեի և Կաբեի գաղափարների կաբինետային ուսումնասիրությամբ, այլ և փորձեր էր պատրաստում, մեկ չատ թույլ և ծայրատիճան անհաջող ձևով, տպատառիկ և պրոպագանդա սկսել: Այդ խմբակը, որի կազմի մեջ ի միջի այլոց մտնում էին նաև դրող Դոստոևսկին և բանաստեղծ Մ. Պլեշչեևը, 1849 թվին հայտնաբերվեց՝ և նրա անդամները պատասխանատվության սկսվեց, որը տևեց վեճակի այս մեղմացման մասին նրանք լսեցին կախաղանի վայրում, երբ մահվան դատավճիռ արդեն կարդացել էին:

Խմբակային կազմակերպությունները խիստ տարածված էին Ուկրաինայում, որտեղ ոտոպիզիոն ազգայնականությունը (Պետերբուրգում դրանք «մաղնպահանները» էին կոչվում), ազատամիտ բուրժուազիան և մանր բուրժուազիան դժգոհ էին ցարական միապետության ռեակցիոնացնելու մեծապետական քաղաքականությունից, որին աշխատում էր ճնշել ամեն մի ազգային չարժում հարատևահարված ազգությունների մեջ:

Ուկրաինայում եւ հային Սեն—Սիմոնի և ուրիշ ուտոպիստների յերկրպագուները. 1836 թվին Խարկովի համալսարանում պրոֆեսոր Ստեպանովի և ուսանող Պեչի մոտ գտել էին Սեն—Սիմոնի «կոմունիստական» գրվածքները: Վերջապես Կիևում 1846 թվին բացվել եր «Կիրիլո—մեթոդիևականների» դաղանի ընկերությունը, վոր կազմված եր Սեն—Սիմոնի և Կաբեյի*) դաղափարներով ոգոդոված յերիտասարդ ուսանողներից (դլխավորապես մանր—բուրժուական ծագում ունեցողներից): Ջերբակալվածների և աքսորվածների թվին եին պատկանում հետագայում Պետերբուրդի հայոնի պրոֆեսոր—պատմաբան Կոստոմարովը և ուկրաինական խոշորագույն աղդային բանաստեղծ Տարաս Շեվչենկոն, վորը հենց նոր եր ավարտել Պետերբուրդի դեղարվեստագիտական Ակադեմիան և վորին 10 տարով վինվորության եին դատապարտել: «Կիրիլո—մեթոդիևականները» յերազում եին համասլավոնական ֆեդերացիայի մասին, վորտեղ չի լինել «ստրկության և ստորին դասակարդերի անարդանք», վորտեղ «բոլոր սլավոնների վարչությունը, օրենսդրությունը, սեփականության իրավունքը և լուսավորությունը հիմնված պիտի լինի քրիստոնեական կրոնի վրա»: «Կիրիլո—մեթոդիևականները» չատ աղոտ պատկերացում ունեին իրենց դասակարդի՝ մանր—բուրժուազիայի համար քաղաքական իրավունքներ նվաճելու դաղափարի մասին:

*) Ֆրանսիացի ուտոպիստ:



## 2. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Նախընթաց պարագրաֆներում խոսվեց գործարաններին կցված ճորտ դյուղացիների ծանր կացության մասին, կալվածատերերի հողերը մշակող դյուղացիների դրության պակաս ծանր չեր: Դրամական տնտեսության զարդացումը և Յեվրոպայում ռուսական հացի պահանջի աճումը դրդում եին կալվածատերերին բարձրացնել հողադործության արդյունավետությունը: Տեխնիկայի թույլ դարդացման և ճորտերի աշխատանքի ցածր արտադրողականության հետևանքով (դա լավ եին ըմբռնում կալվածատերերը և դրա համար էլ արտահայտվում եին «դյուղացիների ազատագրման» ոգուին) մեկ մեջոցը չահադործման զորեղացումն եր:

XIX դարի սկզբից ճորտերի աշխատանքի չահադործումն անդադար զորեղանում է. թե բահրա վճարող և թե կոռվորության կատարող դյուղացիներին դարձնում եին ստրուկներ, վորոնք իրավունք չունեին ազատորեն մի տեղից մի այլ տեղ անցնել. 40-ական թվականներից կալվածատերերը հետացնում եին դյուղացիներին հողերից և փոխադրում «ամայականի», սպառնալվորեցնելով նրան ապրել կալվածատիրոջ ագարակում և կալվածատիրոջ հողերի մշակման համար ստանալ ամենախղճուկ պարեն:

Ռուսաստան այցելող ուտարերկրացիները գրում եին, վոր կալվածատերերն իրեն հողերը դարձնում են հացահատիկային խոշոր գործարաններ, վորտեղ գործադրվում եր «ստրուկների աշխատանք»: XIX դարի կեսին ուժեղ զարդացում ստացավ ճորտերի առուծախը. նրանց վաճառում եին ամբողջ ընտանիքով կամ հատավաճառով և նույնիսկ կենտրոնական

նահանգներում գոյություն ունեցին առնավաճառներ, որոնք ճորտերին գնում և վաճառում էին, ինչպես դա կատարվում էր Սմոլենսկում տարածքների չուվաշներ: Սակն մի «հանցանքի» համար կալվածատերը կարող էր ճորտերին մարտահարել, կարող էր Սիբիր աքսորել և անժամկետ կամ երկարատև ժամանակով զինվորության ուղարկել:

Մասամբ նեղությունների և քայքայման պատճառները գյուղացիական ապստամբություններն էին, որոնց թիվը տարեց տարի աճում էր: 1826 թվից մինչև 1854 թ. ընդամենը կազմել են 709 գյուղացիական «խլրտումներ», որոնք մեծ մասամբ ճնշվել են ռազմական ուժով: այդ խլրտումներից մեկքանիսն իսկական գյուղացիական ապստամբության բնույթ են կրել: 30-ական թվականների վերջին Պերմի և Որենբուրգի նահանգներում գյուղացիների խլրտումները տևել են մոտ երեք տարի, ընդ որում այդ հուզմունքներին մասնակցել են մինչև 40 հազար հոգի: Ռյազանի նահանգում իշխան Գոլիցինի կալվածքում հուզմունքները չարունակվել են երկու տարի և «զսպելու համար» ուղարկված զորքերը նրանց դեմ կռիվ են վարել ռազմական բոլոր կանոնների համաձայն, ինչպես այդ կատարվում է թշնամու դեմ պատերազմի ժամանակ: 1845 թվին խլրտումներ կեղել են 17 նահանգներում՝ 32 կալվածքներում, ընդ որում 10 դեպքերում կիրառվել է ռազմական ուժ. 1848 թվին խլրտումներ կեղել են 54 կալվածքներում (27 նահանգներում) և այդ խլրտումների երկու երրորդ մասը «զսպել են» զենքի ուժով: 1849 թվին 24 տեղ խլրտումներ են կեղել, ընդ որում Կուրսկի նահանգում ըմբոստների թիվը 10 հազարի էր հասնում, որոնց դեմ ուղարկված էր զին-



վորական ուժ, որը բաղկացած էր 16 հեծելազորից, 2 ազգայնական վաշտերից, մեկ ռեզերվի բատալիոնից և մեկ հրետանային դիվիզիոնից: Պատահական տեղեկություններով ազատվել են 36 հոգի և վերադրվել 57 հոգի, բայց իրապես ազատվածների և վերադրների թիվը մեքանի հարյուրի չէր հասնում: Ժամանակակիցների պատմելով, 1848 և 1849 թ. թ. կալվածատերերը խուճապի էին մատնվել. Արևմտյան Եվրոպայում տեղի ունեցող հեղափոխական շարժումների հետևանքով ռուսական գավառներում կալվածատերերի շրջաններում հուզումնալից լուրեր էին տարածվում գյուղացիական ապստամբությունների մասին: Կալվածատերերը չերկարատև ժամանակով թողել էին տալիս ամբողջ գարամատեր, վորպեսի մեջտեղին նրանք դիմում էին նաև հետագայում 1905 թվի հեղափոխության ժամանակ:

Հուզմունքներ էին տեղի ունենում նաև կալվածատերերի և վաճառականների գործարաններում աշխատող գյուղացիների մեջ. որինակ՝ վաճառավաճառության հետ լուրջ ընդհարումներ տեղան 1826 թվին Եարոսլավլի մոտ գտնվող Իշխան Գաղարինի թղթի գործարանում, 1841 թվին Պերմի նահանգում Բեվդինի գործարանում (Ուրալում), վորտեղ սպանվեցին 33 հոգի (դրանց թվում 8 կին) և վիրավորվեցին 114 հոգի, 1833—34 թվերին, իշխ. Յուսուպովին պատկանող Կուպավինի մահուդի և մետաքսագործության ֆաբրիկներում (Մոսկվայի նահանգ), վորտեղ 210 հոգի մորթահարեր տեղան և աքսորվեցին Սիբիր:

Ժամանակակիցների վկայության համաձայն, XIX դարի առաջին կեսում տեղի ունեցած գյուղացիական խլրտումները գյուղացիների «ազատագրման» ամե-

նշանակում էին ծառայել· կալվածատերերը յերկյուղ էին կրում մասնավոր ապստամբություններից և զգում էին, որ նույնիսկ պատժիչ միջոցներն առանձին ոգուտ չէին տալիս, քանի որ դրանից հետո գյուղացիները մասնավորապես հեռանում էին կալվածքից վախենալով Նովորոսիա, Ղրիմ, Կուբան և Սիբիր (գյուղացիների փախուստները հաճախակի դարձան մանավանդ 40—50-ական թ.թ.)։ Մի կալվածատեր իր հիշողությունների մեջ գրում է, որ, իբրև ինքնապաշտպանության միջոց, կալվածատերերն իրենք պիտի աշխատեն արագացնել գյուղացիների ազատությունը.— «Ճորտատիրական իրավունքի հանգույցը որքան ավելի ես սեղմում կալվածատիրական գյուղացու պարանոցը, նույնքան անհամբերությամբ նա սպասում ես ազատագրում ստանալ ցարից և նույնքան ավելի ես հավատում իր մոտալուտ ազատությանը։ Գյուղացիները կարծում էին, թե Ղրիմի պատերազմը (1853—1856 թ. թ.) մեծ փոփոխություններ կմտցնի, թե պատերազմը նրանց ազատություն կբերի։ Պատերազմի ժամանակ գյուղացիների փախուստը կալվածքներից, նրանց «ինքնակամ բացակայելը» և խռովությունները հաճախակի բնույթ էին ստացել, և կալվածատերերը ազատ սկսում էին, որ հեղափոխությունը պիտի կատարել «վերևից», առանց սպասելու, որ նա կատարվի ներքևից։

## 3· 1861 ԹՎԻ ՌԵՖՈՐՄԸ

«Մեծ ռեֆորմի» պատմական նշանակությունը նրանում է, որ նա ապրանքային տնտեսության պահանջների համեմատ քաղաքական վերակազմության յենթարկեց



ֆեոդալական իշխող ազնվական-կալվածատերերի դասակարգը։ Ճորտատիրական տնտեսության բուրժուական տնտեսության անցնելը, կապիտալիստական հարաբերությունների թափանցումը չրջանառության սֆերայի արտադրության սֆերան,—այս բոլորը դրդում էին ազնվականներին «ազատագրողներ» դառնալ, մի անպիսի հասարակարգի կողմնակիցներ դառնալ, որ ավելի և համապատասխանում չահագործելու և իշխելու նոր պահանջներին*)։

Սակայն ճորտատիրական իրավունքի վերացումը կատարվեց բավական դանդաղորեն. դրան դիմադրում էր ազնվականության ամենից հետամնաց մասը, որը պահանջում էր, ինչպես Պահրոմովկին է ասում.—«ինչ դնով էլ որ լինի, մաքսիմալ քանակությամբ հողեր թողնել» երեն։ Այս «ֆեոդալական» խմբակը (նույն Պահրոմովկու արտահայտությամբ) միայն համաձայնում էր մի փոքր մեղմացնել և ամրապնդել կալվածատիրոջ իշխանությունը։ Այդ խմբակի լիդերը՝ իշխան Գագարինը գրում է.—«Ամենից բարենպաստ միջոցը կալվածատերերին իրավունք է տալիս, որ նրանք ազատեն գյուղացիներին առանց պայմանների և առանց հողի, քանի որ այս միջոցն ամրապնդում է կալվածատերերի հողային սեփականության իրավունքը և գյուղացիներին թողնում է այն ազդեցության տակ, որին նրանք ընտելացել են և որը պետության մեջ պահպանել է ընդհանուր չահը»։

«Բուրժուական» խմբակն այն տեսակետին էր կանգնած, որ գյուղացիներին պիտի ազատագրել տալով նրանց հող, բայց միևժամանակ կալվածատերերը վար-

*) Տես հավելված № 1·

ձատուրքյուն պիտի տաներ պյուղացիներին տվող հողերի համար: Այս խմբակի լիդերները հանդես էին գալիս դրավոր զեկուցումներով, որոնք ձեռքից ձեռք էին անցնում. այս զեկուցումների հեղինակները Կավելինը եր, Կոշելեվը և Սամարինը: Կավելինը գտնում եր, որ «ճորտերին լիովին, կատարելապես պիտի ազատել իրենց տերերի ատրազրուքյունից», սակայն նա միաժամանակ ընդգծում եր թե «պետուքյան համար ցանկալի և թուլլատրելի չե՝ պյուղացիներին ազատել առանց սեփականատերերին վարձատրելու և որ դրա համար պետուքյունն ունի ամենահիմնավոր պատճառները»:

Այս խմբակների ուժերի վերահատատերուքյունն այնպես եր, որ կարող էին ընդունել միայն կոմպրոմիսային որոշումներ. բայց էության, իհարկե, ռեֆորմն իրագործվեց հողատա կալվածատերերի չահերի, քանի որ ճորտատիրական տնտեսուքյան լուծարքի կենսագործումն ամբողջովին հանձնվեց հենց իրենց կալվածատերերին:

Այս երկու խմբակների պայքարին Վ. Ի. Լենինը տալիս է հետեվյալ բնուրագիրը.—«ճորտատիրուքյան կողմնակիցների և ազատամիտների պայքարը... մի պայքար եր, որը կատարվում եր տիրող դասակարգերի ներսում, գլխավորապես կալվածատերերի դասակարգի ներսում, մի պայքար, որը կատարվում եր բացատրելու գլխումների չափի և ձևի շուրջը: Ազատամիտները, ինչպես և ճորտատիրուքյան կողմնակիցները, կանգնած էին սեփականուքյան և կալվածատերերի իշխանուքյան ճանաչման հողի վրա և նրանք պայքարում էին ամեն մի հեղափոխական միջոց, որը կողմնակից եր այդ սեփականուքյանը վերացնելուն, այդ իշխանուքյունը հիմնովին ոտնատակելուն»:



Այս պայքարն ազդեցուքյուն ունեցավ ռեֆորմի ամբողջ ընթացքի և նրա վերջնական հետևանքի՝ պյուղացիների ազատագրման պայմանների վրա. այդ պայմանները հրատարակվեցին հատուկ կանոնադրուքյամբ (պոլոժենյե), որը լույս տեսավ 1861 թվի մարտի 5-ին:

«Պոլոժենյե»-ալի համաձայն բոլոր հողերը, որոնք ազատագործվում էին թե կալվածատերերի և թե պյուղացիների կողմից, ճանաչվեցին կալվածատերերի սեփականուքյան: Այս դեպքում կալվածատերերի յերկու խմբակների չահերն էլ միանում էին: Տարաձայնուքյունը միայն այն հարցին եր վերաբերում, թե պյուղացիներն ինչ չեզանակով պիտի ազատագրվեին ճորտատիրական կախումից—հողով, թե առանց հողի. այս հիմնական հարցի շուրջը մի ընդհանուր կարծիք չեր կարող լինել, քանի որ դանազան տնտեսական չրջանների կալվածատերերի չահերը միմյանցից խիստ վերտով տարբերվում էին: Այն չրջաններում, որտեղ կալվածատերերը հանրուքյամբ սեփական տնտեսուքյուն ունեին վարում (կենտրոնական սևահող նահանգներում և հյուսիս-արևմտյան յերկրամասում), կալվածատերերն աչխատում էին ազատագրվող պյուղացիներին այնպիսի նվազատուն, խղճուկ հողամասեր տալ, որպեսզի հնարավորուքյուն ունենալ ոգտագործել այդ պյուղացիներին իրրև ժամանակավոր ձեռքեր կամ իրենց հողերը տարկայուքյուն պայմաններով կապալով տան տակավահող, ռեֆորմի չնորհիվ հողազրկված պյուղացիներին: Այսպիսի չնչին աղքատիկ հողամասերով պյուղացիներին ազատագրելը համապատասխանում եր նաև ուկրաինական նահանգների կալվածատերերի չահերին (թացատուքյամբ Նովոռոսսիայի), որովհետև այստեղ կալվածատերերին հարկավոր էին ժամանակին բանվո-

բնական ճանապարհը, քանի վոր այստեղ կապիտալիստական տնտեսությունը պրակտորեն զարգացել եր, ազատ աշխատանքը գործադրվում եր մեծ չափերով և հացահատիկային տնտեսությունն աստիճանաբար փոխանցվում եր գյուղատնտեսական կիսաֆաբրիկատների արտադրության:

Նովորոսիյսկում և Սևծովյան շրջանում, վորտեղ կիսագաղութային հարաբերություններ եյին տիրում, բնակչությունը նոսր եր և ճորտերի տակտային քանակությունն ավելի փոքր, կալվածատերերը չհամագործակցված եյին ամբողջ հողերն իրենց վերապահել և գյուղացիներին տալ առանց հողամասեր հատկացնելու:

Վոչ-սևահող նահանգներում, ընդհակառակը, կալվածատերին ավելի չահավետ եր հողերը հանձնել ազատագրվող գյուղացիներին (քանի վոր այստեղ հողը մեծ արժեք չուներ, պտղաբեր չեր և չեկամուտ չեր տալիս), բայց այնպիսի պայմաններով, վոր կալվածատերերը լուրջ փոխհատուցում ստանան՝ գյուղացիներին ազատ արձակելու համար: Քանի վոր «Պոլոժենիյեն» արգելում եր ճորտերի «հոգիներին» համար փոխհատուցում ստանալ, կալվածատերերն այս հատուցումը փողարկելու համար մի յելք գտան, վորը կայանում եր գյուղացիների կողմից վերկապրվող հողերի արժեքի բարձր գնահատականի մեջ. ժամանակակիցները շատ լավ ըմբռնում եյին, վոր հողերի բարձր գնահատությունն ըստ եյության վոչ թե գյուղացիներին տրվող հողամասերի արժեքն է, այլ այն փոխհատուցումը, վոր գյուղացիները վճարում են իրենց «ազատ արձակելու համար»:

Ահավոր այսպիսի խիստ տարբերության հետևանքն այն յեղավ, վոր գյուղացիներին հողամասեր հատկացնելու հարցի վերաբերմամբ կոմպրոմիս վորոշում ընդունվեց. գյուղացիներին տրվող հողամասերի նորմաներն այնպես մշակվեցին, վոր ռեֆորմից հետո էլ կալվածատերերը վոչ միայն բավականաչափ հողեր ունենան, այլ և ժամանակին և նույնիսկ ճրի բանվորական ուժ: Վորոշված եր գյուղացիներին այնպիսի հողամասեր հատկացնել, վորոնք «մինչև այժմ ապահովում եյին նրանց գոյությունը, այսինքն՝ 1859 թվի չափով»: Սակայն, ըստ առանձին շրջանների հողամասերի, չափը վորոշելիս բռնագրավվում եյին կալվածատերերի ոգտին հողերի այն ավելցուկները, վորոնք միաստորեն գրանվում եյին գյուղացիների տրամադրության տակ, բայց պերազանցում եյին «տվյալ վայրի համար վորոշված առավելագույն չափը» (յուրաքանչյուր նահանգի համար վորոշել եյին հատկացվելիք հողամասերի «առավելագույն» և «նվազագույն» նորմաները). իսկ յերբ գյուղացու հողամասը փաստորեն ավելի պակաս եր լինում, քան վորոշված «նվազագույն» չափը, այդ պակասը լրացվում եր միայն բացառիկ դեպքերում: Բացի այդ, հատուկ նորմաներ եյին մշակել (վելիկոռուսակի, մալոռոսիակի և «արևմտյան» նահանգների համար, ընդվորում վելիկոռուս նահանգները բաժանվել եյին յերեք յերեսների—սև-հողային շերտը, վորտեղ սահմանվել եյին 5 «առավելագույն» նորմաները $3\frac{1}{2}$—$4\frac{1}{2}$ դեսյատին տարածությամբ, վոչ-սևահողային շերտը՝ 7 «առավելագույն» նորմաներով $3\frac{1}{2}$—8 դեսյատին և տափաստանային շերտ՝ 4 «առավելագույն» նորմաներով $6\frac{1}{2}$—12 դեսյատին:

Այն նահանգների մեծ մասում, վորտեղ կառավարության ազատումն եր տիրում, գյուղացիական հողամասերի չափը ռեֆորմի հետևանքով քչացավ: Մանա-

վանդ խիստ քչացավ հարավ-արևմտյան Ռուսաստանում, որտեղ կալվածատերերն արդեն կապիտալիստական տնտեսություն էին վարում, և Պոլոժենիայում, որտեղի կալվածատերերը հարյ շուկայի խոշորագույն մատակարարողներն էին դարձել. իսկ կենտրոնական և հյուսիս-արևմտյան նահանգներում, ընդհակառակը, հողամասերի նորմանները դրալի կերպով ավելացել էին, որտեղ կալվածատերերը չհագեցրված էին իրենց ցածր արժեք ունեցող և չկամուտա չբերող հողերը բավական բարձր գնահատությամբ գյուղացիներին հանձնել:

«Պոլոժենիյեն» կալվածատերերին իրավունք էր տալիս գյուղացիների «հոժարակամ համաձայնությամբ» և ավելի փոքրացնել հողամասերի նորմանները. «Պոլոժենիյեն» քննարկելու ժամանակ Պետական խորհուրդը իշխան Գագարինի առաջարկով ընդունեց այսպես կոչված «քաոտորդական» կամ «նվիրաբերական» հողամասերի (նադելների) կարգը, ըստ որի կալվածատերը իրավասու էր ձրիաբար (այսինքն՝ առանց վարձի հատուցման և ծառայության) գյուղացիներին տալ մեկ քառորդը հողամասի այն առավելագույն չափի, որը սահմանված էր տվյալ վայրի համար, դրանով կալվածատիրոջ և գյուղացու միջև ապատվում էին ճորտատիրական որևէ բղխող բոլոր հարաբերությունները: Մնացած ամբողջ հողը զանազով կալվածատիրոջ սեփականությունը մեծ ուժ ուներ թերում չնորհիվ գյուղացիներից ստացվող բարձր կոպեյկավարձի: «Քաոտորդական» հողամասերի (նադելների) սիստեմը մեծ կիրառում ստացավ և «նվեր» ստացողների թիվը հասավ 640 հազար հոգու. դրանք մեծ թիվ էին կազմում Սամարայի նահանգում (բոլոր գյուղացիների 35%),



Սարատովի նահանգում (33%) և Եկատերինոսլավի նահանգում (25%):

Ընդհանրապես ռեֆորմի հետևանքով 86 նահանգներում գյուղացիները մոտավոր հաշվով զրկվեցին իրենց հողերի 18,1%-ից, իսկ մի քանի նահանգներում (Սամարայի կորուստն ավելի մեծ տոկոս և կազմում (Սամարայի նահ. 44%, Սարատովի նահ. 41 տոկ., Պոլտավայի և Եկատերինոսլավի նահ. 40 տոկ., Կազանի նահ. 32 տոկ.):

Հողամասեր հատկացնելու պայմաններն էլ տարբեր նահանգներում տարբեր էին: Իբրև ընդհանուր կանոն, մերձռնային (усадебные) և դաշտային հողամասերը տրվում էին գյուղացիներին մշտական ոգտագործման համար այն պայմանով, որ գյուղացին վարոյ ծառայություն սիտի մատուցի կալվածատիրոջը. գյուղացին իրավունք ուներ փրկագրել մերձռնային հողամասը, յերբ ինքն այդ ցանկանար, իսկ դաշտային հողամասը նա կարող էր փրկագրել կալվածատիրոջ համաձայնությամբ: Այն նահանգներում, որտեղ կոմունայի (борщина) սիստեմն էր տիրում, ամեն մի գյուղացիական ծուխ, որն ստացել էր «առավելագույն» նորմայով հողամաս, տարվա ընթացքում պարտավոր էր կալվածատիրոջ համար աշխատել 40 աղտատավոր էր կալվածատիրոջ համար աշխատել 40 աղտատավոր և 30 կանացի որևէ, ընդ որում այս աշխատանքներին հսկում էր ինքը կալվածատերը կամ նրա կառավարիչը. աշխատանքը կատարվում էր սահմանված կանոնադրության (урочное положение) հիման վրա հիշատ այնպես, ինչպես ճորտատիրական իրավունքի ժամանակ: Այն նահանգներում, որտեղ քահրայի (оброк) սիստեմ էր տիրում, հողամասերի «առավելագույն» նորմաներին դիմաց վճարված էին քահրայի առավելագույն

չափերը, վերջինը կազմում էին 12, 10, 9 և 8 ռուբլի յուրաքանչյուր ամբողջական հողամասի համար. յեթե հողամասը «առավելագույն» նորմայից պակաս էր, վճարվում էր վորոշ դրադացեալով (աստիճանականությամբ), ըստ վորի առաջին դեսյատինի համար վճարում էին առավելագույն բահրայի կեսը, յերկրորդ դեսյատինի համար մեկ քառորդը, իսկ յերկու դեսյատինի համար միասին՝ 3/4-ը, կամ այլ խոսքով, յեթե հողամասը կազմում է 4 դեսյատին, բահրան պիտի վճարվեր 3 դեսյատինի համար): Այս դրադացիան հավլածատերերին մեծ ոգուտ էր բերում և ժամանակակիցները դա համարում էին օրինականություն ստացած մի յերևույթ, վորը սակայն, ներկայացնելով գյուղացու անձնավորության փրկագինը, հակասում էր ռեֆորմի հիմնական սկզբունքներին:

Ռեֆորմի մեջ եյական նշանակություն ուներ գյուղացիների ոգտագործմանը հատկացրած հողերի փրկագըրման՝ հետգնման (выкуп) սիստեմը. հավլածատերերի միահամուռ վիկայությամբ, փրկագրման հարցի կարգավորումը նրանց համար ավելի մեծ հետաքրքրություն էր ներկայացնում, քան «ծառայությունների» հարցը, քանի վոր հավլածատերերը դրամական միջոցների կարիք ունեյին և նրանք չհապաղրդված եյին իրենց ապահովել հուսալի և բավականաչափ ռենտայով: Փրկագրման սիստեմն այնպես էր կառուցված, վոր փրկագրման գումարները փաստորեն դերազանցում եյին հողի արժեքը և հավլածատերերին հնարավորություն էին ստեղծում գործնականում ստանալ ոբրոկի վերացնելուց առաջացած կորուստները: Փրկագրումը մի ծանր բեռն էր և տարեկան գյուղացիների համար դառնում էր անհնարին. որինակ՝ 1862 թվին չհանձված գումարները կազմում



եյին փրկագրման հիմնական գրուժքի 60 %, 1893 թվին՝ 45 %, 45 տարվա ընթացքում գյուղացիները մտցրել եյին 1.541.204 հազար ռուբլի փրկագրման վճարումները վերացան միայն 1907 թվին:

Ռեֆորմը գյուղացիներին մի նոր ստրկության մեջ գցեց և այս հանգամանքը գիտակցում եյին թե իրենք հավլածատերերը և թե կառավարությունը, վորը յերկյուղ կրելով ապստամբություններից, «Պոլոժենիյեն» հրապարակելուց հետո միջոցներ ձեռնարկեց «կարգը պահպանելու» համար: Բայց ապստամբությունները ծագեցին վոչ թե մայրաքաղաքներում, վորտեղ կուտակել եյին զորամասեր և վոստիկանատներում կալանքի տեղեր և մարտկոցներ պատրաստել «մեղավորներին պատժելու համար», այլ գյուղերում: «Իշխանություններին» չհնազանդելու ամենավտանգավորը տեղի ունենալ կազանի նահանգի Բեզդնա գյուղում, վորտեղ կառավարական զորքերի հետ արյունահեղ ընդհարման հետևանքով սպանվեցին 71 հոգի և վիրավորվեցին 155 հոգի, իսկ «խռովարար» Անտոն Պետրովը գնդակահարվեց: Պետության ծայրամասերում գյուղացիան ապստամբությունները չարունակվեցին համարյա յերկու տասնամյակ*):

1864 թվին կենսագործվեց տեղական «ինքնավարությունների» (զեմստվոների) ռեֆորմը, վորի համաձայն նահանգների և գավառների տնտեսական գործերի տնօրինությունը տեղերում հանձնվում էր «հպատակության» (հողատերերի, քաղաքային անշարժ կայքերի սեփականատերերի, գյուղացիների) կողմից ընտրվածներին: Այս «զեմստվային ինքնավարությունը», վորը հետագայում տարածվեց նաև քաղաքների

*) Տես հավելված № 2:

վրա (վորտեղ հիմնվեցին անչարժ կայքերի սեփականատերերի կողմից ընտրված «քաղաքային դումաները» և դրանց գործադիր օրգաններ՝ «քաղաքային վարչություններ») աղնվականների ինքնավարություն-ը և այդպես էլ դա մնաց մինչև փետրվարյան հեղափոխությունը:

1864 թվին տեղի ունեցած դատական ռեֆորմը դատարանների մի նոր սիստեմ հաստատեց և դատավարության նոր կարգեր, վորոնք ավելի նյին համապատասխանում տնտեսական հարաբերությունների նոր ձևերին, ինչպես և բուրժուազիայի պահանջներին, վորը կարոտ եր իր շահերը պաշտպանող օրենքներին: Նոր դատարաններում մրցութ յան սկզբունքը» (յերևան յեկան «յերդվյալ հավատարմատարներ»—պատասպաններ և «յերդվյալ առենակալներ», վորոնք նշանակվում եյին դեպի յեկամուտ ունեցող մարդկանցից):

## ՄՆԹՈՂԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս պարապմունքի նպատակն է՝ ուսումնասիրել «1861 թվի ռեֆորմի» ընթացքն ու բնույթը, իբրև բուրժուական բարենորոգչության մի արտահայտություն. միևնույն սիստեմը հաղթանակող արդյունաբերականի կապիտալիզմի ճնշման տակ հարկադրված եր ընթանալ այդ ճանապարհով: Ռեֆորմն իրենից ներկայացնում եր իշխող տարբեր դասակարգերի մի կոմպրոմիս և այդ պատճառով էլ կրում եր վերին աստիճանի թերի և կիսավարտ բնույթ: Բայց համենայն դեպս Ռուսաստանում նա դեպի կերպով դյուրացրեց բուրժուական հասարակական հարաբերությունների զարգացումը:



Պարապմունքի մշակումը բաժանվում է յերկու մասի—I մասում մենք պիտի ուսումնասիրենք «Նիկոլայ I չրջանի» բուրժուական չարժումների բնույթը, իսկ II մասում—1861 թվի ռեֆորմի բնույթը և պատմական նշանակությունը:

## ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞ր դասակարգային իմքավորումների չահերն եյին արտացոլում «սլավոնաֆիլները», «արևմտականները», «պետրաչևականները» և «կիրիլո-մեթոդիևականները»:

2. Վո՞րոնք են այն պատճառները, վոր դրդեցին միապետությանը համաձայնել գյուղացիական ռեֆորմին:

3. Ի՞նչ դրդապատճառներից և ըղխում հողամասերի (նադելների) տարածությունների տարբերությունը զանազան չրջաններում:

4. Ինչո՞ւմն է կայանում 1861 թվի ռեֆորմի պատմական նշանակությունը:

5. Ձևակերպեցեք Վ. Ի. Լենինի հայացքները 1861 թ. ռեֆորմի վերաբերմամբ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

М. Н. Покровский. Очерки по истории революционного движения в России XIX—XX в.в.

В. И. Ленин. Крестьянская реформа и пролетарско-крестьянская революция (Գրված. Ժողովածու, հատոր I, մաս II):

### Գեղարվեստական գրականությունից

Բացի Գոգոլի, Տուրգենևի, Սալտիկով-Շչեդրինի հասարակական գրված քներից, վորոնք արտացոլում են կալվածատերերի, վաճառականների և գյու-



200—8

*ղացիների կենցաղը «ազատությունից առաջ», կարելի է հանձնարարել՝*

Герцен. Сорока-воровка *(Հերցեն - Գող կաչաղակը)։*

Терпигорев *(Атава)*. Крепостники и крепостные *(Потревоженные тени.) Տերպիգորյով. Ճորտատերերը և ճորտերը. վրդովեցրած սավեքներ)։*



## ՀԱՎԵԼՎԱԾ № 6

### 1. ԻՆՉՈ՞Ւ ՏԱՊԱԼՎԵՑ ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վորպեսզի այս ռեֆորմի դաղափարը գործնական նշանակություն ստանար, անհրաժեշտ եր, վոր յերկու խմբակի իդեոլոգիայի մեջ էլ խոշոր փոփոխություն կատարվեր։ Այս փոփոխությունը բացատրելու համար յերկար ժամանակ բացառապես դաղափարական գործոնների ոգնությանն էլին դիմում՝ վերագրում էլին լուսավորության, դեղեցիկ գրականության ազդեցությանը, ինչպես և ազնվականության «լավագույն ներկայացուցիչների» հորդորներին և այլն, մոտավորապես այնպիսի պատկեր եր ստացվում, թե կալվածատերերը ճորտատիրական իրավունքին էլին կառչում, քանի դեռ նրանք բթամիտ էլին, տգետ, բարոյապես տհաս։ Հետզհետե մտավորապես և բարոյապես զարդանալով նրանք սկսեցին ավելի ու ավելի այն մտքով տոգորվել, թե ճորտատիրական իրավունքը մի «դազրելի» բան է. այնուհետև յերկար ժամանակ, ըստ սովորության նրանք տանում էլին այս դաղրանքը, մինչև վոր, վերջապես, նրանք համարձակություն ունեցան դրանից հրաժարվել։ Զխոսելով այն մասին, վոր այս բացատրությունը վիճատրեն ճիշտ չե, պետք է նշել, վոր ճորտատիրական իրավունքը պաշտպանողների դեմ հանդես են յեկել իր ժամանակին ամենակրթված կալվածատերերը, ինչպես Իշխան Շչերբատով

XVIII դարում, կարամզինը XIX դարի սկզբում: Այս բացատրությունը բնավ դիտական բացատրություն չէ: Գիտության հիմնական պահանջը կայանում է նրա մեջ, որ յերևույթները այս կամ այն կատեգորիայի մեջ տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխությունը նախ և առաջ բացատրվի նույն այդ կատեգորիայի պայմաններով. կողմնակի պատճառների ոգնությանը կարելի և դիմել միայն այն դեպքում, յերբ տվյալ յերևույթների շրջանակում անկարելի և դտնել փոփոխության բացատրությունը: Գյուղացիական ռեֆորմը նախ և առաջ մի հսկայական տնտեսական հեղաշրջում եր—ճորտատիրական տնտեսությունից մի փոխանցում դեպի բուրժուական տնտեսությունը, կապիտալիստական հարաբերությունների անցումն եր փոխանակության բնագավառից՝ արտադրության բնագավառը: Տնտեսական փոփոխությունների համար նախ և առաջ պիտի փնտռել տնտեսական դրդապատճառներ. այս փոփոխությունների պատճառները վերագրել բարոյական և մտավոր զարգացմանը, միևնույն է թե նմանվել մի—նաղարյան մարդկանց, վորոնք լուանի կամ արևի խավարումը բացատրում եյին մարդկային մեղքերով: Ինչպիսի տնտեսակ. պայմաններ մղեցին կալվածատերերին դեպի այն միտքը, վոր վարձու աշխատանքը նրանց ավելի շահավետ է, քան ճորտի աշխատանքը: Այս հարցին պատասխանելու համար նախ և առաջ պետք է ի նկատի ունենալ, վոր նույնիսկ կոռվորության (барщина) բարգավաճման ժամանակ կալվածատերերը շատ լավ դիտակցում եյին, վոր կոռվորական աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր է: Միանգամայն բնական է, վոր կալվածատերերը յերնելով իրենց հայեցակետից, այս հանգամանքը բացատրում եյին գյուղա—



ցիների ծուլությամբ. կոռվոր գյուղացիների ծուլությունից դանգատվում եր դեռ Տատիշչևը, վորն իր ընթերցողներին խորհուրդ եր տալիս միջոցներ ձեռնարկել, վոր ամառվա շրջանում գյուղացիները ծուլության չմատնվեն: Հետևյալ սերնդի ներկայացուցիչ Ռիչկովն իր գործակատարին տված խրատներում վորոշակի ցույց է տալիս այն «գարշելի արարքների» մասին, վորոնք գյուղացիները առավոտյան իրենց թույլ են տալիս կռվի ժամանակ, «հողը հերկում են կիսատ—պռատ, գյուղում թողնում են կամ հատ չերտով կամ վերադարձի ճանապարհ սերմերը թափում են այնպես անտակտոն, վոր շատ տեղ նրանք չեն ընդունում և կաց տեղեր են մնում: Հնձի ժամանակ հատիկները կորկոտում՝ դեռևին են հավաստարեցնում այնպես, վոր նրանց խարդախությունը չերևվի: Այսպիսով «ծուլությանը» ավելանում է նաև «խարդախությունը»: Կալվածատերերի հետագա սերնդին պատկանող Շչիտկովը ուղղակի ընդունում է վոր նույնիսկ «ամենից դործունյա և արդյունաբեր գյուղացիները հաճախ ժրաջան վերաբերմունք չունեն դեպի իրենց տերերի չարհերը»: Շատ ազնվականներ դերադասում եյին բարքայի սիստեմը, քանի վոր բարքան կարելի եր ստանալ լոկ խստությունների միջոցով, իսկ կռվի ժամանակ խստություններն անգամ նպատակին չեյին հասնում: Թեյլորի*) ռուսական նախորդները ստիպված եյին ճուլվել իրենց տնտեսության հետ—լուսաբացին զարթնել և ամբողջ որը մորակը ձեռքին արևի կիզիչ ճառագայթների տակ հետևել դաշտում աշխատող գյուղացիներին, իսկ աշունն անցկացնել կալում և հսկել հացի

*) Ամերիկայում կապիտալիստական արտադրության ոացիոնալիզացիայի նախնական հեղինակներից մեկը:

կալսելուն: Այսպիսի կալվածատերը, յեթե տիրապետեր դյուղատնտեսական տեխնիկային, շատ բան կարող եր քամել իր դյուղացիներից, բայց դատ այս ձևով վարվում եյին փոքր կալվածատերերը: Դրա համար ել սակավահող կալվածատերերն այնպիսի աղահոգիությամբ կպել եյին ճորտատիրական իրավունքին և համարյա դրանք բոլորը վեսա. 19-ի ռեֆորմի հետևյալ որը անտեսապես վոչնչացան: Մոշոր և նուշնիսկ միջին կալվածքներում վաղուց արդեն նույն մտքին սկսած հանդիսյին, վոր դյուղացիների աշխ. քաշալերելու համար ան հրաժեշտ է մի այլ միջոց ստեղծել, քան սոսկ հարկադրանքը: Կալվածատիրական տնտեսության մանրազննին պատմության համար շատ հետաքրքրական են այն փորձերը, վորոնք կատարվել են այդ ուղղությամբ զանազան կալվածատերերի կողմից XIX դարի առաջին կիսում: Այդ տեսակետից յուրատեսակ բնույթ են կրում Հայանի սլավոնաֆիլ Խոմյակովի փորձերը, վորն իր բահրատու դյուղացիներին սկսեց բանեցնել իրրև վարձու աշխատավորներ, ընդ վորում այդ դյուղացիների վրա այնպիսի բարձր բահրա եր նշանակել, վոր նրանք իրենց գոյությունը պահպանելու համար այլ միջոց չունեյին բայց այն, վոր իրենց կալվածատիրոջ հողերը մշակեն իրրև բատրակներ. նույնպես հետաքրքրական են իր ժամանակը նշանավոր դյուղատնտես Սարեմոուխովի փորձերը, վորը բերքի ⅔ մասը տալիս եր դյուղացիներին և այս ճանապարհով բարձրացնում դյուղացիների աշխատունակությունը. նրա ասելով, դյուղացիների աշխատանքի ինտենսիվությունն այն աստիճան բարձրացել եր, վոր կալվածատիրոջը մնացող ⅓ բաժինը ավելի շատ եր, քան այն արդյունքը, վոր նա ստանում եր իր յերեքորյան



կոռվորության սիստեմի որոք «ամենախիստ հսկողություն ունենալով» դյուղացիների վրա: Վերջիվերջո 50-ական թվականներին հաղթանակող եր հանդիսանում այն կարծիքը, վոր կալվածատիրական հողերը սլիտի մշակել վոչ թե ճորտերի աշխատանքով, այլ հոժարակամ վարձված դյուղացիների աշխատանքով: Բայց նախքան 1861 թվի հեղաշրջմանն անցնելը, անհրաժեշտ եր լուծել մի հարց, վոր հավանականապես վաղուց արդեն առաջադրում և մեզ ընթերցողը, այսինքն՝ ինչն եր հատա ուշացնում հեղաշրջումը, յեթե նրա հիմնական խնդիրը, Կոռվորական աշխատանքի անարդյունավետությունը վաղուց արդեն դիտակցում եյին իրենք կալվածատերերը: Այս հարցին պատասխանելու համար ստիպված ենք մի փոքր խոսացնել ռուսական եքսպորտի պատկերը, վորով մենք սկսել եյինք ճորտատիրական տնտեսության մեր ակնարկը: Խոսելով ռուսական հումքերն արտասահման արտահանելու մասին, մենք որինակ եյինք բերել ցորենը: Բայց հենց ռուսական ցորենի արտածության գործը այնքան ել հեշտ և բարենպաստ չեր, ինչպես դա թվում է: Սակավախոս լինելու համար մեզ թույլ ենք տալիս ընթերցողի ուշադրությունը դրավել հետևյալ աղյուսակի վրա.—

| Տարեթիվը | Հացի արտածությունը Ռուսաստանից (հազար. փթերով) | | Հացի գները Բեռլինում չուկայում (ցենտ. արժ. մարկ.) | | |
|---|---|---|---|---|---|
| | Ցորեն | Հաճար | Տասնամյակ. | Ցորեն | Հաճար |
| 1820 | 13.873 | 3.924 | 1821—30 | 6.07 | 4.46 |
| 1830 | 25.506 | 8.669 | 1831—40 | 6.91 | 5.16 |
| 1840 | 18 091 | 1.409 | 1841—50 | 8.38 | 6.80 |
| 1850 | 26.168 | 5.592 | 1851—60 | 10.57 | 8 48 |
| 1860 | 41.911 | 20.247 | 1861—70 | 10.21 | 7.93 |

Մենք տեսնում ենք, որ 20 տարվա ընթացքում (1820–ից մինչև 1840 թ.) հացի գները Արևմտյան Եվրոպայում աճել են շատ դանդաղ. նույն ժամանակամիջոցում հացի արտահանումը Ռուսաստանից գրեթե արտահայտման ավելացել է չնչին չափով: 40–ական թվականներից հացի գները ավելի ու ավելի աճում են և ռուսական հացի արտահանումն էլ արագորեն բարձրանում է: Եվ նույնիսկ գների մի փոքր անկումը չի դանդաղեցնում հացի արտահանման աճումը: Հացի գների էվոլյուցիայի մեջ և այն հարցի պատասխանը, թե ինչու գյուղացիական ռեֆորմն առաջին 30 տարով հետաձգվեց (1820–ից մինչև 1850–ական թվականները, այսինքն Նիկոլայ I թագավորության ամբողջ տևողության ընթացքում): Արտահանում գոյություն ունեցող հացի ցածր գների հետևանքով, արտածության ծախքերը չեյին ծածկվում. իսկ քանի որ ռուսական հացը չեր կարող համաչափորեն չուկա գնալ, կալվածատիրական տնտեսությունը հնարավոր չեր դառնում ծավալել հացի արտադրությունը վորոշ սահմաններից այն կողմը: Որինակ, Նիկոլայի ժամանակները Տամբովի նահանգը կռվորության պայմաններում տուժում էր հացի գերարտադրությունից, հետևապես իրենց մխրճ ուներ հացի արտադրության լայնացումը: Ցեխե հինեյին պարբերական անպտղաբեր տարիները, վորոնց ընդհիվ ապահովում եյին հացի հին պաշարները, Տամբովում կուտակված հացը կրկին կամ մինների կերակուր կդառնար: Անպտղաբեր տարիները հասարակության մեջ եյին դնում հացի բալանսը, բայց նրանք անբերրի մշակույթի (եքստենսիվ կուլտուրայի) հետևանքն եյին: Հացի մշակույթն ինտենսիվ դարձնել,



բացի բոլոր այլ հանգամանքներից, հնարավոր էր միայն վերջին դարում, վորով հնարավոր կլիներ ազատվել հղնաժամից: Պատկերը միանգամայն փոխվեց, երբ հղնաժամն սկսեց վերանալ: Այժմ արդեն հետևում էր հացի արտադրության ծավալումը՝ մինչև ծայրահեղ հնարավոր սահմանները: Հիշելով հին ժամանակները, մի բանից եյին միայն անհանգստանում, թե արդյո՞ք կարելի յե Ռուսաստանում տնտեսությունը վարել վարձու աշխատանքով, թե կճարվեն արդյոք աշխատավորներ: Չե՞ վոր Պետրոս Մեծի ժամանակ նույնիսկ գործարանների համար բանվորներ չեյին հարվում, իսկ այժմ խոսքը վերաբերում է վոչ թե մի քանի տասնյակ գործարաններին, այլ ամբողջ յերկրագործական Ռուսաստանին:

Այսպիսով, տնտեսությունը վարձու աշխատանքով վարելը հնարավոր էր և ոգտավետ 1840–ական թվականներին (նույնիսկ Ռուսաստանի վոչ–սևահողյան չրջանում): Այնտեղ, վորտեղ կլիմայական պայմանների հետևանքով հացի արտադրությունը կապված էր անդադար դյուրավոր պայքարով, վարձու աշխատանքի կիրառումն անհրաժեշտ էր, մանավանդ վոր ճղնաժամն անցել էր և հացի գները «վայելուչացել» եյին. այնտեղ կալվածատերն իր հին տնտեսություններով չեր կարող տնտեսություն վարել:

(М. Н. Покровский. Очерк истории русской культуры. ч. I, стр. 102—106).

## 2. Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՌԵՖՈՐՄԻ ՄԱՍԻՆ

### 1.

Փետրվարի 19-ի վորոշումն արտադրության ճորտատիրական (կամ ֆեոդալական) յեղանակը բուրժուական (կապիտալիստական) յեղանակով փոխարինելու միջադեպերից մեկն է...Եթե մի ընդհանուր հայացք ձգենք 1861 թվի ռուսական պետության ամբողջ կառուցվածքի մեջ տեղի ունեցած փոփոխության վրա, պիտի ընդունենք, վոր այդ փոփոխությունը մի քայլ եր, վորը ֆեոդալական միապետությունը մղում եր դեպի բուրժուական միապետությունը: Սա ճիշտ է վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տեսակետից: Բավական է հիշել այն ռեֆորմները, վորոնք տեղի ունեցան 1861 թվի դյուղացիական ռեֆորմից անմիջապես հետո՝ դատարանի, վարչության, տեղական ինքնավարության և այլ բնագավառներում, վորպեսզի համոզվենք վոր այս կարծիքը ճիշտ է:

Ռեֆորմի հակացողությունն անկասկած հակադիր է հեղափոխության հակացողությանը. մոռանալ այս հակադրությունը, ինչպես մոռանալ այն ահռելի մանապիծը, վորը բաժանում է այդ յերկու հասկացողությունները, և բոլոր պատմական խորհրդածությունների ժամանակ մշտապես լուրջ սխալմունքների հանգել: Բայց այս հակադրությունը բացարձակ չի, այս մի մեռած ահհմանապիծ չի, այլ կենդանի, դյուրաշարժ մի ահհմանապիծ, վորը յուրաքանչյուր առանձին կոնկրետ դեպքում պիտի գիտենալ վորոշել: 1861 թ. ռեֆորմը մեծ ռեֆորմ եր մեզ: Շնորհիվ այն հատուցական ելեմենտների չափազանց թուլության, անբավարարության և վոչնչացման, վորանց չահերը վերակազմության պահանջ եին ներկայացնում: Դրանից եր, վոր հողատիրական ազնվականները այնքան զորեղ եին ռեֆորմի մեջ, դրանից եր, վոր նրա մեջ բյուրոկրատական այնքան այլանդակություններ կային, դրանից եր, վոր նա այնքան անտանելի արհավիրքներ հասցրեց դյուղացիությանը: Մենք գյուղացիությունն ավելի չատ տուժում եր կապիտալիզմի անբավարար զարգացումից, քան կապիտալիզմից: Սակայն այս ռեֆորմը, վորը վորոշ հատուցական հարստություններ տվեց հողատերերի թուլության շնորհիվ ռեֆորմ եղ մնաց, չնայած բոլոր խոչընդոտներին և արգելքներին, պայմաններ ստեղծեց այդ ելեմենտների հետագա զարգացման համար, պայմաններ, վորոնք ընդլայնեցին այն բազան, վորի վրա բորբոքվեց հին հակասությունը, ընդլայնեին ազգաբնակության այն խմբակցությունների, խավերի և դասակարգերի չրջապիծը, վորոնք կարող եին այս հակասության թորբոքմանը գիտակցական մասնակցություն ցուցց տալ:

### 2.

Կոմերցիոն յեղանակից «չաղատասղված» գյուղացին քաղնեորոդցի (ռեֆորմատորի) ճնշվելից շուրջ յեղավ այնպես ընկճված, վրդովատված, նվաստացած, իր հողամասի հետ կաչկանդված, վոր նրան այլ բան չեր մնում, քան «հոժարակամ» հոտվորքության անել: Ցնծալ գյուղացին սկսեց ձգտել իր նախկին տիրոջ հողերը, նրանից «փրկագնով» վերցնել հենց իրենից խլված հողերը, իր քաղցած ընտանիքի համար ճամբար վճարելով հատուկ կամ առանձնաշնորհյալ տոկոսից, վորի

պետք փոխարենն աշխատանքով հատուցի տամ։ Գրամի իշխանությունը վոչ միայն ճնշեց գյուղացուն, այլև ձեղքեց նրան. գյուղացիության ուհռելի զանգվածը քայքայվեց և պրոլետարներ դարձավ. իսկ վոչ բոլոր անհատները արտադրում եր ապիտակարիք, բայց ուժեղ կուլակներ և անհատական գյուղացիներ, վորոնք դարձյալ եյին գյուղական անհատության ու գյուղացիական հողերը և կազմում ծնունդ առնող գյուղական բուրժուազիայի կադրերը։ Ռեֆորմից հետո չնչին տոկոսը քաղաքամերձին այս ապագյուղացիացման (раскрестьянивание) մի համատարած պրոցես է, դանդաղ, տանջալից վախճանի մի պրոցես։

(Լենին. «Հոդվածի ապիխվ». գրված է 1911 թ. փետրվարին)։

---



ՀՍՍՌ-ԱՄՆ ՍՊ
ՀՀ Ազգային գրադարան
NL0403237